3404

491.94-L
9-60

96:491.542-1
Հ-11

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ.Ս.Խ.Հ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ
ՅԵՎ
ՏԱՌԵՐԻ ՁԵՎԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1927 – [illegible]

19.03.2013

28 APR 2010

431.99-1
Գ--60

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ.Ս.Խ.Հ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ
ՅԵՎ
ՏԱՌԵՐԻ ԶԵՎԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

8533

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A. Публичная Библиотека
7/31--1922
имени Маркиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1927—ՅԵՐԵՎԱՆ

28 APR 2018

3404

պ. № 151. գրաւեպվար № 39 բ. տիրաժ 300

Պետհրատի յերկրորդ տպարան

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ

I. ՈՒՂՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

			եջ
1.	Պատմական տեսութիւն հայերէն ուղղագրական դրութիւնների	պրոֆ. Ա. Ռաբեխեանցյան (Լեո)	1
2.	Մեր նոր ուղղագրութեան մասին	պրոֆ. Հ. Աճառեան	28
3.	Հայերենի ուղղագրութեան խնդիրները	պրոֆ. Ա. Խաչատրեան	35
4.	Արդի հայերենի ուղղագրութեան խնդիրը	Գ. Ղափանցեան	56
5.	Հայերենի ուղղագրութեան մասին	Ստ. Մալխասեան	80
6.	Համագրական ազգուսակ ուղղագրութեան առաջարկների, վոր արել են չորս զեկուցողներ՝ Աճառեան, Խաչատրեան, Ղափանցեան, Մալխասեան		94
7.	Խնայողութեան հարցը հին և նոր ուղղագրութեան սիստեմների մեջ	Գ. Լեվոնեան	97
8.	Զեկուցումն մանկավարժական յինթհանձնաժողովի աշխատանքների մասին		102

II. ՏԱՌԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆ

9.	Հայերէն տպագրական տառերի բարեփոխման հարցը	պրոֆ. Ա. Ռաբեխեանցյան (Լեո)	113
10.	Հայերէն տպագր. տառերի բարեփոխ. խնդիրը	Գ. Լեվոնեան	127
11.	Հայ տառերի բարեձևութեան մասին	պրոֆ. Հ. Աճառեան	138
12.	Տպագրական տառերի ռեֆորմի շուրջը	Ստ. Մալխասեան	146
13.	Բժշկական խորհրդակցութեան արձանագրութիւնը		154
14.	Գրաշարների խորհրդակցութեան արձանագրութիւնը		156
15.	Քաղվածքներ Հանձնաժողովի արձանագրութիւններից		168
16.	Ուղղագրութ. մասին յեղած առաջարկների քվեարկութեան հետևանքը		167
17.	Տառերի բարեձևութ. մասին յեղած առաջարկների քվեարկութեան հետևանքը		171

Պրոֆ. Ա.ռ. Բաբախանյաց (Լեո)

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԵՐԵՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Տպագրության սկզբից մինչեվ մեր որերը

Հայերեն տպագրության սկիզբն, ինչպես հայտնի է, վերաբերվում է 16-րդ դարի յերկրորդ տասնամյակին: Սակայն, ամբողջ այս դարը կարելի չե համարել լոկ առաջին փորձնական քայլ հայերեն տպագրության արվեստի ասպարեզում, վորովհետև միայն հաջորդ 17-րդ դարից, այն էլ հատկապես նրա յերկրորդ կեսից ե, վոր սկսում են հաճախանալ հայերեն գրքերի տպագրությունները, ստանալով հաստատուն և հարատևող յերևույթի կերպարանք:

Այս ժամանակներից մինչև 19-րդ դարի սկիզբը տպագրված գրքերի մեծագույն մասը գրաբար լեզվով ե և միայն չնչին, հազիվ նկատելի մասը՝ աշխարհաբար: Գրաբար լեզուն դարերով գործածված, հաստատուն քերականություն, մշակած և հարուստ գրականություն արտադրած մի լեզու չե, մինչդեռ աշխարհաբարը նոր-նոր եր ձեռք բերում գոյության ու նենալու իրավունք, դեռ չափազանց աղքատ ու անմշակ լեզու չեր, զուրկ գրքեր ի շատ յերևութասարդ անցյալի փորձից և քերականական կանոնավորումից:

Այս յերկու հանգամանքները նկատի ունենալով, մենք, թվում ե թե, պիտի ունենայինք մեր առջև այսպիսի մի տեսարան.—գրաբար տպագրությունները պիտի ունենային մի յուտեսակ, խիստ կանոնավորման յենթարկված ուղղագրություն, մինչդեռ աշխարհաբար տպագրությունները, իբրև հետևանք աշխարհաբարի քաոսական դրության, պիտի ներկայացնեյին մի ուղղագրական քաոս:

Այսպես չե, սակայն, իրականությունը: Գրաբար ուղղագրությունն էլ, ինչպես վկայում են շատ տպագրված գործեր, նույնպես խախուտ ու անկայուն եր 16—19-րդ դարում, ինչպես և աշխարհաբարը: Մանրամասն քննությունը մեզ ցույց և տալիս վոր հայ այրուբենի մի շարք տառեր իրանց գործածության յեղանակի մասին հարուցել են գրողների և տպագրողների մեջ շատ տարակուսանքներ, հարկադրել են նրանց տարուբերվել և վորոնումներ կատարել՝ լավագույն ձևեր գտնելու համար:

Այս տատանումներն ու վորոնումները գրաբար գրականության մեջ շարունակվում են մինչև 19-րդ դարի սկիզբները և այնուհետև վերանում են շնորհիվ Կ. Պոլսում, Վենետիկում և Մրիյեստում սկսված գրական խոշոր շարժումների, վորոնց նպատակն եր վերականգնել գրաբար լեզուն իր նախկին մաքրության և կենսունակության մեջ: Այդ շարժումների մի գործն էլ այն յեղավ, վոր ուղղագրությունն ստանում եր կանոնավորություն և միաձևություն:

Այլ եր աշխարհաբար լեզվի ճակատագիրը։ Մինչև այսօր էլ նա չի գըտել կայուն և ամրակուռ հիմքեր։ Յեվ վորոնումներն այսօր ավելի յեռանդուն կերպով են կատարվում։

Հարցի այս վիճակը մեզ թելադրում է բաժանել մեր այս տեսությունը յերկու մասի.—մեկի մեջ դասավորել գրաբարի ուղղագրական ձևափոխությունները, իսկ մյուսը նվիրել աշխարհաբարի ուղղագրության պատմական տեսության։

Ա.

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԳՐԱԲԱՐԻ ՄԵՋ

Հայերեն տպագրությունն սկիզբ եր առնում այնպիսի մի դարաշրջանում, յերբ գրաբար լեզուն դանվում եր կատարյալ անկման մեջ։

Մինչև 17-րդ դարի առաջին կեսում Հայաստանի վանքերի մեջ սկըսվում է մի գրական շարժում, վոր կարելի յե անվանել վերածնություն, բայց և այնպես, գրաբար լեզուն միանգամայն չի մաքրվում ոտարաբանություններից և աղճատումներից, վորոնք և ծնալով լեզվի մեջ, աղում են նաև նրա ուղղագրության վրա։

17-րդ դարի գրական վերածնության յերախտավոր գործիչներից մեկը, Սիմոն Ջուղայեցին, իր «Քերականության» մեջ յենթարկված է ծնում այդ ոտարաբանություններին։ Եյական բայերը (եմ, ես, է) բայերի հետ խառն է գրում, թե յեզակի և թե հոգնակի թվերում։ Այս ձևը հետո տեսնում ենք ընդունված և այնպիսի մի խոշոր գրական գործիչի կողմից, վորպիսին եր Մխիթար Սեբաստացին (տ. նրա «Քերականությունը»), վոր գրում եր «տարեալիցէի», «տանիցէիր»։ Սեբաստացին էլ, ինչպես հայտնի յե, միանգամայն չեր ազատագրված լատինացրած ձևերից։

Ուրիշ տպագրությունների մեջ էլ մենք հանդիպում ենք եյական բայերի միացման իրանց նախընթաց բայերի հետ։ Այս յերևույթը ուսանելի յե։ Մանավանդ շատ և նա կրկնվում աշխարհաբար գրականության մեջ, ինչպես այդ կտեսնենք մեր ուսումնասիրության յերկրորդ մասում։

Տպագրած գրաբար գրականության մեջ էլ շարունակվում եր յեվրոպականից փոխ առած օ-ի կիրառման այն ծավալումը, վոր սկսվել եր դեռ միջին դարերից։ Հունական ոմեգան փոխարինող «ով»-ը գուրս է վտարվում բոլոր այն հատուկ անուններից, վորոնց մեջ նա գործ եր ածվում։ Այսպես, գրեթե սովորական յերևույթ է դառնում տպագրությունների մեջ «Յոհաննէս», «Յոսէփ», «Յակօբ», «Մեսրօպ», «Թօմաս», «Թօմա» գրելը։ Օ-ի յե փոխվում և ո-ն ող վերջավորություններում—«կարօզ», «սիրօզ», «աղօթօզ»։ Միայն մի տպագրության մեջ (կ. Պոլսի 1734) յես հանդիպեցի վերնագրի մեջ «Ոհան» գրությանը, վոր, սակայն, չի կրկնվում գրքի մեջ։

Ոտարամոլ նորմածուները մտցնում են նաև ապաթարցի (՝) անսովոր գործածության մի ձև։ Նա գրվում եր «ք՝» նորակազմ նախդերից առաջ։ Գրվում եր—«Զի թեպետ ՝ըն վեցերորդում պատուիրանին» կամ՝ «Ասռավել գովելի ՝ըն կնոջ»։ 1713 թվին Լիվոռնո քաղաքում տպված մի գրքի («Դավանութիւն հաւատոյ») վերնագրում գրված է՝ «ի ընթեռում հայկականին ռճկը»։

Ուղղագրական զարտուղումներ մենք շատ ենք գտնում և կարդինալ

Մխիթարյի հայերեն-լատիներեն բառգրքի մեջ, վոր տպված է Փարիզում 1633-ին։ Բերում ենք մի քանի նմուշներ, «զավակ», «զատիկենալ», «զարթուն և զարդուն» «թէթեհ և թէթիվ» «թէթիվնալ», «խուսկենալ», «մեծենիլ», «մեծմամ», «մեծպապ»։ Ինչպես տեսնում եք, այս որինակներից շատերը վերաբերվում են աշխարհաբար լեզվին։

«Ե»-ի գործածությունն էլ, ինչպես յերևում է, խնդրական է յեղել։ Կան տպագրություններ (որինակ՝ «Վարդան Յունանեան—Նորագույն ծաղիկ գիտութեանց»), վորոնց մեջ ե-ը կցված է հաջորդ բառին, ինչպես, մենք այժմ գրում ենք «եայլն»։ Այսպես, որինակ—«եասե», «եատայ»։ Միևնույնը տեսնում ենք և 1701 թ. «Ալիկոռնոյ» (Լիվոռնո) քաղաքի տպագրության մեջ։ Վարդան Հունանյանը միացնում է նաև «ոչ» բառը հաջորդի հետ—«ոչոք», «ոչունչ»։

Կ. Պոլսում 1710 թվին տպված «Յիշատակարանք» գրքի մեջ միացված է վոչ միայն եյական բայը նախընթաց բառի հետ («ամէր», «կարկամեալէր», «մարդնէր», «ժարդնէ», այլև «մի» բառը—«գյուղմի», «կինմի»։ Այստեղ էլ յ-ի կիրառումը ա-ով վերջացող բառերում—«ընդ նմայ»։

Մի քանի տպագրություններ կանոն են դարձնում «ը» տառը գնել «ս»-ով սկսվող մի շարք բառերի առաջ. ինչպես «ըստուգաբանել», «ըստանում» և յերկու բաղաձայն տառերի մեջ. որինակ՝ «մըտանք», «պըտուղ» և այլն։

Բայց վոչ մի տառ այնքան հեղհեղուկ, այնքան առարկություն վերցնող և այնքան հոլացողություն պահանջող չի յեղել, ինչպես «ե» տառը, շնորհիվ այն հանգամանքի, վոր զանազան դիրքերում նրան հատկացվում են զանազան հնչյունական դերեր։

Սիմեոն Ջուղայեցին իր քերականության մեջ ասում է թե կարելի յե գրել «լիւանդանալ» և կարդալ իբրև «հիվանդանալ»։ Այսպիսով մի հատ բառի մեջ «ե»-ին հատկացվում է յերկու հնչյուն։ Բայց «ե»-ը ունի դեռ ևի առանձին հնչյուններ, յերբ գրվում է «ի»-ի և «ո»-ի հետ։ Յեվ ահա այդ առանձին հնչյունները «ե»-ի վրա պահելու համար ընդունվում է մի պայմանական նշան, վոր մեր հին քերականներն անվանում են թավ և վոր դրվում է «ե»-ի վրա. Յերբ «ե»-ը գրվում է «ա»-ի հետ, ստացվում է աե—ավ հնչյունը. Բայց «աե»-ը միաժամանակ փոխարկվում է և օ-ի։ Ինչպես անել, վոր «աե»-ը բոլոր դեպքերում օ չդառնա։ Նրա համար աե-ի վրա դնում են թավ նշանը, վորպեսզի, որինակ՝ «աեագ»—ավագ բառը չկարդացվի «օագ»։ Յերբ ե-ը գրվում է «ի» տառից հետո, այն դեպքում ստացվում են յերկու հնչյուններ—«իվ և «իե» (մեր այսորվա ուղղագրությամբ՝ «յու»)։ Բազդասար դպիրը իր «Քերականության» արժեքավոր աշխատության մեջ ասում է՝ վորպեսզի «տիւն» բառն արտասանվի «տիվն» վոր նշանակում է «ցերեկը» և վոչ թե «տիւն», վոր տառի անուն է, պետք է «ե»-ի վրա թավ նշան դնել։ Նույնպես և յերբ «ե» գրվում է «ո»-ից հետո, ստացվում է «ու» հնչյունը։ Բայց վորպեսզի «անուան», «պատուական» բառերը չկարդացվեն «անովան», «պատովական», պետք է «ե-ի» վրա դնել նույն փրկիչ նշանը, վոր այս դեպքում արդեն պահպանում է «ե»-ը «վ» արտասանելուց։ Այս յերրորդ գործածությունը մենք տեսնում ենք, որինակ, Վասկան վարդապետի տպագրությունների մեջ։

Հետաքրքրական հանգամանք է, վոր գրաբարի մեջ «ե»-ը շատ քիչ դեպ-

քերում է փոխարինվում «վ»-ով։ Մեր գննած տպագրությունների մեջ միայն Մինաս Համգեցու «Ապգարանութիւնն» է, ուր միշտ գրվում է «թվի»։ Բայց չափազանց շատ են այն դեպքերը, երբ վոչ միայն «ու»-ն, այլ և «վ»-ն անգամ փոխարինվում են «ւ»-ով։ Դեռ Սիմոն Ջուղայեցին գրում էր «անուան», «լեզուանի»։ «Վ» արտասանվող «ու»-ն «ւ»-նով փոխարինելու անհատական որինակների պատահում ենք և ուրիշ տպագրությունների մեջ, մինչև վոր 1727-ին լույս է տեսնում Վենետիկում «Դուշտիկ ծաղկալից» անունով կրոնական բարոյախոսական պատմությունների ժողովածուն, ուր արդեն այս կանոնը կիրառված է համարյա թե ամենուրեք, սակավաթիվ բացառություններով։ Հավաքողը, Հոհան վարդապետ Թոխաթեցին կարող է համարվել առաջին հյուսնագետը տպագրված գրականության մեջ։ Ահա մի քանի որինակներ՝ «լաւ», «թւիւր», «հրճւալիք», «նւաճուին», «գժւարաւ», «աղնւականք», «վինւորաց», մահւան»։ Մենք տեսնում ենք մինչև իսկ «կառաւարութիւն»։

Գրաբարի մեջ սկսված հյուսնագրությունը, սակայն, շարունակություն չգտավ նույն գրաբարի մեջ։

Բ.

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՄԵՋ

1

15-18-րդ դարերում գոյություն ուներ մի տեսակ գրական աշխարհաբար լեզու, վորի գործածությունը մենք տեսնում ենք գլխավորապես այն տաղերի մեջ, վոր գրում էին գրաբար դասախարակություն ստացած մարդիկ։ Այդ աշխարհաբարը մի խառնուրդ էր գրաբարի և ժողովրդական գրծածական լեզվի, յենթարկվում էր հաճախ գրաբարի քերականական կանոններին, իսկ ուղղագրության կողմից դարձյալ դեկավարողն էր գրաբարը։

Բայց, բացի այդ գրական աշխարհաբարից, հայության մեջ գոյություն ունեցել է և մի այլ աշխարհաբար, ավելի զուտ և անխառն, գրական ազդեցություններից ազատ, այսինքն՝ պահպանած կենդանի արտասանությունը, գործնական խոսքի ամբողջ կորովը։ Միայն պիտի նկատենք, վոր այս աշխարհաբարը միաձույլ ու միատարը չէր, այլ բաղկացած էր զանազան գավառաբարբառներից, վորոնք կարող էին վորոշ դեպքերում տպագրական լեզու դառնալ, բերելով իրենց հետ իրանց արտասանական առանձնահատկություններից առաջացած ինքնուրույն ուղղագրություն։

Այս գավառաբարբառներից առանձնապես աշակված, վորոշ ու հաստատուն ուղղագրական ձևեր յուրացրած էր ժանավանդ Ջուղայի գավառաբարբառը, վորի ունեցած ազդեցությունը վոչ միայն աշխարհաբարի, այլ և մի քանի դեպքերում նաև գրաբարի վրա տկներև է։ Ցեվ այս միանգամայն հասկանալի կլինի, յեթե մենք ի նկատի առնենք, թե ինչ անգին դեր և կատարել այդ բարբառով խոսած վաճառական ժողովուրդը հայ ժողովրդի քաղաքական և մշակութային կյանքի մեջ՝ ամենաքիչը՝ 16-րդ դարից սկսած։

Ջուղայական կամ, ավելի ճիշտ, խոջայական կապիտալը մի միակ իրական խոշոր ուժ էր հիշած դարերի հայ կյանքի մեջ։ Ցեվ միանգամայն

բնական էր, վոր այդ ուժը, առևտրական բազմաբեղուն հարաբերությունների լեզու դարձնելով իր տեղական մայրենի բարբառը, խիստ կանոնավորություն տար նրան առևտրական թղթակցությունների, առևտրական գրասենյակների հաշվական և այլ գրագրությունների մեջ։ Ցեվ վորովհետև կապիտալի աշխարհում ամենից շատ պահանջվողը ճշտությունն է, ուստի և այդ վաճառականական գավառաբարբառը մշակում էր իր վորոշ, ճիշտ և միանման ուղղագրությունը, վոր մի ամբողջ, նույնիսկ բարդ սիստեմ էր ներկայացնում։

Այս զարմանալի կանոնավորությունը մենք այսօր կարող ենք ճիշտ ապացուցել համեմատական մեթոդով։ Բավական և իրար կողքի դնել մի քանի գրություններ Ջուղայի բարբառով, տպված զանազան տեղերում և զանազան ժամանակ։ Մենք վերցնում ենք Պետրոս դե—Սարգիս Գիլանենցի Հիշատակարանը, գրված 1722-ին և տպված Թիֆլիսի «Կռունկ Հայոց Աշխարհին» ամսագրի մեջ (1863 № 1-2) և այն գրությունները, վորոնք զետեղված են Հ. Թ. Տեր-Հովհաննիսյանի «Պատմութիւն Նոր-Ջուղայու» աշխատության առաջին հատորի մեջ (Նոր Ջուղա, 1881)։

Ցեվ այսպես, խոջայական կապիտալի ուժեղ տիրապետության ժամանակ Ջուղայեցի վաճառականը, յերբ նամակ կամ առհասարակ հաղորդակցական թուղթ էր գրում, գիտեր, թե ինչպես պիտի արտահայտի իր արտասանությունը հայերեն տառերով։ Ցեվ վորովհետև խոջայական կապիտալն էր այն առանցքը, վորի շուրջը պտույտ էր գալիս հայ մշակույթը իր աշխարհականացման մեծ շրջանում, ուստի և Ջուղայական ուղղագրությունն, ինչպես խոջայական կապիտալի արտաբերած մի մշակույթային արժեք, ինչպես կտեսնենք հետո, մեծ ազդեցություն ունեցավ նույն իսկ հետագայի ուղղագրական սիստեմների վրա։

Մեր հնագույն աշխարհաբար տպագրություններից մեկն է 1675 թվին Մարսիլիա (Մարսել) քաղաքում տպված «Արհեստ համարողութեան» անունով փոքրագիր թվաբանություն։ Այս գիրքը գրված է հատկապես հայ վաճառականների համար աշխարհաբար լեզվով, բայց այս լեզուն Ջուղայի բարբառը չէ. և վոչ էլ այն գրական աշխարհաբարը, վոր հատուկ է մեր «միջնադարյան» կոչված աշխարհական բանաստեղծության, այլ կանգնած է յերկուսի մեջտեղը։ Այսպես բարբառային ան վոր էական բայի յեզակի յերրորդ դեմքի ձևն է, այստեղ գոյություն չունի և միշտ արտահայտվում է «է»-ով, բայց միևնույն ժամանակ աշտապես գործածական են «էս», «էն», կա և «էակից» ձևը։ «Կը» մասնիկը «կու» ձևն ունի, ինչպես և «միջնադարյան» աշխարհաբարի մեջ, մինչև անգամ գրվում է «կու ուղարկե»։ Յերկու բաղաձայների մեջ մի քանի դեպքերում մտցվում է «ը» ձայնավորը—«մընայ», «մընայորդ». «վ»-ի և «ւ»-ի գրության մեջ կերակշռում է «վ»-ի գործածությունը—«թիվ», «թվի», «տվաւ», «ավելի», «գրվի»։ Այս դեպքերում ուղղագրությունը շատ և մոտենում Ջուղայեցիներին, թեև հաճախ և խոտորում է նրանից։

Գրեթե միևնույն ուղղագրական հանգամանքներն ունի մի ուրիշ վաճառականական տպագրություն, վոր լույս տեսավ Ամստերդամում 1699-ին «Գանձ չափոյ՝ կշռոյ՝ թուոյ՝ և զրամից բոլոր աշխարհի» վերնագրով։ Այստեղ էլ բայերի կրավորական վերջավորությունները գրվում են «վ»-ով։ Նկատելի յե «օ»-ի բացարձակ գործածությունը ոտար անունների մեջ, որինակ՝ «Նօվօգօրօդ», «Մօսկօվ», Ըսմօլենսկ»։

Այժմ դիմենք Ջուղայի բարբառի ուղղագրության։

Գլխավոր հատկանշական գիծը Ջուղայի ուղղագրության մեջ նկատեր բայի յեղակի յերրորդ դեմքի «ա» ձևն ե, բայց անպատճառ միացած «յ»-ի հետ—«ամիս այ», «ուղորթի այ»։ Գրվում ե և լծորդ նախընթաց բառի հետ։ Բայց կա այդ բայի և «է» ձևը և գործ ե՛ ածվում «յ» ժխտականի հետ միայն և փոխվում ե էլի, այն ե՝ գրվում ե «չէ»։ Նույն «յ» ժխտականը լծորդ ե գրվում բայերի հետ—«չկայ»։ «Ել»-ով վերջացող բայերը գրվում են «էլ»-ով—«դառցէլ», «մնացէլ»։ Բառերի հետ հաճախ «ա»-ին հետևում ե «յ», որինակ՝ «մեծայվոր», «բրղայղիր»։ Վեվապրությունը սաստիկ զարգացած ե—«թագավոր», «նավ», «Ավետ»։ Անուննների հոգնակի վերջավորությունները «էր»-են, փոխանակ «եր»-ի—«նավէր» «բաղիրկաննէր»։ Բառերի «ա» և «ո» վերջավորությունը «յ»-ով փակելը հաճախ և մանավանդ դերանունների մեջ—«նոցայ», «քոյ»։ Յերկու բաղաձայների մեջ «ք» ձայնավորը շատ անգամ գրվում ե—«սիրաբան»։ Գործիական հոլովի վերջավորությունը գրվում ե «օ»-ով. որինակ՝ «լեզվօվ», «բօթօվ»։ Մենք տեսնում ենք և այնպիսի դեպքեր, յերբ «յ»-ն բառերի սկզբում փոխվում ե «հ»-ի, որինակ՝ «հետ կովիցին», «հետ գ. օրէն»։ «Ու» վերջավորությունը սեռականի մեջ դառնում ե «վի»—«օսմանլվի»։ Կա և «Ոհաննես» գրությունը, որ ցույց ե տալիս, թե Ջուղայի բարբառում բառերի սկզբի «յ»-ն շատ դեպքերում դեղջվում էր։ Ինչպես տեսանք վերևում, գրաբարի բաժնի մեջ, այս «Ոհաննէս» ձևը պատահում ե տպագրական մի գրքի վերնագրում—պարզ ապացույց Ջուղայի ուղղագրական ազդեցության։

Գրեթե Ջուղայական բարբառով են գրված այն չափազանց հետաքրքրական խոսակցությունները, որ հղանդացի հայագետ Հովհ. Շրոդերը գետեղել ե իր «Արմատան Լեզուի Գանձ» անունով աշխատության մեջ, տըպված Ամստերդամում 1711-ին)։ Ուստի այս աշխարհաբար հատվածների ուղղագրական հանգամանքները մեծագույն մասամբ միևնույնն են, ինչ որ նախընթաց գրավոր հիշատակարանի մեջ։ Իբրև ինքնուրույն յերևույթ կարելի չե ցույց տալ, որ հետագա «ոչ»-ը գրվում և նախընթաց բառի հետ միացած, որինակ՝ «ծանդրոչ»։

Ջուղայի բարբառից հետո կարևորություն ստանում ե Կ. Պոլսի հայոց գավառաբարբառը, որ գրական շարադրությունների լեզու չի դառնում 18-րդ դարի յերկրորդ կեսում։ Թեև նույն այս ժամանակից վերականգնվել և սկսում գրաբարյան վոսկեդարը, բայց և այնպես, ժամանակի առաջ բերած հասարակական զարգացման պահանջներն այնպես են, որ գրաբարն իրանց համար գործածական լեզու դարձրած հոգևորականները Կ. Պոլսում, բայց մանավանդ Մխիթարյանները Վենետիկում ստիպված են լինում հաճախ դիմել իրանց արհամարհած «ռամկական» լեզվին, որպեսզի կարողանան հասկանալի դառնալ հասարակ ժողովրդին։ Միայն ս. Ղազարի մատուռի տակից 18-րդ դարի վերջին յերկու տառնամյակների և 19-րդ դարի առաջին յերեք տառնամյակների ընթացքում լույս են տեսնում բավականաչափ տպագրություններ աշխարհաբար լեզվով։

Սակայն Մխիթարյանների այս սերունդը, որ գործում էր այն ժամանակներում, աշխարհաբար լեզուն չեր համարում մի անկախ և իրավառեր լեզու, որ պիտի ընդմիշտ հաստատվեր գրականության մեջ։ Ոչ, գրական լեզվի միակ հարատև իրավունքը նրանք տալիս էին գրաբար

լեզվին, իսկ աշխարհաբարը գործ էին ածում միայն իրրև ժամանակավոր ու ծառայական միջոց, վերաբերվելով նրան իրրև մի անխուսափելի չարիքի, որի միջոցով ժողովուրդը պիտի հեղհեղուկ պատրաստվեր սովորելու գրաբար լեզուն։ Ուստի և աշխարհաբարը գործ էր ածվում վենետիկյան տպագրությունների մեջ անմշակ դրության, այնպես, ինչպես նա գոյություն ուներ ժողովրդական կենդանի գործածության մեջ։

Յերբ այսքան անփույթ և անխնամ էր վերաբերմունքը դեպի լեզուն, հասկանալի չե, որ ավելի անփույթ և վայրիվերո պիտի լիներ վերաբերմունքը նաև դեպի նրա ուղղագրությունը։ Կարելի չե ասել, որ յուրաքանչյուր գրող ենթարկված էր իր ազատ կամքին, և որքան գրողներ, այնքան ուղղագրական դրություններ։ Այս անարխիան վերին աստիճանի բնորոշիչ և ընդհանրապես աշխարհաբարի ուղղագրության տեսակետից։ Մենք տեսնում ենք մի փոքրիկ վանք և նրա մեջ աշխարհաբար գրող վարդապետների մի խմբակ։ Ըստ յերևույթին վոչինչ չեր կարող խանգարել, որ ամեն որ իրար հետ շփվող, միասին ուսող, միասին քնող մարդիկ իրար հետ համաձայնության գային և միատեսակ գրելին աշխարհաբարի այս կամ այն բառը։ Բայց վոչ, այդպիսի համաձայնություն չեր կայացվում, կատարյալ տիրապետող հանդիսանում էր անհատականությունը։ Յեթե այսպես էր սկզբում, այս շատ նեղ ու փոքրիկ ընտանեկան շրջանում, այսպես մնաց իրականությունը և հետո, յերբ աշխարհաբարի գործածությունը ընդարձակվեց, ծավալվեց անհունապես լայն չափերով։ Յեթե «ամեն մեկն իր համար» դրությունն սկզբունք էր դառնում 5—6 մարդկանց շրջանակում, միևնույն սկզբունքն արդեն բոլորովին անվիճելի մի փաստ դարձավ, յերբ աշխարհաբար գրողների թիվը հասավ հարյուրների։ Յեվ յեթե վոչ բառացիորեն, գեթ ընդհանուր առմամբ, հոգեբանական մի յերևույթ եր դառնում աշխարհաբարի վերաբերմամբ՝ «վորքան գրող, այնքան ուղղագրություն»։

Վենետիկյան այս իրողությունը լուսավորելու համար յես վերցնում եմ միևնույն թվականին (1815), միևնույն Մխիթարյան տպարանից լույս հանված յերկու հրատարակություններ. 1) «Դիտակ Բիւզանդեան» կիսամսյա պարբերականը, խմբագրությամբ Հ. Մանուել Ջախջախյանի և 2) «Քերականութիւն Հայկական» Հ. Գաբրիել Ավետիքյանի։ Յերկուսն էլ, բայց մանավանդ յերկրորդը,հայտնի գրաբարագետ գրողներ են և ուրեմն, պետք և վոր ունենային իրենց վորոշ ըմբռնողություններ։

Մխիթարյան աշխարհաբարի մեջ առհասարակ մի ընդհանուր տենդենց և վեվապրություն, այն էլ գլխավորապես կրավորական բայերի վերջերում և այնտեղ, ուր «ու»-ն հնչվում և «վ»։ Սակայն Ջախջախյանը գրում և «գինուոր», «ազնուական», Ավետիքյանը «գինուոր», «ազնուական»։ Բայց «ու»-ի գործածությունը անփոփոխ որինք չե Ջախջախյանի համար։ Մեկ տեսնում եք նա գրում ե «առնված», մեկ էլ տեսնում եք՝ «առնուած»։

Այսպես փոփոխական ե և Ավետիքյանի ուղղագրությունը։ Նրա մըտցրած նորություններն ե «վրայ» բառը գրել առանց «յ»-ի—վրա։ Թե ինչու միայն այս բառն եր յենթարկվում այդպիսի անդամահատության, թե ինչու բազմաթիվ ուրիշ բառերի վերջերում պահվում եր չհնչվող «յ»-ն—այս չեր բացատրում գիտնական Մխիթարյան վարդապետը։ Բայց նրա այս «վրա» ձևը մեծ հարգ ստացավ հայ ուղղագրական սովորության մեջ և գործածու-

թյան մեջ մեզ շատ չերկար ժամանակ։ Նկատենք, սակայն, որ նույն քերականության մեջ Ավետիքյանը գործ էր ածում անխտիր նաև «վրայ» ձևը։ Գրաբարի վեհանչյուն «ու»-ն Ավետիքյանն աշխարհաբարի մեջ արտահայտում է «վ»-ով։ Այսպես՝ գրում է «անվանք», կերը այս բառը աշխարհաբարի մեջ էր, և «անուանք»՝ կերը նա գործ է ածվում գրաբարի մեջ։ Այսպես նաև «թիւ» «թուոյ» (գրաբար) և «թիվ,» «թվի» (աշխարհաբար)։

Սակայն մեր հիշած ժամանակամիջոցում Մխիթարյան նշանավոր գրողներից վոչ մեկն այնքան աշխարհաբար գրություններ չունի, ինչպես Հ. Դուկաս Ինճիճյանը։ Իր աշխարհաբարի մեջ նա տարբերվում էր իր միաբանակիցներից մի շարք ինքնուրույն ուղղագրական ձևերով, վորոնք վերածված եին սիստեմի։ Ամենից առաջ տարբերությունն այն բանի մեջ էր, վոր Ինճիճյանը, անշուշտ Ջուղայի ուղղագրության ազդեցության տակ, հոգնակի «եր» վերջավորություններն գրում էր «է»-ով — «օրէր» «քշվածքնէր», «զորքէր»։ Եյական բայը, ինչպես դարձյալ Ջուղայական ուղղագրության մեջ, խառնում էր նախընթաց բառի հետ—«տըվերէր» «եկերէր»։ «ըսերէնք»։ «Մք» բառը միացնում է նախընթացին—«սէրմք» «անգամմք», ինչպես նաև «ժէկհատիկ»։ Այսպես միացնում է նաև «ալ» մասնիկը—«զօրապետինալ»։ Յերկու բաղաձայնների մեջ, ինչպես նաև «ա»-ով սկսվող մի շարք բառերի սկզբում դնում է «ք» ձայնավորը։ Հ. Ավետիքյանի վեվագրությունը գրեթե ամբողջովին նման է Հ. Ինճիճյանի վեվագրության, այս կողմից նա առատիկ մուտենալով Ջուղայի ուղղագրության,—«ու» փոխվում է «վ»-ի, «աւ» վերջավորությամբ բայերը գրվում են «ավ»—«տըվավ», «եղավ», բայց միաժամանակ և «ցաւեցաւ»։ «Ող» վերջավորությունը մեզ գրվում է «օ»-ով «կարօղ»,—«առօղ»։

Հետաքրքրական յերևույթ է, վոր Կ. Պոլսում աշխարհաբարի գրությունը դեռ 1830-ական թվականներին, կերը նոր-նոր եր սկսում հաստատուն տեղ նվաճել տպագրական խոսքի մեջ, կերծ եր ճնում վենետիկյան աշխարհաբարի ուղղագրական քառսից. Իսկ 1840-ական թվականների սկզբից Կ. Պոլսի գավառաբարբառը յենթարկվում էր մշակման թե իր տեղում և թե մանավանդ նույն Վենետիկի վանքում, առավելապես, Գաբրիել վարդապետ Այվազովսկու ջանքերով։ Նա մաքրվում է ոտարաբանություններից, աղճատումներից, և այսպիսով առաջ էր գալիս արևմտահայ գրական լեզուն հարուստ ու ճկուն կազմությամբ։ Այդ ժամանակից էլ նա ստանում էր ուղղագրական միաձևություն, հիմնված գրաբարի վերծավորության վրա։

Բայց այսպիսով ուղղագրության հարցը չէր փակվում։

1850-ական թվականներին Կ. Պոլսում բազմացել էր առաջադեմ յերիտասարդությունը, վոր մեծագույն մասամբ զատիարակվել էր Ֆրանսիայում, տեսել էր 1848-ի հեղափոխական ցնցումները, տոգորվել էր հեղափոխական վոգով, բայց ավելի 1789-ի և 1793-ի գաղափարներով։ Կ. Պոլսի հայության մեջ այդ յերիտասարդությունն առաջացնում էր մի ամբողջ հասարակական շարժում։

Այս տեսակ յերիտասարդ գործիչներից մեկը, Գրիգոր Ոտյան, 1851 թվին հրատարակում էր «Առաջարկություն աշխարհաբար լեզուի վրա» վերնագրով մի բրոշյուր, վորի մեջ բավականաչափ արտառոց մտքեր էր հայտնում աշխարհաբար լեզվի նշանակության մասին։ Մեզ հետաքրքրողը պիտի լինի այդ բրոշյուրի ուղղագրությունը։ Ոտյանը վերցնում էր Կ. Պոլսի

մեջ արդեն հաստատուն դիրք գրաված վեվագրությունը կրավորական բայերի վերջում, Հ. Ավետիքյանից՝ «վրայ» առանց «յ»-ի և «օ»-ն այն բառերի մեջ, վորոնք վերջանում են «ող» մասնիկով։

Ոտյանից յերկու տարի հետո, 1853-ին, բժիշկ Նահապետ Ռուսինյանը, վոր անջնջելի անուն է թողել իրրև թյուրքահայոց Ազգային Սահմանադրության ծնողներից մեկը, լույս հանեց, առանց, սակայն, իր անունը հրատարակելու, աշխարհաբար լեզվի մի համառոտ քերականություն, վորի վերնագիրն էր «Ուղղախոսութիւն արդի հայ լեզուին»։ Այդտեղ, հեղինակի անվան տեղ, ասված էր, «Յօրինուած Ուսումնական Խորհրդակցութեամբ»։

Վեր անորոշությունները, ճիշտ վոր, շատ եյին, այդ փոքրիկ քերականության մեջ, վոր և այս պատճառով մեծ ազդուկ պատճառեց արևմտահայ գրական շրջաններում։ Բայց այստեղ Ռուսինյանը միանգամայն ինքնուրույնաբար մտածող չէր և նրա նորմուծություններից մի քանիսը լոկ փոխառություններ եյին։ Այսպես, Ինճիճյանից, կամ, ավելի ճիշտ, Ջուղայի ուղղագրությունից Ռուսինյանը վերցնում էր «է»-ն հոգնակի «եր» վերջավորությունների մեջ—«նաւէր», «հայրէր»։ Նույնը Ջուղայական ուղղագրության մի սկզբունքն էր, ինչպես տեսանք, «ել» վերջավորություն ունեցող բայերը գրել «է»-ով։ Ռուսինյանը վերցնում էր և այս սկզբունքն ու գրում էր «առէլ», «պատմէլ»։ Բայց նա ունի և իր սեփական նորմուծությունները, եյական բայը յեզակի և հոգնակի թվերում պիտք է սկսել «է»-ով—«էմ, էս, է, էնք, էք, էն»։ Ժխտական «չ»-ն պիտք է բաժանել բայից ապաթարցով։ «Թիւն» վերջավորություն ունեցող անունները սեռական հոլովում պիտի ունենան վոչ թե «թեան» այլ «թիան»։ Այսպես նաև «նախնիք նախնիաց»։

Ռուսինյանն ուշադրություն և դարձրել և մի քանի այնպիսի ուղղագրական հարցերի վրա, վորոնք այսօր էլ զբաղեցնում են մեզ։ Այսպես՝ նա գտնում է վոր «ո» տառն ունի նաև «ու» հնչյուն, որինակ՝ «լոյս», «կոյս» բառերի մեջ։ Բայց և այնպես, այս տեսակ բառերի ուղղագրությունը նա չի փոխում, բավական համարելով այն, վոր ընթերցանության միջոցով կարելի յե վարժվել թե ուր պետք է այդ «ո»-ն արտասանել «ու»։ Սակայն այստեղ կա մի անհետևողականություն։ «Ո» տառը, ասում էր Ռուսինյանը, բառերի մեջ արտասանվում է ինչպես «օ» և կանոնադրում է վոր այս դեպքում «ո»-ն փոխարինվի «օ»-ով, որինակ՝ «թօշակ» «ցօղուն»։ Հիւն (ւ) տառը կերը ինքնաձայն է, կարող է գրվել և «իւ»-ի տեղ, քանի վոր նույն հնչյունն էլ ունի իր մեջ, ինչպես «ւղ» (իւղ), «հւր» (հիւր), «աղբւր» (աղբիւր)։ Բայց «ւ»-ը, ասում է հեղինակը, արդի արտասանության մեջ ընդունել է և բաղաձայն «վ»-ի հնչյուն և գրանով մեծ դժվարություն է մտցրել ուղղագրության մեջ։ Ուստի հիմնվելով Ներսես Շնորհալու և ուրիշ հների տված որինակների վրա, առաջարկում է «վ» գրել «ւ»-ի տեղ այն բառերի մեջ, ուր «վ»-ի արտասանությունը հաստատ է—«զվարթ», «նըվաստ»։

«Յ» տառը Ռուսինյանն անվանում է «խոնավ ձայն» «հ» տառի նուրբը և կարծում է թե «յ»-ի իսկական հնչյունը պահվել է «այր», «հայր», «մայր» և այլ այսպիսի բառերի մեջ։ Ռամիկ սովորություն է համարում այն, վոր «յ»-ն բառերի սկզբում արտասանվում է «հ»—«Հակոբ», «Հիսուս»։ Չե ընդունվում, վոր «յ»-ն գրության մեջ կարող է փոխարին-

վել «ե»-ով։ Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ «յ»-ն գրվում է բառերի վերջը և չի արտասանվում. Ռուսինյանը գտնում է, որ ավելի արդարացի կլիներ բոլորովին «յ» չգրել այդ դեպքերում (գրել, որինակ, «արքա», «ծառա», «հաճո», և այլն), բայց վորովհետև գրանց հոլովման և կըցորդման մեջ այսպիսի բառերն ընդունում են հնչյունական «յ», ուստի նա թողնում է հին ուղղագրությունն անփոփոխ և նույնիսկ «վրայ» բառն էլ գրում է «յ»-ով։ Միայն «ալ» վերջավորություն ունեցող բայերի ներկայի յերրորդ դեմքը կարելի չե գրել առանց «յ»-ի—«կերթա»։

Ռուսինյանի այս քերականությունը վոչ մի ընդունելություն չգտավ։ Նրա դեմ ծառանում եր այն պահպանողականությունը, վոր յերևան է գալիս ամեն մի ժողովրդի մեջ, մանավանդ լեզվի և գրության հարցերի մեջ։ Այս հակառակությունն այն ատելիան սաստկացավ, վոր հակառակ այն հանգամանքի, Ռուսինյանն այն մեջոցին պատրիարքարանին կից գոյություն ունեցող Ուսումնական Ժողովրդի անդամ եր, «Ուղղախոսությունն» արգելքի տակ գրվեց պատրիարքական հրամանով իբրև ձեռնարկ և ուղեցույց։ Այնուհետև արևմտյան հայության մեջ դադար են առնում ուղղագրական ռեֆորմի վերաբերյալ վորոնումները և գրեթե միալար անխախտ պահվում է այն ուղղագրական գրությունը, վոր մշակվում եր գրաբարի հետ համընթաց և վորին մենք կարող ենք տալ «ավանդական» կամ «տրադիցիոն» անունը։

2.

Բայց ուղղագրական խնդիրները միանգամայն չեյին անհետանում։ Արևմուտքից նրանք տեղափոխվում եյին արևելք, Ռուսաստանի սահմանները, ուր 19-րդ դարի յերկրորդ կեսից աշխարհաբար գրականության հաստատ հիմք եր գրվում և նրա մեջ էլ մշտական յերևույթ եր դառնում ուղղագրական ձևափոխությունների պահանջը։

Արևելյան աշխարհաբարով 1850 թվականից սկսում են հրատարակվել մի շարք պարբերական հրատարակություններ Թիֆլիսում և Մոսկվայում—«Արարատ», «Մեղու Հայաստանի», «Հյուսիսափայլ», «Կռունկ Հայոց Աշխարհին»։ Այս հրատարակությունների մեջ գերակշռում եր ավանդական ուղղագրությունը, վոր որենքներ և կարգեր վերցնում եր գրաբարից, բայց նրա մեջ էլ նկատվում եյին մանավոր դպրոցներ։ Այսպես՝ Մոսկվայի դպրոցը, գլխավորությամբ Սահակյանոս Նազարյանի և Միքայել Նալբանդյանի, եյական բայերը խառնում եր նախընթաց բայերի հետ (որ. «ասում եինք»), իսկ կրավորական վերջավորությունը գրում եր «վ»-ով, մինչդեռ «Կռունկի» դպրոցը նույն այս կրավորական վերջավորությունը գրում եր յերկու «ու»-ով, որինակ՝ «ասուում», «կարդացուում»։ Այս կանոնին մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց Պերճ Պռոշյանը։

Թիֆլիսի աշխարհաբար գրականության մեջ նույն թվականներին շատ եյին տալիս դրքեր Թիֆլիսի գավառաբարբառով, ուր ուղղագրությունն արդեն շատ եր շեղվում ավանդականից։

Թեև այս բարբառով գրվածքները շատ կան, բայց մենք նրանց մեջ ուղղագրական մի հաստատուն գրություն չենք տեսնում։ Գրեթե յուրաքանչյուր հեղինակ աշխատել է իր հասկացած յեղանակով արտահայտել բարբառի վերին աստիճանի ինքնուրույն արտասանական առանձնահատկությունները։ Վորոշ չափով միատարրություն պահպանել է Գևորգ Ախվերդյանը Սայաթ-Նովայի յերգերի մեջ, վորոնք հրատարակվեցին 1852 թվին։

Ախվերդյանի հրատարակության մեջ Թիֆլիսի բարբառի ուղղագրությունը շատ կողմերով մոտենում է Ջուղայի բարբառի ուղղագրության—դործնական հոլով «ո»-ով («ջրով», «աչով»), վնվագրություն («նավ», «հիվանդացիլ իմ»), հոգնակի «էր» վերջավորություն—(«պռօշնէրիդ»), տատադարձություն ըստ արտասանության («մարթ», «վարթ», «ախպէր») և այլն։ Բայց Թիֆլիսի բարբառն ունի և իրան միայն հատուկ արտասանական կանոններ։ «ո»-ն բառերի սկզբին արտասանվում է «ո» («ոսկի», «օվ») և հենց այդպես էլ գրվում և կամ դառնում է «վու», («վուրդանց», «վունց») և գարձյալ այդպես էլ գրվում է։ «Թին» վերջավորությունը հոլովվում է «թեցի», «թեցով» և գրվում է «է»-ով («աշխատութէնով», «զատկութին», «զատկութէնի»)։ Բառերի մեջ «ո»-ն արտասանվում է «օ» և այդպես էլ գրվում է («ծօվ», «բարօվ»)։ «է» տառը բառերի սկզբում արտասանվում է «է» և այնպես էլ գրվում է («էրէս», «էրէգ», «էրկաթ»)։ «Կու» մասնիկի սովորական գործածությունը հաճախ ընդունում է «գու» ձևը («գուբանա»), մանավանդ յերբ կրճատվում է ձայնավորի պատճ («գ'ուղես»)։

Ուրիշ հեղինակներ Թիֆլիսի բարբառով գրելիս հաճախ յենթարկվել են գրական բարբառի ուղղագրության։ Այսպես, մինչդեռ Թիֆլիսի բարբառը գրեթե չե գործ ածում «ո» տառը, Միքայել Պատկանյանը («Մի՛լլի Մարդ» պիեսի մեջ տպված 1859-ին) գրում է «Հարոյ», «Փիփոյ», «Քեթոյ», «Սագոյ» և գործ է ածում Հ. Ալեքսիքյանի առանց «յ»-ի վրա բառը։ 1866 թվին Թիֆլիսում, մինասյան տպարանից մինասյան թատերասիրական շրջանի հրատարակությամբ լույս եյին տեսնում Գաբրիել Սունդուկյանի «Գիշերվան սարը խէր է» և բժ. Մ. Տեր-Գրիգորյանցի «Էս էլ քի մօցիկլութին», վոդեվիլները։ Մինչդեռ Սունդուկյանցն ամեն տեղ գրում է «որ» և միայն ծանոթության մեջ է ասում թե այդ բառը պետք է կարդալ «վուր». Տեր-Գրիգորյանցն ամեն անգամ էլ գրում է «վուր»։ Առհասարակ Տեր-Գրիգորյանցը Սունդուկյանից շատ է վեհագիր։ Մի քանի դեպքերում բայերի վերջից հանվում է «յ» տառը («չիմ կարա»)։ Բայց յերկուսն էլ յենթարկված են Մոսկվայի գրական դպրոցին և եյական բայերը միացնում են նախընթաց բային՝ «ասումին»։

Նույն թվականին Թիֆլիսում լույս տեսավ «Գարուն» ամսագիրը, վոր հրատարակում եր «Մեղու Հայաստանի» լրագրի նախկին խմբագիր Սահակ քահանա Մանդինյանը։ Բովանդակությամբ աղքատ մի գրական ձեռնարկություն, ամսագիրը ներկայացնում եր և մի ուղղագրական անկայուն և խառն դրություն։ Հոդվածների մեջ, տեսնում ենք և «ու»-ն «վ»-ի իրավունքների մեջ, տեսնում. ենք նրան նաև փոխարինված վեվով։ Բայց կա և մի շատ հետաքրքրական նորություն,—հոդվածներ կան, վորոնց ուղղագրությունը (այս առաջին անգամն եր յերևան գալիս արևելյան հայության մեջ) **հյուսվածքային** եր (տես, որինակի համար, ամսատետր 4)։ Ինչպես յերևում է հոդվածից, այդ ուղղագրական սիստեմը, վոր առաջին անգամ հանդես եր յեկել, ինչպես տեսանք, 18-րդ դարի առաջին կեսում մի գրաբար տպագրության մեջ, այժմ վերակենդանանում եր աշխարհաբար

գրականության մեջ Ներսիսյան դպրոցի մի աշակերտի, այն է՝ Ա. Տեր-Հակոբյանի ձեռքով։

Նրանից ավելի նշանավոր եր հանդիսանում, գարձյալ նույն 1866 թ. Սահակ Սահակյանն, վոր նոր վերջացրել եր Մոսկվայի համալսարանի պատմական բաժինը և ուսուցչության պաշտոնով հատատավելով Թիֆլիսում, ձեռք եր բերել Համբարձում Ենգիճանյանից «Կռունկ Հայոց Աշխարհին» ամսագրի հրատարակության իրավունքը, գարձրել եր այդ գրաբար վերնագիրը «Հայկական Աշխարհի Կռունկ», ապա պարզապես «Հայկական Աշխարհ»։ Սա այն Սահակյանն եր, վոր հետո կուսակրոն հոգևորական գարձավ և հայոնի յեր Խորեն Վարդապետ (ապա և յեպիսկոպոս) Սահակյան անունով։

Սահակ Սահակյանն իր խմբագրական գործունեության սկզբում անպակաս աղժուկ եր բարձրացնում հայ ընթերցող հասարակության մեջ իր համարձակ ուղղագրական նորամուծություններով։ Իբրև ուղղագրական ռեֆորմատոր, այս մարդը կատարել է մի գործ, վոր այսոր մանավանդ ստացել է կարևոր նշանակություն։

Արդեն Սահակյանն, իբրև Մոսկվայում դաստիարակություն ստացած մարդ, յենթարկված եր Մոսկվայի ուղղագրական դպրոցի ազդեցության և իր հետ Թիֆլիս եր բերել այդ դպրոցի գաղափարները. ամենից առաջ ի հարկե, եյական բայերի լծորդումը նախընթացող բայերի հետ։ Բայց ահա 1866 թվի №№ 6-7-ից սկսած «Հայկական Աշխարհն» ընդունում եր բացի դրանից և մի նոր ուղղագրական սխեմա, վոր գարգացնում եր հետևյալ ամսատետրակներում։ Այս ուղղագրության մի շարք կանոններ ներկայացնում եին Ջուղա—Ամստերդամյան—Ենգիճյան—Ռուսինյան փոխանցումների արդյունք։ Յուրացվում եին հոգնակի «էր» վերջավորությունը անունների մեջ, վեվագրություն ընդարձակ չափերով. «ռ»-ի փոխարինությունը «օ»-ով բառերի և մասնավորապես «ող» մասնիկի մեջ։ Սահակյանն գրում եր «տվված», «պատվական», «դժվար», «սկսվեցավ»։ Նա ընդունում եր «օվ»-ով վերջացող գործիականը, վոր մենք տեսանք Ջուղայի և Թիֆլիսի բարբառների մեջ—«գործօվ», «խօսքօվ»։ Բայց «Հայկական Աշխարհի» ռեֆորմատորն ուներ և իր սեփական գյուտերը։ Նա վտարում եր «յ» տառը բառերի սկզբից և փոխարինում եր նրան «հ» տառով, նույնպես և ջնջում եր բառերի վերջից, ուր նա չեր հնչվում։ Գրում եր՝ «հանձն առանք», «հաջորդ», «հուլիս»։ Գրում եր նաև «հետո»։ Վերջապես, Սահակյանն կուտագրության և առոգանության նշաններն էլ փոխարինում եր ռուսերենի մեջ գործածվող նշաններով։ Վերջակետը մի կետ եր, միջակետը՝ յերկու կետ, ստորակետը՝ միտում եր միևնույնը։ Մտցվում եին կետ և ստորակետ (;) , հարցական (?) և բացագանչական (!) նշանները։

Սակայն այս ամբողջ հեղափոխությունը՝ շատ կարճ ժամանակով։ Սկսելով 1866-ի սեպտեմբերին, Սահակյանն հաղիվ հազ կարողանում է տանել իր նորամուծությունները մինչև հաջորդ տարվա սեպտեմբերը, կազմվում է ընթերցողների մեջ մի սաստիկ հակառակություն, վոր և հարկադրում է Սահակյանին ինքնակամ հրաժարվել իր ուղղագրական ռեֆորմից։

«Հայկական Աշխարհի» մեջ այդ հասարակական դժգոհությունն արձագանգել և բավականաչափ ուժեղ կերպով և ուղղագրության պատմությունը չի կարող անտես առնել այդ բողոքը, վոր բնորոշում է հասարա-

կական հոգեբանությունը և ցույց է տալիս թե ինչ տրամաբանական հիմքեր ունի այն պահպանողականությունը, վոր յերևան է գալիս ազգային արժեքների պաշտպանության ամեն մի դեպքում։ Ուստի մենք կբերենք այստեղ մի հատված այն մատերմական նամակից, վոր Սահակյանն ստացել եր Մոսկվայից և տպագրել իր ամսագրում 1867 թվին (№ 9)։ Նամակը կըրում եր Ե. Ս. ստորագրությունը։

«Ասա, խնդրեմ,—հարցնում եր նամակագիրը,—ինչ ընդհանուր ազգային հառաջադիմության գործ է, վորին վոչ մի խելացի անգամ թող ասինք խելառ անգամ ևս, ձայնակից չի և ընդդեմ է։ Այդ չափազանց գիտասիրաբար են վարվում քեզ հետ։ Այս բոլորի նյութն է Քրիստոսի 406 թվականից սկսած հայկական գրականության դեմ ժխղանչականությունդ, քեզ պես են ուսումնական գտնվել և գտնվում են ազգի մեջ, ով համարձակեց ձեռք գարկել գեղեցիկ հարմարության գրականության և այլանդակել նորան, ինչպես «ձեր վեհմությունը»։ Ի՞նչ ոգուտ հառաջ յեկավ կամ կգա ձեր ձեռնարկությունից... և ով է ընդունում, բացի քեզանից։ Ամենքը գոչեցին, բողոքեցին մինչև փոքրը, բայց դու ուշ չդարձրեցիր, այնքան պինդ է համառությունդ։ Ժողովրդին ընթերցանություն է հարկավոր, ընթերցանություն և վոչ այլ, բեն, գիտ նոր ի նորո ուսուցանել։ Ցունվար հ-ով գրել, յայտարարությունը կամ յայտնությունը հ-ով, վոչինչ յառաջադիմություն չի յառաջանալ»։

Տպագրելով այս նամակը, Սահակյանն նույն համարի ծանուցումների մեջ գրում եր «Ձերը հայկական ազնիվ յերիտասարդներ, որագրիս բազմաթիվ բարեսեր ընթերցողներ, Գաբրիել յեպիսկոպոս Այվազյան և այժմ ահա վեհափառ Գեորգ կաթողիկոսն ուղղագրության նորաձևություններ կհերքեն և գիտնական ճշմարտության անունով կառաջարկեն հին ուղղագրությանը վերադառնալ, իսկ վոմանք կսպառնան «Հայկական Աշխարհը» ընթերցասիրելուց դադարել, ուստի «Հայկական Աշխարհի» խմբագրությունը չի կամենում ընդհանուր ցանկությանը ընդդիմանալ և արդելք լինել ընթերցողների և օրագրիս քարոզած ճշմարտությունների մեջ, ինչպես հայտնած ենք և առաջ։ Սա հասկանալի յե։ Ուստի ընթերցողներիս առաջարկությամբ հին ուղղագրությանը կվերադառնանք, մեր համոզմունքը անշուշտ մեզ կպահենք և անհույս չենք ամենևին, վոր նոր ուղղագրությունս ընդունվելու և տարածվելու յե անշուշտ մի որ հայերի մեջ»։

Սակայն Սահակյանն միանգամայն և արմատապես չեր հրաժարական տալիս իր ուղղագրության, այլ քայլ-քայլ և դանդաղորեն։ Ի վերջո նա իր համար ամուր պահեց մի քանիսը իր կերտառած ձևերից. (եյական բայերի լծորդ գրությունը նախընթաց բառերի հետ, «վրայ» առանց «յ»-ի, կրավորական ձևերի արտահայտումը «վ»-ով, «օ»-ով «ող» գրելը և այլն)։ Այս կանոններին նա այլևս չդրժեց մինչև իր մահը։

Նրա այս, յեթե կարելի յե ասել, «մեղմացրած» նորությունները ժառանգեց «Հայկական Աշխարհի» յետանդուն աշխատակից Գրիգոր Արծրունին, մտցնելով նրանց իր «Մշակ» լրագրի մեջ։ Տարինների ընթացքում «Մշակ»-ն ազատագրվեց միայն «օղ» (փոխանակ «ող» ձևից), իսկ Սահակյանից վերցրած առանձնահատկությունները ճնացին լրագրի մեջ նաև Արծրունու մահից հետո։ Այս չի նշանակում, սակայն, թե Արծրունին «օ»-ա-

սեր չէր։ Այս տառի գործածությունը նա պարտադիր էր համարում մանավանդ ոտար լեզուներից վերցրած բառերի մեջ—«եւրոպա», «Հօրինդոն»։

Յերկար ժամանակ արեւելահայ մամուլի մեջ միայն «Մշակ»-ն էր, որ պահպանում էր իր մեջ վորոշ չափով ինացորդներ ուղղագրական նորաձեւությունններից։ Մյուս պարբերական հրատարակությունները—«Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք» և ուրիշները ավանդական ուղղագրության հետեւողներ էին։ Այս ուղղագրության մեջ հետզհետե հաստատվում էր և ընդունելություն էր գտնում մի կանոն գրել—կրավորական վերջավորությունները վոչ թե «վ»-ով այլ «ւ»-ով («աուում», «խմբուում», և այլն), այնպես վոր, թե գործածության ընդարձակությամբ և թե գրաբարին համաձայնեցրած սկզբունքների հաստատությամբ այդ ուղղագրությունը համարվում էր անխախտ ու մշտական, ազգի ինքնատուն մասի կողմից ընդունված։

Բայց այս ընդհանրացած հասկացողությունը սկսում է սաստիկ խախտվել 1880-ական թվականների յերկրորդ կեսից։ Յեվ խախտողն էր մի մարդ, մի անհատ—ինքնուս, բայց տաղանդավոր մանկավարժ և գրող Ղազարոս Աղայանը։

Իր լեզվագիտական մարզանքը Աղայանն սկսել էր դեռ 1874 թվականից, տպագրելով «Հայկական հնչյունների մասին» վերնագրով մի բրոշյուր, վորի մեջ հետաքրքիր և սրամիտ դիտողություններ էր արտահայտում հայ բարբառագիտական և ուղղագրական մի շարք յերևույթների նկատմամբ։

1888 թվականին Ղազարոս Աղայանը խմբագրում էր «Աղբյուր» մանկական ամսագիրը։ Դեկտեմբեր ամսվա տետրակը նա բաց էր թողնում մի նոր ուղղագրությամբ, վոր այնուհետև կապվում է նրա անվան հետ և կոչվում էր նաև «հյունագրություն»։ Այս սիստեմի մեջ Աղայանը սեփական հեղինակություն գրեթե բոլորովին չուներ։ Մենք արդեն տեսանք, վոր «հյունագրությունը» գոյություն էր ստացել հայոց գրականության մեջ Աղայանից առաջ, այնպես վոր Աղայանին իսկապես միում է «հյունագրություն» պրոպագանդիստի և տարածողի դերը, վոր, պետք է խոստովանել, փոքր դեր չէր։ Այդ պրոպագանդին Աղայանը սկիզբ էր դնում հենց «Աղբյուրի» նույն ամսատետրակի յերկրորդ բաժնից, ուր գետեղում էր մի ընդարձակ հոդված՝ «Մի թեթև հրահանգ մեր լեզվի ուղղագրության մասին՝ «Աղբյուր»-ի աշխատակիցների համար» վերնագրով։ Այստեղ Աղայանին հատուկ բանավիճական յերկար շեղումներից բերվում էին մի քանի կանոններ բաղաձայն տառերի, դրանց մեջ և վեհահնչյուն «ու»-ի ուղղագրության մասին, ուր նա հանդես էր բերում գավառաբարբառների հնչյունական դրությունը լավ ուսումնասիրած և սրամիտ ու տրամաբանական ուղիղ դիտողություններով ոժտված ինքնուս մարդու ամբողջ հմտությունը։

Ղազարոս Աղայանի դեմ էլ ամենայն համառությամբ ծառացավ լեզվական պահպանողականությունը։ Բայց այժմ արդեն ուրիշ էին ժամանակները։ Աղայանը, ինչպես ասվում է, «վոգի ի բուին» պաշտպանում էր իր ընդգրկած սիստեմը և տեսնում էր, թե ինչպես հյունագրությունն աստիճանաբար տարածվում էր արեւելահայ մամուլի և գրականության մեջ։ Նյութը դառնում էր մի ամբողջ շարժուն, վոր գնալով նորանոր շրջաններ էր նվաճում իր համար։ Յեվ ինչպես ամեն մի նորույթի, հյունագրությունն էլ առաջացնում էր մի տեսակ ռեֆորմատորական ֆանատիկոսություն։ Պատերազմ էր հրատարակված «վ»-ի դեմ, վոր վտարվում էր իր դիրքերից բոլոր հնարավոր դեպքերում, այնպես վոր առարյա յերևույթ էր դառնում տեսնել գրության տարօրինակ ձևերի նոր և նոր որինակներ, ինչպես «Սուրբօր», «Մերւ» և այլն։

Այս առաջին որինակն էր մեր ուղղագրական վորոնումների պատմության մեջ, վոր-մի նորաձևություն ընդունվում էր առանց հարկադրանքի, հոժար կամքով, համոզմունքով։ Առաջին անգամն էր, վոր անհատական ձեռնարկությունը հասարակական շարժման կերպարանք էր ընդունում։ Հյունագրության ծավալումն այնքան էր ընդարձակվում, վոր նույնիսկ մի չտեսնված յերևույթ էլ էր ծնեցնում, այն է՝ նա մասամբ անցավ և արևմտահայ գրականության մեջ, և այս՝ շնորհիվ այն հանգամանքի, վոր հայ հեղափոխական կուսակցություններն իրանց գրականության մեջ կիրառել էին նույն և այս հյունագրությունը։ Նվաճվեց հաստատուն հող, նորաձևության սովորեցին գրեթե ամենքը, այնպես վոր այլևս հարկավորություն չէր մնում, վոր նրան պաշտպանեն և տարածեն Ղազարոս Աղայանն իր անսպառ յեռանդով և մոլեգնող անհողդողդությամբ։

Բայց Աղայանի մտցրած սիստեմը բացի «ւ»-ից ուրիշ ուղղագրական կարևորություն չէր ճանաչում։ Յեվ Աղայանի հետևողներից մեկն էր, վոր մի մասնավոր նորաձևություն էր ավելացնում հյունագրության վրա։ Դա Նիկողայոս Ադոնցն էր, վոր 1904 թվին Պետերբուրգում խմբագրեց «Բանբեր Գրականության և Արվեստի» վեցամսյա ժողովածվի յերկու գրքերը։ Առաջին գրքի մեջ Ադոնցը (վերջը պրոֆեսոր), ավանդական ուղղագրության էր պատկանում, իսկ յերկրորդ գրքում ընդգրկում էր Աղայանի հյունագրությունը, մի ընդարձակ հոդվածով, վորի վերնագիրն էր «Լեզվական—Ուղղագրական», առաջարկում էր վերացնել «յ» տառի գրությունը բառերի վերջում, յերբ նա չէ արտասանվում։ Այսպես էլ նա վարվում էր «Բանբեր»-ի յերկրորդ գրքի մեջ։ Բայց այս, ինչպես պետենք, մի նոր ուղղագրական դյուտ չէր, այլ միայն կրկնում էր Աետիանեի կիրառածը։ Նույն իսկ այն ժամանակ, յերբ Ադոնցը մանրամասն լեզվաբանական ուսումնասիրությամբ ապացուցանում էր նույն նորմուծության անհրաժեշտությունը, արևելահայ գրականության մեջ անձայն «յ»-ի վտարումը կատարում էին և այնպիսի մարդիկ, վորոնք լեզվագիտական բանասիրական պատրաստություններից զուրկ էին։ Այսպես վարվում էր, որինակ, բժիշկ Վահան Արծրունին իր բժշկական գրվածքների մեջ։

Հյունագրության դեմ 1910-ին, լեզվաբան Աետիանոս Մալխասյանը հրապարակ հանեց իր ուղղագրական սիստեմը, վորին նա տալիս էր «վեվագրություն» անունը։ Մենք գիտենք արդեն, վոր այս սիստեմն էլ նորություն չէր հայոց լեզվի մեջ և գալիս էր առնվազն 17-18-րդ դարերից, յերբ առևտրական կապիտալի մշակած և կազմակերպած ջուղայական ուղղագրությունը, ի միջի այլոց, նաև վեվագրությունն էր որենսդրում, և իր այդ որենքով սաստիկ ազդում էր առհասարակ աշխարհաբարի ուղղագրության վրա։

Աետիանոս Մալխասյանին վեվագրության մեջ պատկանում էր ճիշտ նույն դերը, ինչ ուներ Ղազարոս Աղայանը հյունագրության մեջ, այն է՝ գաղափարախոսի դերը։ Յեվ իր «Մի հնչյունին մի գիր», բրոշյուրի մեջ (Թիֆլիս, 1910) մանրամասն և համոզիչ լեզվաբանական պրպտումներով

նա ապացուցում եր, թե ինչու պետք է վեվահնչյուն «ու»-ն անպատճառ «վ»-ով պատկերացնել և ոչ յերբեք «ւ»-ով։ Բացի դրանից Մալխասյանը նամանավում եր Աղայանին և այն բանի մեջ, վոր մինչդեռ հները վորոշ բացառություններ կիրառում էին ուղղագրական նոր սիստեմի մեջ, նկատի առնելով գրաբարի մեջ նվիրագործված մի քանի ձևեր, սրանք յերկուսն իրենց հյունագրությունն ու վեվագրությունը տարածում էին անպայման բոլոր հին և նոր բառերի վրա։

Այսպիսով մեր գրականության մեջ առաջ էին գալիս յերկու անհաշտ բևեռներ, յերկու կատաղի հակոտնյաներ։ Մինչդեռ հյունագրությունը միայն բառերի սկզբում եր ճանաչում «վ»-ի գոյության իրավունքը, վեվագրությունն էլ «ւ»-ին հատկացնում եր միայն յերկու յերկբարբառներ կազմելու իրավունքը (իւ, ու)։ Մնացած բոլոր տեղերում, նույնիսկ «ու» յերկբարբառի մեջ «ւ»-ը իր տեղի պիտի տար «վ»-ին։ Միայն «եւ» հնչյունի վերաբերմամբ եր Մալխասյանը թույլ տալիս մի բացառություն։ Յերբ այդ բառը սկսվում եր գլխագրով կամ գտնվում եր գլխագիր շարվածքի մեջ, պետք է գրել «վ»-ով—«Եվ» իսկ յերբ սովորական բառերով եր գրվում, պետք է գրել «վ»-ով—«եվ» և միայն «իւ», միացած «յեվ» նշանագրի մեջ։ Այս, ի հարկե, մի կամայական շեղում եր սեփական գիտական կառուցվածքից, վոր թույլ եր տալիս կարծելու, թե այն զիջումը Մալխասյանն անում եր բռնազատված արագագրության, սազագրության պայմաններից, վոր արհամարհելի պահանջ չեն։

Հատկապես վեվագրության և անցողակի նաև հյունագրության դեմ նույն 1910 թվին դուրս յեկավ Վիեննայի Մխիթարյաններից լեզվաբան Հ. Գաբրիել Մենեվիշյանը, հրատարակելով մի բրոշյուր, վորի վերնագիրն եր «Հայերեն լեզվի ուղղագրության խնդիրը» և վորի մեջ ապացուցանում եր թե սխալ են յերկու տեսակ գրություններն էլ—թե հյունով և թե վեվով։ Բանավեճը մղվում եր տաք, նույնիսկ կրքոտ կերպով։

Մալխասյանի ռեֆորմից մի տարի անց, 1911-ին, Մոսկվայի «Եմինյան Ազգագրական ժողովածու»-ի ութերորդ հատորում տպվեց լեզվաբան Հրաչյա Աճառյանի «Հայ բարբառագիտությունը»։ Այս գործի առաջաբանի մեջ Աճառյանը առաջարկում եր, սոսկ բարբառագիտության համար, միանգամայն անջատ գրական ուղղագրությունից, մի գիտական ուղղագրություն, հիմնված գարձյալ «մի հնչյունին մի գիր» սկզբունքի վրա։ Այդ սկզբունքի տեսակետից, նա ավելորդ եր համարում ե, ո, տառերը և առաջարկում եր «ե»-ի տեղ գործ ածել «է», (որ. «էրկ»), «ո»-ի տեղ՝ «օ» (որ «օսկի»), իսկ ուր «ո»-ի մեջ պահվել եր «վ»-ի հնչյունը, գրել «վօ»—«վօսկի»։ վեվի հնչյուն ունեցող «ւ»-ի տեղ գրել «վ», (որ. «հավ», «թավ

ելին պատասխանել այն դեպքում, յերբ չպիտի կարողանան գնալ եջմիածին: Հարցացուցակն, ինչպես հայտարարված է նրա վերջում, կազմել եր, Հանձնաժողովի հանձնարարությամբ, նրա անդամ Մանուկ Աբեղյանը:

Մենք վոր հնար չեղածին չափ ծանոթացել ենք ներկա տեսության մեջ զանազան ժամանակ առաջադրված ուղղագրական փոփոխությունների մանրամասնությունների հետ, չպիտի, ի հարկե, կարողանանք անպես առնել հայ ուղղագրական զարգացման այս կարևոր փաստաթուղթը, վորի մեջ շոշափված են այսոր ել իրանց այժմեյությունը չկորցրած բազմակողմանի հարցեր: Ուստի կրկրենք քաղվածքներ նրա կարևոր մասերից (տես «Արարատ» ամսագիր Էջմիածնի, 1913, յեր. 864—867):

Հարցերը բաժանված ելին յերկու կարգի: Առաջին կարգը վերաբերվում եր այն դեպքին, յերբ պատասխանողը գտնում եր թե ուղղագրական նոր դրություն առնապարակ չպիտք է ստեղծել: Իսկ յերկրորդ կարգը վերաբերում եր այն դեպքին, յերբ պատասխանողը գտնում եր թե ուղղագրության մեջ անհրաժեշտ է կատարել փոփոխություններ:

Առաջին կարգի հարցերը դասավորվում ելին այսպես.

1. Ինչո՞ւ պետք չի և կարելի չե փոփոխություն մտցնել մեր ուղղագրության մեջ:

2. Ի՞նչ կարծիք ունեք ուղղագրության միության մասին:

3. Ի՞նչից և առաջանում մեր ուղղագրության մեջ փոփոխություններ մտցնելու ձգտումը, վորով ուղղագրության խնդիրը շարունակ արծարծվում է և հետզհետե նորանոր փոփոխությունների յենթարկվում:

4. Ինչպես պետք է վերաբերվել մեր ուղղագրության մեջ հնարքին, արդյոք պիտի թողնել ամեն, թե պետք է և կարելի չե վորևե ձևով վորոշ ուղղություն տալ այդ ձգտումներին կամ դրանց առաջն առնել հանուն ուղղագրության միակերպության: Յեվ յերե կարելի չի և պետք է այդ անել՝ ով և ինչպես պետք է անի:

5. Յերե անհրաժեշտ է միակերպ ուղղագրությունը, հարկավոր չե՞ արդյոք միակերպության վերածել տատանվող ուղղագրական ձևերը (թանկ – թանգ, գունտ—գունդ, վաղճան—վախճան, ծնող—ծնող և շատ նմանները). ինչպես պետք է ընթացք տալ այդպիսի բառերի դրության մեջ:

6. Ինչպես պիտի վերաբերվել առանձնապես վ հնչյունի վ, ւ, ու նշանագրերով վոչ-միակերպ ուղղագրական ձևերին (աստուել, աստւել, աստվել): Արդյոք պիտի թողնել այդ տարբեր դրություններըը, թե պետք է և կարելի չի այժմ ուղղագրությունն այդ մասին միակերպության վերածել և ինչպես:

7. Ունե՞նք արդյոք մեր գրական լեզվի մեջ յերկու տարբեր հընչյուն վ բաղաձայնի համար, ինչպես կարծում են, մեկը կոչտ վ (ծով), մյուսը փափուկ ւ (հաւ), թե՞ դա լոկ սխալ հասկացողություն է, և մենք միայն մի վ հնչյուն ունենք, և վազել, կով, աւազ, հաւ բառերի մեջ նույն վ հնչյունն է, գրության ձևով միայն տարբեր: Արդյոք վ հնչյունն ունեցող ու-ն՝ պատուհան, գուարթ և նման գրություններուի մեջ կիսաձայն ու է (բաղաձայնական ու ձայնավոր), թե բաղաձայն վ հնչյունով:

Յերկրորդ կարգի հարցեր.

1. Ինչո՞ւ պետք է փոփոխություն մտցնել ուղղագրության մեջ:

2. Արդյոք ճիշտ է այն կարծիքը, թե ուրիշ ազգերը փոփոխություններ չեն մտցրել և չեն մտցնում իրենց դժվար ուղղագրության մեջ: Վո՞րչափ արժեք կարող են ունենալ մեզ համար այն հիմունքները, վորոնցով առաջնորդվում են ուրիշ ազգերն իրենց լեզվի ուղղագրության մեջ փոփոխություն մտցնելու նկատմամբ:

3. Ի՞նչն է պատմականորեն անփոփոխ մնացել մեր ուղղագրության մեջ և ի՞նչը փոփոխության յենթակա չե յեղել և ն:

4. Վո՞րչափով կարևոր է և հնարավոր է մեր ուղղագրությունը մոտեցնել արտասանությանը:

5. Մինչև վո՞ր աստիճան տեղական արտասանություններն արգելք կլինեն ուղղագրությունն արտասանությանը մոտեցնելուն: Կա՞ արդյոք ընդհանուր գրական արտասանություն վորոշ տառերի համար, վորոնց ուղղագրությունը դժվարություն է պատճառում:

6. Վո՞րչափ ճիշտ է այն կարծիքը, թե վորևե փոփոխություն մեր ուղղագրության մեջ պատճառ կլինի ամբողջ ուղղագրության տակն ու վրա լինելուն: Չկա՞ արդյոք մի սահման, վոր ամենքի համար ընդունելի պիտի լինի և վորից այն կողմն անցնելն անհնարին և իսկապես վո՞ր տառերի ուղղագրությունն անձեռնմխելի պիտի մնա:

7. Հատկապես ի՞նչպիսի և ի՞նչ փոփոխություններ և ի՞նչ միջոցներով հնարավոր է անել, վոր ուղղագրության միությունը չխանգարվի և բառերի պատկերը միանգամից մեծ փոփոխության յենթարկվի:

8. Կարելի՞ չի արդյոք օ տառը դուրս ձգել և օ-ի տեղ միշտ ո գրել. յերե այդ կարելի չե, կարելի՞ չի արդյոք այժմ պահելով բառերի սկզբի օ տառը, բառերի մեջը և վերջը օ-ի տեղը ո գրել: Ի՞նչն է արգելք լինում այդ փոփոխությանը: Արդյոք արժեք ունի՞ այստեղ օ-ով գրվող բառերի ստուգաբանությունը: Վորքա՞ն դյուրություն առաջ կգար դրանով և վորքա՞ն բառերի պատկերը կփոխվեր:

9. Ա) Կարելի՞ չի արդյոք է տառը դուրս ձգել և է-ի տեղ միշտ ե տառը գրել: Բ) Յերե այդ կարելի չե, կարելի՞ չի արդյոք պահելով բառերի սկզբի է տառը, բառերի մեջը և վերջը է-ի տեղ ե գրել. վո՞րքան արգելք կարող է լինել այս փոփոխությունը է-ով գրվող բառերի ստուգաբանությանը: Գ) Յերե այդ էլ կարելի չե, կարելի՞ չի արդյոք է տառը պահել բառերի սկզբում և այն դեպքերի համար, վորոնց մեջ է-ն բառակազմության ժամանակ փոխվում է ի հնչյունի, իսկ մնացած դեպքերում գրել ե տառով: Դ) Յերե այդ էլ կարելի չե, կարելի՞ չի արդյոք է տառը պահել բառերի սկզբում, վերջում, մեջը ձայնավորից առաջ, բայերի վերջավորություններուի մեջ (գրէր, գրեցէք, գրէք) և այն դեպքերում, յերբ է-ն փոխվում է ի հնչյունի, իսկ մնացած դեպքերում գրել ե տառով փոխանակ է-ի (յեղեգն, աղվես, գմբեթ, պատճեն, ծակոտկեն և այլն): Վո՞րքան դյուրություն առաջ կգար այս վերջին փոփոխությամբ և վո՞րքան շատ բառերի պատկեր կփոխվեր:

10. Կարելի՞ չի արդյոք յ տառը պահել միայն կիսաձայնի հա-

մար ա և ո ձայնավորներից հետո, իսկ բառերի սկզբի յ-ի տեղ գրել հ տառը և բառերի վերջի անձայն յ տառը դուրս ձգել։ Յեթե այդ կարելի չէ, կարելի՞ չե արդյոք, պահելով բառասկզբի յ-երը, բառավերջի անձայն յ-երը դուրս ձգել։ Վո՞րքան դյուրություն կլիներ դրանով և վո՞րքան կփոխվեր բառերի պատկերը։

11. Կարելի՞ չե արդյոք այժմ եա, եօ, իւ, ոյ (լոյս) յերկբարբառների գրության մեջ փոփոխություն մացնել։

Այս հարցացույցակը ցույց և տալիս թե վորքան բազմակողմանի և լուրջ ուղղագրական խնդիրների հետ պիտի գործ ունենար խորհրդակցությունը, յեթե նա կազմակերպված լիներ ինչպես հարկն է և միջոց ունեցած լիներ կատարելու իր պարտականությունը լուրջ զբաղմունքների միջոցով։

Բայց այսպիսի կազմակերպություն չի յեղել և Հոբելյանական Հանձնաժողովը, ինչպես յերևում է, ավելի տարված և յեղել հոբելյանական տոնը պատարագներով, մաղթանքներով, ուխտագնացություններով պարապելու յեռանդով քան այսպիսի մի մեծ ակադեմիական գործով տոնը հավերժացնելու ցանկությամբ։ «Արարատ»-ի մեջ տպված նկարագրությունից մենք իմանում ենք, վոր «ուղղագրական խորհրդակցության» հատկացված և յեղել տոների վերջին որը, յերբ յեկած պատգամավորների մեծամասնությունն արդեն ցրված եր։ Պատգամավորների ցուցակը մեզ ցույց և տալիս թե նրանց մեջ չափազանց քիչ եյին այնպիսինները, վորոնք ի վիճակի լինելին վորոշ հետաքրքրություն ցույց տալ գեպի ուղղագրության հարցը։ Հանձնաժողովի հրավիրագրերն այսպիսով չեյին հասել իրենց նպատակին, թեև մյուս կողմից հիշատակվում է, վոր բանասերներից վոմանք ուղարկել եյին իրենց պատասխանները։ Խորհրդակցությունն իսկապես տեղի չի ունենում։ Որվա ամբողջ հետաքրքրությունը կազմում է Մանուկ Աբեղյանի շատ ընդարձակ զեկուցումը ուղղագրության մասին։ Սակայն նա այնքան շատ ժամանակ է խլում, վոր այլևս միջոց չե մնում նույնիսկ մոքերի մի պարզ փոխանակություն կատարելու համար։ Սաեփան Մալխասյանը չե կարդում իր դատախոսությունը նույն նյութի մասին, մինչև անգամ չեն կարդացվում զրսից ստացված պատասխանները։ Ամբողջ «խորհրդակցությունն» այն է լինում, վոր ժողովը, Սաեփան Կանայանի նախագահությամբ, վորոշում է ամբողջ ուղղագրական հարցը հանձնել հայագետների և հայագիտությամբ զբաղվողների կարգադրության և ինքը ցրվում է։

Հարցն, այսպիսով, փոքրացվում եր, զրվում եր նշմարժնական հայագետների և հայագիտությամբ զբաղվողների փոքրիկ ու նեղ շրջանակի մեջ։ Իսկ այս շրջանակն ավելի ևս փոքրացրեց իր խնամքին հանձնված գործը և վորոշեց, ինչպես կարդում ենք «Արարատ»-ի մեջ, «դիմել վեհափառ Հայրապետին, հրավիրել ս. Էջմիածին հայագետների զանազան կողմից, վորոնք և կլուծեն այդ ծանր խնդիրը» (յեր. 24, հոկտ. հավելվ.)։

Այսպիսով ստացվում եր այն դրությունը, վոր պատկերացվում է, «սարը յերկնեց և մուկ ծնեց» խոսքերով։

Յեվ, յեթե այդ ամբողջ աղմկալից ձեռնարկությունից մնացել է մի բան, այդ Մանուկ Աբեղյանի ընդարձակ զեկուցումն եր, վոր տպվեց «Արարատ»-ի յերկու համարներում (1913, նոյեմբեր—դեկտեմբեր) «Մեր ուղղագրության մասին» վերնագրի տակ։

Ահա ինչ եր ասում նա իր զեկուցման սկզբում։

*«Ամենից առաջ, առանց յերկար բացատրությունների մեջ մըտնելու, պիտի շեշտեմ մի սկզբունք, վոր ընդհանուր ընդունված է բոլոր ազգերից, դա այն է, վոր ամեն գրական լեզվի համար միակերպ քերականության հետ անհրաժեշտ պայման է նաև **միակերպ ուղղագրությունը**, վորով պահվում է գրական լեզվի միությունը, և զանազան բարբառների մարդիկ, վորոնք խոսելիս հաճախ տարբեր արտասանության են հետևում. իրար գրածը հեշտությամբ հասկանում են։ Դրա մեջ է հենց գրական լեզվի և գրավոր խոսքի մեծ նշանակությունը։*

«Կենդանի լեզվի պիտաց գրությունն անշուշտ մի պայմանական բան է, վոր մենք կարող ենք փոփոխել, դա խոսուն լեզվի պայմանական պատկերն է միայն, վոր գծագրում ենք և ուրիշները գրանով ըմբռնում են մեր մտքերը։ Հասկանալի յե, վոր կենդանի խոսքի պատկերներն ընդհանուր ընդունված պիտի լինեն, ուրիշ խոսքով, ուղղագրությունը միություն պիտի ունենա, վորպեսզի նույն լեզուն խոսող մարդիկ կարողանան մեկ մեկու գրածը հեշտությամբ վերլուծել։ Բացի այդ՝ բառերի պատկերները գարե գար էլ չպիտի մեծ փոփոխությունների յենթակա լինեն, վորպեսզի հաջորդ սերունդները չը կարվեն նախորդների հետ գրի միջոցով ժառավոր հաղորդակցություն ունենալուց։ Յեթե չլինի ուղղագրության այս ընդհանուր և տևական միությունը, չի կարող գոյություն ունենալ և մի ընդհանուր գրական լեզու։ Հայերենի համար ավելի մեծ է այս պայմանի նշանակությունը, քանի վոր մենք ունենք այսոր յերկու գրական լեզուներ, վորոնք նույնանում են գոնե միակերպ ուղղագրությամբ։ Ուստի հենց սկզբից պիտի ասեմ, վոր յեթե վորևե փոփոխություն պետք է մեր ուղղագրության մեջ ավելի խառն դրություն մացնի և մեր գրական լեզուներն իրարից ավելի հեռացնի, ավելի լավ է վոր չլինի։ Այս պատճառով այս խնդրին պետք է շատ մեծ զգուշությամբ մոտենալ» (յերես 1047—1048)։

Ինչպես տեսնում ենք Աբեղյանը շատ մեծ զգուշությամբ եր մոտենում իր առաջ դրած հարցերին։ Փոփոխությունը նա գտնում եր անհրաժեշտ հնչյունաբանական հիմքերի վրա և այս կետում շատ հիմնավոր առարկություններ եր անում հակառակը պնդողներին, չմոռանալով և այնպիսիներին, վորոնք հարցնում եյին թե ինչո՞ւ ոտարազգիները փոփոխություն չեն մացնում իրենց ավելի դժվար ուղղագրությունների մեջ։ Աբեղյանը բացատրում եր և այդ յերևույթը, ինչպես նաև այն, վոր ոտարները չեն կարող օրինակ լինել հայերի համար։

Ուղղագրական փոփոխությունը պիտի հիմնված լինի հնչյունական գրության վրա։ Նա չի կարող վերաբերվել բաղաձայն տառերին, քանի վոր բաղաձայնները վորոշ սիաձև և ընդհանրացած հնչյուններ չունեն։ Մնում են ձայնավորներից մի քանիսը, վորոնք հնչյունական փոքր ի շատե կայուն գրություն ունեն արևմտահայ և արևելահայ գրական և գպրոցական արտասանության մեջ։ Այս ձայնավորների մեջտավայրում էլ փոփոխությունները չպետք է լինեն այնպես, վոր դրանցից փոխվի բառերի պատ-

կերը։ Աբեղյանի կարծիքով, այդ բանին կարելի չէ հասնել իր ծրագրած մասնակի փոփոխություններով, որոնց էությունը հետևյալն է.

1. «Օ» եվ «Ո» տառեր։ Ապացուցելով որ այս չերկու տառերը միևնույն հնչյունն ունեն, առաջարկում է դեն դցել «օ»-ի գործածությունը և փոխարինել նրան «ո»-ով։ Այս բանը, սակայն, դժվարություն և ներկայացնում այն դեպքում չերբ «օ»-ն գրվում է բառերի սկզբում, որովհետև չեթե այստեղ էլ նրա տեղ դնենք «ո», այն ժամանակ չենք ստանա «օ»-ի հնչյուն, քանի որ դպրոցական արտասանությունը «ո»-ին բառերի սկզբում տվել է չերկբարբառ մի հնչյուն վո։ Կարելի չէ «ո»-ն թողնել և բառերի սկզբում, չեթե նա գրվեր «վ»-ի հետ։ Բայց այս կլիներ ուղղագրության մի չերկրորդ ատիճան, որ չպետք է կիրառել այժմ, այլ պետք է թողնել ապագային։ Այստեղից անհրաժեշտություն—բառերի սկզբում «օ»-ն թողնել անփոփոխ։

Այստեղ շոշափվում է չերկբարբառների հարցը։ Մեր հեղինակն ասում է, թե ինքը չէ գնում այդ հարցը։ Յեթե, որինակ, «հօթը» բառի մեջ պետք է «օ»-ն փոխարինել «ո»-ով և գրել «հոթ», այն ժամանակ այդ ձևն էլ կլինի սխալ, որովհետև «հո» չերկբարբառի ուղղագրությունը պիտի լինի «յ»։ Իսկ «յ»-ով կազմած չերկբարբառների մուծումը նա համարում է անհնարին։

2. «Ե» և «է» տառեր։ Ձիշտ միևնույն դրության մեջ են և այս չերկու տառերը, չերկուսն էլ նույնահնչյուն են։ Պետք է պահել նրանցից մեկը և այս պիտի լինի «ե»-ը։ Սակայն այստեղ էլ նույն դժվարությանն ենք հանդիպում այն դեպքում, չերբ «է» տառը գտնվում է բառերի սկզբում։ Այստեղ նրան փոխարինել «ե»-ով Աբեղյանը համարում է անկարելի, ուստի և թողնում է «է» տառը բառերի սկզբում անփոփոխ։ Այստեղ էլ կա,—ասում է մեր հեղինակը,—հնարավորություն «է»-ի տեղ «ե» դնելու, չեթե ընդունենք «յե» չերկբարբառը։ Բայց չերկբարբառների հարցը, ինչպես տեսանք և վերևում, Աբեղյանը մի կողմ է թողնում։ Պահելով, այսպիսով, «է»-ն բառասկզբում, Աբեղյանը չի ընդունում, որ բառամեջերում էլ անխտիր «է»-ն փոխարինվի «ե»-ով։ Բացառություն պիտի կազմեն այն սակավաթիվ բառերը, որոնց մեջ «էա» կապակցություն կա։ Յեթե այդ «էա»-ն փոխարինենք «եա» կապակցությամբ, կառաջանա շփոթություն։ Թեև ընդունվում է, որ բացառությունը միայն այս դեպքը պիտի կազմե, բայց նրանից դուրս էլ զեկուցողը մի քանի շեղումներ է տեսնում և թույլատրելի չի համարում, որ «է» տառը ՚ից և բառերի վերջում, «քանի որ այս դրությունն—ասում է նա,—ընդհանուր ընդունված է և շատ որոշ է», նույնպես և բառերի սկզբին ու վերջը փակ վանկերում և բառերի սկզբում ու մեջը «ա», «ի», «ո», «ու» ձայնավորներից առաջ։

3. «Ց» տառը։ Այս «յ»-ն կիսաձայն է, որ դարերի ընթացքում չենթարկվել է հնչյունական փոփոխությունների։ Բառերի սկզբում նա հընչվում է «հ», իսկ վերջում, մեծագույն մասամբ, կորցրել և իր ձայնը և չի կարդացվում։ Արդ՝ կարելի՞ չէ բառերի սկզբում «յ»-ն փոխարինել «ե»-ով։ Թեև հնչյունական դրությունը տալիս է այդ իրավունքը, բայց ռեֆորմի հեղինակը **աճկատելի** չի համարում այդ։ Ահա նրա խոսքերը. «Այս փոփոխությունը սակայն չես համարում եմ մի չերկրորդ ատիճանի փոփոխություն, որ կարելի չէ այժմ անել. դրանով՝ քանի որ բառամիջի «օ»-երն էս «ո» պիտի դրել, մի քանի բառերի պատկերները շատ կփոխվեին, ինչ-

պես՝ հոդ, հոժար, հոնք, հոշոտել, հորանջել, հորինել, իսկ «յեռուն» բառը, վերջին «յ» ատի դուրս ընկնելով կստանար «հեռուն» կերպարանքը»։ Ուստի առաջարկում էր բավականանալ «յ» կիսաձայնը դուրս գցելով բառերի վերջից, ուր նա չի արտասանվում։

4. «ի», «վ», «ու» տառերը։ Այստեղ Մ. Աբեղյանը չունի առաջարկելու սեփական ուղղագրական ձևեր, այլ միայն խոսում է Ղազարոս Ագայանի հյուսնագրության և Ստեփանոս Մալխասյանի վեհագրության մասին։ Գիտական տեսակետից սխալներ և գտնում Ագայանի ուղղագրական դրության մեջ, մինչդեռ Մալխասյանի դրությունը ավելի մոտ է համարում գիտական ճշմարտության. թեկուզ և վոչ զերծ սխալներից։ Չնայած այս բանին, Աբեղյանն առաջարկում է ընդունել Ագայանի սիստեմը մի քանի նկատառումներով, որոնք հետաքրքրական են և այսօր։ Առաջինն այն է, որ Ագայանի ուղղագրությունը շատ է տարածված, այնպես որ դարձել է գրեթե ամբողջ չերիտասարդ սերնդի սեփականություն։ «Լեզուների մեջ, ասում է հեղինակը, շատ անգամ մի սխալ բան է մտնում, բայց սխալն ընդհանրանալուց հետո տևական են հաշտվել չեզածի հետ»։ Մի ուրիշ նկատառում էլ նա առաջ է բերում, չերբ բացատրում է, թե ինչու Մալխասյանի վեհագրությունը գործնականի մեջ հաջողություն չունեցավ։ Նա ասում է. «Ուղղագրությունը փոխելու համար բավական չէ միայն գիտական ճշտությունը, այլ հարկավոր է նաև մի ուրիշ պայման, այն, որ ընդունելի լինելու համար, պետք է շատ բառերի պատկերը չփոխվի և բառերի պատկերը շատ չփոխվի»։ Արդ, հայերենում «վ» շփականը միայն «վ» բառաձայնով գրելիս՝ միանգամից այնքան շատ բառերի պատկերներ են փոխվում և բառերի պատկերներն այնքան շատ են փոխվում, թեկուզ «վ» միշտ աչքի ընկնող մեծությամբ, որ չես չեմ կարծում թե մեր գրագետները հեշտ հաշտվեն դրա հետ, որովհետև գործնականի մեջ անհաջողության չհանդիպելու համար՝ այսպես թե այնպես՝ նկատի պետք է ունենալ դրագետների դյուրությունը, որոնք բառերը վոչ այնքան տառերով են կարդում, որքան ընդհանուր պատկերով։

Ի վերջո, գալով գործնականին, թե ով պիտի վերջնական և ամենքի հարմար պարտադիր որոշումներ կայացնի ուղղագրության այս կամ այն ձևի մասին, Աբեղյանը կարծիք էր հայտնում թե պետք է մասնագետներից կազմակերպվի մի հեղինակավոր խորհուրդ, որ քններ հարցերը և ընդուներ կամ մերժեր առաջարկվող ձևերը։ Այդ խորհուրդը կազմակերպողը պիտի լիներ հոգևոր իշխանությունը, որի ձեռքի տակ եչին գտնվում ըզպրոցները։ «Բայց հոգևոր իշխանությունը,—ասում էր նա—մենակ բավական չեն. այդ գործին պետք պիտի անցնի նաև հայ գրողների ընկերությունը Թիֆլիսում և հայ գրագետները Կ. Պոլսում, որպեսզի խորհրդի որոշումն ընդունելի լինի և գրագետների կողմից։ Դժբախտաբար չես հետու չեմ Թիֆլիսի գրագետների միությունից, բայց կարծում եմ, որ ինչպես և ինչ նպատակով էլ լինի այդ ընկերության կանոնադրությունը, նա պարտավոր է և կարող է հոգալ մեր ուղղագրության միակերպության մասին, քանի որ ուղղագրությունը վոչ միայն դպրոցներին է հարկավոր, այլ և նույնչափ և ավելի իրենց, գրագետներին և վերաբերում»։

Իր զեկուցումը Մ. Աբեղյանը յեզրափակում էր հետևյալ խոսքերով

«Իսկ մինչ այդ, չես միայն մի բան կարող եմ ասել, որ մեզնից

ամեն մեկն ել ինչքան կուզե թող խորհի ու գրի մեր ուղղագրության մասին, բայց չերբեք իրեն չհամարի մի Ակադեմիայի հավասար, և ինչ վոր ինքը ժառանում և ու ճիշտ և հաժարում, չերբեք իրավունք չունի և անմիջապես գործադրելու։

«Ավելի լավ և ուղղագրությունը լինի սխալ ու դժվար, բայց մի՛ակերպ։ Յես կվերջացնեմ խոսքս ինչով վոր սկսեցի. փոփոխություն իմ կարծիքով, պետք և և կարելի յե անել վորոշ չափով. բայց չեթե վորևե փոփոխություն պիտի վերացնի մեր ուղղագրության միությունը և մեր չերկու գրական լեզուներն իրարուց ավելի հեռացնի, ավելի լավ և, վոր չլինի։ Իսկ մեր ամեն՝ իրենց մի մի ակադեմիա կարծող՝ անհատների փոփոխություններին ավելի բան չի վիճակված, բայց չեթե մի նոր խառնուփնթոր դրություն մտցնել մեր ուղղագրության մեջ»։

1913-ի ուղղագրական ձեռնարկության պատմությունն ամբողջացնելու համար մեզ մնում և ծանոթություն տալ և այն մասին, թե ինչ ընդունելություն գտավ այն հարցացուցակը, վոր Հորելյանական Հանձնաժողովը ուղարկել եր ոտար և հայ բանասերներին։ Սրա համար ոգտվում ենք Գևորգ կաթողիկոսի դիվանատան մի գործից, վոր հատկապես նվիրված և ուղղագրական աշխատանքներին և վոր դրված և մեր տրամադրության տակ Ուղղագրական Հանձնաժողովի ջանքով։

Ինչպես չերևում և, հարցացուցակին այն բոլոր մարդիկ չեն պատասխանել, վորոնց ուղարկված և չեղել նա։ Պատասխաններ ուղարկել են չերկու նշանավոր հայագետներ—ակադեմիկոս Մառ և պրոֆեսոր Մեյե։

Այս չերկու գիտնականների նամակները դնում ենք այստեղ ամբողջովին։

Ակադեմիկոս Ն. Մառի նամակը.

«Ի պատասխան ուղղագրության վերաբերեալ 11 հարցին պատիվ ունիմ հաղորդելու, որ գլխավոր հարց մոռացած է առաջարկված հարցերի մեջ, այսինքն Յորելեանական Յանձնաժողովը մտադիր է նոր գրական լեզուի մեջ պատմական ուղղագրություն պահել թե հնչիւնաբանական, նոր գրական լեզուի հիմունք կազմող ռամկական (ռամկերէն) լեզուի իրական հնչիւնների համապատասխան տառադարձություն տալ. եթե դէպի վերջին լուծում է տիրում ընդհանուր հակումն, այն ժամանակ ոչ տառնումէկ, այլ հարիւր և տառնումէկ փոփոխություններով գործը չի գլուխ գայ. եթե պատմական ուղղագրությունը պահել է ցանկալի, այն ժամ բնաւ ոչինչ չպէտք է փոխուի, ընդհակառակ ինչ որ փոխուել է, պիտի վերականգնուի. իսկ եթե ուղղագրության մեջ ոչ իրական պատմական և ոչ իրական հնչիւնաբանական, այլ այսպէս ասած միջին ճանապարհը մտադրություն կայ պահել, դա արդէն արուեստական մի նոր, թուով երրորդ ուղղագրություն ստեղծել կը նշանակէ, մի տեսակ քաղաքագիտական «կօմպրոմիս» մշակել ուղղագրության մեջ գրողների համար, այսինքն հայերիդ համար. դա գուցէ մեծ կարևոր ազգային հարց է, գուցէ գործնական, բայց գիտական հարց չի երևում ինձ։

Ինչ և իցէ, կայ և միւս դժուարությունը. մինչև անգամ չունին փոփոխություններ ներմուծելու համար հարկաւոր է իրական հասկ-

ցողություն ունենալ հայոց լեզուների (հայերէնի և «ռամկերէնի» լեզուագիտական տերմիններով)՝ երկու լեզուների ծագման և զարգացման մասին, իսկ մի՛թե Յորելեանական Յանձնաժողովի մեծայարգ անդամները այն կարծիքին են յանգել, որ հայոց լեզուներից կամ մեկը կամ միւսը արդէն պարզուել է յիշուած կողմերից, մի՛թէ ծագման վերաբերմամբ նոցա լուսի բաւարարութիւն և տալիս մինչև այսօր եղակի տիրապետող հնդեւրոպական տեսութիւնն ու չեն զգում որ հնդիկեւրոպական կամ հնդեւրոպական լեզուագիտութիւն հակայական քայլերով յառաջադիմութիւն է անում, իսկ նրանից դեկավարուած հայագիտութիւն ամենաւաւ դէպքում տեղից չէ շարժւում. կամ անհեթեթ բաներ մեկ միւսի վրա է ասում։ Երևի այսպիսի յարաբերութիւն էլմիածնում չի տիրապետում, տեսնում եմ նուէն իսկ նոր և նոր հանդիսաւոր ժողներ կազմակերպելուցդ գուարճալի տրամադրութիւն է տիրում և իմ տխուր ձայնով աւաղ դատապարտուած եմ «միաձնակեցութեան» մեջ ինալ»։

Պրոֆեսոր Մեյեյի նամակը.

Je reçois la circulaire relative à un réforme de l'orthrographe arménienne. Un étranger ne peut guère se mêler de ces choses. Je me permettrais cependans de noter que, dans une nation où il n'y a pas d'autorité capable d'imposer une certaine orthographe, le plus sage est de s'en tenir à l'othographe traditionelle. Car une orthographe médiocre,mais acceptée de tous, vaut mieux que l'anarchie orthographique. Il est certain qu'on pourras avec avantage supprimer է et օ, qui sont supperflus et réserver յ au cas où la valeur est celle d'un Jod. Mais il importe de se tenir aux usages traditionelles. Il ne faut pas mettre ւ après consonne, *(աւել)*. C'est trop contraire à la tradition et par suite laid. Si l'on corrige, c'est *աւել* qui convient. En somme, je vois plus le danger que l'utilité d'un changement.

Անցնելով այժմ մյուս պատասխանողներին, մենք տեսնում ենք, վոր դրանց մեծագույն մասը բացարձակորեն և անվերապահ կերպով հակառակ են ուղղագրության մեջ վորևե փոփոխություն մտցնելուն։ Այսպես են, օրինակ, հայտնի մանկավարժ Սեդրակ Մանդինյան, բանասեր Մ. Շովրյան, գրող Նիկողայոս արեղա Տեր-Ավետիքյան և ուրիշ շատերը, վորոնց անուններըը հայտնի չեն բանասիրության կամ գրականության մեջ, բայց վորոնք ինչպես չերևում և, հայերենի լավ կրթություն էլին ստացել և կարող էլին չերկար վերլուծական պրպտումներով ապացուցել իրենց ժխտողական վերաբերմունքը։ Բացի դրանից, կային և այնպիսիները, վորոնք իրենց ժխտական կարծիքը ապագրում էլին լրագրության, գլխավորապես, «Մշակ»-ի մեջ։ Այսպես, օրինակ, բժշկապետ Բ. Նավասարդյանը ցույց տվեց թե ինչ տարբերություն կա «յ» և «հ» հնչյունների մեջ վաղորշապատի բարբառում։ Մի շատ ազգու և վաստուն պատասխան ուղարկեց Հորելյանական Հանձնաժողովին Բագվից բանասեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, վոր ա-

վերջը եր պահում ամեն մի փոփոխություն ուղղագրության մեջ։ Ահա մի հատված նրա այդ գրությունից։

«Ց» տառի տեղ «ի» գրել առաջարկողները կամ բնիկ հայատառ չեն, կամ խպատ կորցրել են հայկական հնչյունը լսելու ընդունակությունը, ես չեմ կարող հույս, հունիս և այլն գրել, քանի որ ի չեմ արտասանում, լավ ականջ դրեք, տեսեք թե ինչպես են վաղարշապատցիք, աշտարակցիք, ոշականցիք (դուցե ով այժմյան ջահիկները), արտասանում յաղող. յառաջ և այլն—ով հաղող և ով աղող, ով հառաջ և ով առաջ։ Առողներ կլինեն թե այդչափ նրբություն ճվ և հարցնում։ Ասա որ հարցնում ես թե, ինչ մեղք ունի ֆրանսերենում հնչվող e յերեք տեսակ պահպանելը—é, è, ê—ինչու չեն պատասխանում, թե նուրբ տարբերություն կա դրանց մեջ. ես այդ—ֆրանսիական նրբությունը իմ հայկական ականջովը չեմ տարբերում, բայց իմ ի ու յ չեմ շփոթի»։

Առանձնապես կարիք կա բերելու և Սեդրակ Մանդինյանի կարծիքը.

«Ձես մերժում եմ,—գրում եր նա,—ամբողջ ուղղագրությունը փոփոխությանց ենթիր դարձնելը, այն ես ով միայն անժամանակ համարելով, այլ և անհնարին։ Ամբողջ ուղղագրության փոփոխությունը, բնականաբար, կառեցնե լատինական գրերի դործածության տարցը, յերբ վոր մամուլականներն ու չինացիները այդ խնդիրը առաջ կմղեն, վոր ով գիտե թե քանի տասնյակ տարիներից հետո գլուխ գալու չե։ Մենք հայերս ել անշուշտ մեր նորասիրությամբ վոչոքից յետ չենք մնա, և այն ժամանակ այդ խնդիրը օրակարգի մեջ կմտնե»։

Հիշատակենք, ի վերջո, և այն, վոր Եջմիածնի Հոգեբյանական Հանձնաժողովի հարցաթուղթակը քննելու համար գրողների և հետաքրքրվողների ժողով և տեղի ունեցել Թիֆլիսում, Տիգրան Նազարյանի գրական-գեղարվեստական սալոնում, Ստ. Մալխասյանի նախագահությամբ։ Ժողովի մեջ հանդես են գալիս յերկու հոսանքներ.—մեկը միանգամայն հակառակ եր ուղղագրական փոփոխություններին, մյուսն, ընդհակառակը, կողմնակից եր նույն իսկ արմատական փոփոխություններին։ Բնականաբար ժողովը վոչ մի բացորոշ վճռի չհանգեց և ցրվեց, ընդհանուր ցանկություն հայտնելով, վոր ուղղագրության հարցի ժանրամասն և բազմակողմանի քննության կազմակերպումը իր վրա վերցնի հայոց կաթուղիկոսը։

Այս վերջինս, սակայն, վոչինչ չի անում այս ուղղությամբ և 1913-ի այս փոքրիկ ուղղագրական շարժումը գառնում և լոկ արխիվային գործ։

1921 թվականի սկզբին, Մանուկ Աբեղյանը ներկայացնում և իր ուղղագրական ռեֆորմը Ժողովրդական Լուսավորության Կոմիսար ընկեր Աշոտ Հովհաննիսյանին։ Այս անգամ Աբեղյանի ռեֆորմն 1913-ին առաջարկածից շատ ընդարձակ եր։ Այս անգամ նա գրել եր և յերկրաբառների սիստեմը և առհասարակ այն ուղղագրական նորությունները, վորոնք 1913-ին համարվել եյին յերկրորդ տասիճանի, ասել և վոչ իսկույն ժողնելի փոփոխություններ։ Բացի այդ բոլորից Աբեղյանը մոցրել եր իր ռեֆորմի մեջ Մալխասյանի վերապրությունն ամբողջովին, թեև 1913-ին ընդունելի յեր համարում Ագայանի հյունագրությունը։ Զեկուցումը ապագրվից և ուղարկ-

վեց դանազան տեղեր՝ կարծիքներ խնամելու համար։ Բայց վորովհետև վոչ մի տեղից կարծիք չհայտնվեց, ուստի 1922 թվի փետրվարին, այս անգամ Լուսժողկոմ Պ. Մակինցյանի կարդադրությամբ մի մասնաժողով կազմվեց Աբեղյանից և յերեք ուրիշ անդամներից, վորոնցից յերկուսը չեյին ընդունել Աբեղյանի յերկրորդ աստիճանի փոփոխությունները, նաև վորոշ մասը նրա մյուս առաջարկների։ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին ներկայացվեց Աբեղյանի ամբողջ ուղղագրական սիստեմն ընդունելու առաջարկ։ Առաջարկն ընդունվեց և որենք դարձավ 1922 թ. մարտի 4-ին։

Պրոֆ. Հր. Աճառյան

ՄԵՐ ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուղղագրական բարեփոխության պահանջը յերկար ժամանակ է զգալի յե յեղած գրեթե բոլոր լեզուների մեջ եղ, ավելի կամ պակաս չափով։ Բայց ինչ է պատճառը, վոր նույնիսկ մեզանից շատ ավելի բարձր ու քաղաքակիրթ ժողովուրդներ չեն կարողանում բավարարել այդ պահանջը։

Դրա համար յերեք գլխավոր պատճառ կա։

Ա) Մարդ եյակը չափազանց պահպանողական է հատկապես լեզվի խնդրում։ Նրա պահպանողականությունը այս խնդրում բղխում է վոչ թե հոգեկան թմրությունից, այլ մարդկային կազմության հոգեբանական պայմաններից։ Այս պատճառով է անա, վոր նույնիսկ այնպիսի մարդիկ, վոր հասարակական կյանքում հայտնի յեն իրենց ազատամիտ ուղղությամբ, լեզվի խնդրում ճնում են նույն պահպանողականը։ Մեր հոգեբնախոսական պայմաններն այնպես են ձևավորված, վոր գերը վաղուց արդեն դադարել է մեզ համար տառ լինելուց և բառը՝ տառերի մի շարք. նրանք դուռ պատկերներ են՝ վոր աչքի միջոցով իսկույն ևեթ ցոլանում են ուղեղի մեջ և ցնցելով իրենց հատուկ վորոշ կենտրոնը՝ արտագրում ուղված մտապատկերը։ Վորևե շեղում տառերի ընդունված շարքի կամ բառերի սովորական արտաքինի մեջ՝ բնականաբար քանդում է պատկերը և հետևաբար քանդում կամ առնվազն դանդաղեցնում նաև մտապատկերի վերարտադրությունը։ Ձեվ վորքան մեծ և լինում շեղումը սովորական ձևից, այնքան ել մեծ և լինում մտապատկերի քանդումը։

Բ) Յուրաքանչյուր գրականություն, ինչքան ել փոքր լինի այն, մի քանի տարիների գործունեության արդյունք չի, այլ ժողովրդի յերկար յանքերի, նյութական ու բարոյական աշխատանքի արդյունքը։ Ուղղագրության փոփոխությամբ ի չիք է դառնում այդ բոլոր աշխատանքը և հարկավոր է լինում նորից սկսել վերարտադրել այն բոլորը՝ ինչ վոր դարերի աշխատանքով ձեռք եր բերված ու մշակված։ Մարդ եյակը չի սիրում խնայված հարստությունը այնպես հեշտությամբ վատնել, վոչնչացնել։

Գ) Յուրաքանչյուր լեզու ունենում է բազմաթիվ բարբառներ և արտասանության դանազան յեղանակներ. ուղղագրության վորոշ ձևը՝ վոր ժամանակի ընթացքում կազմակերպված, հաստատված և սովորության միջոցով նվիրագործված է, դառնում է բոլորի համար մի ընդհանուր կապակար, վորի մեջ այդ այլազան արտասանությունները հավասարվում ու միանում են։ Զինացիք չեն հրաժարվում իրենց անճոռնի պատկերագրից, վորովհետև այնքան բարբառներ ունեն և այդ բարբառները այնքան տարբեր են իրարից, վոր յեթե յուրաքանչյուրը հնչական մեթոդով գրի առնվեր, վոչ ոք վոչ ոքի չեր հասկանալու։ Պատկերագիրն է, վոր ծառայում է իբրև միության կապ բոլորի համար և խոսակցության մեջ իրար անհասկանալի բարբառները գոնե գրության մեջ դառնում են հավասարապես հասկանալի։

Բայց յեթե այսպես մտածենք, ուրեմն վոչ մի բարեփոխություն չը պիտք և մոցնենք ուղղագրության մեջ և պետք է անվերջ շարունակենք լինչ վոր հինն է մեզ ավանդել, հակառակ նույն իսկ ազազակող անկանոնությանց։

Անշուշտ վոչ։

Պետք է ուրեմն գտնել այնպիսի մի ձև, վոր թե հիշյալ արգելիչ պատճառները ըստ կարելվույն չեզոքացվեն և թե բարեփոխությունը կատարվի։

Նոր ուղղագրության կանոնները, այնպես ինչպես առաջարկում է Աբեղյանը, հավաքված են իր Զեկուցման մեջ), վոր կարելի յե ամփոփել հետևյալ ձևով.*

1) Ջնջել օ, է տառերը և նրանց տեղ գրել միշտ ո, ե։

2) Բառասկզբի ո դարձնել վո և ե դարձնել յե։

3) ւ և ու գրել վ՝ յեթե այսպես են արտասանվում։

4) Բառավերջի անձայն յ չգրել։

5) Բառասկզբի յ գրել հ։

6) իւ գրելու տեղ գրել յու։

7) եա, եօ գրել յա, յո։

8) ոյ բառասկզբում և բառամիջում գրել ույ, յեթե այսպես և արտասանվում։

*9) էա, էո, էի և այլն գրել եյա, եյո, եյի և այլն։ **)։*

*Այս բոլոր բարեփոխությունները Աբեղյանը փաստավորում է գիտական, հնչական և մանկավարժական տեսակետներով։ Մեկնելով գիտական տեսակետից՝ նա ուզում է հաստատել, վոր ո, յ, ե տառերը հնագույն ժամանակներն ել արտասանվում եյին այնպես՝ ինչպես առաջարկում է նոր ուղղագրության մեջ, վոր **ասէ, եթէ, թէ** և այլն բառերը այդ հնագույն ժամանակներում ել գրվում եյին **ասե, եթե, թե** և այլն, և այլն։ Զնայելով վոր տողերիս գրողը հավանայն է այս գիտական հիմունքներին***), բայց ավելի լավ և խոպան անտեսել դրանք մեր ներկա հարցի քննության ժամանակ, վոչ թե նրա համար միայն, վոր այդ հիմունքները դեռ իրենց վերջնական վճիռը չեն ստացած, կամ կարող են շատերի կողմից յերկար առարկու-*

**) Զեկուցում հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմի մասին, Եջմիածին 1921։*

***) Գուցե ավելորդ չլինի հիշեցնել՝ վոր այս ուղղագրությունը յես գործ եմ ածել իմ բոլոր բարբառագիտական աշխատությանց մեջ՝ սկսած 1898 թվից, յերբ առաջին անգամ հրատարակվեց Վենետիկում՝ Ասլանբեկի բարբառի քննությունս։ Ուղղագրության մեթոդի նկարագրությունը և հիմնավորումը ճիշտ Աբեղյանի ձևով՝ կարելի յե տեսնել իմ **Հայբառագիտության** մեջ (տպ. 1911), եջ 6—11։ Տարբերությունն այն է միայն, վոր ե, է, ո, օ տառերից յես ընտրել եմ է, օ, Աբեղյանը ե, ո, ինչպյալը բոլորովին նույնն է։*

****) Վիեննայի Մխիթարյանց մոտ տպվում է այժմ իմ մի ընդարձակ աշխատությունը (մոտ 500 եջ), ուր քննված և յերևան է հանված 6. դարի հայոց արտասանությունը։ Արդյունքը բոլորովին համապատասխան է Աբեղյանի դուրս բերած գիտական հիմունքներին, մինչև իսկ մանր տարբերությանց մեջ։*

թյանց դուռ բանալ, և կամ շատերի համար անմատչելի չեն, այլ վորովհետև ուղղագրության բարեփոխության հարցը կանգնած է հենց հնից հեռանալու և նոր հնչական դրության վրա հիմնվելու տեսակետի վրա։

Դիտենք ուրեմն հարցը զուտ հնչական տեսակետով։

Առաջարկված բարեփոխությանց մեծագույն մասը հնչական տեսակետով ճիշտ և։ Այնքան վոր նրանցից չերկուսը (այն է վ գրել փոխանակ ե, աև ձևերի և կրճատել բառավերջի անձայն յ) արդեն Արեղյանից առաջ էլ վոմանք գործադրության դրել էլին։ Մյուսների համար ունենք մեր դիտողությունները։

Իւ տառախումբը Արեղյանն առաջարկում է գրել յու, ինչպես և ընդունված է նոր ուղղագրության մեջ։ Բայց այսպիսի կտրական վորոշումը արդար չեմ կարծում։ Իրապես **իւ** մի քանի տեսակ հնչում ունի. այսպես 1) yu, ինչ. **իւր, իւրաքանչիւր.** 2) iyu, ինչ. **միւս,** վոր հնչվում է չերկավանկ **միյուս** և ճիշտ այս պատճառով էլ հոգնակին լինում է **միւսներ.** 3) yü, ինչ. **իւղ, գիւղ** բառերի մեջ. այսպես է արևմտյան հայոց գրական արտասանության մեջ, 4) ü, ինչպես՝ **ալիւր, ձիւն, ձիւթ, սիւն** և այլն. այսպես են հնչվում այս բառերը ամբողջ արևմտյան հայոց գրական արտասանության մեջ, ինչպես նաև Նոր-Նախիջևանում, Ղարաբաղում և ուրիշ տեղեր։ Ղարաբաղցի գրագիտ բնորոշ գիծն է **հարիւր** արտասանությունը։ Շատ անճիշտ և արդի ուղղագրության **իւրք, իւղ** գրչությունը՝ փոխանակ **իւրք, իւղ,** ինչպես նաև ոտար անունների մեջ՝ **Եժենե-Սյուլիեր, Ֆյուբսեաճ, Եմիե-Ենոյու** և այլն, մանավանդ վոր չերկյուղ կա այսպիսի ձևերը չերկավանկ կարդալու. ինչ. **գյուղ — գեյուղ, իյուրք — իեյուրք** և այլն։

Չերկու ձայնավորի մեջն Արեղյանը առաջարկում է ավելացնել յ կիսաձայնը. բայց այս կողմից բառերը բաժանում է չերկու խմբի. **ա, ո, ե,** ձայնավորներից հետո պետք է գրել յ, իսկ **ի** ձայնավորից հետո վոչ. ինչ. **միացեալ, ձիով** և վոչ թե **միյացեալ, ձիյով:** Ինձ համար այս տարբերությունը հասկանալի չե։ Որինակ՝ **իէական, էրիսոնէական** բառերի մեջ յ կիսաձայնի ներմուծումը իմ լսողությամբ շատ ավելի քիչ զգալի է (կամ նույն իսկ բնավ զգալի չե), քան **միացեալ, ձիով** բառերի մեջ։ Իսկ այս բառերի **մյացեալ, ձյով** արտասանությունը՝ վոր նկատում է Արեղյանը (եջ 14), պետք է խոստովանիմ թե ինձ համար բնավ գոյություն չունի։

Ըստ իս իրականն այն է՝ վոր անխտիր այս բոլոր ձայնավորների միջև էլ կիսաձայնը ներմուծվում է. բայց նրա աստիճանը այնքան թույլ է, վոր չեթե հնչական մեթոդի համար սխալ է կիսաձայն յ չնշանակելը, նույնքան սխալ է և նշանակելը։ Առաջին դեպքում գրվում է կես պակաս, չերկրորդ դեպքում կես ավելի, վորոնք հավասարապես սխալ են։

Առհասարակ լեզվաբանության մեջ նկատելի չե վոր ձայնաբանորեն բացարձակ ճշտություն անկարելի չե պահել գրչության մեջ։ Միևնույն **ք** ձայնը բառի սկզբում, միջում թե վերջում, շեշտյալ թե անշեշտ վանկի մեջ, ձայնավորից թե բազաձայնից առաջ, նույնիսկ բազաձայնի կարգի և աստիճանի համեմատ հնչվում է տարբեր տարբեր ձևերով. և այդ բոլորը գրության մեջ դուրս բերել անկարելի և ավելորդ է։ Մենք գիտենք վոր **պ, կ, բ,** բազաձայնները է, **ի** ձայնավորներից առաջ կակուղ են հնչվում, այսինքն ներմուծվում է յ։ Արդ՝ ինչպես վոր Արեղյանը իրավամբ չի պահանջում գրել

գյեր, գյես, գյինք և այլն, կամ նույնիսկ **միյացեալ, ձիյով** և այլն, նույնպես և կարելի եր գանց առնել կիսաձայնի ներմուծումը **իէական** և այլն ձևերի մեջ, առանց դեմ գնացած լինելու հնչական մեթոդի պահանջներին։

Գալով **աեճական, մատեան, մեծութիւն** և այլն ձևերին, Արեղյանի առաջարկած **սեճյակ, մատյան, մեծություն** գրչությունը համապատասխանում է ճիշտ Արևմտյան հայոց, հատկապես Պոլսահայ արտասանության։ Բայց պոլսահայ արտասանությունը այս դեպքում անշուշտ ազդված է թուրքերենից, վոր չերկբարբառ-մասին վոչ մի գաղափար չունի։ Կովկասում և առհասարակ արևելյան հայոց արտասանությամբ, վորքան իմ տկանջը կարողանում է զանազանել, այդ բառերը արտասանվում են **մատիան, սեճիակ, մեծուրիւն.** ուրիշ խոսքով յ այստեղ զուտ բազաձայն չե, այլ չերկբարբառի առաջին մասը։ Այս արտասանությունը ավելի վորոշ կերպով զգացվում է **տեառն, լեառն** բառերի մեջ, վոր հատկապես հնչում ենք իրը **տիառն, լիառն** և վոչ թե **տյառն, լյառն։** Դատելով այս ձևով՝ հիշյալ բառերի **սեճյակ, մատյան, մեծություն** գրչությունը տանում է մեզ այն սխալին, վոր նշանակեցինք քիչ վերը։

Այժմ անցնենք մանկավարժական տեսակետին, վոր, ինչպես հասկանալի չե, Արեղյանի իսկական զրզռատառման և չեզած, իրրև ուսուցչի իր գիտության մեջ Արեղյանը տեղ-տեղ հիշեցնում է թե ինչպիսի սխալներ են անում աշակերտները թվադրության ժամանակ. որ. **ցայել** գրում են **ցաել** և այլն. իսկ առաջարկված բարեփոխությամբ «դյուրանում է գրել-կարդալ սովորելու գործը և ուղղագրությունն սովորելու համար վո՛չ մի աշխատանք չի պահանջվում» (եջ 16)։ Մի ուրիշ գիտակ անձնավորություն, վոր վարում է հայ գպրոցների տեսչության պաշտոնը, հատատեց մի անգամ թե աշակերտները մի շաբաթվա մեջ այս ձևով տիրապետում են ուղղագրության։ Իսկ չես, վոր 30 տարվա ուսուցչական փորձառություն ունիմ և պաշտոնավարել եմ հայության բոլոր հատվածների մեջ էլ, կարող եմ հատատել թե աշակերտների սխալը վոչ թե **էջ, երես, ոտրտած** և այլ նման բառերի դրության մեջ է լինում, այլ գլխավորապես բազաձայնների վերաբերմամբ։ Ձեվ այժմ էլ կարող եմ վստահորեն ասել՝ թե ներկա ուղղագրությամբ ամենևին չի վերանում այդ դժվարությունը և հայերեն ուղղագրություն սովորելու համար վոչ թե «վո՛չ մի աշխատանք չի պահանջվում» կամ թե «աշակերտները մի շաբաթվա մեջ տիրապետում են ուղղագրության», այլ շատ ու շատ աշխատանք և չերկար տարիների վարժություն է պետք։ Մեր ուղղագրության ամենադժվար կողմը, ինչպես ասացի, բազաձայններն են. իսկ Արեղյանի ուղղագրությունը վերաբերում է առհասարակ ձայնավորներին և բազաձայնները ընդհանրապես նկատի առնված չենն։ Ուրիշ խոսքով, ինչ վոր կարելի եր հեշտությամբ սովորել՝ աշխատել և ավելի հեշտացնել, իսկ ինչ վոր դժվար կամ անկարելի է սովորել, նրան ամենևին ձեռք տրված չե։ Այն աշակերտը՝ վոր այնքան անընդունակ է, վոր անկարող է սովորել թե բառի սկիզբը **ե, ո** կարդացվում է ye, vo, կամ հակադարձաբար ye, vo հնչումը բառակզբում պետք է գրել **ե, ո,** նոր ուղղագրությամբ էլ կլինա նույնքան անընդունակ սովորելու թե ինչպես պետք է գրել **մարգ, զարգ** և ինչպես պետք է գրել **արքուն, զուարթ։** Այդպիսի աշակերտը անընդունակ կլինի ոչ միայն այս կարգի բառերի գրությունը սովորելու մեջ, այլ և առհասարակ վորևե բան սովորելու մեջ, վորովհետև աշխարհիս բոլոր գիտություն-

ներն էլ սովորելու համար «աշխատանք» են պահանջում, և չկա մի բան՝ որ «ոչ մի աշխատանք» չպահանջի։

Այս խոսքերով չես չեմ ուզում յերբեք ասել թե առաջարկված բարեփոխությունները իզուր և անոգուտ են. ընդհակառակը նրանց մեջ կան մի քանիսը, որ լրացնում են մեր արդիական պահանջները և ժամանակ է որ վերջնականապես ընդունվին մեր լեզվի մեջ։ Այդպիսիներն են՝

1) Բառամիջի է՝ բաղաձայնից առաջ գրել ե.
2) Բառամիջի օ գրել ո.
3) ե, ու դարձնել վ՝ յեթե հնչվում են այսպես.
4) Բառավերջի անձայն յ չգրել.
5) Բառասկզբի յ գրել հ.
6) ոյ գրել ույ, յերբ հնչվում է այսպես*)։ ...

Մյուս փոփոխությունները ավելորդ եմ կարծում. հատկապես բառասկզբի ե տառի տեղ յե գրելը, ինչպես և բառասկզբում ու բառավերջում է գրելու տեղ անպատճառ ե գրելը։ Այսպես նաև բառասկզբի ո տառը վո դարձնելը և բառասկզբի օ տառը ո դարձնելը։ Դրանք չափազանց հեշտ սովորելու կանոններ են. այն կանոնները՝ որոնք միօրինակ և ընդհանուր լինելով՝ բացառություններից զուրկ են, սովորվում են հեշտությամբ։ Յեթե աշակերտները առաջ սխալվում էին այս կետերում և որ. գրում էին ցաել և նման ձևեր, այն պարագային, յերբ վորոշենք վոր է և օ գրվում են միայն բառասկզբում (և բառավերջում), այլևս չեն սխալվիլ։

Ոյ յերկբարբառն էլ հեշտ սովորելու կանոններից է. բայց մենք պետք է ընդունենք ույ ձևափոխությունը. վորովհետև յեթե գրելը հեշտ է, ընդհակառակը կարդալն է յերկդիմի. և յերբեմն մարդ ճնշում է շվար թե ինչպես կարդա։ Վոչ վոք չի կարող գուշակել թե որինակ՝ ինչպես պետք է կարդալ գոյց, հոյց ձևերը, մինչև վոր ամբողջ նախադասությունը չտեսնե. ինչ. գոյցի երեսաց, բայլի ոտից յայս առնեն զմարգ. հոյց է պտուղ տալիս. բայց՝ գոյց եւ աճգոյց մի են. սկսաւ ահն եւ հոյն երթալ առաջի Քուղայ։

Ուղղագրական այս բարեփոխությանց վրա պետք է ավելացնել բաղաձայնների բարիփոխությունը, այն, վորին ձեռք չեն տված Աբեղյանը։ Բարեփոխության ընդհանուր կանոնը պիտի լինի հետևյալը. յեթե մի բաղաձայն գրվում է տարբեր յեվ հնչվում է տարբեր մեր յերկու գրական լեզուների յեվ ժողովրդական բարբառների գոնե մեծագույն մասի մեջ, պետք է գրվի հրնչված ձեվով։ Այսպես՝ հաջել, խաբել, ամեն բառերը գրենք ամեն տեղ էլ հնչվում են հաչել, խափել, ամենք, ուստի այսպես պետք է գրել։ Նշանակություն պետք չէ տալ այն մի քանի փոքրիկ շեղումներին, վոր պատահում են այս ու այն տեղ. այսպես Ագուլիսում՝ հա՛չիլ, Հավարիկում՝ հաջէլ, Վանում՝ խացել, և այլն։ Վորովհետև միայյալ բոլոր տեղերում, ինչպես և ճուչ տեղերի գրական արտասանության մեջ՝ այդ բառերը հնչվում են չ-ով։

Վերոգրյալ կանոնով ձեռք չի տրվում ուրեմն բարի, գեղաց, կճիկ,

*) Ուղղագրության ճիշտ այս ձևը առաջարկել է նաև Աբեղյանը իր Հնչյունական մեջ՝ բարեփոխալ ուղղագրություն անունով. և ամենևին կարիք չպիտի լիներ գրել այս դիտողությունը, յեթե գործածության մեջ մտած լիներ այդ ձևը և վոչ արդի ուղղագրությունը։

Աբգար և այլն բառերին, վորոնց մեջ բ, գ, կ և այլն բաղաձայնները տեղից տեղ տարբեր են հնչվում. և յեթե դրանցից մեկը փոխենք, դժվարություն և դժգոհություն կհարուցանի տարբեր արտասանություն ունեցողների մեջ։ Այդ կարգի բառերը պիտի ծնան մեր ուղղագրության անդամանելի դժվարությունը, մինչև վոր մեր յերկրի խառնատարը հայությունը դպրոցների, կրթության, պետության և ժամանակի միջոցով վերածվի միատարրի։

Ձայնավորների համար հեշտ է դնել առաջուց վճռված ընդհանուր կանոններ, բայց բաղաձայնների համար այդպիսի բան կարելի չէ։ Յեվ ամեն մի բառ, վոր բարեփոխության պիտի յենթարկվի բաղաձայնների կողմից, պետք է նախապես քննվի թե ինչ ու ինչ ձևերով է արտասանվում մեր բոլոր բարբառների, կամ գոնե բարբառների մեծագույն մասի մեջ. և ըստ այնմ, յեթե կարելի չէ, ստանա բարեփոխության վճիռը։ Այս յերկար, բայց վոչ շատ դժվար գործով պիտի զբաղվի մեր Ինստիտուտը, վորի գործը պիտի լինի նախ կազմել նոր հայերեն լեզվի բառարանը*). այնուհետև վորոշել յուրաքանչյուր բառի ուղղագրության ձևը, վոչ միայն բաղաձայնների, ինչպես ասացինք, այլ և նույն իսկ ձայնավորների կողմից, և առնասարակ բոլոր կասկածելի կետերի մեջ վճիռ տալ. որ. վորոշել՝ թե ով, ովկիանոս, ովսաննա, ովասիս, Ովհաննես պետք է գրել օ և ոչ ո սկզբնատառով.—յես բառի տեղ պետք է գործածել անպատճառ ես (ինչպես ունի արևմտյան գրական լեզուն), վորպեսզի չշփոթվի հես (միասին) բառի հետ.—բախ պետք է գրել միշտ բախ և վոչ բնավ բադգ. նույնպես վորոշել խճճոյի կամ խրճճոյի, աճոյս կամ աճուռ, ոյժ կամ ուժ, սաճգուխ կամ. սաճգուղ, բաճճվել կամ բագճվել, փափագ կամ փափաճ, ճիշ կամ ճիշգ, ցասկել կամ ցասճել բառերի ուղղագրությունը և ուրիշ այսպիսի մանր կետեր։

Ինստիտուտի վորոշումը կլինի մեզ համար մի վճիռ՝ բխած հեղինակավոր մարմնի կողմից։ Այդ ուղղագրությունը պարտադիր կլինի դպրոցներում, կամաց կամաց կտարածվի կյանքի մեջ և մի քանի տասնյակ տարի հետո կդառնա միակն ու սովորականը։

Դուք այժմ պիտի ասեք, վոր գրվածքիս առաջին մասը և այս վերջին մասը իրար չեն նմանում. առաջին մասում խոսում եյինք լեզվական պահպանողականության, գրի և մտապատկերների կապակցության, դարերի ընթացքում մեռելած գրականությունը չոչնչացնելու մասին, իսկ այժմ տալիս ենք նոր առաջարկ նաև բաղաձայնների փոփոխության մասին։ Ձենք ասում տարբեր բարբառների գրության մեջ շաղկապման մասին, վորովհետև մեր ասած ձևի մեջ այդ արդեն կատարվում է։

Լեզվական պահպանողականության և մտապատկերների կապակցության տեսակետից գլխավոր արգելքները Աբեղյանի ուղղագրության մեջ կազմում են բառասկզբի յե գրությունը, բառասկզբի ու բառավերջի է-ի տեղ է, օ-ի տեղ ո գրելը, ձայնավորների միջև ավելորդ յ ներմուծելը և իւ յերկբարբառի տեղ յու գրելը։ Յերբ վերանան այս կետերը, վորոնք մանկա-

*) Մենք թեև նոր պետություն և պետական լեզու ունինք, բայց այդ պետական լեզվի համար բառարան չունինք։ Հայկազյանը և Առձեռնը գրաբարի բառարաններ են. Սահակ վրդ. Ամատունու Բառ ու Բանը և իմ Գավառական բառարանը ժողովրդական բարբառների համար են. իսկ գրական դպրոցական լեզվի համար ոչ մի բառարան չկա, թեկուզ համառոտ։

վարժական տեսակետով արդին դժվարություն չեն հարուցանում և հնչական տեսակետով էլ տանելի են, այն ժամանակ նոր ուղղագրությունը այնքան կփոխվի, որ կբավարարե նաև վերոհիշյալ պահանջները և մարդիկ չեն կարվի նախորդ գրականությունից։

Ասել թե հեշտ և մոռանալ հինը և սովորել նորը, կամ թե «դժվարությունը շատ հեշտ հաղթահարելի չե» (եջ 7) և այլն, ուղիղ և նրանց համար միայն՝ որոնք գործ ունին մի՛միայն նոր ուղղագրության հետ։ Այսօր փորձով էլ տեսնում ենք, որ բոլոր պաշտոնյաները առանց դժվարության, վարժ ու արագ գրում ու կարդում են նոր ուղղագրությամբ. այն, որովհետև նրանց միակ գրականությունն և իրենց պաշտոնական գրությունները, «Աորհրդային Հայաստանը» և առ առավելն մի քանի բրոշյուրներ. ճեացյալը ռուսերեն են։ Իսկ նրանք որոնք պահանջ ունին մի քիչ ընդարձակվելու և հայոց հին, միջին ու նոր գրականությամբ էլ զբաղվելու, ստիպված են շարունակ իրենց առաջ ունենալ թե մին և թե մյուսը։ Յեվ այն ժամանակ հե՞շտ և արդյոք մեկ գրել **եւկինճ**, մեկ գրել **յեւկինճ**, մեկ կարդալ **յավակնել**, մեկ կարդալ **Ցեւեվաճ** և այլն։ Անշուշտ վոչ։ Այդպիսի յերկվությունը հայերենը կդարձնե թուրքերեն կամ պահլավերեն։

Յես առիթ ունեցա պատահաբար խոսելու 13 տարեկան մի տղայի հետ, որ նախկին ռուսախոս և հայերենը նոր ուղղագրությամբ միայն սովորած լինելով՝ ըստ յերևույթին շատ դոհ պիտի լիներ դրանից։ Բայց դուրս յեկավ որ ընդհակառակը պատճառներ ուներ գանգատվելու։ Նա ասում եր, որ դպրոցում գրում են նոր ուղղագրությամբ, բայց որովհետև դասագրքերը հին տպագրություն են, կարդում են հին ուղղագրությամբ։ Յեվ յերեխան տատանվում եր շարունակ մի և մյուս դրության մեջ, այդ մատաղ հասակում բանասիրական ավելորդ պրպտումների ներքևելով իր ժամանակը։

Մի անգամ պատահաբար լսեցի յերկու դպրոցականների հետևյալ խոսակցությունը. «Յե՞րբ պիտի վերանա այդ հին ուղղագրությունը, ասում եր մին, կարդում եմ, չեմ հասկանում»։ Աբեղյանը մի որ հայտարարում եր թե մեր Համալսարանի հայտնի դասախոսներից մեկը այնքան և վարժվել նոր ուղղագրության, որ հնով վոչինչ չի կարողանում գրել։ Ճիշտ այդ եմ ասում ես էլ. նոր ուղղագրությունը այնպես և կազմված, որ հինը այլևս չի հասկացվում. ուրիշ խոսքով վոչնչացման ենք դատապարտում դարերի աշխատանքով մշակված մեր գրական հարստությունը։ Միթե՞ ունի՞ այս զարհուրելի զոհաբերությունը։ Յեվ հանուն ինչի՞։

Փոխելով նոր ուղղագրությունը վերևում առաջարկված ձևով, մենք կարող կլինենք տեսողական մտապատկերների կապակցության կորուստը գոնե փոխանակել լսողական մտապատկերների կապակցությամբ։ Ուրիշ խոսքով նոր ուղղագրության մեջ ընդունելով մի այնպիսի ձև՝ որ յեթե մարդ կարդա՝ պիտի լսի ճիշտ այն, ինչ որ հին ուղղագրությամբ և պիտի կարդացվեր, աչքը յեթե դժվարանա հասկանալ, ականջը խնդություն ոգնության կհասնի։

Գալով մշակված գրականության պահպանության, բարեփոխված ուղղագրությունը մեզ կբավարարե նաև այս կողմից. վոչ հնները կդժվարանան նորը կարդալու և վոչ նորերը կդժվարանան հինը կարդալու։

Պրոֆ. Գ. Խալատյանց

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ *)

Լեզվի գիտության վորոշիչ գրոշը, ինչպես վոր նա կը հասկացվի ներկայիս, անոր պատմական նկարագիրն և—լեզու մը կամ բառ մը ընավ չի ընդունվիր իբր մի անգամ ընդ միշտ տրված ճնայուն բան մը, այլ՝ իբր արգասիք նախընթաց զարգացման ու միևնույն ժամանակ՝ իբր մեկնակետ հետագա զարգացման։

Jespersen

Ուղղագրության բարեփոխության խնդիրը նոր յերևույթ չե լեզվաբանության պատմության մեջ. հին ժամանակներ գործած հուզված ե. իսկ մերձավոր անցյալի մեջ ալ շատ քաղաքակիրթ ազգեր անով զբաղեր են և այժմ իսկ շատերու համար կարևորություն ունեցող խնդիր մըն ե։

Ուղղագրության բարեփոխության պետքը վաղուց զգացվեր ե և հայ կրականության մեջ և մինչև այժմ բազմաթիվ փորձեր կատարվեր են այս ուղղությամբ։ Այս մասին ուշադրություն հրավիրելով ընկեր Լեոյի «Պատմական տեսության» վրա, մենք գառնանք մեր բուն խնդրին։

Այնպես կրնա թվիլ, թե ուղղագրության խնդիրը շատ պարզ բան մըն ե. վոչ ապաքեն այբուբենի մը նպատակն և տալ բառերու հնչումները և յուրաքանչյուր գրված բառ պիտի ներկայացնե խոսված, արտասանված բառը և բառերու սովորական գրությունը կուտա ճիշտ արտասանություն և ասկե ալ

*) Ծ.Ք. Այս գրությունն յերկու բանախոսության նյութ ե յեկեր Կ. Պոլիս, 1922 հունիսին։ Առոր Ա. մասը տպագրված ե «Բարձրավանդ» ամսագրի մեջ. իսկ Բ. և Գ. մասերը մնացին՝ ամսագրի դադրելուն պատճառով։ Այս նույն ուսումնասիրությունն ե, որ իբր գեղույց կարդացվելով «Ուղղագրական հանձնաժողովի» մեջ՝ այժմ կը հրատարակվի կրճատված ձևավորով։ Ընկերներուս առաջարկովը լեզուն ալ մեաց նախկինը։

Հոս կարևոր կը համարինք հիշել նաև հետևյալը.—Հ. Վ. Հայկունին՝ «Երևանեան ուղղագրության դեմ» (1925) իր տետրակի մեջ (6) կըսե. «Երկուք էին գլխաւոր բանախօսները, որոց վիճակուած էր սկսել ու փակել վիճաբանութեանց շարքը։ Ի նպաստ նոր ուղղագրութեան խօսեցաւ ուս. Ա. Աճառեանը, որ ինքնայօժար առանձնած էր իւր դերը։ Իսկ հնոյն պաշտպանութիւնն ինձ յանձնելու պատիւն ըրած էր Հ. Ա. Տունը»։ Այս մեր ոտրագծած տողերը չեն համապատասխաներ իրականության։ Հ. Ա. Տան բանավիճական բաժինը, վորու նախագահն եր տողերս գրողը և անդամներն մին՝ Հ. Վ. Հայկունին, նախ իր բուն ժողովի մեջ քննության յենթարկեց ուղղագրության խնդիրը. կարծիքներու փոխանակության ընթացքին պարզվեց, վոր չես համաձայն չեմ բոլոր կետերու դատապարտությանը. ուստի վորոշեց՝ նախ՝ հրապարակային բանախոսության նյութ դարձնել այս խնդիրը, և յերկրորդ՝ նշանակեց յերկու բանախոս, թեր ու դեմ։ Այժմ պարզ ե, վոր վոչ «ինքնայօժար առանձնելու» և վոչ ալ «ինձ յանձնելու պատիւ ըրած»—ի խոսք կարող ե լինել։ Դարձյալ՝ թե յես ինչ յեմ ըսեր և նա ինչպես կամփոփե իմ բացը, ընթերցողը պիտի տեսնե այս գրությենեն։

կը հետևի, թե յուրաքանչյուր տառ ամեն տեղ ունի նույն հնչումը և յուրաքանչյուր հնչում ամեն տեղ նույն տառով կը ներկայացվի։ Սակայն դժբախտաբար այսպես չէ. ուղղագրության խնդիրը շատ բարդ է նույնիսկ այն պատճառով, որ ոչ տառերն ամեն տեղ նույն հնչումն ունին և ոչ ալ նույն հնչումն ամեն տեղ նույն գրով կարելի է ներկայացնել։ Արտասանությունը և ուղղագրությունը միշտ չեն կրնար զուգահեռ մնալ, ուստի բոլոր լեզուներն ալ պետք կզգան ժամանակ առ ժամանակ անդրադառնալ արտասանության և ուղղագրության միջև բացված վէրին և աշխատել կամրջել այս վիրը՝ մոտեցնելով ուղղագրությունն արտասանության։

Ա.

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Թե մարդկային լեզուն միշտ կը փոխվի դարերու ընթացքին և կը վերանորոգվի իրերահաղորդ սերունդներու մէջ, այնքան բացահայտ իրողություն մըն է, որ չերկար բացատրություններու պետք չունի. բավական է քով քովի դնել Ե. դարու գրական կենդանի լեզվով գրված չերկ մը՝ օրինակ, Ցեղնիկ Կողբեցիի «Եղծ աղանդոց» ներկա արարատյան կենդանի գրական լեզվի հետ կամ ուրիշ չերկու նույնպես արարատցիների՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի և Պ. Պռոշյանի «Սոս և Վարդիթեր»ի լեզուների հետ՝ չափելու համար այն ահագին անջրպետը, որով կը բաժնվին անոնք իրարմէ. թեպետ անոնք նույն լեզվի տարբեր շրջանները կը ներկայացնեն։ Բայց մենք մոռնանք լեզվաբանական տեսակետն և քննենք հոն կատարված փոփոխությունները.—նախ՝ փոխված և արտասանությունը, այսինքն՝ շատ գրեր ներկա սերնդի համար նույն հնչական արժեքը չունին, ինչ որ ունեին Կողբեցիի ժամանակ, չերկրորդ՝ փոխված են հոլովումն ու խոնարհումը, չերրորդ՝ խնդրառությունը և շարադասությունը, չորրորդ՝ բառամթերքը և բառերու իմաստը և վերջապես հնչումները։ Այս բոլոր փոփոխությունների դումարն է, որ կը զատե «Եղծ աղանդոց»-ի և «Վերք Հայաստանի»-ի լեզուներն, այսինքն՝ մեր հին ու նոր լեզուներն իրարմէ։

Մենք չենք գրեր այնպես, ինչպես կարտասանենք, այլ ենք կը պրենք մեր արտասանածի մոտավորը, իսկ շատ պետքերու մէջ պայմանական ընդունվածը կամ պատմական ուղղագրությունը։

Թե իսկապես մենք չենք գրեր մեր արտասանածի պես կը հասկանան հետևյալ օրինակները—մարթ (մարդ), վարթ (վարդ), վորփ (վորբ), սուրփ (սուրբ), սրփիչ (սրբիչ), կարք (կարգ), ձաք (ձագ), ախչիկ (աղջիկ), ախքատ (աղքատ), թուխթ (թուղթ). ըսպասել (սպասել), ունկընդիր (ունկնդիրն) ըշտապ (շտապ) և այլն և այլն։ Այս կարճ ցանկեն իսկ, որը կարելի չի չերկարել, վորքան կամենաք, պարզ կը տեսնվի, թե մենք կը գրենք պայմանական կամ պատմական ուղղագրությամբ՝ հակառակ մեր արտասանության։ Ոչ միայն այս, այլ կը տեսնվի, թե նույն գիրն ամեն տեղ չունի նույն հնչումը, այլ՝ նայելով գրերու խմբավորումին՝ տարբեր չերանգավորում կստանա։ Ավելորդ կը համարինք նոր օրինակներ բերել։

Բառ մը իր բաղադրիչ տարրերուն անդամատելը վոչ միայն դժվար, այլ և անկարելի չէ։ Բառը բաղադրված չէ ինքնուրույն վորոշ թվով հընչումներե, վորոնց ամեն մեկը կարելի ըլլա այբուբենե մեկ նշանով արտահայտել. այլ իրականին մեջ բառը շատ հնչումներու անվերջ շարանարության շարք մըն է. իսկ գրերու միջոցով այս շարքի միայն հատկանշական առանձին կետերը կը մատնանշվին։ Մնացածն, ինչ վոր չի նշանակվիր, վորոշ չափով կիմացվի այս նշանակված կետերեն։ Որինակով մը բացատրենք.—դիցուք կուզենք պ հնչանիշը պատկերացնել. ադոր համար կը քաշենք բ———·———վ գիծը. պ նշանակված կետը բ—վ բազմաթիվ կետերեն մեկն է. սակայն դեպի աջ մինչև վ՝ պ կրնա իր յերանգավորումներովը արտասանվիլ և վերջապես պ=վ. մյուս կողմեն կրնա դեպի ձախ շարժիլ և պ=բ ըլլա։ Այն բոպեին, յերբ պ=բ, ըսել է պ կը դադրի արժեք մը ներկայացնելե. ուստի իր ներկայությունն ավելորդ բեռ մը պիտի դառնա, ինչպես ալ եղեր է Պոլսի բարբառի մեջ։ Բայց դեռ կը պահվի պ և իր նմանները՝ հետևելով պատմական ուղղագրության։

Գրությունն ամեն բանե առաջ՝ ունի հասարակական, ընկերային մեծ կարևորություն. այս նպատակին հասնելու համար՝ լեզվի մը այբուբենը պետք է լինի պարզ՝ բաղկացած սահմանափակ նշաններե. հնչումներ պատկերացնելը պետք է համապատասխանե տիրող արտասանության մինչինչ նկատի ունենալով, վոր ուղղագրության ճշտումը տրված ժամանակի մը մեջ նույն լեզվով կարդացողներու համար անվիճելիորեն մեծ կարևորություն ունի։

«Յեթե լեզվի մը զուտ հնչագրական ուղղագրությունը, կըսե Dauzat, ցնորք մըն է, փոխադարձաբար շատ մեծ տարբերություններու անհարմարություններն ալ խոսվող ու գրվող լեզուներու միջև, անվիճելիորեն ժամանակի ահագին կորուստ մը, ժանավանդ, յերբ աչքը վրա ավելնա, ինչպես և ներկա ֆրանսերեն ուղղագրության մեջ, անարդարանալի անկանոնություններուն բազմություն մը, պատճառ այնքան ժամանակի կորուստի ժանուկներուն համար, վորոնք թելադրության վարժության չարաչար գործածությամբ՝ ավելի շատ թելադրություն կուսանին քան լեզու. արգելք մը լեզվի տարածվելուն՝ վորով ոտարներու համար կավելնան լեզուն սորվելու դժվարությունները»։

Վերջապես պետք է բացատրվի, թե վոր արտասանության պիտի հարմարի ուղղագրությունը, քանի վոր գավառական շատ տարբերը արտասանություններ կան։ Ինքնին հասկանալի չէ, վոր գրական լեզվի ուղղագրությունը պետք է պատշաճի նույն լեզվի մեջ տիրական հանդիսացող հասարակաց արտասանությանը և չի կրնար նկատի առնել վոևէ գավառի արտասանություն։ Իսկ ամեն գավառաբարբառ պետք է ունենա իր ուրույն ուղղագրությունը։ Լեզվաբանական սխալ մըն է, յերբ գրական լեզվի մեջ ունեցած արժեքովը հայտնի գրերով՝ կը փորձվի գրել գավառաբարբառ մը։ Այսպիսի դեպքերին կիրարկված այբուբենի արժեքը պետք է ճշտել յեվրոպական գի-

տական նշաններու հնչումներով և ապա գրել։ Վ ր ք ա ն բ ա ր բ ա ռ, այնքան տարբեր ուղղագրութիւն։

Հոս կարևոր է բացատրել նաև ուրիշ կէտ մը, որը շատ մեծ դեր կը խաղա ուղղագրութեան փոփոխութեան պարագային.—հնչումի՝ բառի արտաքինի և գաղափարի՝ բառի իմաստի մէջև կապ։ Շատերը՝ հնչումը կը նուիրագործեն բառի իմաստի՝ լեզուի հետ ու կերը կը խոսվի ուղղագրութեան փոփոխութեան մասին, անոնք կը կարծեն, թե վնասուն է, որ կը փոխվի. ուստի և շատ բուռն կերպով կը պայքարին առաջարկված վնաս փոփոխութեան դեմ, որքան ալ անհրաժեշտ և արդարացնալի ըլլա այն։

«Գաղափարները ևնկատի առնված բառերու մէջև, կըսե Meillet, վոևե րոպեին չկա վոչ մի անհրաժեշտ կապ. վորուն ծանոթ չե, թե վոչինչ կրնա ցուցնել, թե ֆրս. cheval, գրմ. pferd, անգլ. hors, ռուս. лошадь, հունր. hippos (հյր. ձի, պրսկ. ասպ) և այլն կնշանակեն նույն կենդանին»։ Նույնը և բառերի հոգնակի ու յեզակի ձևերը՝ ձի, ձիեր, ինչպես և գաղափարի արտաքին և իրական ըլլալը՝ կով, ցուլ, հովատակ, զաժրիկ և այլն։ Հայերեն չիմացող մը այս բառերը կարդալով՝ միայն անոնց հնչումներին դատելով չի կրնար հասկնալ, թե ձի յեզակի չե և ձիեր հոգնակի. ցուլ արական և, կով՝ իրական։ «Ասկե առաջ կուգա այն, վոր անծանոթ լեզվով գրված արձանագրութիւն մը կը մնա անհասկանալի՝ առանց թարգմանութեան. յեթե կարելի յեղավ կարդալ Դարեհի արձանագրութիւնները, պատճառն այն է, վոր հին պարսկերենը, վորով անոնք գրված են և պարսկերենի հին ձևերը, վորոնք շատ քիչ կը տարբերին Ավեստայի լեզվեն, վորի թարգմանութիւնը կուտա բանալին և վերջապես հին պարսկերենը սերտորեն ազգակից է սանսկրիտին». մինչդեռ հարուստկյան արձանագրութիւնները հակառակ իրենց բազմութեանը կը մնան դեռ անվերծանելի*)։

Գրել-կարդալ սորվելու համար կատարված յերկար վարժութիւնները հետզհետե կը կրճատվին և գրի պատկերն՝ առանց միջնորդ զգացապատկերի կը կապվի ուղղակի նշանակութեանը հետ։ Յեվ յեթե այժմ կրթված մարդոց համար գրապատկերի և նշանակութեան կամ գաղափարի ուղղակի կապակցութիւնը շատ զորավոր է, այս պարագան կը պարտինք՝ շատ մեծ չափով՝ ուղղագրութեան կայունութեանը։ Ուղղագրութեան մէջ ամեն մի շեղում, նույն իսկ յեթե ուղղում մը լինի այն հնչախոսական տեսակետե, կը դժվարացնե հասկացողութիւնը։

Այս վերլուծումով կը պարզվի և այն յերևույթը, թե ինչու գրողներն ընդհանրապես իսկական տանջանք մը կզգան, յերբ կուզվի փոխել բառերու արտաքին տեսքը և բնազդորեն կը բողոքեն ուղղագրութեան բարեփոխութեանը դեմ՝ նույն իսկ ամենեն արդարանալիներուն։

Այս պարագան կարևոր է այնպիսիներու համար մանավանդ, վորոնք տեսողական ըմբռնողութեամբ (visuel) միայն ուժված են, այսինքն՝ վորոնց համար տեսողութիւնն է ըմբռնողության աղբյուրը և վոչ թե լսողութիւնը։ Յերբ ֆրանսերենի մէջ կը գրվեր hermite և առաջարկվեցավ գրել ermite՝ առանց h-ի, վոմանք բողոքեցին, թե չի կարելի, վորովհետև իրենք

*) Meillet, A. Introd. à l'étude comp. des langues Indo-européennes էջ՝ 2.

սկզբի h-ի մէջ կը տեսնեն միայնակեցի յերկար ցուպը. ուստի առանց h-ի ներկայութեան իրենց մտքի մէջ կը չնչվի միայնակեցի գաղափարը։

Զարմանալի պիտի չլինի, յեթե հայ ընթերցողներեն վոմանք «ճգնավոր» բառի սկզբի ճ-ի մէջ յերևակայեն իր խցիկի մէջ ճգնավորը, վոր ծնրադիր կաղոթե ձեռքերն յերկինք ամբարձած։

Հնչական փոփոխութիւնները կը կատարվին անգիտակցաբար, մինչդեռ ուղղագրութեանը մէջ փոփոխութիւնները կը կատարվին ավելի գիտակցաբար ու դիտավորյալ կերպով։ Յերկրորդ՝ լեզվի փոփոխութեան կը մասնակցի—միշտ անգիտակցորեն—նույն լեզվով խոսող յուրաքանչյուր անհատ. այն ինչ ուղղագրութեան պայքարին չեն մասնակցիր նույն լեզվով խոսող բոլոր անհատները, այլ՝ միայն գրողները կամ տպագրողները. իսկ ուրիշ անհատները տարբեր աստիճաններով և ուժերով. վորոշ անհատներու ազդեցութիւնը հոս շատ ավելի մեծ կրնա ունենալ՝ քան լեզվի մէջ։ Յերրորդ՝ ազդեցութեան ուժը սահմանափակված չե տեղի մերձավորութեան չափովը։ Չորրորդ՝ ուղղագրական փոփոխութիւնները անով վճռական հակադրութեան մէջ կը գտնվին հնչափոխութեանը հետ, վոր անոնք նուրբ աստիճաններով առաջ չեն յերթար, այլ՝ թռիչքներով*).

Ե.

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Մ. Աբեղյանի առաջարկները յեվ անոց քննութիւնը

Ա. «ո և է տառերը դուրս ձգել այբուբենարանից և ամեն դեպքում ո և է հնչյուններն արտահայտել ո և ե տառերով»։

1. Կառաջարկվի ուրեմն ո-ի փոխանակ գրել ո, այսպես՝ մոտ, ամոթ, արոտ, կարոտ, ծանոթ և այլն։ Հայտնի չե, թե ո գիրը ԺԹ. դարուն փոխառնված է լատին այբուբենեն՝ նույն այն սկզբունքով առաջնորդված, թե ուղղագրութիւնը պետք է համապատասխանե արտասանութեան։ Նույն միջոցին դասական աւ միութիւնը բառամէջ՝ բաղաձայնեն առաջ սկսած էր արտասանվիլ ո և ժամանակի գրողներն՝ առանց իրենց մտքերեն իսկ անցնելու՝ թե պիտի մեզանչեն լեզվի «նվիրականութեան» դեմ, իրը շատ բնական ու գործնական՝ փոխ առին ո և այնուհետև լեզուն յուրացուց և մեզի հասցուց։ Ճիշտ միևնույն յերևույթն ունինք հիմա. ու դպրած է այլևս յերկբարբառ մը լինելե և կը ներկայացնե մեկ պարզ u լատ. ձայն. արդ՝ յեթե մենք ունինք մեր նախնիներու աննախապաշար, լայնախոհ ու գործնական մտածելակերպը, պետք է մեկ նշանով արտահայտենք այս պարզ հնչումը։

Դառնալով ո=օ-ին՝ ավելորդ չենք համարիր հոս մեջ բերել պրֆ. Ն. Մառի հետևյալ բացատրութիւնը.—«աւ-ի արտասանութիւնն իրր օ շատ

*) Լեզվաբանական սկզբունքներու ուսումնասիրութեանը մեջ հետևեր ենք գերման հայտնի լեզվաբան H. Paul-ի «Principien der Sprachgeschichte» և ֆրանսացի՝ A. Dauzat-ի «La philosophie du langage» յերկերուն։

*կանուխեն սկսված փոփոխութիւն մըն է և նույնքան կանուխ նույն պայմաններուն մէջ սկսած եր արտասանվիլ ո և անով ալ գրվիլ, որկ. ասող փոխանակ՝ ասաւղ։ Այս արտասանութիւնը քանի մը դեպքերու մէջ աւ միութիւնն յուրացուցեր եր դեռ նախադպրութեան շրջանի մէջ. այս պատճառով գրավոր հիշատակարաններու մէջ նույն իսկ սկզբեն գրվեցավ ո փոխանակ՝ աւ-ի, որկ. գող, փոխանակ՝ *գաւղ, կով, փոխանակ՝ *կաւվ, նորա, փոխանակ՝ *նաւրա, նորին՝ փոխանակ՝ *նաւրին» և այլն։ Ուրեմն լեզվի պատմութիւնը կը հաստատե, թե շատ կանուխեն այս յերկու հնչուններն իրար նմաններ են և անոնց նիշերն իրարու հետ փոխանակվեր և այսօր արդեն նույնացեր. ուստի լեզվի զարգացումի ընթացքին հետևած և ավելի գործնական քայլ մ'ըլլած պիտի լինինք, յեթե բառամեջ ու վերջ օ-ի տեղ գրենք ո։ Առավոտ, կարոտ, քող, թափոր, մորուք, շղշափել և այլն նույնքան հարազատ հայերեն են, վորքան օ-ով գրվածները։*

2. Առաջին առաջարկութեյան յերկրորդ մասը կը վերաբերի ե-ին։ է-ի տեղ գրել ե։ է կը գրվի նախ՝ ե—մ բայի ձևերու և ե—մ լծորդութիւն ունեցող բայերու ինչ ինչ վերջավորութիւնների մէջ։ ա) Սուտաբանութիւնը կը ցուցնե, թե ե—մ բայի խոնարհումն է՝ ե—մ, ե—ս, ե (յ), ե—մք ե—ք, ե—ն։ Ներկայի դիմահանգերը շատ վորոշ են հայերենի մէջ, որկ. կարդ-ա-մ, կարդ-ա-ս, կարդ-ա-յ. ուրեմն հզ. գ. դեմքն ունի—յ։ Միջին դարերուն ե+յ արտասաներ են է և այնուհետև սովորութիւնն ընդհանրացուցեր է է գրութիւնն այն բոլոր տեղերը, ուր ե+յ միութիւնը կը պատահի։ Հայանի չե նույնպես, վոր ներկայի յեզ. գ. դեմքեն կը կազմվի նախ՝ իր հոգ. ր. դեմքը՝ ե (յ)—ք=էք. յերկրորդ՝ անկատարը՝ ե—ի, ե—իր, ե—ր, ե—աք, ե—իք, ե—ին։ Այս յերևույթն ավելի պարզ կերպով կորոշվի —ա—լծորդով բայ մը խոնարհած ժամանակ.—

կարդ—ա—մ	*կարդ—ա—մք*	*կարդայ—ի*	*կարդայ—աք*
կարդ—ա—ս	*կարդ—այ—ք*	*կարդայ—իր*	*կարդայ—իք*
կարդ—ա—յ	*կարդ—ա—ն*	*կարդայ—ր*	*կարդայ—ին*

կարդայ—ցե—մ	*կարդայ—ցե—մք*	*մի կարդա—ր*
կարդայ—ցե—ս	*կարդայ—ցե—ք*	*մի կարդայ—ք*
կարդայ—ցե—	*կարդայ—ցե—ն*	

Նույն կանոնով կը կազմվին նաև—ե—լծորդ ունեցող բայերը.—

գր—ե—մ	*գր—ե—մք*	*գրե—ի*	*գրե—աք*
գր—ե—ս	*գր—ե—ք*	*գրե—իր*	*գրե—իք*
գր—ե—(յ)	*գր—ե—ն*	*գրե—ր*	*գրե—ին*

**գրե—գրի—ցե—մ*	*գրի—ցե—մք*	*մի գրե—ր*
գրի—ցե—ս	*գրի—ցե—ք*	*մի գրե—ք*
գրի—ցե	*գրի—ցե—ն*	

Ուրեմն սուտաբանութեյամբ կը հաստատվի, թե ե—մ հակառն բայը և անոր որինակովը կազմված բայերը (—եմ լծորդը) պետք է գրել ե, ուր ներկա գրութիւնն ունի է։

Թե այս է գրութիւնը միջին դարու սովորութիւնն ե, կը

հաստատվի անով, վոր մեր հնագույն գրչագրերը շատ հավատարմութեյամբ պահեր են վերը բացատրված ստուգաբանական խոնարհումի բոլոր ձևերը։ Այսպես է Մոսկվայի Լազարյան Ճեմարանի (այժմ Եջմիածնի թանգարանում) հայանի հնագույն (887 թ.) ավետարանը, Մլքե թագուհիին (906 թ.), Սանահարյանի (986), Եջմիածնի փղոսկրե (989) ավետարաններու գրչութիւնը և այնուհետև գրված ուրիշ շատ ձեռագրեր ունին այս գրչութիւնը։ Բայերեն զատ կան ուրիշ շատ բառեր, վորոնք այժմ կը գրվին է-ով, մինչդեռ հինները կը գրեն ե. որկ. թե, թեպետ, դեմ, տեր, յավետ, վաչեի, որպես և այլն։ Կեղծ Շապուհի գրչագիրը, վոր շատ նոր ժամանակի գործ է, շատ տեղեր պահեր է հնագույն ուղղագրութիւնը. այսպես ուտեր, ըմպեր, ոչ պիտեր, յաշխարհեդ, յայն ժամանակեն. եր (=էր) ծիծաղեր, չեր, ոչ բերեր, նստեք...։

ՃՐ. զարու ընտիր գրչութեյամբ ճառընտիր մը պահած և Փավստոսեն քանի մը գլուխներ, վորոնք ուսումնասիրված են ծանոթ բանասեր հանգուցյալ Մխսարանի (Գևտ. Տ. Մկրտչյան) կողմից «Փավստոսի ձեռագրեր» հոդվածով մը՝ «Հանդես Հայագիտութեյան»-ի մէջ. հոն մէջ բերված հատվածներին կառնենք ճեռնհաս գրելակերպը.—«մի ազգավորութիւն եր տոհմին, յանդիման լիներ թագաւորին, թե որպես յետ հաւր իւրոյ Վրթանա... և թե որպես սպանաւ ի Տիրանա յարքաե... Ել յանցանելն յաշխարհե թագաւորին... Տիրան որդի Խոսրովա աո զթագավորութիւն... Հաց մեծաց ի հազարապետութենեն։ Յաղագս... Դանիելի քահանայի... և թե որպես... պատուհասեալ մեռաւ ի նմանե... Ընկեր եր սրբոյն Շաղիտաի...»։ Այստեղ մէջ բերվածները և ընկեր Ս. Կանայանի ուսումնասիրութիւնը միանգամայն կը հաստատեն, թե այս մի պատահական դեպք չե, այլ մի ընդհանուր ու հին յերևույթ է։

Արդ է-ի տեղ ե գրելը բառի մեջն ու վերջը, ինչպես տեսանք, ստուգաբանորեն ճիշտ է և գործածված մեր լեզվի լավագույն շրջաններու մեջ. ուստի այս առաջարկն ընդունելով՝ վերադարձ մ'ըլլած կը լինինք դեպի հինը և ճիշտը։

Թյուրիմացութեյան տեղի չտալու համար ըսենք նաև, թե է-ի փոխանակ պետք է գրել ե և վոչ թե՝ եյ, ինչպես կառաջարկե ընկեր Մ. Աբ. ուստի պետք է գրել՝ եի, եիր, եր... հրեի, քրիստոնեի, մարգարեի։ Բարեփոխութեյան նպատակներեն մեկն ալ պետք է լինի ավելի պարզել և վոչ թե բարդել։ Ակն զատ, ինչպես արդեն բացատրված է, վոչ միայն ավելորդ, այլ և անկարելի չե հնչյանիշերու մեջ լված բոլոր նրբութիւնները (միկրոֆոնները) տառերով ներկայացնել, ուստի պետք է բավականանալ գլխավոր գծերը միայն տալով։

Այս առաջարկութեյան այն մասը, վորով պահանջվում է է և օ վտարել հայ այբուբենեն, չենք կարող ընդունել. վորովհետև բառասկզբին առնոց հնչուններ շատ վորոշ են։ Յերբ տառն ունի իր մաքուր հնչումը, պետք է ձգա, քանի վոր իր հնչումովը վի և չփոթութեյան տեղի չեր կրնար տալ. ուստի կառաջարկենք պահել օ և է և գրել օր, օրենք, օրինակ, էակ, էութեյուն, ան-էութեյուն և այլն։

Բ. Ընկեր Մ. Աբեղյանի յերկրորդ առաջարկն ե. «վ հնչյունն ամեն դեպքում գրել միայն վ տառով»։

1. Հայերենի մեջ վ տառի գործածութեյան տեղերը շատ քիչ են և

ճշտված. վ կը գրվի բառասկզբին, իսկ բառամէջն ու վերջը՝ ո տառեն հետո՝ վ կարտասանենք նաև ա, ե, ի ձայներեն հետո ալ, բայց կը գրենք ւ, որկ. հաւ, կաւ, թիւ, թիւր, հիւանդ, և այլն. դարձյալ վ կ՚արտասանենք բառամէջ բաղաձայնի հետո և ձայնավորե առաջ և կը գրենք ու, որկ. ասուած, հատուած, հիւսուած և այլն, ուրեմն **երեք գիր մեկ հնչումի** համար։ Արդ կառաջարկվի այս չերեք դեպքերուն ալ գրել միայն մեկ գիր վ։ Այս առաջարկն իր հաստատությունն ունի վոչ միայն ներկա արտասանությանը մեջ, այլ և մեր հին գրականության։ Գրչագրերեն ավելի հավատարիմ են այս պարագային արձանագրություննները։ Ջեռքիս տակ գտնված արձանագրության մը (874 թ.) վրա գրված է՝ թվականութիւն. թվին, թվականիս (1101 թ.)։ 1307 թ. արձանագրության մը վրա՝ ավագ, թագավոր։ 941 թ. թվական. 1028 թ. ի թվականիս։ Կիլիկիան հայերենի մեջ շատ ընդհանրացած և այս ուղղագրությունը։ Պրոֆ. Կ ա ր ս տ ի «Պատմ. քերականութենեն» կառնենք քանի մը որինակներ միայն—աչվի, աչվով, ոտվի, երվի, երվոց, մտվի, տնվի, տնվոյ, չնվի, չնվոյ, լավնայ, աղվոր, պատկվեցաւ, հաւատվոր, տվաք, լվաք, տվել, ավտաւ, թագվոր, քուրվոյ, հիվընդութիւն, դանգրտվոր, վարձվոր, կովիմ, թվենալ, ծնկվի, յաւելված, յիշվել, գովի, տուգնվի... դեռ ավելի ուշագրավը կա՝ «կու ընկնի» գրվեր և «կվընկնի», «կու արգիլե»՝ «կվարգիլե» և այլն։

Այս բացատրություններեն և որինակներեն ալ կը հետևի, թե այս ուղղագրական ձևն ալ նորություն մը չե, այլ դարերե ի վեր մեր գրություններու մեջ կիրարկված ձև մըն է և արտասանության պահանջ, վոր այժմ կուզվի ընդհանրացնել։ Այս առաջարկն ալ իր հետ կը բերե արտասանության համապատասխան մեկնկրպություն և ուսանելու դյուրություն։

2. վ տառի ուղղագրության հետ ընկ. Մ. Աբեղյան կապեր և նաև ո-են առաջ վ գրելու խնդիրը, այսինքն՝ քանի վոր ո բառասկզբին կարտասանվի վո=vo, ուստի պետք է գրել՝ վորդի, վոսկի, վորկոր, վոր և այլն։ Թե բառասկզբին ո կարտասանվի vo=վո, վոչ ոք կրնա ուրանալ. ուստի հոս կը մնա քննության նյութ դարձնել, պի՞տք է հետևիլ կենդանի ընդհանրական արտասանությանը, թե վոչ։ Քանի վոր, ինչպես տեսանք, ո=o և բոլոր o-երու տեղ (բացի բառասկզբեն) պետք է գրել ո, հետևողական լինելու համար պետք է փոխել ո և այն տեղեր, ուր o չարտասանվիր։ Հնության ալ մեզի ոգնության կուգա իր պահած միակ որինակովը՝ վոհմակ, վորը պետք է գրված լիներ *ոհմակ։ Պրոֆ Մառ հետաքրքրական տեղեկություն մը կուտա ո-ի արտասանության մասին. բառասկզբին ո=vo =վո, որկ. որ, որդի։ Այսպիսի արտասանություն բառասկզբին կատարված է նաև ժողովրդական վրացերենի մեջ՝ հակառակ դասական վրացերենի, որկ. ori (երկու), ժողովրդ. vori=վորի, othxi ոթխի, (չորս) ժողովրդ. vothxi=վոթխի։

Հոս միակ անպատեհությունն աչքին անսովոր յերևիլն է։ Ցնդաբանքեն, թե հինները փոխանակ «վոհմակ»ը միայն՝ մեզի հասցնելու՝ գրած լինելին նաև վորոգայթ, վորովայն, վորդի, վոզորմած, վոր և այլն, այսոր ոմ պիտի բողոքեր այս ուղղագրությանը դեմ։ Ցնեթե ներկա գրողները քիչ մը ավելի գալիք սերունդի մասին խորհին քան իրենց սիրելի ու սովորական գարձած ձևերու մասին, խնդիրն ինքնին կը լուծվի։ Նոր սերունդ

համար բնականորեն նույնքան սովորական պիտի գառնա վոր, վորդի, վոսկի, վորկոր, վորքան մեզի համար են ասոնց հին ձևերը։

Ընկ. Մ. Աբեղյան հոս իբր ծանոթություն կավելացնե. պետք է գրել կոլորի, չոլորեց. մեր կարծիքով բոլորովին ավելորդ է այս բացատրությունն ալ. պետք է գրել կը վոլորե, չվոլորեց, ինչպես վոր կը գրենք կը վաճառե, կը վարե, չվաճառեր, չվարեր և այլն։ Ուղղագրական բարեվոխությունը պետք է, վորքան հնար է, վերջացնել զարտուղությունները և վոչ թե նորերը ավելացնել։ «և» պետք է պահել իբրև սղագրական ձև մը և ընդհանրացնել իր գործածությունն այն բոլոր տեղեր, ուր եւ միությունը կը պատահի, որկ. սև, թև, վորովհետև, թևավոր, սևավոր և այլն։

Ո-ով սկսվող բառերու թիվը մոտ 85 կը հաշվե ընկ. Աբեղյան, վոր ըսել է, թե այս նոր ուղղագրությամբ մեծ փոփոխություն մը չի մտներ լեզվի խնայողության և արտաքին տեսքի մեջ։

Գ. Ընկ. Մ. Աբեղյանի յերրորդ առաջարկը կը բովանդակե հետևյալ կետերը.—

1. «Բառերի սկզբում հագագայինն յ տառի փոխանակ գրել հ տառը՝ հատակ, հարմար փոխանակ՝ յատակ, յարմար գրելու»։

Թե գրական լեզվի մեջ բառասկզբին յ=հ, այնպիսի բացահայտ իրողություն մըն է, վորու համար նոր ապացույցներու պետք չկա։ Իսկ թե կան գավառներ, ուր յ փոքր ինչ տարբեր արտասանություն ունի, այս պարագան այնքան ալ կարևորություն չունի, քանի վոր խնդիրը կը վերաբերի գրական ընդհանուր ուղղագրության և վոչ թե այս և այն բարբառի արտասանության։ Մեր վոչ մի հնչյանիշը նույն արտասանությունն ունի ամեն տեղ։ Ուստի ինքնին հասկանալի է, յերը բառասկզբին յ և հ նույնահնչյուն են դարձեր, մեկը պետք է դադրի նույն արժեքը ներկայացնելե։ Արդ՝ քանի վոր յ ուրիշ արտասանություն (կես ձայնավոր) ալ ունի, պետք է դադրի իր մյուս արժեքեն։

Սակայն կա և մեկ ուրիշ հանդամանք. այս նույնացումի յերևութը շատ հին է հայերենի մեջ։ Դասական շրջանեն իսկ որինակներ ունինք այս նույնացումին։ Այսպես որկ. **հինգ** և **յիսուն** (=հինգ-սուն) նույն բառերն են։ **Հի՞մ** և **յի՞մ** նույն ձևերն են. ուղիղ ձևն **յի՞մ** լինելով, ժեսրոպյան լեզվով գրողները նախընտրեր են **հի՞մ** ձևը։ Այսպես Ս. Գրքի մեջ՝ «Հիմ ոչ գոի շնորհս առաջի քո»։ «Զի՞ այս կամ հիմ այս»։ «Հիմ կարժիր են ձորձք քո»։ «Զգառն զՈրժիդդ հիմ ծնաներ»։ (Եղնիկ)։ Մինչդեռ Յեղիշեն ունի յիմ։ Հելլենարան ժառենագիրները նույն ատեն կազմեր են՝ հի՞-զան, հի՞-կեն, հի՞-բար, հի՞-պես։ Կա նաև հ-ի փոխանակ յ գործածված. «Յէ՛ տառապեալ» (=հէ՛)։ «Զինչ խոսիս, յէ՛ մարգարէ»։

Այս յերևույթն մինչև մեջին դար այնքան զարդացեր եր արդեն, վոր պրոֆ. Կ ա ր ս տ Կիլիկիան հայերի համար կը հայտարարե. «Կիլիկիան հայերենի մեջ բառասկզբին յ=հ արտասանությունն ամեն տարակույսե դուրս է»։ Իր՝ մեջ բերած բազմաթիվ որինակներեն հոս հիշենք մի քանին միայն. **Ցայրապետ, յերեսիկոս, յրամայեաց, յետ**=հետ, **յետի**=հետի, **յայրենաթափութիւն**, և ընդհակառակն՝ **հատուծո**=յատուծո, **հաղթա**=յաղթա, **Հովհաննէս**=Յովհաննէս։

Այս առաջարկն ալ՝ միօրինակություն ու դյուրություն մտցնելով հանդերձ մեր ուղղագրության մեջ՝ համապատասխան և լեզվի պատմության ու տիրող արտասանության։

2. «Բառերի վերջում ա և ո ձայնավորներից հետո գրվող անձայն յ տառը դուրս ձգել՝ ծառա, ներքո»։

Ց տառի գործածությունը բառավերջին սուսւպարանորեն հետևյալ ծագումն ունի. ա) բայի սահմանական ներկայի յեզ. գ. դեմքի իբը դիմահանգ, որկ. կարդ-ա-յ, խաղ-ա-յ, հաւատ-ա-յ. բ) իբը յեզ. սեռականի հանգ, որկ. Տրդատա-յ, Վարդանա-յ, գետ-ո-յ, խմ-ո-յ. գ) փոխ առնված բառերու մեջ ա-ի հետ միասին=â կամ ai oi,y. որկ. Աթաշ—խուդայ=Athash—xudai, Շերօյ=Sheroi, Վնդոյ=Bindoi, Աբդիշոյ=Abdishoy, Բարծումայ=Barsumay, շումրայ=sumrâ, Կաթինայ=Qattinâ, Աքչամայ=Ukkâmâ, Մարութայ=Maruthâ, Շաղիտայ=Shallitâ, Շիլոյ=Shilâ։ Այսպես նաև ասորական բազմաթիվ բառեր՝ ագուգայ-ք, աթուրթայ-ք, ամիրայ, լումայ, ծնծղայ, կաթսայ, շղթայ և այլն վորոնց վերջի â յերկար է։

Թե հիշված ա, ը և գ դեպքերու մեջ բառավերջին յ արժեք մը կընեռկայացներ, այսինքն՝ կարտասանվեր, պետք է ընդունվի։

Հետին դարերու գրիչները նկատելով՝ վոր ա և ո տառերեն հետո հաճախ յ կա, սկսան հանպիտորեն (վորն այնքան ահագին դեր կը խաղա լեզվի պատմության մեջ) տարածել և այնպիսի բառերու վրա, ուր վոչ սուսւպարանորեն և վոչ ալ արտասանությամբ կարող եր արդարանալ, որկ. դերանունների վերջը՝ նմայ, սմայ, դմայ, նորայ և այլն. մի գրելակերպ, վոր չկա հնագույն գրչագրերու մեջ։ Այսպես թարմատար կիրառությունը յ-ի ընդհանրացավ լեզվի ուղղագրության մեջ։

Ներկայիս իրողությունն այն է, վոր գրական լեզվի մեջ բառավերջի յ միանգամայն արժեքի զուրկ գիր մը դարձեր է թե՛ նշանակությամբ և թե՛ արտասանությամբ. ուստի ավելորդ բեռ մըն է, վորը պետք է դուրս նետել։ Այսահեղ գարձյալ առաջնությունը մեղ չի պատկաներ. մեր հնագույն ընտիր գրչագրերը շատ հաճախ արդեն զեղչեր են բառավերջի յ։ Շատ սրինակներ արդեն վերը տեսանք. հիշենք մի քանին՝ արքա, միաբանեցա, ապավինեցա, Տրդատա, Խոսրովա, Վրթանա, ի Տիրանա և այլն։

Վոչ միայն բառավերջի յ-ն ա և ո տառերեն հետո պետք է զեղչել այլև յ պետք չէ գրել ա և ո ձայներով վերջացող բառերու սեռականի մեջն ալ, որկ. պետք է գրել՝ արքաի, ծառաի, շղթաի, զչխոի, նույնպես և գործիականի մեջ՝ ծառաով, շղթաով, քահանաությունն, ծառաությունն։ Այս առաջարկն ալ նորմուծություն մը չէ, այլ կարգարանա արտասանությամբ ու կը հաստատվի հնագույն արձանագրություններովը ու գրչագրերովը։ Աձաին (Է. դար), Գրիգորո ծառաի քո (Ժ. դար), Կաինի, Յուդաի (1033), քահանաից (1051), Զաքարեաի (1214)։ Գրիգոր կթղ. Ապիրատի գրածը «Ես Գրիգորիս ծառա ծառաից»...։ Գրիգոր Է Անավարզեցիի գրածը «Տէր Գրիգորիս... կաթողիկոս հայոց ընձաեցի»...։ Ճառընտրի հատվածեն բերենք հետևյալ որինակները. սպանաւ ի Տիրանա յորքաէ... առ վիճագաւորութիւն հաոց մեծաց... Դանիելի քահանայի։ Յաղագս Շաղիտաի... ընկեր էր արբոյն Շաղիտաի։ Ասիա, Եւրոպա, Ամերիկա և այլն։

Առաջարկս հնչական վե և ե անպատեհություն չի ներկայացներ, քանի վոր առանց յ-ի ներկայության իսկ բնական արտասանության մեջ կա, վոնց համար շատ տկար, իսկ ուրիշներու՝ ավելի զորավոր։ Այս բնական արտաբերությունն այնքան տիրական է յեզեր, վոր նույն իսկ հոն, ուր յ բառավերջին կ'արտասանվի՝ ինչպես՝ հայ, գրիչն հետևեր բնական բերումին

և գրեր՝ հաոց և այս բավական հաճախ՝ տարբեր գրիչներու մոտ։ Այս ուղղագրությունն ունի և մանկավարժական մեծ կարևորություն։ Յերը կը ջնջվի բառավերջի յ, սեռականի մեջ կրկին գրելը պիտի դժվարացնե աշակերտի գործը. նա պիտի հարցնե, թե ուրկե ներս լինկավ այս տառը։ Անշուշտ չի բավեր միայն ըսելը՝ վորովհետև կ'արտասանվի, ուրեմն պետք է գրվի, կամ ըսել՝ հին ժամանակ այս բառերու վերջը յ կար, վորը սեռականի մեջ պահվեր է (մխանգամայն մի ավելորդ բացատրություն)։

Աշակերտը շատ լավ գիտե, թե ուրիշ տեղեր ալ կան արտասանություններ, վորոնք եթե գրե, մենք կը ջնջինք իբր սխալ. որկ. սկսեմ, սպասավոր, պտուղ, բարձր և այլն։

3. «Եա երկբարբառը՝ սենեակ գրել՝ սենյակ, եօ գրել՝ յո՝ յոթն, արդյոք՝ իւ-ի փոխանակ գրել՝ յու՝ արյուն, ալյուր։ Ե տառից հետո բառերի մեջում ավելացվում է յ տառը, երբ յետևից մի ձայնավոր գալիս՝ բուսկական, քրիստոնեական։ Ե տառից առաջ բառերի սկզբում ավելացվում է անկայուն յ տառը ամեն անգամ, յերբ արտասանվում է՝ յեկավ, յեղ, յեզր և այլն։ Եմ բայի միավանկ ձևերը... գրվում են արտասանության համեմատ սկզբից ավելացած անկայուն յ տառով՝ յեմ, յես, յեք. դու յես, մենք ենք, գնալու յեն, բայց՝ գնում եմ, գնում ես։ Ելի, ելիր, ելինք» և այլն։

Մենք ընկեր Մ. Աբեղյանի՝ յ-ին վերաբերյալ գանազան տեղեր բոլոր ըսածները հավաքեցինք միասին, վորովհետև բոլորի կեդրոնը կը կազմե յ տառի ստացած նոր արժեքն ու տարապայման ընդարձակ կիրառությունը։ Մենք կը կարծենք, թե և՛ հոս ընկ. Աբեղյանը հետևողական է իր հորինած գրության մեջ։—Նա դուրս վտարելով է մեր այբուբենեն, անոր գիրքն ու հնչումը տվեր է ե-ին. իսկ վերջինիս ձգած բացն լեցնելու դերը և ձայնը տվեր նոր կազմած յե կամ եյ յերկձայնին։ Բայց քանի վոր մենք ալ է-ին տվինք իր բուն ձայնը բառասկզբին և վերադարձրինք իր տեղը, ուրեմն ե-ին ալ պետք է վերադարձնենք իր բուն հնչումը բառասկզբին և այն բոլոր միութիւններու մեջ, վոր նա կը հորինե ուրիշ ձայնավորներու հետ։

Ասկե զատ՝ մեր բացատրություններու մեջ մենք միշտ հետևեր ենք լեզվի պատմական զարգացման ընթացքին ու անոր ստեղծած փոփոխություններուն և ամեն առաջարկ աշխատեր ենք հիմնավորել լեզվի պատմությամբ. իսկ յ տառի այսպիսի ընդարձակ գործածության համար չենք գտներ վե և հենակետ՝ բայց յեթե «ղուտ բարբառային արտասանություն, (վորը) վոչ մի ազդեցություն չպիտի ունենա մեր ուղղագրության վրա» (Մ. Աբեղ. «Ուղղագր. Ռեֆորմը». 62)։

Դարձյալ այնպիսի նրբաձայն, ինչպես ե-են առաջ (յ-եզ) և վերջն (եյր) և, այս պարագային յ-ով ներկայացնելը միանգամայն ավելորդ կը համարինք, վորովհետև առանց մի կարևոր պետք լրացնելու՝ գրությունը կը խճողե յ-երով և այսպիսով կը ծանրաբեռնե ուղղագրությունը։ Նույն ինքն ընկեր Աբեղյան տարբերություն կը դնե հետևյալ բառերու գրություններու միջև. պետք է գրել՝ քրեյական, քրիստոնեյական, այժմեյական և այլն. բայց՝ բարեաւայց, բարեախորժ, քնեաձ, ովկեան, իդեա և այլն։ Այն նրբին տարբերությունը, վոր նա կը գտնե այս յերկու կարգ բառերու միջև վոչ մի տեղ կարող են անհրաժեշտ դարձնել յ տառի ներկայու-

թյունը: Ուստի մենք կառաջարկենք պահել ե իր արտասանութեամբ բառասկզբին և եա, եո միութիւններու մէջ: Իւ պահել իր նախկին արտասանութեամբ և ե-են հետո չգրել յ—որկ. հէյ, հէյը, և այլն:

3 տառի խնդիրը վերջացնելու համար հիշենք և ընկեր Մ. Աբեղեանի հետևյալ առաջարկը, վոր իբր «ձանձրութիւն» արտահայտած ե. «հաճախ բառասկզբի յ տառը նաև դուրս ե ընկնում...: Այդ բառերը կարելի կ՚առանց սկզբի հ տառի ևս գրել՝ ախճապակ, ախուռն, ակրի (փշոտ մի բույս), ամպար, այրատ, աչաղանք, ապավել, աջող, արգո, իրավ, ուշիկ, խտակ, ունք և այլն: Այսպես և հատուկ անունները՝ Ակոբ, Ովանես, Ոսեփ, Առաջ, առաջաբան, առաջադիմութիւն և այլն միշտ այսպես առանց սկզբի յ (հ) տառի պետք ե գրել»: Իր եութիւնը մէջ համաձայն լինելով այս առաջարկին, մենք իբր սկզբունք կառաջարկենք. վերչել բառասկզբի յ (հ) այն բոլոր դեպքերուն, յերը ան արմատական չե, այլ հին հայերենի հոդովի ձևացորդ՝ որկ. առաջ, առաջաբան, աջ, աջողութիւն, ավելցուկ, ավելված, անձնել, անձնառութիւն, եա, եաո, արգ, արգո, արձակել, իրավի, ուղարկել, ուղարկավոր, ուշարար և այլն:

Յեթե ամփոփենք ընկ. Մ. Աբեղյանի առաջարկների քննութեան արդյունքը կստանանք հետևյալը.—

1. ո պահել բառասկզբին, իսկ մեջն ու վերջը միշտ գրել ո:
2. է պահել բառասկզբին, իսկ մեջն ու վերջը միշտ գրել ե:
3. ու և ւ-ի փոխանակ միշտ գրել վ, ուր կը լսվի վ ձայնը:
4. ո-ով սկսվող բառերու սկիզբը գրել վ, ուր կը լսվի վ ձայնը:
5. Բառասկզբին յ-ի փոխանակ գրել հ:
6. ա և ո տառերին հետո բառավերջ, իսկ բառամեջ ա և ո-են հետո և ի, ե, ո, ու տառերից առաջ չգրել յ:
7. Բառասկզբի վոչ-արմատական յ պահել:
8. Բառասկզբին և եա, եո երկբարբառներու մէջ պահել ե-ի հին արժեքը. ե-են հետո՝ բառամեջ չգրել յ (ել, երը): Պահել իւ իր նախկին արտասանութեամբ (իւր, արիւն, աւիւր):

2. Ուրիշ առաջարկներ—

Վերջացնելով առաջարկված բարեփոխութիւնների քննութիւնը մենք չենք կամենար վերջացնել մեր ըսելիքները ուղղագրութեան և ընդհանրապես լեզվի բարեփոխութեան մասին: Մենք կը կարծենք, թե մանաւանդ լեզվի ուղղագրութեան հետ սերտորեն կապված են և մեր հետևյալ դիտողութիւնները:

Լեզուն բնաշրջութեան յենթակա մի յերևույթ ե և այս բնաշրջութիւնն ե հնարաբեա ուղեցույցը լեզուն կանոնավորելու և անոր ուղղութիւն տալու: «Դարե դար հարատևող՝ բազմաթիվ կանոնավոր կերպով կատարվող փոփոխութիւնները, կըսե Jespersen*), ինչպես և այն հանկարծական փոփոխութիւնները, վորոնք մերթընդմերթ տեղի կ՚ունենան յուրաքանչյուր լեզվի պատմութեանը մէջ, կը վերջանան բառերի կարճութեամբ: Այս յերևույթը կը տեսնվի ամեն ուրեք և ամեն ատեն, ու համաշխարհային այս արտա-

*) Otto Jespersen-Language its nature, development and origin. 1925.

դրութեան հետևողականութեանը մէջ կը գտնենք, թե մեր լեզվի ընտանիքին պատկանող հին լեզուները՝ սանսկրիտ, զենդ և այլն լեցուն են շատ յերկար բառերով. վորքան ավելի յետ յերթանք, այնքան ավելի շատ և վանգնաչափ (Sesquipedalia) բառերու թիվը...: Յեթե լեզվի զարգացումը նախապատմական շրջանի մէջ նույն ընթացքն ե ունեցեր, ինչ վոր և պատմական շրջանին, այն ատեն մենք կը տեսնենք .. թե նախնագույն բառերը պիտի ներկայանային այն ձևով, ինչպես plesiosaurus և gigantosaurus յերեք են մեր օրերի սողունները» (420): Հայ լեզուն՝ անտարակույս չեր կըրնար բացառութիւն մը կազմել այս ընդհանուր առաջխաղացութեանը մէջ և իրոք ալ կտեսնենք նույն ընդհանուր տրամադրութիւնը և հոս՝ միշտ դեպի պարզը, միշտ դեպի կարճն ու թեթևը: Ո՞ւմը հայտնի չե, թե մեր հին շրջանի բառերը կը կարճանան, որկ. տեսանեմ > տեսնեմ, գտանեմ > գտնեմ, սպանանեմ > սպանեմ, Աստվածատուր > Աստատուր > Աստուր > Աստ, Մկըրտիչ > Մկո, Հարութիւն > Հարո կամ Արութ և այլն:

Այս կրճատութիւներն արդյոք պատահական են, թե կը կատարվին վորոշ կանոններով:—Հայերենն ալ ցեղակից լեզուներու պես ունի իր ձայնավորներու շրջութիւները կամ աստիճանութիւները, այսինքն՝ իր յերկբարբառներն ու յերկար ձայնավորները կը վերածվին թույլ կամ սուղ ձայներու, յերբ շեշտապուրկ մնան: Ձայնավորներու այս շրջութիւը պրոֆ. Ն. Մառ վերածեր է յերեք աստիճանների՝ բարձրագույն, միջին և ստորին.—Այսպես՝

այ, եա, եւ, ոյ, իւ,
ա·է է իւ ու ու
է ը ը

ա) այ > ա (արևմտյան հայերենի մէջ), > է (արևելյանի մէջ)՝ հայր > հաք, հեր. մայր > մար, մեր. եղբայր > ախպեր. այս > աս, եա. այլ > ալ, էլ:

բ) եա > է. հին հայերենի ձայնաշրջական կանոններու կարգին կը պատկանի եա-ի՝ միայն է-ի վերածվելու պարագան: Գոց վանկերու մէջ եա-ի ա-ն կ՚ինչնա, երբ բառը նոր վանկով մը աճի—որկ. սենեակ > սենեկի, մատեան > մատեն-ա-դարան, ատեան > ատեն-ա-կալ: Բայերու կատարեալի—եաց ածանցը կը վերածվի—եց-ի նույն պայմանների մէջ--որկ. գործեաց > գործ-եց-ի, գործ-եց-եր, գործ-եց-աք և այլն:

Միջին դարու հայերենն ալ ավելի զարգացուցեր ե այս որենքը և ընդհանրացուցեր: Դասականի կտրլ. եղ. գ: դեմքի—եաց առանց նոր վանկի մը հավելումի՝ շրջեր և—եց-ի, որկ. գործեաց > գործեց. գրեաց > գրեց և այլն: Անցեալ դերբայի—եալ > էլ. որկ. գործեալ > գործել, կալուցեալ > կարգացել, բերեալ > բերել և այլն: Այս նույն ձևն ե, վոր արևմտյանի մէջ եղեր և կարդացեր, բերեր...: Դասականի հոգ.--եար > եր և դարձեր իբր հոգնակի կազմող վերջավորութիւն՝ վան-եար > վան-եր, վոր-եար > վոր-եր: Արդի հայերենը բառավերջի—եայ նույն ընթացքով վերածեր է է-ի.—եայ > է—աշտեայ > աշտե, գոնեայ > գոնե, մաշկեայ > մաշկե, փայտեայ > փայտե > փեռե...: Դեռ ավելին կա. արդի հայերենն այս որենքին ենթարկեր է և ա բազմա բառերը. որկ. ցորեան > ցորեն, կորեակ > կորեկ, վառեակ > վառեկ, սարեակ > սարեկ, սեամ > սեմ > չեմ, լեառ > լեռ, գայեակ > գայլեկ և այլն: Ծողովրդի կենդանի լեզվի մէջ գործածված բոլոր—եա ունեցող բա-

ռերն յենթարկված են այս որենքին. գրքի բառերն են միայն, վորոնք դեռ կը շարունակեն պահել հին բառաձևը։ Նույն ա-ի անկումը կատարվելը և նաև—եաւ միւռեյանը մեջ. որկ. սեաւ > սեւ, բարեաւ > բարեւ, առաջեաւ > առաջեւ > առջեւ։

Նոր հայերենը ա-ի անկումի համար զարգացուցեր է նոր որենք մըն ալ՝ յեռավանկ բառերու միջնավանկի ա զեղչելով։ Հին հայերենն ասոր քանի մը որինակները միայն պահած է, վոր ըսել է, թե նույն ժամանակ արդեն սկսեր է, բայց դեռ չէ ընդհանրացեր. Բագաւան > Բագ՛ուան, աստուած > աստու՛ծոյ. արեգականէ > արեգակ՛նէ, գառանէ > գառ՛նէ, կաթանեղ > կաթ՛նէ, ծիծառան > ծիծ՛ռան, զինաւոր > զին՛վոր։

Նոր հայերենն այս սղումին ընդհանրացուցեր և որենք դարձուցեր։ Այսպես յեռավանկ բայերը վերածվեր յերկվանկի—տեսանեմ > տեսնեմ, գտանեմ > գտնեմ, սպասանանեմ > սպասնեմ, մոռանամ > մոռնամ, ելանեմ > ելնեմ > ելլեմ... Նույն բանը կա և գոյականներու մեջ—մատաղան > մատղան, հարսանիք > հարսնիք, հաւասար > հաւսար, բաղանիք > բաղնիք, բերանի > բերնի և այլն։

Նույն որենքին կ՛ենթարկվին նաև միջնավանկի ե և ո ձայնավորները, որկ. կեղեւեմ > կեղեւեմ, աւելեմ > աւլեմ, վայելեմ > վայլեմ, հայելի > հայլի, կոտորեմ > կոտրեմ > կտրեմ, ժողովեմ > ժողվեմ, խորովեմ > խորվեմ, սովորիմ > սովրիմ > սորվիմ, թոռոմիմ > թոռմիմ և այլն։

Այս վերլուծումեն հանելիք յեզրակացութիւնը պարզ է. նոր հայերենը չի հանդուրժեր—եաւ-ի ներկայութիւնը և յերկար բառերու գործածութիւնը, ուստի պետք է ընդհանրացնել այս որենքը և այն բառերու վրա, վորոնք միայն գրականութեան մեջ կիրարկվելով՝ չեն յենթարկվեր տակավին նույն որենքին։

գ) եւ > իւ կամ ու—հեռավոր որինակները բավական են հաստատելու թե այս շրջանի ալ հայերենի հատկութիւններեն մեկն է.—հնագույն՝ աղբեւր > աղբիւր > աղբոյր (միջին հայերեն) > աղբուր > աղբըր (ջուր)։ Առեւտ > առիւծ > առոյծ > առուծ. ալեւր > ալիւր > ալոյր > ալըր (տուն). արեւն > արոյն > արուն > արըն (տեր). ձիւն > ձոյն > ձուն > ձըն (ծաղիկ)։— Գեւղ > գեղ, գեղջուկ, եւղ > եղ։ Եւ և իւ հաւուկ են հին դասականին, ոչ, կիլիկիան կամ միջին հայերենին. իսկ ու և ը նոր հայերենի գործածած ասոնք են. ուստի դասականի իւ—ու նոր հայերենի մեջ. ուրեմն դասականի գոյ վանկերու մեջ գտնված իւ-ը նորի մեջ պետք է դրել ու. այսպես՝ սիւն > սուն, ձիւն > ձուն, արիւն > արուն, հարուր, աղբուր, ալուր, մրջուն, գուր, գուր գալ (գուրեկան), հուզ, հուսել, հերիւն ձուխտ, ճուղ և այլն։ Կան քանի մը բառեր, վորոնք նախընտրեր են եղ ձևը գեւղ > գեղ, իւղ > եղ և այսպես ալ պետք է գրել։

Առանձնահատուկ ձևով մը կը ներկայանա իւր բառը, վորն իր բոլոր հոլովներու մեջ վերածվեր է իր ձևի, այսպես՝ իր, իր-ին, իր-ում, իր-ով, իր-ենք, իր-ենց, իր-ար(< իր-ևար)։

Ծթ. Պետք է նկատել, վոր եւ, իւ կենդանի բարբառներու մեջ յերկու տարբեր զարգացում ունին՝ ու և ե արևմտյանի մեջ, իսկ՝ ի յերկու տարբեր զարգացում ունին՝ ու և ե արևմտյանը կ՛ըսե՝ Հարութին > Արթին, չարութին, աղքատութին, արևելյանը՝ Արութին > Արթին, արին, հարիր ձևերը նախընտրեր են։ Գավառական այս մասնա-

կանութիւնը սակայն չի կրնար ազդել վերի կանոնի վրա, վոր ընդհանուր է և շատ ավելի հնչուն ու թեթև։

Այս բացատրութիւնով կը լուծվի և ընկեր Աբեղյանի իւ—յու գրելու առաջարկը։

դ) ոյ ու ը—հին հայերենն արդեն այս ձայնաշրջութիւնն ունի դոյ վանկերու մեջ՝ յերբ բառն նոր վանկով մ՛ածի լոյս > լուս-աւոր, բոյս > բուս-ական, վարագոյր > վարագուր-եմ, սնդոյգ > սգու-բած հայլն։ Այս կարգին կը պատկանին նաև հին հայերենի հետևյալ ձևերը.—

աջ—աջոյ > աջում. ձախ-ձախոյ > ձախում. այլոյ > այլում, նորոյ > նորում, մերոյ > մերում, իմոյ > իմում։ Միջին և նոր հայերենները զարգացուցեր են այս որենքը և տարածեր թե հոլովներու վերջավորութեան և թե նույն իսկ արմատ բառերու վրա։ Այսպես բոլոր—ոյ և—ւոյ վերջավորութիւնները դարձեր են—ու՝ մարդոյ > մարդու, եկեղեցւոյ > եկեղեցու. գրելոյ > գրելու, կարդալոյ > կարդալու։ Շոյտ > շուտ, զգոյշ > զգուշ, ուժ, վաստուժ, անուշ, քուր, մորքուր, լուս, բարի լուս, լուս աշխարհ, ձկուիթ, բուն, թռչունի բուն, բուիթ, մեղուշ, աշխուժ, սառուց, պուտ (ծաղիկ)։

Ընկեր Աբեղյան արդեն նույն բանը կ՛առաջարկե միայն սահմանափակ բառերու համար. իսկ մենք կ՛առաջարկենք հետզհետե ընդհանրացնել այս կանոնը նաև գրական բառերու վրա, վորոնք ժողովուրդի կենդանի լեզվի մեջ չլինելով՝ դեռ չեն յենթարկվեր նույն որենքին։ Սրանով լեզուն կ՛ազատվի այն «ծանրաբեռնած ձևով» գրութենեն, վոր կ՛առաջարկե ընկ. Աբեղյան. զգուշ, մեղուշ, անուշ կամ լուս, բուս, կուս (Առաջնորդ հ. լ. ուղղագ. 8) և նման բառերու համար։

Մեր առաջարկն ունի և մանկավարժական այն առավելութիւնը, վոր աշակերտն այլևս պետք չէ ունենար մտածելու, թե ինչու սնդոյգ կամ սնդույգ պետք է գրել—ոյ կամ ույ. իսկ սգուրել՝ ու, վարագոյր և վարագուրել և այլն։ Դարձյալ մենք առով վոչ միայն լեզվի դեմ գործած չենք լինի, այլ՝ ընդառաջ գացած անոր զարգացուցած որենքներուն։

Ծթ. Արևմտյան հայերենը՝ մանավորաբար Պոլսի բարբառը ձայնավորներու փոփոխութեան ու սղումներու մեջ յետագարձ ուղղություն մը յերևան կը բերե. այսպես հակառակ դասականի ուղղագրութեան՝ կը գրե՝ պարտէզի փոխանակ պարտիզի, հանդէսի, վարագոյրի, երևոյթի, ինչպես և ջուրի, սուրի, պտուղի, սիրտի, միտքի և այլն. մինչդեռ հայաստանցին շատ կանոնավոր հետևողականութեամբ կը շարունակե արտասանել՝ ջրի, սրի պտղի և այլն։

Շատ մեծ իրավունքով Դանիացի լեզվաբան Jespersen մանավոր կարևորութեան կուտա լեզուներու այս արտասանութեանը. «կա մեկ ուրիշ հնչական արտաքերութիւն, վորն ավելի տիեզերական, ավելի թանկագին է. քան այն՝ ինչ վոր հաստատեց Baudouin de Courtenay այն է բառերը կարճացնելու արտաքերութիւնը։ Բառերը կը դառնան ավելի ու ավելի կարճ պատճառով այն բազմատեսակ փոփոխութիւններու, վորոնք կը տեսնենք անդադրում կատարված բոլոր լեզուներու մեջ. ձայնավորները տակար (շեշտադուրկ) վանկերու մեջ կ՛արտասանվին ավելի ու ավելի տկար և վերջապես կը կորսվեն բոլորովին... որկ. լատին bonum, homo, viginti դարձեր են ֆրանսերենի մեջ bon, on, vingt (արտասանել՝ vin) և լատին bona, hominem ֆրս. bonne (արտ. bon), homme (արտ. om)»։

Այս և նման ամփոփումներ կը կատարվին մեզի արդեն հայտնի կանոններով. բայց կան ամփոփումներ, որոնք յինթակա չեն վ և կանոնի։ «Այսպիսի ազդեցություններու՝ դարերու ընթացքին կուտակումը կը վերջանա այս պարագային խիստ կրճատումով, որի հետ ծանոթ է պատմական լեզվաբանական յուրաքանչյուր գիտուն։ Մի դասական որինակ կարելի չե մատնանշել հոս. անգլ. had (ունիմ) կը համապատասխանե գոթերեն՝ habaidedeima-ին, մեկ ուրիշ որինակն է lord, որ նախապես եր՝ loverd, իսկ հին անգլիերենի մեջ՝ hlâford։ Լատին՝ augustum ֆրանսերենի մեջ՝ aoust-ի վրայով յեղեր է août, կարատասանվի (au) կամ (u), լատին metipsimum իտլ. medisimo, սպանիերեն՝ mismo, ֆրս. même» և այլն (ավելի որինակները տեսնել 329)։

Նման անկանոն ամփոփումներ ունինք և նոր հայերենում—այժմ > այս ժամ, տեր > տի այր, դես > ընդ այս, դեն > ընդ այն, դոր > ընդ որ և այլն։ «Ուստի ամենափոքր կասկած անգամ չի կրնար ըլլալ այն մասին, թե բոլոր լեզուներու մեջ ընդհանուր արամադրությունն է դեպի ավելի ու ավելի կարճ ձևերը... Նոր լեզուներու մեջ ինչ-ինչ բառերու յերկար լինելը չի կրնար հերքել մեր ըսածը, յերբ նկատի առնենք լեզվի ամբողջությունը. այս բանն ավելի պիտի հաստատվի, յերբ հաշվենք մի գրքի վանկերը տարբեր լեզուներով, որպ. Մատթեոսի Ավետարանը հունարենի մեջ արտահայտված է 39,000 վանկով, շվետ.՝ 35,000, գերմ.՝ 33,000, դանր.՝ 32,000, անգլ.՝ 29,000, չինար.՝ 17,000։ Ասոր վրա պետք է ավելացնել և այն հանգամանքը, որ թարգմանություններն ավելի յերկար կը լինին քան բնագիրը։ Ուստի իրական կարճությունն ավելի մեծ է, քան ինչ որ կը ցուցնեն այդ թվերը»։ (Ն. տ. 330)։

Հայ և ոտար լեզուներե մեջ բերված որինակները միանգամայն կհաստատեն այն տրամադրության գոյությունը նոր հայերենի մեջ, թե հատկություն ու կարճություն անոր հական հատկանիշն է և յուրաքանչյուր հայ գրող պետք է առաջնորդվի այս սկըզբունքով։ Յեթե գրությունը, ինչպես արդեն տեսանք, ամեն բանե առաջ հասարակական, ընկերական մեծ կարևորություն ունի և այս պատճառով ալ այբուբենը պետք է լինի պարզ ու սահմանափակ նշաններե կազմված. նույնպես և լեզուն հասարակաց սեփականությունն է և որքան ավելի դյուրամատչելի լինի հասարակության, նույնքան ավելի լավ պիտի ծառայե իր նպատակին։ «Ինչ վոր նկատողության արժանի չե այս պարագային, կըսե դանիացի լեզվաբանը, բնականաբար խոսող համայնքի շահն է, և յեթե մենք հաստատապես կշռադատանք լեզուն՝ իբր մարդկային գործողությունների հավաքածու՝ նկատի առնելով մի վորոշ նպատակ, այսինքն՝ մտքեր ու զգացումներ հաղորդելը, այն ատեն առավել դյուրին պիտի լինի գտնել չափանիշը լեզվաբանական արժեքը չափելու համար, վորովհետև այս տեսակետե ստույգ է, թե ավելի բարձր կը դասվի այն լեզուն, վորը փոքր միջոցներով շատ բան կատարելու արվեստին մեջ շատ հեռու կը գնա, կամ ուրիշ խոսքով՝ վորն ընդունակ է արտահայտել մտքի ամենաչնչին գումարն ամենապարզ հորինվածքով (մեխանիզմով)» (Ն. տ. 324)։

Գավառաբարբառներ գրելու համար պետք է ունենալ զատ այբուբեն,

այսինքն՝ մեր տառերուն տալ հնչական այլ արժեքներ և այս ձշտել ու հաստատել Յեվրոպա ընդունված գիտական այբուբենով։ Յեթե կը փափաքինք, վոր մեր յուրաքանչյուր գավառաբարբառ արձանագրվի բուն իսկ իր արտասանությամբ, անհրաժեշտ է ունենալ նաև այսպիսի մի այբուբեն և չթողնել մինչև այժմ յեղածին պես, յերբ գրվածն ամեն մեկը կը կարդա իրեն ընտանի արտասանությամբ. ուստի կառաջարկեմ, վոր այս ուղղությամբ ալ աշխատանք կատարվի և պատրաստվի այս այբուբենը։

Նվազ կարևոր չե ոտար անուններու և բառերու միօրինակ տառադարձելու խնդիրը։ Կիլիկյան շրջանեն սկսած մեր գրականության մեջ հաստատված է յերկու տեսակ տառադարձություն, վորը կարելի չե անվանել Արևմտյան և Արևելյան։ Հիմա յերբ ոտար բառերու ահագին թիվով ներխուժում կը կատարվի հայերենի մեջ, անհրաժեշտ կը համարինք միակերպ դրություն մուծանելը. վորովհետև բացի նույն բառի՝ հայերենի մեջ քանի մր տարբեր տեսակի գրության անպատեհությունեն՝ հաճախ կը պատահին այնպիսի տառադարձություններ, վորոնք յերկու կողմերու համար անհասկնալի լինելու աստիճան տարբեր են։ Այս տարբեր տառադարձությունն անտարակույս հիմնված է արտասանության տարբերության վրա, վորը վերացնել անկարելի չե. բայց կարելի չե պայմանավորվիլ միակերպ տառադարձել յեվրոպական գրերը հայ այբուբենով՝ ազատ թողնելով արտասանությունը, այսինքն՝ յուրաքանչյուր ընթերցող արդեն պիտի արտասանե իրեն ընտանի արտասանությամբ։ Այսոր մենք կը գրենք հայերեն վ և բառ ամեն տեղ նույն տառերով, բայց ամեն ընթերցող կարտաբերե իր արտասանությամբ։ Յեվրոպական լեզուներն ալ իրենց համար ոտար բառերն ու անուններ կը գրեն այն տառերով, վորով գրված են անոնք բուն ազգի մեջ, թեպետ յուրաքանչյուրը կ'արտասանե իր լեզվին հատուկ արտասանությամբ. ուստի կառաջարկեմ կազմել նաև պետական տառադարձություն ոտար բառերու և անուններու գրության համար։

Գ.

ՅԵՐԿՈՒ ԽՈՒՄԲ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԿԻՐԱՐԿՎԵԼՈՒՆ ԱՐԳԵԼՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Մեր առաջարկներու առաջին ոգտակարությունը մանկավարժական է։ Մենք արդեն տեսանք, թե այն լեզուն ավելի բարձր պետք է դասվի, վորը քիչ ջանք ու ճիգ գործ դնելով կը սորվվի։ Ամենքս ալ գիտենք մեր լեզուն ուսուցանելուն արգելք եղող ուղղագրական դժվարությունները։ Այս բարեփոխությամբ մեկերպություն ու դյուրություն պիտի ներմուծվի դպրոցական ուղղագրության մեջ, իսկ անոր վրա վատնված ժամանակը պիտի ոգտագործվի ալ ավելի խորանալու և հմտանալու լեզվի մյուս ճյուղերու մեջ։ Ուղղագրական այս բարեփոխությունը շատ ավելի ոգտակար պիտի լինի Պոլսահայ և ընդհանրապես արևմտահայ դպրոցականներու համար, քանի անոնք դեռ պիտի պայքարին նաև կ, տ, պ, ծ, ճ տառերու ուղղագրության դեմ, վորոնք իբր հնչում այլ ևս գոյություն չունին

իրենց արտասանությանը մեջ, բայց անոնք դեռ պետք է պահեն պատճառական ուղղագրությունը. մինչդեռ բուն հայաստանցի դպրոցականը մեծ մասամբ զերծ է այս դժվարութենեն։

Ցերկրորդ՝ աշխատանքի և ժամանակի խնայողություն գրողներու, իսկ տնտեսական խնայողություն տպագրողներու համար. Գրաշարներուն ու տպագրիչներուն կը ծնա հաշվել, թե մեկ տպագրական թերթի մեջ քանի յ, ե, ա, ո, ւ պիտի պակասին, վերջքան խնայողությունն կը լինի։

Ցերրորդ՝ ուղղագրական ու լեզվական այս բարեվոխությամբ արդի հայերենը պիտի ստանա ուղղագրական դյուրություն և պարզություն, բառերու կարճություն և հնչականություն։ Բացահայտ է, թե տեսնեմ, մտնեմ, ելլեմ, իջնեմ և նմաններն ավելի կարճ, հնչեղ ու թեթև են քան նրանց հին ձևերը՝ տեսանեմ, մտանեմ, ելանեմ, իջանեմ. նույնպես և ավելի հնչեղ ու թեթև են մատնի, հարանիք, կեղվիլ, հայլի, խորվիմ, թոթվիմ, ժողվիմ սեմ, ցորեն, վառեկ, շուտ, լուս, անուշ, ուժ, ձուն, սուն, արուն, ճուղ, և նմանները, քան ատոնց հին ձևերը։ Մեր բանախոսեղծներուն կը ծնա գնահատել վերջիններուս հնչական առավելությունն ու կարճությունը և կիրարկել իրենց տաղաչափության մեջ։ Ուղղագրության պարզություն, բառերու կարճություն ու հնչականություն առավելություններ են, որոնց նախանձախնդիր պետք է լինի ամեն հայ գրող։ Շատ ի դեպ և այստեղ յիշել Turgot-ի խոսքը. Des hommes grossiers ne font rien de simple. Il faut des hommes perfectionés pour y arriver»։

Այս առավելությունները ձեռք բերելու համար սակայն կան արգելքներ ու դժվարություններ։—

Առաջին արգելքը հին սերունդի համար, ինչպես արդեն գիտենք, աչքի և ձեռքի վարժություն է։ Արդեն ըսվեցավ, թե մեր դպրոցական առաջին օրվնե սկսած՝ մեր աչքերը վարժվեր են բառերը տեսնել հաստատուն վորոշ պատկերով մը և այս տեսապատկերն այնքան զորավոր է ու խոր, վոր պատկերն ու նշանակությունը նույնացեր են մեր մտքի մեջ. ուստի յերբ կը փոխվի բառի պատկերը, մեզ այնպես կը թվի, թե կը փոխվի և բառի իմաստը, ուրեմն և լեզուն. սակայն, ինչպես գիտենք, այս կարծեցյալ փոփոխությունը լոկ արտաքին է և հականի մեջ բնավ տարբերություն չըներ իմաստի, ինչպես և լեզվի համար։ Դասական շրջանում ապրած հայերու համար ինչ նշանակություն վոր ուներ որկ. «առնեմ» բայն իր՝ այս տեսապատկերովը, նույն իմաստն ուներ կիլիկեցիներու համար «այնեմ» ձևը, արևելյան հայերու համար՝ «հնեմ» կամ «անեմ», իսկ մեզի համար՝ «ընեմ»։ Ցեվ այսպես նոր հայերենի բազմաթիվ ձևերը։ Նույն լեզվի հին ու նոր շրջաններն իրարմե կը զատվին վոչ միայն իրենց քերականությամբն ու բառարանովը, այլ և բառերու արտաքին տեսքովը։ Անգամ մըն ալ հիշենք, թե գրությունը բառի հագուստն է և իր փոխվելովը՝ չի փոխվիր բառի ներքինը՝ իմաստը, գաղափարը։ Իսկ նոր սերունդի համար, վորի համար և իսկապես մեր աշխատանքը, բնավ կարևորություն չունի որոգայթ, թե վորոգայթ, կաւ, թե կավ, նուեր, թե նվեր, յարմար, թե հարմար գրելակերպով պետի սորվի իր մայրենի լեզուն. վորքան մոտ լինի իր արտասանության ու դյուրին, նույնքան ավելի լավ։

Ցերկրորդ արգելքն է ավանդության զորությունը։ Մեր կյանքի մեջ ավանդությունը շատ մեծ դեր կը խաղա։ Վոչ ապաքեն այս հին ձևերը վորոշ չափով կը կապեն մեզ՝ մեր հնության հետ։ Մենք հարուստ գրականություն ունենք, վորու մեջ նվիրագործված են այս հին բառաձևերը։ Արդ՝ ինչպես հրժարիլ այս բոլորեն։ Սակայն հոս ալ դժվարությունն առերևույթ է։ Ցեթե ե դարու գրողին «առնեմ»-ի փոխանակ ներկայացվեր «հնեմ» կամ «ընեմ», «անկանիմ»-ի փոխանակ՝ «ընկնիմ» կամ «իջնամ», «եղանիմ»-ի փոխանակ՝ «ըլլամ», նա պիտի բացագանչեր «այս ինչ բարբարոս ձևեր են». բայց մեզի համար վերջիններս նույնքան ընտանի ու սիրելի չեն, վորքան Մեսրոպի մը համար առաջիններըս։ Ներկա գրողներն են ուրեմն, վորոնք պիտի բռնվին այս դժվարությանը. իսկ գալիք սերունդի համար նույնքան զորավոր սովորությի ու սիրելի պիտի դառնան վերջին բառաձևերը։ Կարձյալ ոչ կարող ե ըսել, թե մենք վերջին բառաձևերն ընդունելով՝ խզեցինք մեր կապը մեր հին մատենագրության հետ, ուր կան միայն նույն բառերու առաջի բառաձևերը։ Այստեղ յեղած առաջարկները վո և ե վանդ չեն սպառնար խզելու մեր կապը հնության հետ և մոռացության մատնելու մեր հին գրականությունը։ Արդյոք մենք աշխարհաբարի ձևերն ընդունելով խզե՞ր ենք մեր ավանդությունը։

Ցերրորդ մեծ արգելքն է գրական լեզվի տիրապետությունը։ Լեզվի հարափոփոխ կյանքի մեջ՝ գրական լեզուն պահպանողական ուժն է, վորն իր քերականությունովն ու բառարանովը միշտ պատրաստ է սահմանափակել փոփոխությունը և արգելել նորությունը։ Գրական լեզուն բարբառների կազմվելով՝ կը դառնա ընդհանուր որենատուն. նա կուտա կանոններ մեր գրելակերպին և կ՝որոշե մեր գործածած բառերը։ Ցեթե ճշտորեն կատարվի գրական լեզվի բոլոր պահանջները և կիրարկվին անոր սահմանած բոլոր կանոնները, այն ատեն լեզուն պիտի զրկվի իր եական մեկ հատկություններեն, փոփոխվելու ընդունակություններեն՝ նորոգվելեն, վորով, ըսել է, պիտի հրաժարի մշտապես կենդանի ծնալու ձգտումեն, այսինքն՝ պիտի դադրի կենդանի գործածության մեջ։ Գրական ամենախիստ պահպանողական լեզուն անգամ պետք է միշտ հարաբերության մեջ ծնա հասարակաց կենդանի լեզվի և բարբառներու հետ, ուրկե պիտի ստանա իր թարմությունը, ուժն ու կենսունակությունը։ Առանց այս մշտահոս աղբյուրի և մշտաղալար մացառուտներու՝ գրականը պիտի ցամքի, գոսանա, ուստի գրական լեզուն հաճախ իրավախոհության պիտի նստի կենդանի լեզվի հետ՝ առնելով անկե՝ ինչ վոր հոն զարգացեր և ընդհանրացեր է ու վտարելով իր մեջեն այն, ինչ վոր հնացեր ու կիրառությենե դադրեր է։ Ասկե ինքնին կը հետևի, թե կենդանի գրական լեզվի քերականությունը 4—5 տարին անգամ մը պետք է վերաքննության ենթարկվի և հասունցած նորությունները ներընդունի։ Բառարանն ալ պետք է՝ ընդունելով նվիրագործեն այն բառերը, վորոնք գավառաբարբառներեն կուգան կամ գրագետներու ստեղծագործություններեն։

Ցերը ընդունինք այս ուսումնասիրության մեջ բացատրված լեզվաբանական սկզբունքները, այն ատեն ստիպված պետք է ընդունինք և առաջարկված բարեփոխությունները, վորոնք մեր կենդանի արտասանությունն ու հասարակաց լեզուն զարգացուցեր և ընդհանրացուցեր է և վորոնք կիրառության դնելով՝ քայլ մը առած կը լինինք դեպի տիրող արտասանու-

թյունը, դեպի կենդանի լեզուն և գոնե սասամբ թեթևցուցած կը լինինք ուղղագրական դժվարութիւնները և լեզուն մաքրած՝ արդեն հնցած ձևերին։ Պետք և պիտանէք նաև, թե մեր մերժելովը անոնք չեն գաղրիր գոյութիւն ոնենալե և հետզհետե անոնց թիվը պիտի ավելնա մեր կենդանի լեզվի մեջ ու դժվարութիւնները պիտի բազմապատկվին։ Մենք կրնանք հետաձգել միայն. վորովհետև գալիք սերունդը բռնադատված պետք և ընդունի, չեթե չի ուզեր թաղել իր գրական լեզուն, քանի վոր հին ձևերուն կառչած մնալով՝ անհասկնալի պիտի դառնա ընթերցող հասարակութեյան։ Ուստի վորքան շուտ, այնքան ավելի դյուրին պիտի լինի փոփոխութիւնը և ավելի պատեհ ժամուն ազատած պիտի լինինք մեր նոր սերունդն ավելորդ աշխատանքներե և դժվարութիւններե։

Այս բոլոր բացատրութիւններով հանդերձ, պետք և ըսել նաև, վոր մենք՝ հին սերունդի ներկայացուցիչներս չենք կամենար և վորոշ չափով չենք իսկ կրնար հրաժարիլ գրութեյան հին ձևերեն։ Անոնք տասնյակ տարիներու ընթացքին հարյուրավոր ու հազարավոր անգամ մեր գրչի տակն են ընկեր և մեր աչքին այնքան ընտանի ու սիրելի դարձել. այո, մենք չենք կամենար. բայց ... բայց կա մի բան, վորն ավելի հզոր ու վեհ և քան մեր փափաքը և անհատական նախընտրանքը, այն՝ նոր սերունդին դյուրութիւն ընծայելու պահանջն և, տասարակաց շահն և, լեզվի ընդհանուր տրամադրութեյան բուն հոսանքն և։

Ասքն ու գործը մեր նոր գրողներուն ու բանասաեղծներուն և, վորոնք այս ուղղագրութեյունն ու նոր բառաձևերը գործածելով պիտի նվիրագործեն ու ընդհանրացնեն։ Լեզվի մեջ կիրառութեյունն ամեն բան և։ Usus est tyranus – *(կիրառութեյունը բռնակալութեյուն և։)*

Գրիգոր Զոհրապյան

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Զեռնարկելով տալ մեր հայերենի ուղղագրական խնդրի վերաբերյալ մի լեզվաբանական եքսկուրս, մենք կարծում ենք, վոր դրա համար նախապես պարզած պետք է ունենանք մեր լեզվի պատմա-հնչյունաբանական դինամիկայի վերջնական մարմնավորումները և ձևակերպումները, իրրև հենանք այդ լեզվի որգանական զարգացման և պատմական մետաղների։ Այդ պատմա-հնչափոխական վերջնական արդյունքները պետք է, անշուշտ, վավերացման չենթարկվին նոր ուղղագրութեյան միջոցով, ինչպես այդ արվել է մասամբ և ավանդական գրութեյամբ, այն է՝ «աւ» յերկբարբառի «օ» վերածելը և այլն։

Սակայն, մեր հարցի գործնական լուծումը չի կարող պարփակվել սոսկ հայկական լեզվային բնագավառում և կտրվել ընդհանուր տեսական պատվանդանից։ Գործնական այդ հողի վրա գրվելը նախապրյալ պետք է ունենա այն ավյալները, վոր ստանում է լեզվագետը գրութեյան ու լեզվի փոխհարաբերութեյան խնդրում ընդհանրապես ու գրանց պատմական ընթացքման տեսակետից մասնավորապես։ Վորքան ճիշտ կըմբռնվի այդ ընդհանուր լեզվային մասը, այնքան ուղիղ կը լուծվի և մեր ուղղագրութեյան խնդիրը։

Խնդրի այդ կերպ մեկնաբանումով մենք անհրաժեշտ ենք համարում տալ այս ներածական մասում լեզվի և գրութեյան փոխհարաբերութեյան ուրվագծական նկարագրումը, մոտենալով այդ փոխհարաբերութեյանը բնաքանակական-հոգեբանական զննական մեթոդներով և հանելով դրա պատմական դիտական յեզրակացութեյունները։ Պետք է նշել, վոր հոդվածիս այդ ներածական ընդհանուր լեզվական մասը վոչ մեյն փորմալ դեր է խաղում բուն ուղղագրութեյան խնդրի հանդեպ, այլև նրա կռվանն ու պայմանավորող հիմքն է հանդիսանում։

Անցնենք, ուրեմն, լեզվի և գրութեյան փոխհարաբերութեյան քննութեյանը՝ իրեն լեզվաբանական-տեսական և պատմական-կուլտուրական տեսակետներով։

*Ունենալով բանականին հատուկ միանգամայն բնական մի ձգտում, այն է՝ պահել ու ժառանգութեյան հանձնել գեթ յուր հոգեկանը, գտնել անհետացողի արտահայտականը միայն և մշտենջենավոր, մարդկութեյունը ստեղծել և յուր գարգացման պատմաշրջանում այլևայլ ֆիզիկական միջոցներ այդ յուր հոգեկան տենչանքները իրականացնելու համար։ Այդ ֆիզիկական նշանները, ինչպես հայտնի յա, ունեցել են սկզբում վոչ առարկաների պատկերացումներ, նկարներ, լինելով, այսպես ասած, պատկերագրեր**), *հետո առաջել են խորհրդանիշ բնույթ («իդեոգրամ»ները). դրանց*

---

*) *Արագածի և Գեղարքունյայց սարերի լանջերին ընկած «լծագրերը» անշուշտ այդ պատգերագրերների կարագետներն են հանդիսանում։*

հաջորդում են վանկավոր («սիլլաբիկ») նշանագրերը, վորոնք պահպանվել են և յայժմ, և ապա գալիս են տառեր իրենց զուտ հնչարանական («ֆոնեմիկական») գրութիւնմբ, ուր ամեն մի տիպիկ հնչյունական միավոր յուր արտացոլումն և գտնում նշանագրերի միջոցով։ Այդ բոլոր միջոցները այժմյան այլևայլ այբուբեններին հետ միասին ունին մեզ համար լոկ պատմական նշանակութիւն, իրրև հետևանք և սեփականութիւն մարդկային կուլտուրայի էվոլյուցիայի։

Արդի լեզվագիտութիւնն ևս գործ է ածում նշանագրեր, ինչպես նման յերևույթ տեսնում ենք, որինակ, մաթեմատիկայի, քիմիայի, տնտեսագիտութեան և այլոց մեջ. և լեզվաբանական այդ արտանկրիպցիան՝ լատինական տառերից՝ ունի միանդամայն լաբորատորական—տեսական բնույթ, անկախ վոր և է ազգի լեզվական զարգացումից և նրա գրութեան տվյալ յեղանակից։ Լեզվաբանական գրութիւնը յելնում է մարդկութեյան գրաֆիկական նվաճման վերջին կատարյալ փուլից՝ ֆոնեմիկական-հնչյունաբանական և գտնում է վերին աստիճանի մի բարդ ձև, մի խճողված սիստեմ։ Ել չենք խոսում այժմյան փորձնական («եքսպերիմենտալ») հնչյունաբանութեյան մասին, ուր հնչյունի բոլոր բնախոսական և ակուստիկական մոմենտներն անգամ արձանագրվում են գրութեյամբ։

Հապա, այժմյան լինգվիստիկայի տվյալներով ինչ տեսական փոխհարաբերութեյան մեջ են դանվում հնչյունը և գիրը (տառը), և վորն և այդ փոխհարաբերութեյան պատմական արժեքը։

Առաջին կետի վերաբերյալ մենք հետևում ենք ռուս լեզվագետների այսպես կոչված «հոգեբանական դպրոցին», հանձին դրա կատուցող՝ պրոֆ. Բոդուեն դե Կուրտենեյի*), ասելով այդ խնդրի սեղմ և ֆորմուլատիվ նկարագրութեյունը։

Այստեղ մենք ի նկատի պիտի ունենանք, վոր «ֆոնեմա» և «հնչյուն» կոչվածները իրար չեն ծածկում և տարբեր աղբյուրներից են ըղխում։ Ֆոնեմը հնչյունի մտապատկերն է և միտնական և, իսկ հնչյունը նրա բազմատեսակ դրսևորումն և, կախված լինելով մեր մկանունքների իներտութեյունից ու հարևանցութեյունից, ինչպես և դրացի հնչյունների փոխազդեցութեյունից։ Իսկ յեթե այդ խնդրին մոտենանք և հոգեբանական տեսակետից, մենք պիտի տեսնենք, վոր արտասանական մտադրութեյունը (произносительное намерение) չի կարող ունենալ միայար լարվածութեյուն և ուշադրութեյուն, յերբ հնչյունական մտապատկերների (ֆոնեմների) զուգորդութեյունները դրսևորվում են «ֆոնացիայով», այսինքն՝ հնչյունների զուգորդութեյուններով։ Հետևապես, յերբ հնչյունական պատկերացումները իրացման են յենթարկվում այդ հնչյունական արտաբերումներով՝ արտիկուլյացիաներով, մենք այդտեղ հանդիպում ենք թե ֆիզիկո-բնախոսական և թե հոգեբանական խոչընդոտների։ Այդ նշանակում է, մասնավորապես, վոր յեթե մենք մի «e» ֆոնեմայի համար մի քանի անգամ կրկնենք նրա հնչյունը (e, e, e...), գործնականում դրանք իրար չեն հավասար, թեպետ ձգտում են նույնանալու. որինակ հայերենից—«բեր» և «համբեր» ձևերի «e»-յերը տարբեր հնչյուններ ունին, սակայն մենք չենք զգում, իսկ «բեր» և «բերի» ձևերի մեջ սովորական ապպերցեպցիայով իսկ այդ «e»-յերի

*) Այժմ դասախոսում է Վարշավայի համալսարանում։

տարբերութեյունը զգալի յե։ Այդպիսով, ուրեմն, մենք տեսնում ենք, վոր միևնույն ֆոնեմայի արտաբերումները գիտական տեսակետից իրար չեն ծածկում, տարբեր վորակի յեն, սակայն մեր արտասանական-լսողական ապպարատի կողմից դրանք չեն զգացվում, «նիվելլիրովկայի» յեն յենթարկվում, վերածվելով մեր «բերա» ըմբռնողութեյամբ մի ընդհանուր հայատարի, մի տիպիկ «հնչյունի»։

Սակայն ինչպես պետք է վարվել, յերբ հարց է գալիս վերարտադրել գրութեյան միջոցով միայն այդ տիպական հնչյունները, ունենք, արդյոք, բոլոր հնարավոր տվյալները։ Պայմանական կերպով, յեթե վերցնենք գրա մաքսիմում գործադրական ձևաբերումը, մենք կարող ենք ասել, վոր տիպիկ հնչական միավորների շարքը՝ $S_1+S_2+S_3+\ldots$ (S=sonus 'հնչյուն') պիտի արտացոլվի գրային պատկերների՝ գրաֆեմաների զուգորդութեյամբ, այսինքն՝ $L_1+L_2+L_3+\ldots$ շարքի զուգորդութեյամբ, (L=littera 'գիր')։ Սակայն արտասանելին չունի սոսկ միայն հնչական արտադրական կողմ, և լեզվի մեջ նա առանում է նաև նշանագրական-կոմպոզիտիվ կողմ. այդ պատճառով էլ, նշանագրերի զուգորդութեյան մեջ պետք է մտնեն այլևայլ լրացուցիչ մասեր ինչպես՝ առոգանութեյան, ինտոնացիայի նշանները, շեշտեր, հնչյունի յերկարացման նշաններ, արտութեյան նշաններ բառերի, պարբերութեյունների և արտացոների պատումով («գրաֆիկ պատուգա») և այլն և այլն։ Այս գրութեյան ձևով կը ստացվի մի կատարյալ հնչյունաբանական գրութեյան սիստեմ, վորը, սակայն, գործնականում մեալու չի, կարծես թե, յուր իդեալական վիճակում, լրիվ չերականացած։ Մենք աչքաթող ենք անում նաև հնչյունի բոլոր նրբութեյունները («նյուանսները»), նրա բնախոսական—ակուստիկական մոմենտները, վորը հետաքրքրում է փորձնական հնչաբանութեյան։

Հնչյունաբանական գրութեյան սկզբունքը, ինչպես ասվել է, յելել է գրի զարգացման վերջին փուլը, մարդկութեյան այդ մշակութի վերջին ձեռքբերումը։ Յեվ կասկած չկա, վոր այդ սկզբունքն է լինելու կենսագործողը և հետագայում, թեպետ սովորական կյանքում, տեխնիկական գործադրման միջոցին, մենք մեծ դժվարութեյունների յենք հանդիպում, մանավանդ վոր մարդիկ համապատասխան պատրաստութեյուն չունին և անհատի հնչագետ ապպարատը վորոշակի չի տարբերում մինչև իսկ ուժեղ հնչական միավորները։ Այնուամենայնիվ պետք է ձգտել, վոր այդ հնչաբանական սկզբունքը գեթ բավարար չափով իրականացվի, վոր բոլոր հնչական տիպիկ միավորները անպայման ունենան գրութեյան ժամանակ մի նշանապատկեր՝ գրաֆեմա։ Այդ սկզբունքով են վորոշ չափով առաջնորդվել հին հույները, հընդիկները, հայերը և սլավոնները իրենց լեզվի առաջին գրառման ժամանակ։ Նույն սկզբունքը գործադրվեց 1922 թվին և արդի հայերենը գրելու մեջ, մեր այս «նոր ուղղագրութեյան» մեջ, ուր հնչաբանական այդ յեղանակը ավելի լայն չափով ընդառաջ գնաց գիտական լինգվիստիկայի պահանջներին։ Իսկ յեթե մենք ցանկանանք մի վոր և է անգիր լեզու գրի առնել, դիցուք մի քրդական կամ մի նեգրական բարբառ, մենք այդտեղ արդեն արհրաժեշտորեն ստիպված ենք լինելու դիմել ֆոնեմիկական սկզբունքի լիուլի գործադրութեյանը, ի հարկե այն չափով, վորքան մարդկային ապպերցեպցիան զատում է ինքնորոշ և տիպիկ հնչական միավորները։ Յեվ յեթե, որինակ, մի «գնալու չեն» ասվածի մեջ «ւ» հնչյունը չի ստացել յուր բազա-

ձայնութեան ինքնորոշումը, գոնէ 60—70 տոկոսով, այն ժամանակ այդ չպետք է գրի առնել։

Այսպիսով, ուրեմն, հնչաբանական ուղղագրութեան սկզբունքը միակ ճշմարիտը և գիտականը հնչյունի և գրի փոխհարաբերութեան իրընդրում ընդհանրապես. մինչև իսկ գիր ու գրականութիւն ունեցող կրթված ազգերի ուղղագրութեան փոփոխման համար այլ ուղեցուց չկա, քան հընչական—ֆոնետիկական սկզբունքը։ Սակայն, ուղղագրութեան խնդրի հնչաբանական սկզբունքը պարզորոշ կարող է ծառանալ մեր առաջ միայն այն պարագայում, երբ հարցը դնում են մի կոնկրետ ժամանակաշրջանում և պայմանաւորում ևս մի տվյալ պատմաշրջանով։ Իսկ երբ գրի և հնչյունի կամ ավելի ճիշտ գրութեան և լեզվի փոխհարաբերութիւնը վերցնում ես իրենց զարգացման պատմական ասպեկտով, այդտեղ մենք վորոշ խոչընդոտների չենք հանդիպում, վորովհետև դրանց առաջընթացութիւնը տարբեր թափ (տեմպ) ունի, կա սերունդների հաջորդականութիւն գրային տարբեր պատկերների յուրացումով, կա լեզվի օրգանական զարգացման վորոշ պատմա-հնչական միտումներ, վորոնք կարող են վերջնականապես ձևավորված և ինքնորոշված չլինել, սակայն կանխակալ վավերացման չենթարկվել, և այլն և այլն։

Կանգ առնենք մի փոքր նաև այդ խնդրի վրա։ Ցեմեն վերցնենք մի վոր և է լեզվի վորոշ պատմական դրութիւնը և այդ արձանագրենք հնչաբանական գրութեան չեղանակով, այն ժամանակ, մոտավոր չափով, մենք կարող ենք ընդունել, վոր այդ «գրային—տեսանելի» լեզուն արտացոլել է յուր ժամանակաշրջանի «արտասանական—լսողական» լեզուն, լսել և այդ գործածական լեզվի, այսպես ասած, նյութականացած իրականութիւնը, նրա պատկերը։ Սակայն այդ մոմենտից սկսվում է մի նոր պատմական պրոցես, վորը լեզվի այդ յերկու դրսեվորութիւններն էլ՝ արտասանական և գրային՝ հետզհետե հեռացնում է իրարից, ստանալով առաջընթացման տարբեր թափեր։ Ցեմ այդ միանգամայն բնականոն յերևույթ է։ Լեզուն, իբրև արտասանական—կազմախոսական (ձևաբանական)—նշանակողական մի հյութ, իբրև անպիտակից ասոցիացիաների մի բարդ համակարգութիւն, չի կարող միալ բնականորեն մի անշարժ գրութեան մեջ, այլ յենթակա է աննկատելի փոփոխութիւնների, անընդհատ ձևափոխութիւնների, թեպետ այլևայլ լեզուներում տարբեր թափով։ Լեզուն, ինչպես լեզվագետները են ասում, վոչ թե մի իր է, ἔργον, այլ մի գործունեութիւն՝ ἐνέργεια, և իբրև սոցիալ-պատմական մի յերևույթ նա իրեն որգանական զարգացման անընդհատութեամբ հանդիսանում է յուր նախորդ գրութեան նոր կերպարանափոխված ձևը. նախորդից ստացածը և յուր մուծածը նա տալիս է հաջորդ շրջանին, հետագա սերունդին։ Ցեմ այդպիսով լեզվային զարգացման ամեն մի փուլը յուր մեջ պարունակում է ավելի քան 99,9% պատմականութիւն, իբրև նախընթացի որգանական շարունակութիւն, ինչպես այդ տեսնում ենք մարդկային ամեն մի արտահայտութեան մեջ, լինի դա հոգեկան, սոցիալական և այլ։

Լեզուն իրեն ձևափոխման պատմական ընթացքում, ինչպես նիշվեց, կարող է շատ դանդաղ տեմպ ունենալ, ինչպես, որինակ, լիտվականը, և շատ արագ, ինչպես հայերենը։

Ձևափոխման պատճառների մեծ մասը մեզ հայտնի չեն։ Այստեղ գլխավոր դերը խաղում են նոր մտտաղ սերունդի լեզվական պոտենցիալ ունակութիւնները։ Ցեմ թեպետ յերեխան, ինչպես Մեյեն է ասում*), լարվածական և մշտական ջանք և գործ դնում, վոր վերարտադրի մեծերի լեզուն, նրանց լեզվական զուգորդութիւնների ամբողջ սիստեմը, սակայն այդ լիուլի կերպով նրան չի հաջողվում. «Արտասանութեան վորոշ դետալներ չեն ըմբռնվում նրա լսողութեամբ, բառերի փոփոխութեան վորոշ առանձնահատկութիւններ վրիպում են նրա ուշադրութիւնից, և, ընդհանրապես, այն սիստեմները, վոր նա իրեն համար կառուցել է, միայն մասամբ են զուգադիպում հասակավորների սիստեմներին. ամեն անգամ, երբ յերեխան սովորում է խոսել, նա մացնում է լեզվի մեջ վորոշ նորութիւններ» («Введение», եջ 21—22)։ Հետևապես, լեզվի զարգացման այդ բնականոն ընթացքը, իբրև սերունդների բնական հաջորդութեան արդյունք, անխուսափելիորեն առաջ է բերում այլևայլ նորութիւններ, նորամուծութիւններ, թե ձայնարանական, թե ձևաբանական և թե սեմանտիկայի (նշանակութեան) տեսակետից։

Հարց է ծագում. կարող են լեզվի այդ աննկատելի և դանդաղ կերպով առաջացող նորամուծութիւնները հարատեվ կոնտակտ պահել գրային-տեսանելի լեզվի հետ. չի՞ վոր այդ վերջինը իրեն գրաֆիկայի ձևով ուղիղ արձագանգն է լսվել նախորդ շրջանի հնչյունական գրութեան և, թերևս, գործ ածվի նաև հետագա շրջանների համար։ Արդյոք, հնչաբանական գրութիւնը չի՞ պահում լեզվի հետագա փուլերի համար պատմական մի արձանագրութիւն, յուր չի՞ մտում լեզվի զարգացման ընթացքից։ Գրի պատմութիւնից մեզ հայտնի չէ, վոր գրութեան ձևը մեծ մասամբ հարմարվում է լեզվի ատիճանաբար առաջացող փոփոխութիւններին և պահպանելով հինը յուրացնում է մասամբ և նորը։ Սակայն, կասկած չկա, վոր գրային լեզուն ավելի դանդաղ է առաջ ընթանում քան արտասանականը և վոչ մի ժամանակ չի հասնում և չի էլ հասնի կատարելապես այդ արտասանողական լեզվի առաջընթացման բոլոր փուլերին։ Ցեմ յեթե ընդհատենք գրային լեզվի ատիճանական հարմարվելը և, դուրս ձգելով նրա պատմական շերտը, գրութիւնը լեզվի տվյալ գրութեան հանդեպ նորից դարձնենք հնչաբանական, այն ժամանակ կը տեսնենք, վոր նախկին վիճակն է ստեղծվում, այսինքն, գրային ձևը ելի յուր է ու մնում իրեն ժամանակակից արտասանականից, վորովհետև վերջինս յենթակա չ՚ անդադար և հարատև փոփոխութիւնների։

Մեր կարծիքով, գրային փոփոխումների խնդրում պետք է լինի հետևողականութիւն հնի և նորի մեջ. և նեղմուծվելիք այդ փոփոխութիւնների հողը պետք է նուիրված պատրաստ լինի, վորով հր դյուրացվի ատիճանական փոխանցումը առաջիկայից հետագային։ Ավյա և, լեզվաբանները զանց են առնում գրութեան պատմական զարգացման այդ որգանական կապվածութիւնը, անտես են առնում լեզուների իր պատմական գրութիւնները և իր գրանց ձևականական—ատուդարանական կողմը, դեկավարվելով մի վոր և է լեզվի սուկ հնչյունական տատագարձութեամբ. սակայն, ի նկատի պետք առնել, վոր արտասկրիպցիան չի կարող աչքի ա-

*) Տես А. Мейе, Введение в сравнительную грамматику индо-европейских языков, перевод проф. Д. Кудрявскаго, Юрьев, 1911.

ոչՋ ունենալ այլևայլ լեզուների պատմական գրությունները, վոր նա տնտեսապահված և գիտնականների նեղ շրջանակում և տարբեր նպատակներ ունի քան ընթացիկ ազգային գրավարությունը, վորը լեզվագետի համար ունի միայն պատմական նշանակություն։ Այլ կերպ էլ չեր կարող լինել։ Բայց լեթև, այնուամենայնիվ, այդ ընթացիկ գրավարությունը «քիրուրգիական անդամահատության» ձևով միանգամից և սուր կերպով կարենք նախկին գրության պատկերներից, դարձնելով կատարյալ հնչյունական նոր գրություն, այն ժամանակ, ինչպես տեսանք, վորոշ ժամանակից հետո սկսվում է մի տարաեերժ հոսանք, զարգացման տարբեր թափեր՝ տեմպեր, և գրության այդ նոր ձևն էլ, գտնելով արդեն պատմական, չի անդրադարձնում յուր մեջ արտասանողական-լսողական լեզվի նըրանոր աստիճանաձև հավելումները։ Դրության այդ ընդհատական և սուր փոխվելու դեմ խոսում են նաև մի շարք սոցիալ-հոգեբանական հանգամանքներ, վորոնց մասին քիչ ներքև։ Եվ չենք խոսում այն խնդրի մասին, վոր ուղղագրության փոփոխման տեժը չերբեմն պիտի դանդաղի, չերը վերջնականապես դեռ չի ձևավորվել, այսպես կոչված, ազգային արտասանության, իսկ բարբառներից չեկող մեծամասնությունը կարող և իրեն արտասանական պարտիկուլյարիզմով դեռ շատ շեղումներ ու ձևակերպումներ պատճառել։

Ուղղագրության տվյալ լեզանակը չի կարող, բնականաբար, քարացած վիճակում մնալ, քանի վոր հետագայում այդ գրությունը միանգամայն կը կորվի արտասանական լեզվի ձևից։ Յեվ լեթև ազգային արտասանությունը վերջվերջո գտնում և ընդհանրական և լեզուն իրեն բնականոն և միատնական հունն և գտնում, լեթև ընդունում ենք, վոր հաջորդականության հնի և նորի մեջ պետք և լինի նաև գրային-տեսանելի լեզվում, և, այդպիսով, կարգացողների հոգեբանության մեջ նկատելիք փոփոխությունների հողը պատրաստ լինի,—այն ժամանակ հին ուղղագրությունը ևս պետք և փոխել և հարմարեցնել արտասանական լեզվի նոր ձևավորված փուլին, կատարելով այդ, ի հարկե, հնչարանական-ֆոնետիկական սկըզբունքով։ Իսկ գրային այդ փոփոխությունները պետք և անդրադարձնեն, մեր կարծիքով, գլխավորապես այսպես կոչված պատմական հնչափոխությունները, վորոնք վորոշ են, համազգային են և լեզվի գարգացման որգանական արդյունքն են։

Ուղղագրության հաջորդական փոփոխությունները, վորոնք առաջանում են լեզվի նոր արտասանական պահանջներից, հարկավ չեն կարող դրվել վերացական (աբստրակտ) հողի վրա, ինչպես վոր այդ կարող և անել և պետք և անի լեզվագետ տեսաբանը իրեն որանակրիպցիայով, չերը նրա համար կարևորն է՝ հնչարանական կատարյալ արձանագրությամբ չերևան բերել տվյալ գրության, այսպես ասած, հնչապինամիկան, համեմատելով, ի հարկե, նախորդ լեզվական գրություններին հետ, վորովհետև լեզվագետի համար դժվար չի կարդալ և ըմբռնել նաև այդ նախորդ լեզվագրությունների վողջ պատկերը։ Սակայն, գրագետ և կարգացող մարդկանց համար ուղղագրության խնդիրը այդ գիտական-տեսական կողմը չունի։ Նրանց գլխավոր նպատակն է—նախ՝ բառի գրային-տեսանելի պատկերը շուտ ըմբռնման չենթարկել բառի հնչական տպավորություններին և հետո նրա նշանակության հետ և չերկրորդ՝ ուղղագրության նորանոր հաջորդական փոփոխմամբ շատ չհեռանալ գրության նախկին ձևից և կտրվել նախորդ գրականությու-

նից, վորովհետև, լեթև հարկադրական ճանապարհով մի վորոշ մոմենտում մացնում ես միանգամայն այլ գրաֆիկայի ձև, նախկինն ու այդ նորը խանգարում են անմիջական զուգորդությունները կազմել բառի հնչյունական պատկերացումների և նշանակության հետ. և այդպիսով կարող է առաջ գալ ավելի շուտ կասեցնող, «ուռցնող» մի հանգամանք։ Յեթե չլիներ առաջուց գիր ու գրականություն, հայնժամ ֆոնետիկական գրության ձևի մուծումը բնավ արդելք չեր ունենալ։ Հակառակ դեպքում արդելքը կա և այն էլ չերկու կողմից—հին գրությամբ սովորողի համար՝ նորը կարդալիս և նորով սովորողի համար՝ հինը կարդալիս։ Ստեղծվում է այդ գրային մտապատկերների համար ֆիզիկո-հոգեբանական մի աբերրացիա։ Այդ խնդրի առթիվ Ա. Տոմսոնը յուր «Общее языковедение» գրքի մեջ հետևյալն է ասում (Պետսա, 1910, եջ 419), «По мере приобретения грамотности представление писанного или печатного образа целого слова (оптической фигуры слова) вступает все более в непосредственную ассоциацию по смежности с звуковым (и мускуло-двигательным) представлением слова, которое в свою очередь вызывает по ассоциации его значение. А затем по законам нашей психической природы эта посредственная ассоциация становится все более непосредственной, так что один взгляд на писанное слово, группу слов и целое предложение возбуждает уже в большей или меньшей степени непосредственно само значение слова и пр...» Յեվ այստեղ ցույց են տրվում մեծ ուղղի այն կենտրոնները, ուր կատարվում են «գրային» և «արտասանական» լեզվի զուգորդությունները միմյանց հետ և միատեղ՝ բառի նշանակության հետ։ Մասնավորապես պիտի ավելացնել, վոր լեզվական այդ յերևերացիան, ինչպես Բոդուեն դե Կուրտենեն և հորջորջում, ուղղի տարբեր կենտրոններում և անդրադարձնում մինչև իսկ մայրենի և հետագա ոտար լեզուների յուրացումը *)։

Արդ՝ ինչ յեզրակացություններ յենք հանգում մեր բոլոր վերոգրյալից, իբրև մեր այս հոդվածի ներածական-ֆորմալ մասի արդյունք։

Նախ՝ հնչյունի և գրի ընդհանուր փոխհարաբերության խնդրում մենք տեսանք, վոր ֆոնեմը, այսինքն՝ հնչյունական ժառանգները և յուր արտասանական-լսողական դրսևորումը («հնչյունը»), այսպես ասած, անհամաչափելի մեծություններ են, իրար չեն ծածկում, և արտասանական ժառանգության հայտնագործման ժամանակ մեշտ գոյություն ունի ֆիզիկո-բնախոսական և հոգեբանական իսկ խոչընդոտ։ Իսկ հնչյունական շարքի զուգորդությունները չեն կարող իրենց համարժեք և ճիշտ անդրադարձումը գտնել նշանագրերի զուգորդության մեջ, վորովհետև այդ ընդունված և հարաբերական և պայմանական կերպով, իբրև ֆունկցիա մարդուս ֆիզիկո-բնախոսական և հոգեկան կողմերի։

Յերկրորդ. գիրը, սկսելով իրեն ծագումը պատկերագրերներից և վերջանալով տառերով, չի կարող համընթաց լինել լեզվի բնականոն զարգացման և մեշտ յետ կենա, դառնալով սոսկ պատմական գրություն։

---

*) Հանգուցյալ աշտարակցի բժ. Մն. Հարությունյանը, կարված ստացած լինելով, ամեն ինչ հասկանում եր, չերբ հայերեն եին խոսում. իսկ ռուսերենով՝ վոչինչ, թեպետ առողջ ժամանակ չերկուսն էլ հիանալի գիտեր. իբրև Լազարյան ճեմարանավարտ և ռուսաց համալսարանավարտ։

Յերրորդ· լեզվաբան հետախուզողը, գործադրելով հնչարանական սկզբունքը իբրեն տրանսկրիպցիայում, հետապնդում է տեսական-գիտական նպատակները, համարելով ազգային գիրը պատմական յերևույթ։

Չորրորդ· յերբ ուղղագրության մեջ միանգամից ենք մտցնում հնչարանական յեղանակը, առանց նախորդ շրջանների ուղղագրական մասնակցության, այն ժամանակ բառի հին և նոր գրային պատկերները սուր կերպով են բախվում միմյանց հետ և խոչընդոտ են հանդիսանում, վոր անմիջական զուգորդություն կազմվի նույն բառի նշանակության հետ։ Որինակ, յեթե գրագետ ֆրանսացին այժմ նայե sans, sent, cent կամ ver, vert, vers, verre բառերի պատկերներին, նա այդ ամեն մի պատկերը անմիջապես զուգորդում է յուր բառի նշանակության հետ, այն ինչ տրանսկրիպցիայի s,a կամ ver գրությունները այդ անմիջականությունը չեն տալիս և յերբեմն էլ կարող են շփոթ առաջ բերել։

Չինգերորդ· ուղղագրությունը չի կարող մշտնջենապես միայուն և քարացած վիճակ ունենալ, յեթե մինչև իսկ սկզբնականում յեղել է հնչարանական սկզբունքով կատարված. նա աստիճանաբար պիտի հարմարվի լեզվի զարգացման ընթացքին, գրի մեջ առնելով այն լեզվական փոփոխությունները, վորոնք հատուկ են միայն ազգային կերպարանավորված լեզվին և բղխում են լեզվի զարգացման պատմական հնչափոխություններից, իբրև ինքնորոշ և ձևավորված արդյունքներ։

Այս վերջին կետի նկատմամբ պիտի անել հետևյալ յերկու մանավոր վերապահությունները գուտ լեզվաբանական տեսակետից, այն է՝ ուղղագրության փոփոխման ժամանակ վորոշ դեպքերում ի նկատի չե առնվում բառերի սուտգաբանական կողմը, ինչպես, որինակ. ռուսաց год (=«գոտ»), года (=«գոդա») և годовой (=«գըդավոյ») բառերի год–(«գոդ—») ձևնիշը մնում է անփոփոխ. այն ինչ որինակ, գրաբարում անհետանում էր «ընդ—» նիշը մնում է անփոփոխ. այն ինչ որինակ, գրաբարում անհետանում էր «ընդ—» մորֆեմը «ընկեր», «ըմբռնել» և այլ բառերի մեջ։ Հետո, յերբ ազգային-գրական լեզուն դեռ կազմավորման շրջանում է գտնվում, հենվելով գլխավորապես մի բարբառի վրա, ինչպես այդ տեսնում ենք շատ տեղերում, այն ժամանակ ուղղագրությունը կարող է հարմարվել և մյուս բարբառների տարանման հնչա-արտաբերությանը, «ֆոնացիոն բազային», զրանով կազմակերպված լինելով առժամանակ գավառական պարտիկուլիարիզմով, սակայն վերջին հաշվով ի տրիտուր առանալով համազգային առավելություններ, «պլյուսներ»։

Ամփոփելով մեր նշած այս թեզերը մի սեղմ բանաձևի մեջ, մենք կասելինք. ուղղագրությունը, ծագելով պատկերագիրներից և հետագայում ձգտելով հասնել հնչյունական գրության սկզբունքին (՝ մի հնչյուն—մի տառ), միշտ պետք է համակերպվի լեզվի զարգացման հիմնական փուլերին և ունենա գործնական սոցիալական բնույթ, անտեսելով հնչյունի (՝ ֆոնեմայի) և նշանի այն բարդ տեսակները, վորը հետաքրքրում է լեզվաբանին. իսկ պարբերական կենսագործման ընթացքում ուղղագրությունը պիտի ուղեկցվեր մշտական հնչարանական գրության ձևը, և ի նկատի առնելով սերունդների հաջորդականությունը, մարդու հոգու բնական պահպանողականությունը և գրային խիստ տարբեր պատկերների բաղխումը բառի հնչամտապատկերների ու նշանակության զուգորդությանց խնդրում՝ ուղղագրությունը պիտի պարբերաբար ընդդիմի լեզվի այն հնչափոխություններին, վորոնք համազգային են և պատմական, իբրև որգանական հնչադիմադիմակի արդյունք, իսկ վորոշ մասնավոր դեպքերում նա տեղի կարող և տալ նաև լեզվի սոցիալաբանական և գավառաբարբառական ընդհանուր պահանջներին։

Մենք այս լեզրակացությանը գալիս ենք, ինչպես կարելի յե տեսնել, կանգնած լինելով գուտ լեզվական տեսակետի վրա, անտես առնելով այնպիսի «արտալեզվային» հանգամանքներ, ինչպես գրության տնտեսման (եկոնոմիկայի) պահանջն է, կամ մանկավարժականը՝ դյուրին սովորեցնելու խնդիրը։

Հայոց ուղղագրության փոփոխման խնդրում ևս այս բոլոր մեր վերնիշյալը պիտի ծառայի իբրև հիմնական ուղեցույց, թեպետ պիտի խոստովանել, վոր դրանք բոլորն էլ կիրարկման ժամանակ ելի ընդհանուր գծեր են մեզ տալիս և, հետևապես, շատ դժվարությունների առաջ մեզ կանգնեցնում։

Մեր այս հոդվածի յերկրորդ, այսպես ասած, բուն նյութական խնդիրն է՝ գտնել հայոց լեզվի ներկա փուլի այն վերջնականապես ձևավորված պատմական հնչափոխությունները, վորոնք չեն արձանագրված ցայժմ յեղած մեր ավանդական գրությամբ, ի նկատի առնելով ի հարկե այս ամբողջ զրվածը յուր լեզրակացություններով և հոդվածիս կոնցեպցիան ընդհանրապես։

* * *

Փաստ է, վոր մեր նոր արևելահայ լեզուն իրեն հիմնականում կազմում է արարատյան—um բարբառը, ինչպես նման յերևույթ մենք տեսնում ենք, որինակ, արդի ֆրանսերենում (=Պարիզի բարբառ) կամ ռուսերենում (=Մոսկվայի բարբառ)։ Այդ արարատյան բարբառի ընդհանուր կերպարանքը տրվում է Աբովյանի և Պռոշյանի գրվածքներում, իսկ գրաբարի հնչա-ձևաբանության և լեքսիկայի ազդեցության ներքո առաջ են յեկել նրա մեջ նաև ժամանակի փոփոխություններ, նորամուծություններ։ Այդ ընդհանուր լեզվական շաղապը այժմ ձգտում է դառնալ հանուր ազգային և ինքնաբավ մի լեզու, կլանելով Հայաստանի մյուս բարբառները, և դժվար թե վերջին հաշվով այդ բարբառները կարողանան զգալի փոփոխություններ պատճառել նոր գրական լեզվին. մեր աչքի առաջ տեղի ունեցող բարբառների ձուլումը ավելի շուտ հակառակն է վկայում։ Մինչև իսկ արևմտահայ գրական լեզուն, լինելով հատուկ միայն Պոլսո հայերին և գաղութների մտավորականության, նմանապես բնական մահվան և գատապարտված, քանի վոր տերրիտորյալ համապարփակ հիմք չունի, չի պաշտպանվում պետականության կենսագործող ճնշումով, ինչպես այստեղ, և գաղութահայերի հատվածական ներգաղթը Հայաստան ուզի-չուզի պիտի լինթարկվի այստեղի ձուլիչ հոյակապ ճնշումին, թե ֆիզիկապես և թե լեզվական տեսակետից։ Հետևապես, մեր գրական լեզուների և բարբառների վերջնական բաղխման հեռանկարը գալիս և մեզ ասում, վոր մեր այս տրեվելահայ գրական լեզուն, լինելով իրեն հիմնականում արարատյան բարբառը, դառնալու յե միակ համազգայինը, յեթե, իհարկե, մեր այս ցեղական ամփոփվածությունը և ազգային մշակույթը շարունակվին։

Արդ՝ ինչ մոտեցում պիտի ունենանք մեր հայաստանյան այս գրական լեզվի ուսումնասիրության հանդեպ, յերբ հատկապես վերցնում ենք

այդ լեզվի տակավին չկազմավորված հնչարանական դրությունը (“статика фонетики„) և խնդրին տալիս ենք դուս գործադրական նպատակ՝ ուղղագրությունը հարմարեցնել լեզվի նոր հնչումին։

Մեր նոր լեզվի ձևաբանական-շարահյուսական մասը ավելի վորոշ և ազգային, քան հնչյունականը։ Իսկ վերջինս, լինելով այսպես կոչված, «դպրոցական-գրական» արտասանություն, հին ուղղագրության պատճառով մեծապես աղղված և գրաբարից, կրում և, մեր կարծիքով, արվեստական բնույթ և տակավին ինքնաբավ կերպով չի ձևավորված։

Դպրոցական-գրական արտասանությունը, չունենալով յուր կրողների մշտական ռնել պատվանդան, աչքը ուղղում և կամ դեպի գրաբարյան արտասանությունը, ազդվելով նրա գրությունից, կամ դեպի բարբառները, ուր նախապատվելի պիտի լինի, մեր կարծիքով, արարատյան բարբառի արտասանությունը՝ յուր հիմնական կետերով։ Մեր բարբառները դեռ այնքան ուժեղ են, վոր բոլոր «դպրոցականներիս» վրա գնում են իրենց ուժեղ կնիքը՝ արտասանության տեսակետից *), իսկ դպրոցական ուսուցիչներն էլ կամա թե ակամա պիտի շարունակեն առայժմ այդ դավառաբարբառային արտասանական ընթացքը։

Ել չենք խոսում նրա մասին, վոր շատ լեզվաբաններ իսկ այդ ազգային կոչված լեզուն համարում են ֆիկցիա, ընդունելով միայն իրրև մի համապետական հայտարարը իրոք գոյություն ունցող անհատական լեզվական մատածողությունների և հնչումների (Բոդուին դե Կուրտենե, Մեյե...)։

Այնուամենայնիվ, եթե ուղղագրական նոր նկատառումներով հարց և առաջ գալիս պարզել մեր նոր լեզվի արտասանական դրությունը, մենք այլ չափանիշ և ռեգուլյատոր չունենք, քան վերցնել այժմյան դպրոցական-գրականը և աղերսակցել կենդանի բարբառների ավյալների հետ, և առաջին հերթին՝ արարատյան բարբառի հետ։ «Համահայկական» արդի հնչական դրությունն էլ, կապվելով իրեն պատմական հնչափնամիկայի հետ, ինչպես հետևանքը պատճառի հետ, կարող և վերլուծվել միմիայն ընդհանուր հայ լեզվաբանի բովից անցնելով, ի մեջ առյալ և գրաբարը։

Հետևապես առաջ և գալիս մի կարևոր խնդիր, վոր և եղել համահայկական հնչական դինամիկայի ընդհանուր միտումները հնում, հետագայում և նորիրս։ Եթե մենք քիչ թե շատ կարողանանք պարզել այդ խընդիրը, այն ժամանակ այդ պատմական հնչափնամիկայի արդյունքը, հնչական արդի դրությունը, ավելի պարզորոշ կը լինի մեզ համար, և մեր կարծիքով, նոր ուղղագրությամբ պիտի վավերացվեն միմիայն վերջնականորեն ձևակերպված հնչական արդյունքները, ի նկատի առնելով, ի հարկե, հոդվածիս առաջին մասի պահանջները։

Կանգ առնենք հայկական լեզվաբանի այդ պատմական հնչամիտումների վրա։

Եթե վերցնենք պայթուցիկ բաղաձայնները, մենք կը տեսնենք, վոր հայերը հնագույն շրջանում իսկ այդ պայթուցիկների հպումը (implosio)

*) Ո՞վ կարող և ասել, վոր, որինակ, մենք բոլորս միակերպ ենք արտասանում դիցուք թե այսպիսի մի նախադասություն. «ա մեն ան պամ հ ո ր իմ ո ե ովը անցնելիս, մենք մեզ զգուշ ենք պահում» կամ «մենք գնալու ենք» և այլն։ Ընդգծված են կասկածելի տեղերը։

ընդհանրապես թույլ են կատարել, ինչպես և գերմանական ցեղը։ Բացի այդ, ձայնեղ պայթուցիկների ձայնեղության արտաբերական մոմենտը հայտ և բերվել միայն պայթման ժամանակ և վոչ թե պայթուցից (explosio) առաջ, ինչպես այդ անում են, որինակ, ռուսները (տես Мейе, Введение, եջ 65)։ Այդ բոլորի հետևանքը այն և յեղել վոր հնդեվրոպական p, t, k հնչյունները իրենց թույլ հպման պատճառով յենթարկվել են շնչավորման («ասպիրացիայի») և դարձել հին հայերենում *ph, th, kh, վորոնցից հետագա՝ հ, թ, ք. իսկ հնդեվրոպական b, d, g ձայնեղները, ստանալով թույլ ձայնեղություն և հպում, դառնում են «պ», «տ», «կ»։

Իսկ յեթե վերցնենք յեռգրաբարյան շրջանի նույն խումբ և ձայնեղ պայթուցիկների պատմությունը, կը տեսնենք, վոր նույն հնչական դինամիկան, հավանորեն նույն թույլ հպումի և թույլ ձայնեղության պատճառներով, շարունակել և գործել նաև մեր բարբառներում, բայց մի քիչ տարբեր ձևափոխումների արդյունքներով, քան նախորդ, յեռհնդեվրոպական շրջանում։ Գրաբարյան խումբ «պ», «տ», «կ», «ճ», «ծ» հնչյունները միտում ունին դառնալ այժմյան բարբառներում «բ», «դ», «գ», «ջ», «ձ», այսինքն՝ ձայնեղներ, պահվելով տեղ-տեղ գլխավորապես բառի սկզբում։ Իսկ նախկին պայթուցիկները--«բ», «դ», «գ», «ջ», «ձ»—շնչավորման են յենթարկվում, դառնալով բառասկզբում մեծ մասամբ «բհ», «դհ», «գհ», «ջհ», «ձհ»*) յեվ յերբեմն էլ «փ» (<պհ), «թ» (<տհ), «ք» (<կհ), «չ» (<ճհ), «ց»(<ծհ), ինչպես Պոլսում, վորոնցից են առաջացել, մեր կարծիքով, Ղարաբաղի, Վանի և Մարաղայի բարբառների բառասկզբի «պ», «տ», «կ», «ճ», «ծ» խուլերը. բառամիջում և վերջում այդ նախկին ձայնեղները ամենուրեք խուլ շնչավորների յեն վերածվել («խափել», «վարթ» և այլն), բացառությամբ Մեղրուց և Ագուլիսի շրջանից։ Հին պայթուցիկ բաղաձայնների այս պրոցեսը—խուլերը դարձնել ձայնեղներ և հին ձայնեղները՝ խուլ կամ ձայնեղ շնչավորներ—մենք դեռ վերջացած չենք համարում, մանավանդ վոր բառերի սկիզբը կամ մեջը դեռ ազդեցություն են գործում այդ ձևափոխության կատարման ընթացքում։

Արարատյան բարբառը, մասնավորապես, հին պայթուցիկները այսպես և փոխել. հին շնչավորյալ խուլերը (փ, թ, ք, չ, ց) ամենուրեք մնացել են անփոփոխ, հին ձայնեղները այժմ բառասկզբում դարձել են՝ բհ, դհ, գհ, ջհ, ձհ, ուր ասպիրացիան ձայնեղ հագագային է, յեվ բառամիջում կամ վերջում դարձել են՝ փ, թ, ք, չ, ց**), իսկ հին խուլերը (պ, տ, կ, ճ, ծ) բառի սկզբում մնացել են անփոփոխ, բառամիջում և վերջում, վորոշ պայմանների շնորհիվ, կամ մնում են կամ վերածվում են ձայնեղների (բ, դ, գ...)։ Այդ ցույց եմ տալիս յես մանրամասնորեն իմ «Արարատյան բարբառի» անտիպ աշխատության մեջ։

Պայթուցիկ բաղաձայնների պատմական հիմնական հնչապրոցեսը—

*) Ըստ Հ. Աճառյանի այդպես են արտասանում Ցերևան, Կարին, Մուշ, Տիգրանակերտ, Խարբերդ, Շապին-Կարա-Հիսար, Զեյթուն, Արաբկիր, Ակն, Սեբաստիա, Սուչավա։ Մեր արարատյան բարբառում այդ ասպիրացիան ձայնեղ և։

**) Այնպիսի արտասանություններ, ինչպես «ախպեր», «ախտել» (=հպթել) և այլն իրենց «պ», «թ»... խուլերը ստացել են «փ», «թ»... խուլ շընչավորներից, ասսիմիլացիայի յենթարկվելով։

խուլերը դարձնել ձայնեղներ և հին ձայնեղները՝ խուլ (կամ ձայնեղ) շընչավորներ—ընդգրկում է, ինչպես տեսնում ենք, միմիայն հին պայթուցիկ խուլերին և ձայնեղներին, վորոնց վերջնական ձևավորումը (ինքնորոշումը), մեր կարծիքով, դեռ չի ավարտվել. այն ինչ ամենահին շընչավորյալները (փ, թ, ք, չ, ց), սկսած մինչև իսկ հնդեվրոպական ժամանակից, մնացել են առանց շարժման՝ անփոփոխ, թե գրաբարում և թե բարբառներում, ինչպես, որինակ, հայկական «որթ» («հորթ»)=սանսկր. prthukah 'детеныш'=հուն. πόρτις 'հորթ', կամ հայական «փուք»=սանսկր. phut-karah 'выдувание, свист, выкрикивание'=հուն. φῦσα 'дуновение' և այլն (Мейе, Введ. եջ 71—72):

Մեջանկյալ պետք է նկատենք, վոր հայոց պայթուցիկների այդ թույլ հպումը և ձայնեղության մոմենտը, վորոնք, մեր կարծիքով, ամենադլխավոր ազդակն են եղել պատմական հնչափոխության, մատնանշում են ավելի շուտ մեր լեզվի հնդեվրոպական շերտի ձևարար դերը, վորովհետև հաբեթականը (՝ խալդա-ուրարտականը) հավանորեն ունեցել և պայթուցիկների ուժեղ հպում, ինչպես այդ տեսնում ենք վրացականում:

Մեր արդի դպրոցական-գրական արտասանությունը ամենուրեք անփոփոխ է պահում հին խուլերը (պ, տ, կ, ճ, ծ) և խուլ շընչավորյալները (փ, թ, ք, չ, ց), իսկ հին ձայնեղները (բ, դ, գ, ջ, ձ) անփոփոխ և պահում միայն բառասկզբում, իսկ բառամիջում և վերջում հնչում է խուլ շընչավորների պես (=փ, թ, ք, չ, ց), ինչպես բարբառները:

Հետևապես, պայթուցիկների յերկու շարքերը՝ խուլ և խուլ շնչավորյալ՝ մնացել են հին արտասանությամբ, իսկ ձայնեղները մասամբ մնացել են (սկզբում), մասամբ տեղի են տվել նոր՝ բարբառային՝ արտասանությանը:

Մենք այն կարծիքին ենք, վոր նոր ուղղագրության մեջ չպետք է արձանագրել այդ վերջին գավառաբարբառական արտասանությունը, չպետք է այդ վավերացնել՝ դարձնելով բառամիջի և բառավերջի հին ձայնեղների բ, գ, դ, ջ, ձ տառերը՝ փ, թ, ք, չ, ց: Դեմ ենք այդ փոփոխության, վորովհետև հին ձայնեղների հնչափոխական նիշած պրոցեսը դեռ լիովին չի վերջացել մեր բարբառներում, յերկրորդ, վոր այդ փոփոխությունը կատարվել է միայն բառամիջում և բառավերջում («խափել», «մարթ», «կարք» և այլն), չհաշվելով Գողթանը, յերրորդ, վոր բառերի նախկին գրային պատկերը շատ կը փոխվի, և չորրորդ, վոր յեթե պահվում է խուլերի հին հընչումը ամենուրեք և ձայնեղների հին հնչումը բառասկզբում, կարելի յե վերականգնել ավանդաբար նաև բառամիջի ու բառավերջի ձայնեղների նախկին հին հնչումը: Յեվ յեթե հին ձայնեղների այժմյան գրական արտասանության այդ փոքրիկ շեղումը այսկերպ կամ այնկերպ մեջտեղից վերանա, այսինքն հնչենք «ժարդ», «խաբել», «արջ», «կարգ» և այլն այնպես, ինչպես գրված է, այն ժամանակ հին բոլոր պայթուցիկների ուղղագրությունը կը ծնա ավանդականը. յեվ մեր լեզվի այդ հնչական վողնաշարը՝ պայթուցիկների յերեք շարքը (խուլ—պ, տ, կ, ճ, ծ, ձայնեղ—բ, դ, գ, ջ, ձ, խուլ հնչավորներ—փ, թ, ք, չ, ց) կը դառնան նոր լեզվի, ինչպես Բոդուեն դե Կուրտենն է ասում, իսկական «հնչական ցեմենտը» (фонетический цемент):

Հիմա անցնենք այսա բաղաձայնների պատմական հնչափոխությանը: Այստեղ առաջին հերթին նիշելի պետք լինի հին «վ» և «ւ» հնչյունների

ձայնափոխությունը: Ընդունվում է հայագետների կողմից, վոր «վ» հնչյունը հնում յեղել է, իբրև բաղաձայն, շրթնա-ատամնային սպիրանտ (губозубной спирант), այն ինչ, «ւ» հնչյունը յեղել է այսպես կոչված «ձայնավոր սոնանտ», նման ֆրանսերեն u հնչյունին, և արտասանվել է յերկու շրթունքների ոգնությամբ: Հետագայում այդ «վ»-ն պահել է յուր հնչումը, իսկ «ւ»-ն յուր յերկշրթնային («բիլաբիալ») բնույթը մեծ մասամբ կորցնում է, նույնանալով նախորդի հետ, ինչպես՝ հոգւոյ, հաւ, հիւանդ, հաւատ, արեւ և այլ ձևերի մեջ, իսկ յուր հին յերկշրթնային սոնանտի (ֆր. u) հնչումը մասնավորապես պահել է «իւ» յերկբարբառի մեջ, ինչպես՝ իւր, աւիւր, հիւր և այլն: Մենք այն կարծիքին են, վոր պատմական այդ վերջնական հնչափոխությունը պիտի վավերացնել այժմյան ուղղագրությամբ և գրել միշտ «հոգվո», «հավ», «հավատ», «հիվանդ», «արեվ» և այլն. իսկ «ւ»-ի իսկական հին հնչումը պիտի պահել «իւ» յերկբարբառի մեջ և ոտարազգի բառերի տառադարձության ժամանակ, յերբ կարիք է լինում, որինակ, ֆր, u=հուն. υ=գերմ. ü հնչյունը վերարտադրել հայերեն գրության մեջ, ինչպես այդ հին ժամանակ այդպես էլ արվել է, հմմտ. Ադոնցի (I, § 22) տառադարձությունը՝ «կեաքսարէս»=Κυαξάρης*): Այդ պարագայում «ու» յերկտառը պետք է փոխել մի տառով, վորպեսզի դրա «ւ» մասը շփոթություն առաջ չբերի, ժանավանդ վոր այդ «ու» գրության յերկտառյան ձևը վերցված է հունարենից և արդի հնչաբանական (և անտեսման) տեսակետից մի բարդ ու ավելորդ գրություն է:

Պատմականորեն, մեր «ղ» տառի հնչումը այժմ փոխվել է, և նախկին ! (l) հնչումը (=ռուսաց лъ, ինչպես лоб—лба) այժմ ամենուրեք դարձել է հետնալեզվային γ սպիրանտը**). սակայն, ուղղագրության մեջ փոփոխություն չի կարող մտնել, վորովհետև յեթե «ղ»-ի հին հնչումը փոխվել է և այժմ դարձել «γ», ապա, ուրեմն, այդ տառին հատկացվում է նոր դեր, նոր համազգային հետնալեզվային հնչում: Այդ պատճառով էլ պիտի մերժվի գրել՝ Ախղիա, Գաղղիա.., ինչպես վոր յերբեմն գրվում է, բայց պիտի պահել՝ Ղազար, Ղուկաս, Պողոս և այլն:

Մնում է բաղաձայններից «յ» (yota) հնչյունը, վոր հնդեվրոպական ժամանակից սկսած մեծ փոփոխությունների չի յենթարկվել: Մենք գիտենք, վոր հնդ.-եվր. *yug$_1$om ձևը դառնում է «լուծ», կամ *yakrt>«լեարդ», այսինքն, հնդ.-եվր. y (յ)+ձայնավոր հայերենում դառնում է l (լ)+ձայնավոր, ինչպես վոր մեր ժողովրդի մեջ (Աշտարակում), որինակ, դեռ կարելի յե լսել «լուպկա»=юбка: Մյուս կողմից մխում կա, թերևս ավելի հետագա շրջանից, քան հնդեվրոպականը, ղեղչել բառասկզբի «յ» հնչյունը, ինչպես նկատում ենք—յուղել>ուզել, ամ-(որձիք)>արիական yama յերկվորյակ', ամալ կամ ամ-ան<ավեստ. yama=պարս. «ջամ»***), կամ գավառական—«ախ-

*) Տես Н. Марр, Грамматика древне-армянского языка, С.-Петербург, 1903, եջ 9:

**) Ըստ Hübschman-ի (տես Arm Gr., եջ 327) այդ փոփոխումը տեղի յե ունեցել ութերորդ դարի շուրջը, թեպետ հունարենի տառադարձության որինակներ տալիս է X դարից—բուլղար=Βούλγαροι (Աստղիկի մոտ), լիղատ =λῆγατον (XII դար), դիալողոս=διάλογος (13—14 դար)...

***) Տես իմ «О происхождении древне—армянского слова ամեհի» Петроград, 1916, եջ 4.

տել» (<յաղթել), «ունք» (<յօնք), որոշաւալ—արըշտոտաւալ (<յօրանջել), «ուղարկել» (<յուղարկել), «ուշունց» (<յիշոց), «Ակոպ» (<Յակոբ), «Ովանես» (<Յովհաննէս) և այլն և այլն. հմմտ. բառամիջում՝ «փախա»<փախաւ, կամ փոխառնված՝ «տոտա» ռուսերեն тетя-ից*): Յերրորդ թուլ տեղդենց ե, սկսած, կարծես թե, հին շրջանից, այդ՝ սկզբնական «յ» հնչյունի յերբեմնակի փոխանցումն ե «հ» հնչյունի (կամ ավելի ճիշտ՝ շնչյունի, ինչպես լինգվիստիկան և ընդունում). հմմտ. գրաբարի «յիմ» (=ընչիմ) և «հիմ» (=ինչիս), կամ միջնադարյան «հայնց» (=հինց), վորը առաջացել ե «յայնց» հին ձևից, և արդի տաճկահայ «հոս», «հոդ», «հոն» բառերը՝ առաջացած, մեր կարծիքով, «յայս», «յայդ», «յայն» ձևերից (հմմտ. սայթաքել=սոթ տալ, վայթել=վոթել), թեպետ պետք ե նիշել, վոր գրաբարը ունի և հակառակ հնչափոխությունը (հ>յ), ինչպես՝ յօրայ(=խորթ հայր) և հայր—հօր, յիսուն և հինգ, հետ և յետ:

Մեր դպրոցական-գրական լեզուն բառասկզբի հին «յ»-երը արտասանում ե «հ», ինչպես Յակոբ>Հակոբ, յամենայն դեպս>համենայն դեպս, յատակ>հատակ և այլն, թեպետ ժողովրդական բոլոր բարբառները կամ բնավ զեղչում են այդ սկզբնական «յ» հնչյունը, ինչպես վոր վերևը մատնանշվեց, կամ այդ բացը ծածկում են հատուկ ձայնեղ ասպիրացիայով—յ'Ակոփ, յ'Արութիւն, ո՛ւշունց և այլն, ինչպես, որինակ, արարատյան բարբառի մեջ (Աշտարակ, Ոշական..) կամ Մշում և Ալաշկերտում (ըստ Հ. Աճառյանի). սակայն այդ «յ» ձայնեղ շնչյունը, մեր կարծիքով, միանգամայն նոր յերևույթ ե, նոր ծնունդ և և չի հանդիսանում հին yotə-յի որգանական հնչական շարունակությունը, լինելով իսկ շատ բառերի սկզբում՝ ո՛ւս, ա՛մեն, ՛աշկ (=աչք), ի՛ք՛ե (=այգի), Աշտարակ, ՛Երեվան և այլն, յերբ ձայնավորով են սկսվում**): Բարբառներից վոմանց մեջ հին «յ» (yotə) արտասանությունը տեղ-տեղ մինչև իսկ բառասկզբում էլ և ճնացել, ինչպես, որինակ, Ղարաբաղում, ուր, ինչպես մի ճեմարանավարտ մարդակերացի եր մեզ ասում, այժմս էլ հնչում են «յախնել» (=յաղթել), «յոպոպ» (=յոպոպ՝ թըռչունը): Հետևապես, յեթե դպրոցական—գրական լեզուն հին «յ»-երը փոխել և առասկզբում և դարձրել «հ», ինչպես վոր այդ բանը «նոր ուղղագրությամբ էլ սրբագրվեց, այդ, ինչպես տեսնում ենք, կռվան չի գտնում ժողովրդական արտասանության մեջ՝ մեր բարբառներում, լինելով արհեստական. ճիշտ ե, բարբառներում տեղ-տեղ սկսել են արտասանել՝ հետո, հարմար և այլն***), սակայն այդ դպրոցական («քաղաքակրթության») նորամուծություն ե, գրական լեզվի ազդեցություն ե:

*) Պետք ե ասել, վոր կովկասյան լեզուներից հին ու նոր վրացերենն էլ չեն սիրում այդ yota հնչյունը և մեծ մասամբ զեղչում են, ինչպես հայերը. հմմտ. ავაზი («ավազի») հին ჲავაზი («յավազի») ձևից, վոր նշանակում ե «охотничий тигр» (=յովազ). կամ უსუფი («ուսուփի»)<ჲუსუფი 'Юсуф' ձևից և այլն. տես N. Марр, Грамматика древне литературного грузинского языка, Ленинград, 1925. եջ 5.

**) Այդ «յ» ձայնեղ շնչյունը մեր արարատյան ար ռասանությամբ ունի հետևյալ արտիկուլացիոն փոխհարաբերությունը—«յ» այնպես և հարաբերում «ղ»-ին, ինչպես «հ»-ն՝ «խ»-ին (յ՛:ղ=հ:խ), և մոնում և ձայնեղ շընչավորների մեջ՝ բ՛, գ՛, գ՛, ջ՛, յ՛—բ՛ան, գ՛ուռ, գ՛ոմ, ջ՛ուր, ձ՛ան(=ձայն): Այդպես ե, որինակ, Աշտարակում:

***) Փոխանակ ասելու «յեղով», «յեննա». իսկ «հարմարի»-ի հավասկա և «արամագի» ձևը մի քիչ տարբեր կիրառությամբ (Արար. բարբ.):

Արդ, ուղղագրական հարց և առաջ գալիս, պահել գրությամբ այդ հին բառասկզբնական «յ»-երը, թե մոցնել «հ»-յով արտասանությունը (հաղթել, հարժար..): Համաբևլով վերջինը միանգամայն արհեստական և նորամուծություն, վորը հակառակ ե «yota»-յի պատմաննչական դինամիկայի հայկական միտումին, և խնդիրը թողնելով այդ տեսակետից մեր բարբառների վերջնական հաշվեհարդարին, մենք կողմնակից ենք պահել բոլոր սկզբնական «յ»-երը, թողնելով իսկ արտասանությունը ազատ, թեպետ մանկավարժական և ստուգաբանական նկատառումներով մենք կը գերադասեինք այստեղ ունենալ արարատյան և այլ բարբառների ձայնեղ յ' շնչյունը (յ'արմար, յ'ամենայն դեպս...): Նոր ուղղագրությամբ պիտի տանել բառավերջի անձայն հին «յ»-երը, վորովհետև այդ հնչական հապավումը միանգամայն արդեն պատմական ե և ամենուրեք կատարված, և հետևապես պիտի գրել՝ մեռա, կեր, կա.., վրա, ազա, արքա և այլն, պահելով yota-ն միայն բարդությունների մեջ, ինչպես առաջ եր, այսինքն՝ տղայի, տղայով, տղայից.., տղայական..: Յետ, յետո, յետև բառերի արտասանությունը պիտի պահել yota-յով և գրությամբ այդ արտասանությունը վավերացնել, ինչպես արևմտահայերն են այդ արել (ետ, ետք..), չշփոթելու համար «հետ» (=միասեղ) բառի հետ:

Մենք վերջացրինք այն բաղաձայնների պատմական հնչափոխության վերլուծությունը, վորոնց այժմյան «ազգային» արտասանությունը չի համապատասխանում գրանց ավանդական հին գրությանը, այն ե՝ պայթուցիկների, գլխավորապես ձայնեղների, «վ» և «ւ»,—«ղ» և «յ» հնչյուններին վերաբերմամբ: Մյուս բաղաձայնների հին գրությունն ու այժմյան արտասանությունը միում և անփոփոխ (ս, պ,—շ, ժ,—բ, ռ,—հ, խ..), յեթե չհաշվենք «հ» հնչյունի գրեթե չարտասանվելը «րհ» խմբակցության մեջ*), ինչպես՝ աշխարհ, շնորհ, խոնարհ, նիրհ, ճանապարհ, խորհուրդ:

Այժմ գանք ձայնավորների պատմա-հնչափոխության և գրանց արդի ուղղագրության խնդրին:

Այստեղ հիմնական տեղ և գրավում «ո», «օ» և «ե», «է» հնչյունների Ավոլյուցիան, վորովհետև մյուս ձայնավորները (ա, ու, ի, ը) պահել են իրենց հին հնչումը: Յերկրաբարբառների խնդիրը, վորտեղ, որինակ, «ուա», «ուե» կամ «իւ» խմբակցություններում «ու» և «ի» ձայնավորները փոխել են իրենց հին հնչումը, մենք կը անտեղենք քիչ ներքև: Այդտեղ «ուա» և «իւ» հնչյունները սոսկ յերկբարբառի տարրեր են, տարբեր սովորական նույն ձայնավորներից:

Վերցնենք «ո» և «օ» ձայնավորական խմբակցությունը:

Ինչպես հայտնի յի, գրաբարում գոյություն չուներ կլոր «օ» տառը, վորը վերցված ե 12—13 դարերում յեվրոպական—լատինական այբուբենից, իբրև ուղղագրական նորամուծություն: Սակայն, ինչն եր դրա դրդապատճառը: Մենք գիտենք ընդհանուր համեմատական և մեր պատմական քերականությունից, վոր հնագույն «ո» (=ռուսաց o) հնչյունը միշտ վերարտադրվել

*) Այդ «րհ» խմբակցությամբ բառերը հայերեն ծագում չունեին, առնված են հին պարսկերենից, բացառությամբ «մահ» (հին «մարհ») և «նիրհ» բառերի: Այդ «րհ» կոմպլեքսը համահայկական միտում ունի դառնալու սոսկ «հ», կորցնելով առաջի «ր» մասը, հմմտ. «մարհ»<«մահ», «ճանապարհ»> այժմյան «ճամպահ», «գոհ» հին վերականգնվելի *գորհ-յից (=ավեստ. zaoθra) և այլն:

և հին գրութ յամբ «ո» տառով, վորի անունն և յեղած մինչև միջին դարը «ո» (վոչ «ուօ»», ինչպես հետո), հավասար հունական «ոմիկրոն»-ին («ո» փոքրին), ինչպես—ոբոդոս=ὀβολός, ողոմպիադ='Ολυμπιάς (—άδος), որթոդոքս=ὀρθόδοξος և այլն. մինչև իսկ այբուբենական շարքումն էլ և կատարվել այդ հարմարեցումը—ն, շ, ո..=ν, ξ, ο .: Համեմատիր ավելի հին՝ հնդեվրոպական՝ շրջանից հետևյալ համապատասխանությունները—«որբ»=հուն. ὀρφανός 'որբացած', լատին. orbus (id·), կամ «որձիք»=հուն. ὄρχις (id·), «ոսա»=հուն. ὄζος, գոթական asts 'Ast', «հոտ»=հուն. ὀδμή, ὀδοδή, լատ. odor, «կով»=լատ. bos (boλ-is), սլավ. govedo (=յեզ) և այլն և այլն: Այդպես, ուրեմն, աներկբայելի յե «ո» տառի թե՛ պատմական (V դարից սկսած) և թե՛ նախապատմական (՝ հնդեվրոպական շրջանից սկսած) «ո» հնչյունով արտասանվելը (=հուն. ο, ռուսաց о...). Սակայն այդ «ո» տառի «ո» հնչումը փոխվում և յեղբարբարյան շրջանում, հավանորեն բարբառների ազդեցությամբ, և գոնե բառակզբում տեղի յե տալիս—ուօ—արտասանությանը,—մի յերևույթ, վորը, մեր կարծիքով, սկսվել և 8—9-րդ դարերից և ձևավորվել 12—13 դարերում: Արդյոք, չի՞ նպաստել այդ պատմահնչական յերևույթին նախաբարբարության սիստեմի չքացումը իրեն խոսակցական պետական և գրական «գրաբարով», վորը մասամբ կասեցուցիչ դեր եր խաղում, ինչպես արդի մեր գրականը մեր բարբառների հանդեպ: Այդ պատմաշրջանումն և վերջանում և հին «aw» (աւ·) յերկբարբառի փոխանցումը «օ» հնչյունին*), յերբ գրաբարյան «աւձ», «արաւր» և այլն դառնում են «օձ», «օր», «արօր» և այլն: Յեվ, յեթե 12—13 դարերում կարիք եր զգացվում ուղղագրական փոփոխության, այսինքն՝ հին «աւ» գրութ յունը տալ մի նշանագրով, համաձայն նոր «ո» արտասանության, այդ բանը կարելի յեր անել միմիայն նոր տառ («օ») մացնելով, քանի վոր «ոձ», «որ» (=день) և այլն գրութ յունները կը կարդացվեյին այդ 12—13 դարերում՝ վոձ, վոր.., ինչպես հին «որդի», «որբ», «ոստ».. բառերը կարդացվում և արտասանվում եյին «վորդի», «վորբ», «վոստ»..:

Հին «ո» տառի «վոսկեզարյան» օ հնչումը յենթարկվում և ուրեմն, այսպես ասած, լաբիալիզացիայի (շրթնայնացման) կամ ավելի ճիշտ «ու» (w) հնչյունի մոտավոր արտիկուլացիայի հավասարման—որբ>ուորբ>վորբ: Յեվ այդ յերևույթը, ըստ իս, ընդգրկել և վոչ միայն բառի սկիզբը (վոտ, վորբ, վսակի...), այլև բառի մեջը և վերջը, ինչպես այդ ցույց են տալիս այժմյան բարբառները, ուր վոչ միայն կան—վոտ, վորբ.., այլև—խուոտ, փուոր, ֆուոտ (<հուոտ).. և մինչև իսկ**) «այուօ»: Այդ համահայկական յերևույթը, վոր արդեն ձևավորվել եր միջին դարում (12—13) հատուկ և և այլ լեզուների. համմ. վրաց հին ori 'յերկու' և այժմյան wori, հին oϑxi 'չորս' և այժմյան woϑxi կամ ռուսաց հին осемь և հիմա восемь, բարբառական острый—вострый, ուկրաինական՝ вол>вуол և այլն:

*) Ըստ Hübschmann-ի այդ փոխանցումը կատարվել է 1000 թվականից առաջ, վորովհետև շուրջ այդ թիվը («um das Jahr 1000») ձեռագրերում պատահում ենք «չինաւդ» բայց և «կարող». . (տես Arm Gr., էջ 382, ծանոթ. 2): Նա «օ» տառի մուծումը XII դարին և հատկացնում (ib), այնինչ Մառը՝ 12—13 դարերին (Грам. др. арм. яз., էջ 10, ծանոթ. 2):

**) Այդ բառը փոխառնված և գրաբարից, բայց ելի յենթարկվում և շրթնավորման, ինչպես այդ հատկապես լսվում և այստեղի վանեցիների մոտ:

Պատմական փաստ է, ինչպես տեսանք, վոր հին «aw» յերկբարբառը միջնադարում սառնում և «օ» հնչումը նման վոսկեդարյան «ո» տառի հնչմանը, այն ինչ վերջինս այդ նույն միջնադարում յեղած պիտի լիներ, մեր կարծիքով, ամենուրեք բառի մեջ uo (հայ. ուո), վորից և այժմյան գրական vo (վո) բառասկզբում:

Բարբառներում այդ պրոցեսը դեռ վերջնականապես չի ավարտվել, և դեռ կարելի յե լսել—ոսկի (oski), ոսվի (otvi), ոլորել, ոչով, ոքմին և այլն: Մեր արարատյան բարբառում հին «ո» հնչյունը չի յենթարկվում շրթնավորման «վ»-ից առաջ—կով, հով (բայց փուոքի), ծով, ով..., և լիաձայնավորության ժամանակ—ոլորել, ողողել, խորովել, պոլորիկ և այլն:

Արդի մեր նոր գրական լեզուները վորդեգրել են միայն բառասկզբի vo—հնչումը (vordi, vor ··), վորը և վավերացվեց մեր այս վերջին ուղղագրությամբ: Մենք այն կարծիքին ենք, վոր այդ պատմական պրոցեսը դեռ լիակատար ավարտված չի կարելի համարել մեր բարբառներում (և ապարատյանում). իսկ գրային բազմաքանակ պատկերների խիստ բաղխումի շնորհիվ չպիտի վավերացնենք առայժմ նաև մեր ուղղագրությամբ և պիտի պահենք նախկին «որդի», «որբ»... գրային ձևերը, թողնելով մինչև իսկ արտասանությունը ազատ՝ ոլորել, ողողել... կամ վոլորել, վողողել...: Յեթե վորդի, վորբ... արտասանությունը հաղթանակելու յե, վորի մեջ մենք չենք կասկածում ենք, արդյոք հիմա, այդպիսի, («վ»-ով) գրութ յամբ մենք առաջ չենք վազում և հետևանքը յետ բերում, не форсируем ли событие?

Մենք առաջարկում ենք «օ» տառը պահել բառասկզբում -օձ, օր, օգուտ, օտար... և ոտար բառերի համար՝ օրգան, օրկեստր, Օդեսսա, Օլիմպ և այլն, յերը դրանք «օ» հնչյունով են սկսվում: Իսկ բառամիջում գրել միայն «ո»—ակոս, արոր, աղոթել և այլն, ինչպես մասամբ այդ արվել և նաև առաջներում, գրաբարի շրջանում,—համմ. «ասող» փոխանակ «ասօղ», «արտորեայ» փոխանակ «արտօրեայ», կամ բառասկզբում՝ օսոխ և ոսոխ, օճառ—ոճառ, օճան—ոճան, օճիր—ոճիր...*): Բնական և, վոր բարդությունների մեջ սկզբնական «օ» տառը պիտի պահել և գրել հետևապես—այսօր, ապօրինի, անօգուտ և այլն: Բառավերջում գրել միայն «ո» - Համո, Կարո, Տոկիո..., այլն:

Գալով ձայնավորների յերկրորդ խմբակին, այն է—«ե» և «է» հնչյունների պատմությանը, մենք պիտի մատնանշենք, վոր այդ խմբակը յուր գենետիկական զարգացմամբ բախտակից և վերոհիշյալ «ո» և «օ» խմբակին, ունենալով դրանց հետ ձևափոխման նույն պատմաշրջանը: Կարիք չկա որինակներով ցույց տալ, վոր հնագույն շրջանում «ե» տառի հնչյունը յեղել և բառի բոլոր տեղերում e (=ռուսաց э), իսկ «է» տառի հնչյունը կրել և յերկբարբառային բնույթ, լինելով մոտավորապես ey (=եյ, эй): Հետագայում, թերևս արդեն դասական գրաբարի շրջանում ծնունդ առնելով, «ե» տառի հնչյունը հետզհետե դառնում և բաց (լայն), վոչ լարվածական e ("не напряженное e„), նման այժմյան ռուսաց e-ին (лес, беру...), այն ինչ «է»-յի հնչումը սառնում և գոց (նեղ), լարվածական

*) Ըստ իս «յոգն» (=չաո) գրութ յունը՝ ատուգաբանական նկատառումով՝ (վորի մասին առանձին) պիտի գրվեր «յօգն», առաջացած լինելով հին «յաւգն» ձևից:

ե-յի բնույթի, նման ռուս. э-յին (эти) կամ е-ին (селиի նաեւցին)։ Այսինքն, մոտավորապես այն է լինում, որ «է»-ն կորցնում է իրեն յերկբարբառային մասը և դառնում է նախկին «ե» ատոր հնչյունը։ Իսկ վերջինս՝ «ե»-ն, կորցնելով իրեն հին ե հնչումը (նեղ e) և դառնալով e (լայն e), միջին դարերում իսկ յենթարկվում է «յոտիզացիայի», այսինքն՝ յ (yota) հնչյունի հավելման. և նախկին «երկար» (erkar), «երկիր» (erkir), «ես» (es) և այլն հետագայում դառնում են «յերկար» (yerkar), «յերկիր» (yerkir), «յես» (yes) և այլն։ Այս պրոցեսը, «ե» հնչյունի «յոտիզացիան», ինչպես յես ցույց եմ տալիս իմ «Արարատյան բարբառի» անտիպ աշխատության մեջ, միանգամյան համընթաց և յեղել՝ ըստ ժամանակաշրջանի՝ «ո» հնչյունի «ուո-ացման» (լաբիալիզացիայի) և կատարվել է նաև բառերի մեջ, ինչպես այդ ցույց են տալիս մեր բարբառները. համմ.—գյեղ, կյեր, բյեր... արարատյան արտասանությունը, որը «մինչնալեզվայնացման» («պալատալիզացիայի») յենթարկվելով. դառնում է տեղ-տեղ—«գ'յեղ > ջ'յեղ» կամ «կյեր > ձյեր > ձյեր. կարելի յե լսել մինչև իսկ ձյեռի» (=քեռի), «ձյիշ» (=այգի) և այլն *)։ Բայց «յոտիզացիայի» այս պրոցեսը դեռ շարունակվում է, և հենց մեր արարատյան բարբառում, որինակ, համառորեն ասում ենք—էրկու, էրինջ, էրեխա, էրևալ, (կիրակրի) էփն էկավ, էթալ և այլն, որտեղ «է»ն նեղ (գոց) ե հնչյունն է (համմ. նմանապես՝ մեր մերը՝ արարքիր e-յերով)։

*Մեր արդի գրական լեզուն վերջնական ֆիկսացիայի յե յենթարկում բառակզբի հին «ե» = այժմյան «յե» հնչումը, այսինքն՝ յես, յերկու, յեկա, յերինջ, յերևալ և այլն արտասանությունը, որը և վավերացվեց մեր այս նոր ուղղագրությամբ։ Մենք կարծում ենք, որ պատմական այս հնչափոխության պրոցեսը, գեթ բարբառներում, նման «ո» հնչյունի ձևափոխմանը, չի կարելի ավարտած համարել։ Ցեվ ի նկատի առնելով բարբառակիր մեծամասնության և գրային նոր բազմաթիվ պահանջների շփոթը, որը այդպես աչքի յե զարնում նոր ուղղագրության բազմաթիվ «յ»-երով (՝ նա յե, յես յեկա, գիտեյի...), մենք կողմնակից ենք պահել հին գրություններ—ես, երկար, երկու, եփել և այլն, թողնելով մինչ իսկ դրանց արտասանությունը ազատ. այսինքն՝ էրկու թե յերկու, էրևալ թե յերևալ, էրեխա թե յերեխա և այլն և այլն։ Իսկ «է» ատոր իրեն նեղ (գոց) ե հնչումով պիտի պահել բառակզբում—էգ, էշ, էգուց, էլ, էական..., բառավերջում—բոպէ, մարգարէ, պիտէ..., ինչպես և բարդություններում—վայրէջք, ամենաէական, բոպէական մարգարէությունն և այլն. պիտի պահել նմանապես բայերի թեքման ժամանակ բառամիջում—իմացէ՛ք, (որը) գրէք, գրէի—գրէիր—գրէր...։ Իսկ բառարմատների միջում պիտի հանել—դեղ, զենք, հանգես և այլն։

Վերջացնելով ձայնավորների այս պատմական հնչափոխության վերլուծությունը և դրանց ուղղագրության նոր խնդիրը, մենք մի փոքր պիտի կանգ առնենք նաև, այսպես կոչված, յերկբարբառների կամ «դիֆ-

*) Որինակ, Աշտարակի վորոշ թաղամասում։ Հիշում եմ, ինչպես մի անգամ Ոշականի մի այգով անցնելիս դիմեցինք տիրոջ աղջկանը (12—14 տարեկան), որ թուլ տա խաղող ուտենք. սակայն նրա «ճև» ասածը մենք սկզբում չհասկացանք, ընդունելով «չե»։

*տանդ»-ների վրա *)։ Լեզվագիտությունից մեզ հայտնի յե, թե ինչպես շուտ են յենթարկվում փոփոխության յերկբարբառները իրենց սոնանտ տարրով, որի արտասանությունը վոչ յերկբառային դիրքում այլ կերպարանք է կրում։ Յեթե վերցնենք գրաբարի հիմնական յերկբարբառները («y» և «w» սոնանտներով), կը տեսնենք—ay, av, ey, ev, oy, *ov, կամ ya, va, *ye, we, yo, wo յերկբարբառները, որոնցից aw գարձել է «o» (օձ, օր...), ey գարձել է «է» (դէզ, հանդէս...), ew գրվել է մեծ մասամբ իւ (բիւր, իւղ...) oy այժմ գարձել է «ույ» (լույս, բույս), որը հավանորեն հին ժամանակից է (լույս—լուսանալ), ya գրվել է «եա» (փախեայ), wa գրվել է «ուա» (Աստուած), we=ուե (թուելի, պատուեր), yo=եո (արդեօք, եօթն...), wo=ւո (հոգւոյ ..), իսկ աստղանիշերով նշանակվածները չեն պահվել։ Մեր բարբառները այդ յերկբարբառները վոչնչացրել են, սոնանտները կամ զեղչելով կամ փոխարինելով բազաձայնով (Աստված. կաստվի...), յեթե չհաշվենք տեղ-տեղ ծնացած (որինակ, Ղարաբաղում) wa, wi... արտասանությունը, ինչպես—թթուաշ, լեզուի...**)։ Գրաբարում ծնացած—ay (այ), ew (եւ > իւ), ya (եա), wa (ուա), we (ուէ), yo (եո), wo (ւո) յերկբարբառները գառնում են այժմ մեր կենդանի բարբառներում—1) ay-ը >a կամ e (է), ինչպես՝ հայր > հար, հէր, 2) ew‖iw գառնում է «ու» կամ «ի», ինչպես՝ ձիւն > ձուն կամ ձին (ալիւր > ալուր կամ ալիր), 3) oy (ոյ) գառնում է «ու» կամ «ի» ինչպես՝ լոյս, քոյր... գառնում են «լուս—լուս», «քիր—քուր»..., 4) ya յերբարբառը («եա» գրությամբ) յուր այդ ընույթը կորցնում է, գառնալով սոսկ ձայնավոր (a, e), ինչպես՝ փախեայ > փախա, սեան > սան, ցորեան > ցորեն, Մամիկոնեան > Մամիկոնենք (կամ Մամիկոնանք), 5) wa յերկբարբառը մեծ մասամբ, բացի թերևս Ղարաբաղից և այլուր, գառնում է «վ» բազաձայն (վոչ սոնանտ w) +ա, ինչպես—Աստուած > Աստված, Նուարդ > Նվարթ, շինված, թթվաշ..., 6) we գառնում է «վե», ինչպես—պատուէր > պատվեր, ազուէս > ազվես..., 7) yo (եո) յերկբարբառը չքացել է, իբրև հնի շարունակություն (եօթն= oxt), բայց առաջ է գալիս նոր հնչական հողի վրա (Ջլոխվա...), 8) wo (ւո) գառնում է «վո» (սպանվող...)։ Այս, ի հարկե, ընդհանուր հիմնական ուրվագիծն է, որ մենք տալիս ենք այդ յերկբարբառների նկատմամբ, առանց մանրամասնությունների՝ ըստ բարբառների։

Այդ՝ ինչպես մոտենալ մեր նոր լեզվի ուղղագրական խնդրի տեսակետից այդ վերոնիշյալ յերկբարբառների տեսակներին։ Յեթե արտասանական կողմով գրական լեզուն լիներ որոշանական արդյունքը հին (գրաբար-

*) Մենք ընդունում ենք յերկբարբառների այն տեսակը, որը դրանք կազմվում են ձայնավորներից (հիմնական—a, e, o, ə) և սոնանտներից (y, w, r, l, m, n)։ վերջիններս ավելանում են ձայնավորների վրա թե սկզբից և թե յետևից, այսինքն, յեթե վերցնենք, դիցուք թե, մի a ձայնավորները, կը ստացվեն —ay, aw, ar... կամ ya, wa, ra... յերկբարբառները, առաջին դեպքում հաջորդում և բազաձայն, իսկ յերկրորդ դեպքում նախորդում և բազաձայն (կամ այլ բազաձայն սոնանտ)։ Որինակ—հայ կամ նախորդում և բազաձայն (կամ այլ բազաձայն սոնանտ)։ Որինակ—հայ հայական բառերի ay կոմպլեքսը դիֆտոնգ չի, բայց հայկ կամ հայր բառերի մեջ դիֆտոնգ է, նմանապես—(բաց)օթյա կամ (վեց)օրյա բառերի «յա» (ya) դիֆտոնգ է, իսկ «յար» և նմանների ya-ն դիֆտոնգ չէ։

**) Ըստ Լեոյի բերանացի վկայության.

յան) ձևի, ինչպես այդ տեսանք վերևը մեր բարբառների հանդեպ, ապա վոչ մի դժվարություն չպիտի լիներ և ուղղագրական գրաման խնդրում, այսինքն, ավանդական ուղղագրության հարմարացնելու մեջ նոր գրական արտասանական ձևերին, մասնավորապես և այդ յերկբարբառների տեսակետից։ Այստեղ ավելի ցայտուն կերպով և յերևան գալիս գրական լեզվի արտասանության յերկվությունը և արվեստականությունը*) — մի կողմից, այսպես ասած, աչքերը հառում և գրաբարի յերկբարբառական արտասանությանը (եա, եօ, ոյ, իւ), մյուս կողմից ընդգրկում և բարբառների պատմահնչական միտումը՝ զեղչել յերկբարբառի սոնանտ (յ, ւ) տարրը կամ դարձնել բաղաձայն (ւ > վ)։

Վերցնենք գրաբարի այդ յերկբարբառների խմբակցությունը իրենց՝ արդի բարբառների տեսակետով՝ մեռած արտասանությամբ։ Ուղղագրական նկատառությամբ ինչ փոփոխություն կարելի յե մտցնել այդ գրաբարական եա, եօ, ոյ, իւ յերկբարբառների գրության մեջ։ Մեր կարծիքով դրանց հին արտասանությունը, իրրև մեզ համար հին հնչական ռեստավրացիա, մոտավորապես տրվում է և իրենց գրությամբ, բացառությամբ, թերևս, ոյ յերկբարբառի. հմմտ. նաև «այ» յերկբարբառի ռեստավրացիան (հայր, ձայն... հանդեպ բարբառների՝ հար, ձան... կամ հէր, ձէն..., =ay փոխանակ e կամ a)։ Այժմյան դրանց «ռեստավրացիոն» արտասանությունը մոտավոր չափով հինն է։ Յեվ վորովհետև այդ խնդրում կենդանի բարբառները մեզ կռվան չեն տալիս, ուստի առաջ է գալիս անհատական արտիկուլյացիոն մեթեթություն կամ բառի հնչյունական դիրքի աղղեցություն. որինակ, յեթե «եա, եօ» խմբակը գրեթե բոլոր «դպրոցականներիս» կողմից արտասանվում է ya, yo (պատմութեան, եօթ), «իւ» յերկբարբառը բավական աղղվում և բառի դիրքից և անհատների բարբառական հնչա-հոգեբանական բաղադրից, ինչպես— «իւր» =yur, բայց «ալիւր» կամ «հիւանդ» մոտ է alür կամ hüsn արտաբերությանն։ «Ոյ» (oy) յերկբարբառի գրաբարյան արտասանությունը յեղել է, մեր կարծիքով, uy (=ույ), վորը մենք տեսնում ենք շեշտի փոխադրության ժամանակ, յերբ սովորաբար յերկբարբառը կորցնում է յուր սոնանտ (յ, ւ) տարրը—լոյս—լուսանամ, փոյթ—փութամ .., հմմտ. այդ «յ» սոնանտի անհետացումը նույն շեշտից «արի» ('քաջ') և «մարիմ» ('թուխս' բառերի մեջ՝ այր և մայր բառերից։ Բայց հնագույն նախագրաբարյան շրջանում այդ oy (ո) յերկբարբառը հնչվել և այդպես, ինչպես կա, այսինքն՝ o ձայնավորով + y, ինչպես տեսնում ենք, որինակ,—«լոյս» կամ «փոյթ» բառերի մեջ (=հնդեվր. louk₁o-, հմմտ. հուն. λευκός, լատ. lux և այլն, իսկ «փոյթ» = հուն. σπουδή, լատ. studium...). հմմտ. հին հնչափոխությունը՝ հոյլ (=բազմություն) հոլեմ կամ հոլոնեմ 'մեկտեղել կամ բոյլ (=խումբ) և բոլոր, նմանապես՝ նոյլ և շոգամ, թոյլ և թողում։ Մենք կարծում ենք,

*) Համմտ. ձևաբանության տեսակետից նման արվեստականություն մեր արևելահայ գրական լեզվի հրամայականի մեջ—գրիր, նստիր, սպանիր .., այն ինչ գրաբարում—ir մորֆեմը գործ է ածվում միայն կրավորականների և չեզոքների համար, իսկ արդի բարբառներում՝ ներգործականները ստանում են e, a (գրե, գրա), իսկ չեզոքները և կրավորականները միայն—i(r) ինչպես արարատյանում (մտի, նստի, թռի, սպանվի...)։ Գրական լեզվի այդ—ir մացողները միանգամայն անծանոթ են յեղել մեր հայկական լեզվաիմաների հնչաբանությանն ու նրա զարգացմանը։

վոր այդ «oy» յերկբարբառի արտասանությունը, լինելով իրեն պատմական—գրաբարյան շրջանում uy (=ույ), այժմ ևս պիտի հարկավ այդպես հնչվի և գրվի «uy» (=ույ), վորը (գրությունը) յեթե հնում չի գրվել, այդ սոսկ պայմանական պիտի սեպել, թերևս խուսափելու համար «ույ» տգեղ գրությունից։ Իսկ «եա, եօ, իւ» գրությունների համար մենք կասկինք. թողնք այժմյան արհեստական հին արտասանությանը կրել նաև իրեն հին գրության ձևը. և յեթե չլիներ բառամիջի «օ» տառի վտարման խնդիրը, մենք կպնդեյինք պահել նաև «եօ» և վոչ «եո» *)։

Այժմ խնդիրը գալիս է այն կարգի յերկբարբառնկրին (wa, we, wo, wi, wu), վորոնք սկսվում են w (ւ) սոնանտով և որգանական շարունակություն են պահում մեր կենդանի բարբառներում։ Ի՞նչպես վարվել ուղղագրական տեսակետից։ Մենք գտնում ենք, վոր գրանց w (սոնանտ «ւ» «ու») յերկբարբառային տարրը այժմ ամենուրեք դարձել է բաղաձայն շրթնա-ատամնային v («վ»),—մի պրոցեսս, վորը սկսվել է դեռ IX դարից, ինչպես այդ կարելի յե տեսնել արձանագրություններից (որինակ, «թվաբանություն» բառի մեջ). և յեթե իրոք դեռ տեղ-տեղ գոյություն ունի «թթուաշ, լեզուի» և այլն արտասանությունը (w սոնանտով) այդ նշածս պրոցեսսի վերջին բեկորային պաշարն է։ Մենք կարծում ենք, վոր այդ պրոցեսսը վերջացած է և պիտի ուղղագրության մեջ մտցնել և գրել—1) wa (ուա) ձևը va-յով (վա), ինչպես՝ Աստուած—աստված, Նուարդ—Նվարդ, Երուանդ—Երվանդ, հարուած—հարված, շինուած—շինված, թթուաշ—թթվաշ և այլն, 2) we (ուե, ուէ) ձևը—ve-յով (վե), ինչպես՝ աղուէս,—աղվես, թուեմ—թվեմ, պատուէր—պատվեր, սպանվիլ..., 3) wo (ւո) ձևը—vo (վո), ինչպես՝ հոգւոց—հոգվո, կատուով—կատվով, ձուով—ձվով և այլն, 4) wi (ուի)—vi (վի), ինչպես՝ Դուին—Դվին (համմտ. „Դունայ» սոնանտական դեմքով), արծուի—արծվի, թուի—թվի, սպանվի և այլն, 5) *wu (*ւու) ձևը—vu (վու), ինչպես վոր կա միայն աշխարհաբարում, սպանվում եմ, Ղամարվում...։ Գրաբարում իսկ այդ «w»-ով սկսվող յերկբարբառները ստացել են յերբեմն իրենց «w»-ն բաղաձայն «v»-ից, ինչպես նուեր և պատուիր (բայց հրաւէր) պարսկերեն բառերը իրենց—ուէր մասով վկայում են պարսկ. ved—արմատի մասին, կամ հմմտ. Աստուած բառը իրեն—ուած մասով և փռուգիական—Թրակիական Σαβάζιος աստծու հատուկ անունը, վորը հետագայում դառնում է Σαουάζιος կամ Σαυάζιος (ըստ Հ. Տաշյանի). այսինքն Astuac < Asuac < Sauac. Նմանապես աղուէս և արծուի բառերը իրենց w (ու) հնչյունը ստացել են բաղաձայն հնդ. յեվր. «p» հնչյունից (*alopek₁u— և rg₁ipya—)։ Ստուգաբանական մի փոքրիկ խոչընդոտ կա, յերբ գրում ենք «վա» (Աստված...), «վո» (սպանվող...) «վե» (աղվես...) «վի» (արծվի...) և «վու» (սպանվում եմ...). այդ այն է, վոր հին թթուաշ, ձուով, կատուի և այլն գրությունները անմիջապես կապվում են թթու, ձու, կատու... ձևերի հետ իրենց «ու»-ով գրությամբ. սակայն արտասանության (v բաղաձայն), միակերպության և անալոգիայի նկատառումներով այդտեղ դանց

*) Մենք ավելորդ ենք համարում հիշատակել փոփոխելի «յա», «յո», «յու» ձևերի և նախկինների (եա, եօ, իւ) գրային պատկերների խիստ տարբերացումը և կասեցուցիչ դերը հին գրքեր կարդալիս։ Մասամբ գործում է և ստուգաբանական նկատառումը, ինչպես՝ կեանք—կենսական, առեան—առենակալ...։

պիտի առնել այդ տառագաբանական կողմը, ինչպես վոր, որինակ, արաբներին չի խանգարում աստղիացիայի չենթարկել hmd (գովել) արմատի հետ Ahmad, Hamid կամ Muhammad գրություններըը. կամ հենց մեր հայրենի mit—և mət—(մթա—մտավոր) tun—tən (տուն—տնային), dez—diz—(դէզ—դիզել) և այլն։

Յեթե մի ոտարազգի ua—, ue— uo— . . . հնչյունակոմպլեքսը պարզորոշ կերպով հնչվում է, բնական է, վոր պիտի այդպես էլ գրել—«սխատուացիա», «Եդուարդ», «Տուարի», «մուհձին», «Նինուե», «Սուեց», «կուռպիո» և այլն և այլն։

Այդպիսով, ուրեմն, մենք վերջացած ենք համարում ոչղագրական նկատառումով համահայկական յերկբարբառների սխեմատիկ նկարագրությունն ու վերլուծությունը, վերցնելով գրանց անդրադարձումը գրաբարում, արդի բարբառներում և գրական լեզվում։ Վերջինս, ինչպես տեսանք, վերականգնել և «ամորտիզացիայի» չենթարկված «ա, հ. ոյ, իւ» յերկբարբառները իրենց գրաբարական ժառավոր արտասանությամբ և յերկրորդ՝ փոխել և յերկբարբառային բնույթը և գործել սոսկ բաղաձայն + ձայնավոր՝ հետևյալ հին յերկբարբառների մեջ—wa («ուա > վա), we («ուե» կամ «ուէ» > վե), wo («ուո» > վո), wi («ուի» > վի), *wu («ուու > վու)։

Սրանով մենք վերջացած ենք համարում նաև մեր հոդվածի բուն նյութական մասի խնդիրը—գտնել այն ավարտած հնչափոխություններըը, վորոնք որգանական գարգացման հետևանք են և ազգային ընդհանուր բնույթ են կրում։ Մենք հանդիպինք հետևյալ յեղրակացության մեր արդի արևելահայ գրական լեզուն դասական գրաբարի հանդեպ կրկ և հնչական փոփոխություններ—1) ձայնեղ պայթուցիկների մեջ, այն էլ միայն բառամիջում և վերջում (վարթ, խաբել...), վորոնց հին ուղղագրությունը ժամանակին կը վերականգնի, ըստ իս, նաև հին արտասանությունը. 2) «գ» տառի հին հնչման մեջ, դարձնելով սպիրանտ γ (ըստ Hübschmann-ի այդ սկսվել է VIII-րդ դարից), 3) «ւ» տառի հին հնչումը դարձել և բաղաձայն, հավասար հին «վ» տառի հնչմանը «հավ, հիվանդ, աերիվ...). 4) բառամիջի «օ» և «է» տառերի հնչումը հավասարեցնում և «ո» և «ե» տառերի նույն դիրքի հնչմանը, ունենալով դրա համար կովաններ նաև հին գրության մեջ (ծնող, գիտեի), բայց հակառակ գնալով մասամբ ժողովրդական արտասանության, 5) «ո» և «ե» տառերի բառասկզբի հին արտասանությունը այժմ յենթակա չե փոփոխման պրոցեսին, վորը թեպետ սկսվել է մինչին դարերից, սակայն, մեր կարծիքով, դեռ ձևավորման մոմենտում է գտնվում և չպիտի վավերացվին ուղղագրությամբ, վորովհետև այդ կարող է կանխել փոփոխման արդյունքը, 6) յերկբարբառներից՝ գրական լեզուն դրեթե անփոփոխ վերցնում է գրաբարից «այ, հա, հօ, ոյ, իւ», իսկ հին «ուա, ւո, ուե (ուէ), ուի, *ւու» յերկրբարբառները վոչնչացնում է, նման ժողովրդական ընդհանուր արտասանության, և դարձնում սոսկ «վ» բաղաձայն + ձայնավոր, 7) բառավերջում հին «յ» հնչումը ամենուրեք անհետանում է (տղա, յերեխա...) չհաշվելով մի քանի միավանկ բառեր (հայ, վայ, ոյ, բայ...)։

Այս պատմական հնչափոխություններից նոր ուղղագրությունը պիտի վավերացնի ըստ իս միայն այն մասը, վորը կընդունվի, վոր վերջնականապես ավարտված է ու պատմությանն է պատկանում, դարձած լինելով

այժմ ազգային արտասանության սեփականություն, ազգային հնչական դրություն։

Ի վերջո մատնանշենք նաև մի քանի (չորս) գրային-ուղղագրական յերևույթներ, վորոնք թեպետ մասամբ և չենթարկվել են հայոց հնչա-շարժական միտումներին (յերկուսը), սակայն ունեցել են և այժմ էլ ունեն դուռ ուղղագրական նշանակություն։

Առաջինը, դա հին հունական ω («ոմեգա»=«ո» մեծ) տառի տառադարձությունն է հայերեն «ով» տառերով, վորը տեսնում ենք փոխառնված հասարակ և հատուկ անուններըի մեջ, ինչպես—ովկիանոս (=okianos ըստ Hübschmann-ի) =հուն. ὠκεανος, ովսաննայ (osannay ըստ Hübschmann-ի) =ὡσαννά, Թովմաս =Θῶμας և այլն, թեպետ հանդիպում ենք ω=ո (որար, ուրար = ὡράριον), իսկ «ովարիտաես» (=ընկեր) = ὑπηρέτης իրեն «վ»-ն կարող եր ըստ իս նաև hiatus-ի պատճառով տարացած լինել. այդ վերջինը, ով=o գրությունը, վերոհիշյալ (ով=ω) գրության գրչագրային խեղաթյուրումն է, կամ ինչպես Hübshmann է ասում, «ի չարը գործադրած» գրություն («Daher dennoch manchmal ով für gr. o missbrauchlich geschrieben wird», տես Arm. Gr. §§ 328)։ Թեպետ արտասանական լեզվի մեջ հուն. o և ω հնչյունները միշտ վերարտադրվել են «ո» հնչյունով, սակայն, «գիտական ձևով» գրելիս ցանկացել են անջրպետել «ո» = հուն. o և «ով» =հուն. ω, թեև յերկու դեպքումն էլ արտասանությունը նույնն է*)։ Իսկ յեթե այդ «գիտական» ուղղագրական նորամուծությունը հող չի ունեցել, յերկար ու կարճ ձայնավորների տեսակետից, վոչ հայկական արտասանության մեջ և վոչ էլ մինչև իսկ այն ժամանակվա հույն ժողովրդականի մեջ, այլ յեղել է մի արհեստական յերևույթ, այն ժամանակ մենք չպետք է սրբագրենք նաև մեր այժմյան ուղղագրությամբ, և պիտի գրել—ոկիանոս, ոսաննա, Թոմաս, Յոսեփ և այլն, և վոչ ովկիանոս, ովսաննա, Թովմաս, Յովսեփ և այլն **)։

---

*) Տես Hübschmann, Arm. Gr. §§ 321—322. „Für gr. o und ω tritt in der gesprochenen Sprache o (arm. ո) ein, da das Armenische nur kurze (einfache) Vocale hat. Doch schreibt man in gelehrter Weise ով (d. i. ov) für gr. ω und scheidet es so von gr. o = arm. ո, obwohl die Aussprache in beider Fällen dieselbe blieb = o։ Նա մատնանշում է այդտեղ և հին հուն. o և ω հնչյունների նույնանալը հույն ժողովրդական արտասանական լեզվի մեջ (§§ 328, ծան. 1)։

**) Մեզ հետաքրքրում է հատկապես, թե ինչու մեր «ուսյալները» հին հո-ն. ω հնչյունի համար ընտրեցին «ով» գրության ձևը և վոչ թե մի ուրիշը։ Արդյոք նրանք էլ ժողովրդական արտասանության պես չեյին տարբերում «ω=ով» և «o=ո» գրությամբ արտասանությունը։ Մենք կարծում ենք, վոր այդ «ուսյալների» մեջ, այս դեպքում, յերևան և յեկել մի պատմահնչաբանական խորը ըմբռնում, յեթե «ով» դերանվան ազդեցությունը մեջտեղից հանենք (վորովհետև «ոկիանոս»-ը կարող եր «վոկիանոս» կարդացվել, իսկ «ով» դերանվան ov արտասանության ազդեցությամբ կը կարդացվելին սկզբնական «o» հնչյունով, նման հունարենին)։ Այդ այն է, վոր հին յերկար ձայնավորները, ըստ իս, վերածվել են w սոնանտով յերկբարբառի, և Թոմասյան, ոսկիանոս արտասանությունները իրեն ow յերկբարբառով նույն յերևույթն է, ինչ վոր մենք տեսնում ենք «առեւծ» բառի մեջ, վորը մեր կարծիքով յեղել է «առեծ-» (յերկար ē) = լատ rex (regis) և սանս. rajan ‘թագավոր’. համմ. նման յերևույթ—«արտասւսր»—ար-

Յերկրորդ. ոսարազգի բառերի կրկնակի բաղաձայնները պիտի պահել, մեր կարծիքով, թե գրութեամբ և թե արտասանութեամբ. ինչպես հին ժամանակ գրվել է «Յովհաննէս, Ովսաննա» և այլն. և այժմ պիտի գրենք և հնչենք ինչպես «մասսա», «կոլլեկտիվ»..., նույնպես «կոմմունա», «կոմմունիստ» և այլն, վորովհետև կրկնակի բաղաձայններից առաջ ընկնող ձայնավորը կարճ է արտասանվում, իսկ հակառակ դեպքում՝ յերկար: Մենք ընդունում ենք, վոր հայերը (ինչպես և վրացիք) խուսափել են այդ կերպ հնչելուց, սակայն այս դեպքում մենք պիտի աշխատենք, վորքան կարելի յե, ճիշտ վերարտադրել յևրոպական արտասանությունը, մոտ լինել յևրոպական այդ փոխառնությունների թե ճիշտ գրությանը և թե ճիշտ նրանց արտասանությանը:

Յերրորդ. «և» փակագիր տառը, մեր կարծիքով, պիտի գործածել միայն իրրև շաղկապ, վորովհետև բառի մեջ, այժմյան նոր լեզվի արտասանութեամբ, այդ տառը վերարտադրում է յերկու հնչյուն (տեր-եվ, ար-եվ, ա-եվ...), իսկ շաղկապի դեպքում՝ յերկք հնչյուն (=յեվ): Այս ասելով, մենք ի նկատի ունինք բացի հնչականից նաև մանկավարժական տեսակետը *):

Չորրորդ. «ու» յերկտառը համարելով հնչյունական գրության հակառակ, ուր մի հնչյունի համար հարկավոր է մի տառ, գտնելով վոր այդ հին ուղղագրական յերևույթը (հունարենի ου-ի ձևով) այժմ կարող և խանգարել «ւ» տառին հատկացվելիք ü հնչյունին և ավելորդ բարդություն և յուր գրությամբ, կառաջարկեյինք փոխել մի տառով: Մառը, որինակ. գործ և ածում հայերեն բնագրերում v տառը u (ու) սոսկական հնչյունի համար:

Շատ չենք հեռանալ, սակայն, հին գրության ձևից, յեթե այս փոփոխությունն ևս կատարվի, չի՞ ստեղծվի գրային պատկերների (հին ու. նոր) խիստ բաղխումն ու շփոթը, ինչ վոր, մասամբ, այժմյան «նոր» ուղղագրությամբ և՝ ել չենք խոսում այն դեպքի մասին, յեթե այլ տառային (ա, ե, ի,..) միաձուլումներ կատարվեյին, ինչպես վոմանք առաջարկում են. սա՝ կլիներ ամենամեծ անդամահատությունը, յերբ, որինակ, ռուսաց գրության ավանդական ձևերը (ё, я, ю), իրեն լեզվի բնականոն զարգացման արտացոլումով, մենք ցանկանք պատվաստել հայոց գրային որգանիզմի վրա:

* *
*

տասուք (<*trasu-=ὀάκρυ), «գիւտ»—գտանեմ (եգիտ) = հնդեվր. *vid-, «ծանուցի»<*ծանաթ-<*ծանաչ-եմ >ճանաչեմ (ծանեայ), «աղաւթք»<*աղաթ- <աղաչ-եմ, ամաւթ <*ամաթ-<ամաչեմ, «արաւտ»<*արատ-<արած-եմ, «թաւն»<թան-ամ, մաւտ<մատչեմ և թերևս «մաւր» ('տղմուտ') <*մար-=գերմ. moor: Հմմտ. նաև—յատ‖յատեմ, ակատ‖կասուտ..., կամ *գաւղ (=գող)‖գաղտ, *գաւլ (=գոլ)‖գաղջ, գետղ (<gel-)‖գեղջ (վորից գեղջուկ) և այլն: Տես նաև Марр. грам. др. арм. яз., § 33:

*) XIII դարի մի արձանագրության մեջ այդ «և» փակագիրը գործ է ածվել միայն իրրև շաղկապ, ինչպես դեռ հիմա կարելի յե տեսնել Աշտարակի «կարմրավոր» կոչված յեկեղեցու պարսպի արևմտյան մուտքի գլխին գրած արձանագրությունից, ուր պարզ կերպով նշմարվում է «և» և «ւ» տառերի միացումը («եւ»-ն պահում է իրեն հորիզոնական գիծը, խառնվելով «ւ» գրի հետ):

ԹԵԶԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

(Ավանդական ուղղագրության հանգեպ)

1 «վ» տառը գրել—a) ուր առաջ կար «ւ» վոչ յերկբարբառայինը՝ հավ, հավատ, սեվ, սեվանալ, թիվ, հիվանդ.., b) ուր առաջ կար «ու» տառով սկսվող յերկրարբառ՝ հարված, աստված, թվական.., պատվեր, աղուես, ղղվելի, թվել.., կռվող, թվող, (հոգվո).., արծվի, կատվի.., սպանվում եմ..:

2. «ւ» տառը պահել յուր հին արտասանությամբ (=ֆր. u, գերմ. ü) «իւ» յերկբարբառի մեջ՝ իւր, աչիւր, հիւան, արդիւնք.. և ոսարազգի բառերի ü հնչումի համար («Կաքսար», Մունխեն, Յերիխ..):

3. «ղ» տառը չգործածել այժմ ոսարազգի l (լ) հնչյունի համար և չգրել՝ Անգղիա, Գաղղիա.., բայց պահել հին յուրացրածները՝ Պողոս, Դուկաս, Ղազար և այլն:

4. «յ» տառը չգրել բառերի վերջում, յերբ չի արտասանվում—տղա, աչքա, երեխա, վրա.., բայց պահել բառասկզբում—յարմար, յամենայն դեպս, յետ, Յակոբ, Յարութիւն և այլն, թողնելով այդ արտասանությունը ազատ:

5. «օ» տառը հանել արդի արմատների մեջից, գրելով «ո»—ակոս, աղոր, Պողոս, ծանոթ և այլն, նաև՝ եոթն, արդյոք բառերում, բայց պահել սկզբում (օր, օձ, օրենք..) և բարդություններում (ապօրինի, այսօր) և ոսար բառերի սկզբում (Օլգա, Օդեսսա.):

6. «է» տառը հանել արդի արմատների մեջից, գրելով «ե»—դեզ, անեծք, պատվեր, պարտեզ, հանգես..., բայց պահել—a) բառասկզբում՝ էպ, էգուց, էական, էշ, էլ.., ոսարազգի բառերի սկզբում—էքսպրեսս, էրմիտաժ, էմին.., b) բառամիջում բարդության և թեքության ժամանակ—վայրէջք, անէական, մարգարէական.., իմացէ՛ք, գիտէի—գիտէիր—գիտէր.., ուներէք.., c) բառավերջում—բազէ, մարգարէ, գիտէ..:

7. «ույ» յերկբարբառը գրել «ույ» ձևով—բույս, լույս, գույն, հույն և այլն:

8. «ով» հունաբանական գրությունը ω (ոմեգա) տառի համար այժմ գրել սոսկ «ո»—ոկիանոս, Ոսաննա, Թոմաս, Յոսեփ և այլն:

9. Կրկնակի բաղաձայնները փոխառնություններում թողնել ամենուրեք անփոփոխ—մասսա, կոլլեգիա, կոլլեկտիվ, կոմմունա, կոմմունիստ և այլն:

10. «և» փակագիրը գործ ածել միայն շաղկապի համար և բառամեջը չգրել:

11. «ու» յերկտառը, յեթե հնարավոր է, փոխարինել մի տառով:

Ավանդական ուղղագրության հետացած ձևերը թողնել անփոփոխ (աաեան, Մամիկոնեան, պաշտոնեա.., ալիւր, հիւր.., որպի, ոսկի.., ես, երկար.., տղայական, կարոյի..):

ՉԵԿՈՒՅՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր այժմյան ուղղագրության առանձնահատկությունը, որ և կազմում է—լեզուի փոփոխությունների առանցքը, այն է, որ նա չէ հիմնված մեր այբուբենի ձայնավոր տառերի ժամանակակից՝ ազգովին ընդունված արտասանության վրա, այլ նրանց փոփոխված՝ այլակերպված արտասանության վրա: Այս ուղղագրության հեղինակը հարկ է համարել փոփոխել մի քանի ձայնավորների այժմյան արժեքները, վերականգնել նրանց սկզբնական արտասանությունը և ապա արդեն, այս «սկզբնական կատարելության» հասցրած այբուբենի վրա հիմնել ուղղագրական փոփոխությունները՝ դուռ փոնետիկական սկզբունքներով—«մի հնչյունին մի գիր», «մի գրին մի հնչյուն»:

Ինչպես Մ. Աբեղյանը, նոր ուղղագրության հեղինակը, գտնում է, որ մեր է և օ տառերը ներկայումս կորցրել են իրանց սկզբնական հնչյունները և հավասարվել են ե-ի և ո-ի հնչյուններին, իսկ այս վերջիններս «բոլոր բառերի մեջ առանց բացառության այժմ գրական լեզվի մեջ պահում են իրանց սկզբնական հնչյունները», որից առաջանում է դժվարություն՝ մի ձայնավոր հնչյունի համար յերկու տառ գործածել—է և ե, օ և ո. ուստի հարկավոր է, ուղղագրությունը հեշտացնելու համար, այդ զույգ նույնահնչյուն տառերից մեկն ու մեկը դուրս ձգել այբուբենից, իբրև ավելորդ և խանգարիչ և հատկապես է և օ գրերը, քանի որ նրանք կորցրել են իրանց սկզբնական հնչյունները. իսկ ե և ո տառերն արտասանել սրանց սկզբնական հնչյուններով՝ իբրև պարզ օ և է ձայնավորներ, և վոչ թե յե, վո: Իսկ այն բառերը, որոնք իրանց սկզբից նոր հնչյունի հավելուած են ստացել՝ գրել հավելյալ հնչյունին համապատասխան տառով—յերկու, վոտք:

Այս փոփոխությունը տեսականորեն սխալ է և անթույլատրելի, իսկ գործնականի մեջ առաջ է բերում մեծամեծ անհեղություններ:

Լեզվի բնականոն զարգացման օրենքին հակառող ձախողակի միտք է՝ գրականություն ունեցող լեզվի տառերի ժամանակակից հնչյունները փոխել և վերականգնել նրանց սկզբնական հնչյունները: Ամեն բան աշխարհիս յերեսին փոփոխվում է որոշ, հաստատուն օրենքներով, փոփոխվում է նաև լեզուն, փոփոխվում է և լեզվի արտասանությունը: Յեվ որովհետև այբուբենի տառերը տուփի մեջ ոգախիտ փակված չեն մնում անփոփոխելի, այլ շարունակ կիրարկվում են լեզվի բառերն ու հնչյուններն արտահայտելու համար՝ ուստի բառերի արտասանության փոփոխման չափով և նրան զուգընթաց աստիճանաբար փոփոխվում են և տառերի հնչյունները: Հին ժամանակ պ տառը արտասանվում էր իբրև փափուկ լատ. (lat. հուն. lambda), և այս գրով գրված բառերն արտասանվում էին այդ հնչյունով—լուկուլ լուս, Ալ լեկսանդր, ալ (փափուկ): Բայց բառերի արտասանությունը փոխվեց «ինչպես ներկայումս Գերմանիայում և Ֆրանսիայում փոխվում է r-ի արտա-

*սանությունը բառերի մեջ), և այժմ բոլոր հայերս արտասանում ենք այդ գրով գրված բառերը Ղուկուղոս, Աղեքսանդը, աղ, այս պատճառով էլ այդ գիրը այժմ կոչվում և հնչվում է դաս, և վոչ թե լատ: Մի ժամանակ գույգ ոտ-ը արտասանում էին իբրև ot, **երկու**-ն իբրև erku, այսինքն ո-ն հավասարեն օ եր, **ե**-ը e (э), բայց այդ և նման բառերի արտասանությունը հետզհետե փոփոխվելով՝ դարձավ այժմ վոտ, յերկու. սրա հետը միասին զուգընթացաբար հետզհետե փոփոխվեց և այդ տառերի արտասանությունը. նրանք այժմ o, e չեն, այլ vo, je (ռուս. e): Ուստի վորքան ճիշտ համապատասխանում եր այդ բառերի **հին ուղղագրությունը** այդ տառերի **հին արտասանության**, նույնքան էլ այժմ ճիշտ համապատասխանում են նրանց **այժմյան** ավանդական **ուղղագրությունը** այդ տառերի **այժմյան արտասանության**: Այս նմարտև զուգընթաց փոփոխությունը կատարվում է բնականոն կերպով, լեզվի հնչյունների և սրանց արտահայտիչ տառերի եվոլյուցիոն զարգացման կարգով: Այժմյան տառերը բաժանել այժմյան բառերի արտասանությունից, փորձել վերականգնել նրանց սկզբնական հնչյունները—նշանակում է պատմական զարգացման օրենքին հակառակ ընթացք բռնել, նշանակում է մեռելը կենդանացնելու փորձ անել: Կրիան փոքր ժամանակ ունի փոքր պատյան, ժարմնին համապատասխան: Յերբ կրիան մեծանում է՝ պատյանն էլ զուգնթացաբար հետն է մեծանում: Անմտություն կլիներ՝ չափահաս կրիան հանել յուր պատյանից և աշխատել տեղավորել նրա մանկական հասակի պատյանի մեջ, և քանի վոր սա փոքր կպա՝ աշխատել կարկատաններով մեծացնել այդ պատյանն ու հարմարեցնել չափահաս կրիայի մեծ հասակին, մոռանալով, վոր ինքը բնությունը տվել է կրիային նրա հասակին համապատասխան պատյան: Ճիշտ այսպես է պատահել մեր նոր ուղղագրության մեջ. ե, ո տառերին տրված է նրանց սկզբնական է, օ հնչյունը (ինչպես յենթադրվում է). և վորովհետև այս **սկզբնական** հնչյունով այդ տառերը չեն կարող արտահայտել **երկու. ոտ** բառերի **այժմյան** արտասանությունը՝ ուստի հարկ է զգացվել կարկատաններ ձգել, ավելացնելով յ և վ գրերը—յերկու, վոտ, մոռանալով, վոր ե և ո գրերի **այժմյան** արտասանությունը բառերի սկզբում ճիշտ համապատասխանում է յե, վո հնչյուններին և վոր մենք ավանդական ուղղագրությամբ գրված երկու, ոտ բառերը կարդում ենք jerku, vot, ուրեմն և կարիք չկա նոր կարկատանների:*

Այս խորհրդածությունից հետևում է, թե ուղղագրությունը պետք է հիմնվի այբուբենի այն հնչյունների վրա, վորոնք գոյություն ունեն ավյալ ժամանակում, և վոչ թե այն հնչյունների վրա, վոր նրանք յերբեմն ունեցել են կամ կարծվում է թե ունեցել են: Ուրիշ լեզուներ ևս ունեն տառեր, վորոնք ներկայումս կորցրել են իրանց սկզբնական հնչյունները (ֆրանս. j, գերմ. sch, ռուս. и և այլն), բայց այս ազգերի մեջ վոչ վոքի մտքով չեն անցնում այդ տառերի այսորվա արժեքները փոխել և պահանջել, վոր նրանք արտասանվեն ըստ նրանց հին հնչյունի. ինչպես և մեր մեջ վոչ վոք չե մտածում այսոր յեվրոպական sol, la, Луиза բառերը տառադարձել սող, դա, Ղուիզա, ըստ այս տառի սկզբնական հնչյունի (այսպես փորձեցին յերբեմն անել Վիյենևայի Մխիթարյանները, բայց շուտով, ընդհանուր տրտունջի ազդեցության տակ, հրաժարվեցին): Այսպես էլ մենք չպետք է թույլ տանք մեզ՝ գրել ես որ և արտասանել էս օր (ըստ է-ի և ո-ի սկզբնական կարծեցյալ

հնչյունի)։ Ապա ուրեմն պետք է մի կողմ թողնել այդ տառերի սկզբնական հնչյունը, վորով կարող են հետաքրքրվել լեզվաբանները, և ուղղագրական կանոններ հորինելիս պետք է նկատի առնել նրանց այժմյան հնչյունը.— «մեր այժմյան լեզվին մեր այժմյան այբուբենը»։

Արդ՝ հայտնի չե, վոր այս տառերը ներկայումս գրական լեզվի մեջ բառերի սկզբում (վորոշ գավառաբարբառների մեջ՝ նաև բառամիջում) արտասանվում են իբրև յե, վո, այսինքն վոր նրանք չեն թարգմանվել են յողայացման և շրթնայացման, վոր սովորական յերևույթ է լեզուների մեջ։ Մեկ համար միևնույնը պետք է լինի, սկզբից արդյոք նրանք յողավորված են յեղել, թե հետո չեն յողավորվել (յողավորված ե-ի անկանոնած ապացույց ունենք ժ դարից)։ Ուղղագրության համար եականը այն է, վոր այդ տառերը ներկայումս չեն արտահայտում «բաց ու կարճ օ, է հնչյուններ», այլ բառասկզբում իբրև յերկտառ հնչյուններ, իսկ բառամիջում փակ ու կարճ, յերբեմն՝ յողավորված հնչյուններ։ Այս այսպես լինելով՝ տեսնում ենք վոր է և ե, օ և ո նույնահնչյուն չեն ներկայումս, գոնե բառասկզբներում. էս օր բոլորովին այլ հնչյուն ունի քան ես որ. ապա ուրեմն այս չորս տառերից յուրաքանչյուրն ունի յուր հատուկ անփոխարինելի հնչյունը, ուրեմն և չի կարելի նրանցից և վոչ մինը դուրս ձգել այբուբենից։

Բնական է, վոր այսպիսի սխալ հիմքի վրա դրված ուղղագրությունը գործնականում պետք է առաջ բերեր բազմաթիվ անտեղություններ։

Այն մարդիկ, վորոնք գրագիտություն առաջին անգամ են սովորում այս նոր ուղղագրությամբ՝ չպիտի կարողանան կարդալ ավանդական ուղղագրությամբ գրված հազարավոր հատորներ, ու պետք է կտրվեն մեր ամբողջ հին գրականությունից, կամ պետք է կարդան մեծ դժվարությամբ (անձանոթ է, օ գրեր. ե, ո գրերի տարբեր արտասանություն և այլ խորթ գրության ձևեր)։ Իսկ այն մարդիկ, վորոնք գրագետ են ավանդական ուղղագրությամբ՝ շարունակ սայթաքումներով և մարմնի փշաքաղությամբ պետք է կարդան նոր ուղղագրությամբ վորևե գրվածք, վորովհետև նրանով հազարավոր բառերի պատկեր փոխվել է, յերբեմն սոսկալի չափերով։ Մի ժամանակ Մ. Աբեղյանը*) այնքան մեծ կարևորություն էր տալիս բառերի պատկերին, վոր նույն իսկ մերժում էր իմ առաջարկած համեստ վերագրությունը (միայն բառամիջում ու բառավերջում), թեև գտնում էր նրան տեսականորեն ճիշտ, և ավելի կողմնակից էր ռեֆորմի, թեև գտնում էր նրան տեսականորեն սխալ, բայց վորովհետև նրանով բառերի պատկերը համեմատաբար քիչ է փոխվում և քիչ բառերի մեջ է փոխվում։ (Եր. 1137—8)։ Նույն այդ պատճառով նա անկարելի չէր համարում «չեստոյ բառի սկզբի յ-ն դարձնել ի և վերջի յ-ն դուրս ձգել, վորով միանգամից բառի պատկերը կփոխվի հեռու և գրագետների համար անճանաչելի կդառնա» (նույն. 1066)։

1913 թվից մինչև 1922-ը, 9 տարվա ընթացքում, լեզվի մեջ առանձին բան չփոխվեց, չփոխվեցին և լեզվաբանական որենքները. բայց Մ. Աբեղյանը 1922-ին վոչ միայն վերագրությունն ընդունեց, բառասկզբի վ-ի հավելումով հանդերձ, այլ և մի շարք այնպիսի փոփոխություններ մացրեց հազարավոր բառերի պատկերի մեջ, վոր մի բառի մեջ յերկու փոփոխությունը (վոր 1913 թվին անկարելի էր համարում) դարձավ սովորական

*) Տես նրա «Մեր ուղղագրությունը», «Արարատ», 1913, №№ 11 և 12։

յերևույթ. առաջ լեկան մի բառի մեջ յերեք տառի փոփոխություն (Հարությունյան, հորինվածք, յերեվույթ և այլն), նույն իսկ չորս փոփոխություն (յերկորյա, հորինելի, հոդվածո և այլն) այնպես վոր իմ առաջարկած վերագրությունը, վորը նա 1913-ին ծայրահեղ էր համարում (բառի պատկերի փոփոխության տեսակետից), 1922 թվին մի անվեզ, աննշան բան դարձավ նրա արմատական ուղղագրության համեմատությամբ։

Յեթե վերագրությունը, ճիշտ և անհրաժեշտ լինելով հանդերձ, այնքան հակառակության հանդիպեց Մ. Աբեղյանի և ուրիշների կողմից, հասկանալի չե, թե վորպիսի ընդդիմություն պետք է հարուցանելին նոր ուղղագրության բազմաթիվ, սխալ հիմքի վրա դրված, ավելորդ և բազմատեսակ տեխնիքական անտեղություններով լի փոփոխությունները։ Արտասահմանի հայությունը բացարձակապես հրաժարվեց կարդալ այդ ուղղագրությամբ գրվածքներ[1]). մեր մտավոր կապը խզվեց արտասահմանի մեծաքանակ գաղութների հետ. մեր մեջ խորխորատ բացվեց այդ ուղղագրության պատճառով, փոխանակ այնքան ցանկալի մերձեցման։ Նույնիսկ Խորհրդային իշխանության սահմաններում, վորտեղ այդ ուղղագրությունը պարտադիր դարձվեց, և արգելվեց այլ ուղղագրությամբ տպել վորևե գիրք՝ ընթերցող հասարակությունը խրտնեց—չկարողանալով կարդալ նոր ուղղագրությամբ, վոր աչք է ծակում, և այս՝ վոչ միայն անկուսակցականների կողմից, այլև շատ կուսակցականների, ինչպես վկայում է Պ. Մակինցյան[2])։ Բացարձակ հայտնի չե, վոր նոր ուղղագրության շնորհիվ Խորհրդային իշխանության սահմաններում այս մի քանի տարվա ընթացքում հայ գրքի ընթերցումը նվազեց, լրագրների տիրաժն ընկավ, այն-ինչ մի նվիրական պատվեր էր դրված իշխանությունների վրայ՝ 10 տարվա ընթացքում բոլոր ժողովուրդը գրագետ դարձնել.—նոր ուղղագրությունն, ընդհակառակը, ընթերցողների թիվը պակասեցրեց։

Այս ավելորդ յ-երը և վ-երը բառասկզբներում ե-ից և ո-ից առաջ, ինչպես և այն յ-երը, վոր նոր ուղղագրությամբ մուծված են եական բայի միավանկ ձևերի առաջ, յերկու ձայնավորների մեջ և այլն, մեր տպագրությունը թանգացնում են մոտ 3 տոկոսով. նույնքան տոկոսով ավելանում է և ժամանակի ու թղթի ծախսը՝ ձեռքով գրելիս։ Այսպիսով նոր ուղղագրությունը վոչ թե հեշտացնում է գրությունը, այլ դժվարացնում—ավելորդ ժամանակ և աշխատանք պահանջելով, և մյուս կողմից թանկացնում է հայերեն գիրքը 3 տոկոսով, վոր նույնպես վոչ թե նպաստում է գրագիտության և ընթերցանության տարածման, այլ խոչընդոտ է հանդիսանում։ Մի հոդվածում[3]) յես հաշվել եմ, վոր միայն Յերևան քաղաքում միմիայն «Յերևան» բառի ավելորդ յ տառը պահանջում է տարեկան 12 տպագրական թերթ (192 յերես) յ տառ և նստում է մոտ 600 ռուբլի ավելորդ ծախս։ Թե վորքան է տուժում պետությունը այս ավելորդ ու խանգարող յ-երի և վ-երի գործածությունից՝ չեմ կարող ասել, վորովհետև ձեռքի տակ չունեմ պետ-

1) Մոտ ժամանակներս Հյուս. Ամերիկայից մի նամակ ստացա. նամակագիրը նամակի վերջում գրում էր. «Հաճեցեք գրել հին ուղղագրությամբ, վորպեսզի հասկնանք»։

2) „Заря Востока“, 1924, № 740.

3) «Մարտակոչ» 1926, № 216։

հրատի ծախսերի հաշիվը։ Համենայն դեպս տարեկան մի քանի հազար ռուբլի զուտ ծախս է լինում այս ուղղագրական նորմուծութեան շնորհիվ, որ ավելի մեծ ոգտակարութեամբ կարելի էր գործածել անհրաժեշտ կարիքների համար։

Նկատելու արժանի չէ և այս, որ բոլոր լեզուներում, որքան ինձ հայտնի է, երբ նոր ուղղագրութիւն է մուծվում՝ սա ավելի կարճացնում է գրութիւնը քան եղել է նախընթաց ուղղագրութեամբ. և սա շատ բնական է, որովհետև կարճ գրութիւնն ըստինքեան հանդիսանում է նաև հեշտ գրութիւն, իսկ գրութեան հեշտացումը ամեն մի ուղղագրութեան հիմնական նպատակներից մեկն է հանդիսանում։ Միայն մեր նոր ուղղագրութիւնն է, որ հակասում է այս ընդհանուր կանոնին և միակ բացառիկ որինակ կազմում լեզուների մեջ։

Վերի նկատողութիւնները միայն մի կողմն են կազմում նոր ուղղագրութեան պակասութիւնների. մյուս կողմը ևս նվազ կարևոր է, գուցե և ավելի կարևոր առարկա կյանքում։ Նրանք վերաբերում է այն դժվարութիւններին, որոնք առաջ են գալիս այս ուղղագրութեան գործադրութեան ժամանակ և անհրաժեշտորեն բղխում են նրա էութիւնից։

Մեր ավանդական ուղղագրութիւնն ուներ մի սկզբունք—պահել գրութեան միակերպութիւնը, թեպ տալով որ կարդացողը գըրված բառն արտասանե ըստ իւր սովորութեան։ Յերբ մենք գրում էինք «ողորմել»՝ մենք այս բառը գրական արտասանութեամբ կարդում էր ինչպես ղողորմել, մի ուրիշը տեղական արտասանութեամբ՝ ինչպես ոդորմել։ Յերկու կարդացողներն էլ այդ նույն գրութիւնը գտնում էին համապատասխան իրանց արտասանութեան, և ոչ մեկը չէր բռնադատվում իւր սովորական արտասանութիւնը փոխել գրութեան պահանջով։

Նոր ուղղագրութիւնը խախտեց բառերի գրութեան միակերպութիւնը, նրան զոհ բերելով ֆոնետիկական ճշտութեան։ Նա պահանջում է այդ նույն բառը գրել յերբեմն «ղողջունել» և յերբեմն «ողջունել», նայելով թե ինչպես է արտասանվում այդ բառը տվյալ տեղում և տվյալ պայմաններում։ Բառը ոչ միայն փոխում է իւր պատկերը այլ ավելին—նա կորցնում է իւր պատկերը։ Առանձին վերցրած՝ նա չունի սեփական պատկեր—սեփական գրութեան ձև. դա կախված չէ իրանից, այլ իրան նախընթաց բառից կամ նախընթաց գրից և զանազան պայմաններից։ Ստեղծվում են այսպես կոչված համբավավոր «անկայուն» և պայմանավոր գրութիւնները, որոնց որինակը չկա ուրիշ լեզուների մեջ։ Որինակի համար՝ ըստ նոր ուղղագրութեան պետք է գրել

ղողջունեցի,	բայց	չողջունեցի.
ղողջունում եմ,	»	կողջունեմ.
ղողջութիւն,	»	առողջութիւն.
ղողջութիւն,	»	ողջութիւն (գավառ. արտաս.)
հօրը ղողջունեց,	»	կընոջն ողջունեց.
ղողջույն,	»	ողջումախպեր.

Այս տարբեր ձևերն ու նրանց գործադրութեան պայմանները մի առ մի բերված են նոր ուղղագրութեան «Առաջնորդի» մեջ, ուրիշ այլ դիտելիքների հետ[1]), որոնք միասին վերցրած՝ կազմում են ավելի բարդ կանոնադրութիւն, քան ավանդական ուղղագրութեան կանոնները։

4) Ի միջի այլոց պահանջվում է արտասանել Էգիպտոս, Էվրոպա, Էփրատ, (եր. 15). գրել՝ հիպատոս, Փինիկիա (եր. 11) և այլն։

Այս բարդ կանոնները գործածելու պայմանները գիտենալն ու հիշելը պահանջում են գրողից առանձին պատրաստութիւն, արգելք են լինում անսայթաք գրութեան, տեղիք են տալիս հաճախակի թյուրիմացութիւնների, կամայականութեան և սխալագրութեան, վորոնց մասին ժամանակ առ ժամանակ պրիլ եմ ուրիշ անգամ[1]), ուստի ավելորդ եմ համարում այստեղ կրկնել։ Նոր ուղղագրութիւնն, իմ խորին համոզմամբ, ավելի բարդացնում և դըժվարացնում է գրութիւնը, քան եր ավանդականը։

Նոր ուղղագրութեամբ՝ հորանջը (hiatus) վերացնելու նպատակով, պահանջվում է «ե տառից հետո բառերի մէջում ավելացնել յ տառը՝ յերբ հետևից մի ձայնավոր և գալիս», նույնպես և «եմ բայի միավանկ ձևերը, յերբ իրրև վերջնաձայն սերտ կերպով միանում են ձայնավորով վերջացող նախորդ բառին՝ գրել սկզբում ավելացած անկայուն յ տառով», այսպես՝ բոպիկական, բոպիկով, բոպիկի, եյիր, գրեյի. գնալու յեմ, մի առարկա յեմ տեսնում, և այլն, բայց գնացել եմ, մի մարդ եմ տեսնում, և այլն։ Դարձյալ մի ավելորդ բարդութիւն, նոր դեպք անկայուն գրութեան և ավելորդ ժամանակի ու նյութի սպառում—և դարձյալ ֆոնետիկական գրութեան սիրուն։ Նախ և առաջ պետք է նկատեմ, վոր այդպիսի գրութիւնը բռնազբոսում է ընթերցողի արտասանութիւնը, վորովհետև շատերը, մանավանդ ծանր խոսելիս, առանց յ-ի յեն արտասանում—«դա մի բոպե-ական գործ է», «մի բոպե-ով», «մի բոպե-ից»։ Ինչո՞ւ պետք է նրանց ստիպել անսովոր արտասանութիւնը յուրացնելու և այդպես կարդալ-գրելու։ Իսկ յեթե մեկը սովոր է այդ յ-ին արտասանել տվյալ դեպքերում՝ նա դարձյալ կարտասանե ըստ իւր սովորութեան, թեկուզ յ լինի, թեկուզ չլինի. չէ վոր մինչև հիմա այդ յ-ն չեր գրվում, բայց շատերն արտասանում եյին, ուրեմն այսուհետև էլ կարտասանեն առանց այդ յ-ն գրելու։ Նոր ուղղագրութեան նպատակն է գրութիւնը ձգտիլ համաձայնեցնել արտասանութեան, բայց նկատի չէ առնված, վոր այս դեպքում էլ բոլորի արտասանութիւնները միատեսակ չեն և վոր համենայն դեպս ավելորդ է այդ մեկրոֆոնալին ճշտութիւնը, վորովհետև յերբեք և վոչ մի գրութիւն չէ կարող ամենայն ճշտութեամբ արտահայտել այն նյուանսները, վոր յուրաքանչյուր անձ մտցնում է իւր արտասանութեան մեջ. դրա համար վոչ մի այբուբեն չունի բավականաչափ տառեր։ Հանրածանոթ իրողութիւն է, վոր ընթերցանութեան վարժ մարդիկ կարդալիս բառի ամեն մի տառը չեն կարդում, այսինքն ամեն մի տառի մտապատկերը չեն ստանում, տառը տառի հետ չեն հեգում ու այսպիսով բառը կարդում, այլ մի ակնթարթում, մի հայացքով, ստանում են բառի պատկերը և այդ բառն իրանց հիշողութիւնից (և վոչ թե տառերի զուգորդութիւնից) արտասանում են՝ ինչպես սովոր են (ինչպես լինում են մոտավորապես թվանշանները կարդալու ժամանակ)։ Այս դեպքում՝ վարժ կարդացողի համար բոլորովին նույն է, թե մարգարեյութեան բառը յ-ով է գրված թե առանց յ-ի. նա բառի առաջի և վերջի գրերի վրա մի հայացք ձգելով՝ հասկանում է թե ինչ բառ է, և արդեն իրանից ասում է բառը, թեկուզ նա գրված էլ լինի պատվով (մարգարեուի), թեկուզ յ-ով լինի կամ առանց յ-ի—ըստ իւր սովորական արտասանութեան։ Ապա ուրեմն ավելորդ և աննպատակ է յ-ի ներմուծումը այսպիսի դեպքերում։

1) Տես «Մարտակոչ» 1924, № 10 և 11, 1926, № 216։

Գալով եմ բայի վերջանկ ձևերի վրա նախընթաց ձայնավորից հետո ավելացնվող յ-ին՝ վերոհիշյալ խորհրդածության վրա պետք է ավելացնեմ, թե դա ապորինի չէ և լեզվագիտորեն անարդարանալի։ Ցերկու դեպքում է կատարվում այս հավելումը—կամ յերբ եմ-ից առաջ գալիս են այ, ոյ յերկբարբառներ (ծառայ եմ, դշխոյ եմ) կամ յերբ գալիս է պարզ ձայնավոր (գնալու եմ)։ Առաջին դեպքում՝ լսվող յ-ն պատկանում է յերկբարբառին, վոր եմ-ի ձայնավորից առաջ պահպանում է յուր սկզբնական այ, ոյ (ай, ой) հնչյունը, ինչպես ֆրանսերենում բառի վերջին բաղաձայնը, վոր այլուր չի հնչվում, հաջորդող ձայնավորից առաջ հնչվում է (il avait deux livres, բայց il avai-t-un livre)։ Ցերկրորդ դեպքում էլ յ հնչյունն հանդիսանում է իբրև կապ յերկու ձայնավորների մեջ՝ հորանջը վերացնելու համար և գոյանում է յերկու ձայնավորների արտասանության միջավայրում (յերբ խոսարանի գործարանները առաջին ձայնավորն արտասանելու դիրքից անցնում են յերկրորդ ձայնավորն արտասանելու դիրքին), ապա ուրեմն դարձյալ չի պատկանում եմ բային (իբրև հեռավոր նմանության՝ կարելի չի ցույց տալ ֆրանս. a-t-il գրության վրա, թեպետ այստեղ էլ t տառը պատկանում է a բային)։ Ի՞նչ իրավունքով ուրեմն եմ բայի վրա ավելանում են այս յ-երը, վոր վոչ քերականորեն և վոչ ֆոնետիկաբար նրա մասը չեն կազմում։ Սա նման կլիներ՝ յեթե ֆրանսիացիք un և սրա նման հաղարավոր բառեր գրելին այն բաղաձայնով, վորով վերջանում է առաջընթաց բառը—un—sun, tun, zun, il - til, sil, zil և այլն։ Եմ բայի ավանդական ուղղագրությունը մինչդամայն բավարարում է մեր արտասանությունը, և ավելի լավ՝ քան այս բռնազբոսող ուղղագրությունը. նրա կողքին դնել մի նոր շարք յոդավորված ձևեր—յեմ, յես, յե, յենք, յեք, յեն—վոչ մի կերպ չեն կարող արդարանալ, և վոչ մի ոգուտ չունեն, բացի վնասներից։

Նոր ուղղագրությունը պահանջում է նաև՝ իւ, եա գրություններն արտասանել յու, յա ձևերով։ Դժվար է համաձայնել այսպիսի փոփոխության հետ։ Նախ և առաջ՝ անհիմն է այն պատճառաբանությունը, իբր թե իւ գրությունը առաջ լսվում եր իբր եւ (ինչպես միւս, քիւր բառերում՝ հին գրությամբ մեւս բեւր), իսկ եա իբր թե արտասանվում եր ինչպես յերկու վանկ (ինչպես բարեաւսեաց, հոգեւառ բառերում)։ Այս արտասանությունները պատահական դեպքեր են վորոշ տեսակի բառերի մեջ. իսկ իւ, եա գրությունների իսկական ընդհանրացած արտասանությունը, վորքան կարող ենք յեզրակացնել մեզ մատչելի փաստերից, մնացել է նույնը։ «Իւ» գրությունը միշտ նկատում ենք ձեռագիրներում իւր բառում, իւց, քիւց մանրիկներում. գոնե յես չեմ հիշում վոր և ե դեպք, վոր ձեռագիրներում գրված լինի եւր (=իւր), մեծութեւն, անկեւն և այլն։ Իսկ վոր եա գրությունը հին ժամանակ էլ յեղել է միավանկ յերկբարբառ հնչյուն և վոչ թե յերկվանկ՝ սրան բավարիվ ապացույցներ կարելի չի բերել։ «Անձինք նուիրեալք» շարականում, վոր գրված է Կոմիտաս կաթողիկոսից յետնեղորդ դարում վորոշ տաղաչափությամբ՝ շատ հաճախ գործ են ածվում եաց, եաւք վերջավորություններն այնպիսի տեղերում, վորտեղ ըստ տաղաչափության պահանջի անհրաժեշտ է կարդալ իբրև միավանկ։ Այսպես՝ պատահում ենք այստեղ, շատերից քիչն հիշելով, «ընծայեալք Աստուծոյ», «և պակասն հեթանոսաք», «կուսութեամբ ընդ մահս», «խոնարհեալ տեսաներ», «և հոգւով միացեալք, միաբան ընթացեալք» և այլն. ինչպես նաև «ըղչքնաց

տեսութիւնն», «անցավոր մեծութիւնս». «շնորհելով զթողութիւն» և այլն։

Մյուս կողմից՝ ուղղագրության մեջ փոփոխություն մտցնելու համար, այն էլ այսպիսի աչք ծակող փոփոխություն, պետք է լուրջ՝ հրամայողական պահանջներ լինին, վոր ներկա դեպքում չկան։ Նեղութիւց, նեղութեաց, հիւր, կեացի գրությունները վոչ մի թյուրիմացություն չեն հարուցել մինչև այժմ, վորովհետև հնչյուններն ու գրությունները մեր ըմբռնողությամբ միմյանց լիովին համապատասխանում են։ Միայն եա գրությունը ներկայումս կարող է տեղ-տեղ կարդացվել իբրև ե+ա (յերկու վանկ), ինչպես հոգե՛առ, բարե՛աւեաց և այլն սակավաթիվ բառերում։ Այսպիսի դեպքերում կարելի չէ մակակետ դնել յերկու ձայնավորի մեջ, ինչպես անում և Առաքեան Բառարանը, կամ ե-ը վերածել է-ի, ինչպես և գրում են հաճախ—հոգէառ, բարէաւեաց, և այս միակ յերկդիմությունը կվերանա։ (Ամենալավը այն է, վոր իւ, եա և ու հնչյունների համար ստեղծվին միատառ գրություններ, վորով թե բոլոր թյուրիմացությունները կվերանան և թե, «և» փակագիրն էլ միասին հաշված, մոտ 4½% խնայողություն կստացվի։ (Տես ներքևը, Առաջարկություններ մեջ)։

Նկատի առնելու է նաև այս կարևոր հանգամանքը, վոր գրության նոր ձևերը յու, յա (=իւ, եա) բոլորովին ոտարոտի չեն հայերենում։ Բառերի սկզբում յու, յա գրությունները վաղուց կորցրել են իրանց սկզբնական հնչյունները (ju, ja) և այժմ կարդացվում են իբրև ՙու, ՙա կամ հու, հա. նույնն է և բառերի մեջ՝ բաղաձայններից հետո։ Իսկ ձայնավորներին հաջորդող յ-երը այդ ձայնավորների հետ կազմում են յերկբարբառներ (այ, ոյ)։ Հայերեն լեզվի մեջ և վոչ մի բառ կարելի չէ գտնել հին և նոր ժամանակ, վորի մեջ բառասիջի յու, յա գրությունները հնչեին իբրև իւ, եա (ю, я)—որ. ան-յուսալի, ան-յապաղ և այլն։ Ուրեմն ներկա դեպքում էլ նոր ուղղագրությունը վոչ թե գործնական նպատակ ունի մեր գրությունը հեշտացնելու, այլ զուտ թեորիական ցանկություն—վերականգնել յ տառի սկզբնական արտասանությունը և իրագործել մի հնչյունին մի գիր և մի գրին մի հնչյուն սկզբունքը։ Բայց հայ կարդացողը չէ կարող հաշտվել այս նորորինակ գրության արտասանության հետ և, ըստ լեզվի կանոնի, կարդում է յ-ն իբրև բաղաձայն և նրա ու նախընթաց բաղաձայնի մեջ բնականապես դնում է ը, վորով գիւղ-ը դառնում է գըյ-ուղ, Յարութիւնեանը—Հարութը յ-ու-նըյ-ան, Գիւլիւլեանը—Գըյ-ու-լըյ-ու-լըյ-ան և այլն։

Մնում է յ-ով սկսվող բառերի ուղղագրությունը։ Այս տառի հնչյունը վաղուց և խախտվել մեր լեզվի մեջ և հետզհետե գնում և դեպի անհետացում։ Բառերի վերջում բացի մի քանի միավանկ բառերից, այս յ-ն բոլորովին չէ լսվում։ Տղայ, ծառայ, գայ, ստանայ, մեծարգոյ, գործոյ և այլն արտասանում ենք այժմ այնպես՝ իբրև թե բոլորովին չլիներ յ տառը։ Բառամիջում, ձայնավորներից հետոյ, ժողովրդական արտասանությամբ սղվում են—այ=է կամ ա, ոյ=ու (գայլ—գել, գալ, մայր—մեր, մար, գել, կգելիր, անոյշ—անուշ, բոյն—բուն և այլն)։ Բառասկզբում թե գրական և թե ժողովրդական արտասանությամբ բազմաթիվ բառեր կորցրել են այդ հնչյունը (յայլոց—այլոց, յառաջ—առաջ, Յակոբ—Ակոբ, յարդ—էրթ, յաղթել—էխաել և այլն)։ Շապուհ Բագրատունուն վերագրված պատմության նորագյուտ ձեռագրում արդեն պատահում ենք շատ բառերի՝ առանց սկզբնական յ-ի (այլոյս, աղթութիւն, ապաղել (եր. 32—3), արքունիսն, որժամ (40—41),

աւուր միում, ոժար, որում (8—9) և այլն, ինչպես նաև ի արժանիս, ի ընկղմել, ի եաթն, ի աշխարհն գրութիւնները, վորոնք ցույց են տալիս վոր կլասիկ լեզվի յ-ով գրութիւնն արդեն կորցրել և յուր հնչյունը և հարկ և պակացվել անհետացած յ նախդիրը փոխարինել հնչվող ի նախդիրով։ Նշանակում ե, վոր բառասկզբում ել յ հնչյունի անհետացումը վաղուց և սկըսվել։ Բայց կան բավական թվով գրական բառեր, վորոնք ժողովրդի բերանում դեռ չեն ծեծվել ու հղկվել, ուստի և յ հնչյունը դեռ չեն կորցրել բոլորովին։ Սրանց մեջ յ-ի արտասանութիւնը, յուր անհետացման ճանապարհի վրայ, յերկու ճյուղի և բաժանվել։ Մի շարք գավառներում նա վերածվել և հազիվ լսելի նուրբ հագագի (spiritus lenis), իսկ ուրիշ գավառներում՝ պարզ լսելի, գրեթե հ-ի պես հնչող հագագի (spiritus usper)։ Հարմարութեան համար՝ առաջիններին կոչենք յիախոս, իսկ յերկրորդներին՝ հոյախոս։ Արդ հոյախոսները իրոք դժվարութեան են հանդիպում այսպիսի բառերի գրութեան ժամանակ, վորովհետև նրանք գրեթե միատեսակ են արտասանում բառասկզբի հ և յ տառերը և միչոց չունին զանազանելու, թե վոր բառը հ-ով պետք և գրել և վորը յ-ով։ Յիախոսներն այսպիսի դժվարութիւն չեն կրում, վորովհետև նրանք տարբեր են արտասանում այդպիսի բառերը։

Այս դժվարութիւնը վերացնելու նպատակով՝ նոր ուղղագրութիւնը պահանջում ե յ-ով սկսվող բառերը գրել հ-ով, հետևելով հոյախոսների արտասանութեան, մանավանդ վոր նոր ուղղագրութիւնը, հետևելով «մի գրին մի հնչյուն» սկզբունքին, չեր կարող հաշտվել, վոր յ տառը յերկու տարբեր հնչյուն ունենա։ Սակայն այս փոփոխութիւնը, վոր հոյախոսներին կարող ե բավարարութիւն տալ՝ անընդունելի ե վոչ միայն յիախոսների համար, այլ և բոլոր նրանց, վորոնք հարցի վրա նայում են վոչ թե սրան կամ նրան բավարարելու, այլ ավելի լայն՝ լեզվաբանական տեսակետից։

Վերցնենք յերկու շարք բառեր՝ յ-ով և հ-ով սկսվող.

յամր	համր
յաջող	հաջող
յարել	հարել
յարկ	հարկ
յեղուլ	հեղուլ
յետ	հետ
յոյզ	հոյզ և այլն

Յիախոսները այս յերկու շարքերն արտասանում են տարբեր հնչյուններով և ճշտիվ վորոշում են բառերի նշանակութիւնները, այն-ինչ հոյախոսները չեն կարողանում զանազանել յերկու շարքերի տարբեր հնչյունները և միատեսակ արտասանում են յերկու դեպքում ել հ.—համր քայլեր և համր լեզու. հաջող ուղղագրութիւն և հաջող շուն և այլն։ Նշանակում ե՝ յիախոսները ունին մի հնչյուն՝ վոր պակասում ե հոյախոսների բարբառներում։ Արդ՝ յեթե հոյախոսների դյուրութեան համար առաջին շարքի և նրանց նման բառերը հ-ով գրենք՝ մի քանի տասնյակ բառերի մեջ յեղած գոնե գծագրական տարբերութիւնը կանհետացնենք, և կատեղծենք բազմաթիվ նոր հոմանիշներ վորով կվճասենք լեզվի վորոշութեան, բայց, վոր գլխավորն ե, բոնի կերպով կոչնչացնենք մի հնչյուն, վոր գոյութիւն ունի լեզվի մեջ։ Ասում եմ՝ լեզվի մեջ, և վոչ թե բարբառների մեջ, վորովհետև յիախոս

մարդը գրական լեզվում ել յ-ով ե հնչում այդպիսի բառերը, վոր հենց ամենամեծ մասամբ գրական բառեր են։ Ասում եմ՝ հնչյունը վոչնչացնել, վորովհետև նախ՝ յիախոս մարդը զրկված կլինի հնարավորութիւնից՝ յուր յ-ի հնչյունն արտահայտելու, և յերկրորդ՝ վոր նա տեսնելով գրված **հարկ, հես, հաջող, հարել** և այլն՝ այդպես ել կարտասանե։ Բառերի պատկերը այս գրութեամբ կատարիլապես փոխվում ե, և յիախոսը վոչ մի միջոց չունի ճանաչելու, թե այդ բառերը նրանք են, վոր ինքը արտասանում եր յ-ով—յետ, յաջող, յարկ և այլն։ Իրավունք ունինք դուրս ձգելու այն գրութեան ձևը (յ-ով), վոր միակ միջոցն ե արտահայտելու լեզվի մեջ գոյութիւն ունեցող հնչյունը։ Մի թե մեզավոր են յիախոսները, վոր հոյախոսները չեն կարող բառասկզբի յ-ն հ-ից ջոկել, և մի՞թե այս պատճառով պիտի տուժե յիախոսների արտասանութիւնը։ Հիմնական որենք ե—յերը լեզվի մեջ գոյութիւն ունի մի հնչյուն՝ անհրաժեշտ և վոր լեզուն ունենա նաև միջոց այդ հնչյունն արտահայտելու։ Այդ միջոցը յեթե չլիներ՝ պետք կլիներ նրան ստեղծել. իսկ յերբ մենք արդեն իսկ գոյութիւն ունեցող միջոցը մեջ տեղից վերացնում ենք՝ նշանակում ե կռիվ ենք հայտարարում հենց այդ հնչյունի դեմ, նրան հալածում ենք։ Թույլատրելի չե լեզվի այբուբենից դուրս ձգել մի գրութիւն, վոր միակ արտահայտիչն ե գոյութիւն ունեցող հնչյունի։ Կարելի չե բռնադատել յիախոսին գիտակցաբար սխալ գրել մի շարք բառեր, տեղիք տալով յերկիմաստութիւնների և անորոշութեան, և արգելել գործածել ուղիղ գրութիւնը՝ ազատ յերկիմաստութիւնից և անորոշութիւնից։ Նոր ուղղագրութիւնը թազում ե յ տառն՝ իրրև արտահայտիչ նուրբ հագագի հնչյունի, մինչդեռ այդ հնչյունը մեռած չե, այլ կենդանի և բոլորովին այլ ճանապարհ ունի զարգացման քան հ-ի փոխվելը։

Բանն այն ե, վոր յ-ով գրութիւնն ըստ յիախոսների հնչման ավելի որինապատշաճ և նպատակահարմար ե, քանի վոր համապատասխան ե յ հնչյունի եվոլյուցիոն զարգացման ընթացքին, վոր, ինչպես վերը հիշեցի, գնում ե դեպի այս հնչյունի անհետացումը։ Յեթե մինչև այժ բազմաթիվ բառեր կորցրել են սկզբի յ-ին—և այս ե ընդհանուր լեզվի աենդենցը—նրանից ե, վոր այդ բառերը սկսել են հետզհետե արտասանվել յիախոսների այժմյան հնչյունով, թեթե հագագով, վորից արդեն մի քայլ ե մնում մինչև անհետացումը։ **Յաճկարծ, յօճի** և այլն բառերն իրանց սկզբի յ-ն կկորցնեն յիախոսների բերանում, այն-ինչ յեթե դրանց առաջին հնչյունը թավանալ և նրանք սկսեն արտասանել **հաճկարծ, հօճի**՝ այս ձևերն այս հնչյուններով կարմատանան, և յ հնչյունի անդրագույն եվոլյուցիան այս կետի վրա կանգ կառնե։

Մի ուրիշ հանգամանք ել կա, վոր ցանկալի չե դարձնում յ-ով գրութեան պահպանութիւնը։ Ինչպես հայտնի չե՝ մեր հին լեզվի նախդիրները, այս ամենապիտանի գործիքները, զանազան հանգամանքների շնորհիվ գործածութիւնից դուրս են ընկել, և այժմ մնալն, նոր գրականութեան զարգանալու չափով, նրանց կարիքն ուժգին կերպով զգացվում ե, վորի շնորհիվ այդ նախդիրները հետզհետե նորից կենդանանում են և կարևոր դեր կատարում խոսքի շինվածքի մեջ։ Այս նախդիրներից մեկն ե ի և յուր սըղմված ձևը յ, վորով և կազմվում են այժմ գոյութիւն ունեցող յ-ով սկսվող բառերի զգալի մասը (յ+արգ, յ+արութիւն, յ+անկարծ, յ+աջողել և այլն)։ Այժմյան գրական լեզվի մեջ յ-ին իրրև նախդիր արդեն բավական գործա-

ծուքյուն ունի, վոր և ցանկալի է հետզհետե զարգացնել. (յանսպատրաստից, յանզգաստից, յամենայն դեպս, ի դեպ և յանդեպ, յուրախութիւն բոլորիս, յօգուտ և ի շնաս, ի լրումն և չերագործումն հրամանի և այլն): Յեթե ըստ նոր ուղղագրութեան սկզբնական յ-ն փոխարինվի հ-ով՝ ապա այս վերակենդանացող յ նախդիրը կվեռնի, նրա անդրագույն զարգացումը կանգ կառնի, վորովհետև վոչ վոքի մտքով էլ չի անցնի հ-ն գործածել իբրև նախդիր:

Նույն-իսկ հոյակոսների համար մասամբ նպատակահարմար է յ-ով գրութիյունը, վորովհետև նրանք թեպետ այսպիսի բառերը հ-ով են արտասանում, բայց գոնե գրութեան մեջ, յ-ի շնորհիվ, ճիշտ են հասկանում բառի նշանակութիյունը և խոսքի չերկդիմութիյունից խուսափում: Որինակ. ինչ կարելի չե հասկանալ այսպիսի մի խոսքից, հ-ով գրութեան դեպքում.—«խոսող մեքենաներ կային արդեն, բայց այսպիսի հաչող մեքենա դեռ չկար». արդյոք խոսքը նոր հորինված կատարելագործված խոսող մեքենայի մասին է, թե մի նոր՝ շան նման հաչող մեքենայի մասին. կամ թե—«Այնտեղ տարից տարի հարկ հարկի վրայ է ավելանում, այստեղ՝ հարկ հարկի վրայ», վորտեղ շինութիյունների հարկերի մասին է խոսքը և վորտեղ տուրքերի—վոչ վոք չի կարող ասել: Ուրեմն ամբողջ հարցը սահմանափակվում է մի 50—60 բառի ուղղագրութիյուն հիշելու մեջ (տես Առաջարկութիյունների մեջ): Կարծում եմ, ավելի նպատակահարմար և այնքան բառ սովորելն ու հիշելը (վորի համար կան մանկավարժական հարմար միջոցներ), քան ձեռք տալ ավանդական ուղղագրութեան, առաջ բերելով այն անտեղութիյունները, վոր վերը հիշեցի: Նոր ժուժվող վորևե ուղղագրութիյուն պետք է անպայման առավելութիյուններ ունենա, և նորանոր անտեղութիյուններ, ուրեմն և ընդդիմութիյուն, չհարուցանե: Լավ է պահել ավանդական, թեկուզ մասամբ պակասավոր ուղղագրութիյունը, քան մտցնել նոր՝ նույնքան, գուցե և ավելի պակասավոր ուղղագրութիյուն:

Մինչև այստեղ չես խոսեցի նոր ուղղագրութեան այն կետերի մասին, վորոնք իմ կարծիքով անընդունելի չեն վերը բերված պատճառներով: Բայց նոր ուղղագրութիյունը պարունակում է և այլ կետեր, վորոնք անպայման նպատակահարմար են, այսինքն գրութեան մեջ մտցնում են հեշտութիյուն, առանց նոր բարդութիյուններ կամ թյուրիմացութիյուններ առաջ բերելու, ուստի և ընդունելի պետք է համարվեն:

Այս կետերն են—

1—2. Բառերի մեջ, վորտեղ դժվար է զանազանել ո և օ, ե և է տառերի նուրբ տարբերութիյունը՝ գրութիյունը հեշտացնելու համար մտածել միորինակ գրութիյուն, կամ ամեն տեղ է, օ, կամ ամեն տեղ ե, ո: Վերջին գրութիյունը (ե, ո) գերադասելի չե այն պատճառով, վոր բառամիջի է-ով օ-ով գրութիյուններ քիչ են պատահում, ուրեմն այսպիսի է-ն ե-ի և օ-ն ո-ի վերածելիս քիչ բառերի պատկերներ կփոխվեն, այն-ինչ, հակառակ դեպքում, հարկ կլիներ հազարավոր բառերի պատկերները փոխել, վոր նպատակահարմար չե, ինչպես ճիշտ է նկատել և Մ. Աբեղյանը:—Իսկ վորտեղ բառերի մեջ կամ վերջում պարզ զանազանվում են է և ե հնչյունները՝ պահել ավանդական ուղղագրութիյունը:

3. Բառերի վերջի անձայն յ-ն դեն ձգել: Սա այնքան պարզ բան է վոր պաշտպանութեան կարոտ չե:—Սրա հետ միասին կարելի չե դուրս ձգել ա+ի հնչյունների միջի յ տառը: Յեթե մինչև այժմ գրում ելինք **ծառա, ծառայի**՝ սեռականի յ-ն արդարանում եր բառի հիմնական ձևի յ-ով: Բայց յերբ գրելու չենք այսուհետև **ծառա**՝ ապա յ-ն այլևս կորցնում է յուր քերականական raison d'être-ը, և քերականորեն ավելի ճիշտ կլինի գրել **ծառաի**, նմանութեամբ բանակ+ի, գայլ+ի և այլն: Այս բառերի հոգնակիում վաղուց արդեն դուրս է ընկել յ-ն, վորովհետև ասում ենք և գրում ենք ծառա-ներ, տչա-ներ և այլն:

Այն առարկութիյունը, թե **ծառաի** ձևում լսվում է յ (ծառա+յ+ի)՝ արժեք չունի. վորովհետև դա հորանջը վերացնելու հնչյուն է, վոր վոմանց արտասանութեան մեջ կա և վոմանց՝ չկա, և ով վոր սովորել է այդ բառերը յ-ով արտասանել՝ այնպես էլ կարտասանե, անկախ նրանից, թե յ կա թե չկա: Այսպես (առանց յ-ի) յերկար ժամանակ տպվում եր Մ. Փորթուգալյանի «Արմենիա» թերթը (Ամերիկաի, Անգլիաի և այլն): Նույն կանոնը կարելի չե տարածել առհասարակ ա+ի զուգադրութեան վրա նաև բոլոր դեպքերում, և գրել ազգաին, գնաի, Գերմանիաի և այլն: **Բոպէի, բազէից** և այլն գրում ենք առանց յ-ի, թեպետ նույն հորանջը կա:

4—5. վ-ահնչյուն ու և ւ գրութիյունները բառերի մեջ և վերջում փոխարինել **վ**-ով.—յոդված, նվեր, ավազ, նավ, թիվ և այլն: Այս բարեփոխութեան մասին մանրամասն գրել եմ «Մի հնչյունին մի գիր» բրոշյուրում 1910 թվին և այնուհետև մի շարք հոդվածներում, ուստի և ավելորդ եմ համարում կրկնել:

6. Փակ վանկում գտնվող ույ զուգադրութիյունը, վոր իրրև ույ չե կարդացվում՝ արտասանութեան համաձայն գրել **ույ**: Այս կետի դեմ կա առարկութիյուն, վոր **ույ** գրութիյունը մի տառով յերկարացնում է: Ուստի չես առանձնապես չեմ պնդում ույ գրութեան վրա, այլ հաշտվում եմ նրա հետ:

Իրրև յեզրակացութիյուն այս զեկուցման՝ իմ կողմից գնում եմ հետևյալ առաջարկութիյունները:

Է գիրը պահել և գործածել—

ա) բառասկզբում՝ յերբ լսվում է այս հնչյունը. էգ, էակ, էս, էդ, էդիսոն, էկսպերտ և այլն [1]:

բ). Բառամիջում՝ ձայնավորից առաջ.—բոպէական, բոպէի, պաշտոնէութիւն:

գ). Բառամիջում՝ հետևյալ բառերում—բէր, դէր, գէտ, հէր, մէր, սէր (տարբերելու համար՝ բեր, գեր, գետ, հեր, մեր, սեր բառերից):

դ). Բառավերջում—բոպէ, բազէ, ամսէ-ամիս:

ե). » բայական վերջավորութիյունների մեջ—գրէք, գրեցէ՛ք, գրէի, գրէր, ինչպես և ելական բայերում:

---

1) Վորովհետև է-ով սկսվող շատ բառեր գավառական արտասանութիյամբ Է-ով են արտասանվում (էրկու, էրկննալ և այլն), ուստի սխալագրութիյունը կանխելու համար պետք է հիշել, վոր գրական լեզվում է-ով են սկսվում հետևյալ բառերն ու նրանցից ածանցվածները—է, էգ, էգուց, էժան, էլ, է՜հ, էշ, էջ, էրիկ, էս, էդ, էն:

գ). Բոլոր այլ դեպքերում բառամիջում գրել ե—ագեղ, անեծք, բզեզ...

2. Օ գիրը պահել և գործածել—

ա) բառասկզբում՝ յերբ լսվում և այս հնչյունը—օր, օգուտ, օղ և այլն [1]:

բ) Բառամիջում՝ յերբ բարդության յերկրորդ մասը օ-ով սկսվող բառ է. —բազմօրեայ, անօգուտ և այլն:

գ) Բոլոր այլ դեպքերում բառամիջում և բառավերջում գրել ո—կոշիկ աղոթք, կարո, կառնո:

3. «Վ» հնչյունը բառասկզբում գրել միայն ո գրով, առանց սկզբնաղբի վ-ի—որդի, որ, ողջույն: Վ-ով գրությունը պահել ոտարազգի բառերի համար—վոսփոր, վոգեզ, վոլգա, վորլա...

4. Բառերի մեջ և վերջում «վ» հնչյունն արտահայտել վ գրով, փոխանակ նախկին ու-ով և ւ-ով գրությունների. թվական, խոսվեր, հավ, ազնիվ և այլն: («Եվ» հնչյունի համար բառերի մեջ և վերջում պահել փակագիրը և.—արևելք, տերև, բայց վոչ նաև բառասկզբում, վոչ երոպա, եսբիոս):

5. «Իւ», «եա» հնչյունները գրել այսպես, սովորական ուղղագրությամբ, բայց վոչ յու, յա.—հիւր, կեանք... (Տես ներքևը կետ 11):

6. Փակ վանկում լսվող «ույ» հնչյունը կարելի է գրել ույ, փոխանակ ոյ-ի—բույս, գույն:

6. յ գիրը

ա) դեն ձգել բառասկզբում՝ յերբ չե լսվում. վկա, ծառա, գա, գնա.

բ) բառասկզբում, վորտեղ կարելի է՝ դեն ձգել յ-ն—եսան, առաջ ..[2])

գ. բառասկզբում, յերբ յ-ն ըստ տեղերի արտասանվում և իրրև ի կամ իրրև նուրբ հագագ՝ պահել ավանդական յ-ով գրությունը [3])—յուլա, յարդ...

---

1) Վորովհետև ո-ով սկսվող շատ բառեր գավառական արտասանությամբ օ-ով են արտասանվում (օդորմխ, օչխար և այլն), ուստի սխալագրությունը կանխելու համար պետք է հիշել, վոր գրական լեզվում օ-ով սկսվում են հետևյալ բառերն ու նրանցից ածանցնվածները. —օգնել, օգուտ, օգոստոս, օթի, օթևան, օժանդակ, օձել, օղի, օշարակ, օղ, օձ, օրէնք, օր, օտար, օրօր, օժիտ, օրիորդ, օրհնել, օձիք և օճառ:

2) Ինձ թվում է, թե այժմեն իսկ կարելի է առանց սկզբի յ-ի գրել հետևյալ բառերը, վորից վոչ մի թյուրիմացություն չի ծագի.—ախուռն, ակինթի, ակրի, աճախ, ամոլը, ամպար, այրատ, անգ, անդիմանել, անդուգն, անկարծ, անձն, առնել, անձնել, աչադել, ապավել, աչորդ, ափշտակել, ասմիկ, ավահնութիւն, ավելված, ավերժ, ավերժացնել, արգո, եղեդուկ, եռել, եսան, եա.—ադեմ..., եաո, երիւրել, իսուն, իրավի, ոգոց հանել, օժար, ոխորտալ, օշոռել, օրանջել, ոտնկայս, օրինել, որձանք, ուղարկավոր, ունխ, ուլիս, ունվար, ուշիկ, ուռուխ, ուրան, վորոնցից մի քանիսն ընդունում է և նոր ուղղագրությունը: (Այս դեպքում՝ օ-ով սկսվող բառերի ցանկի մեջ կավելանան օժար, օրանջել, օրինել բառերը): Այսպես և հատուկ անուններից՝ Ակոբ, Օհան, Օսեփ, Ովանես, Արութիւն, Աբեթ, Օնան:

3) Հոյախոսների սխալագրությունը կանխելու համար՝ պետք է հիշել, վոր յ-ով սկսվում են հետևյալ բառերն ու նրանցից ածանցվածները —(վերը բերված բառերի առանց յ-ի գրությունն ընդունվելուց հետո).—յագենալ, յածել, յաղթել, յամառ, յամր, յայտնել, յանցանք, յապաղել, յառել, յատակ, յատել, յատուկ, յար, յարգել, յարդ, յարդարել, յարել, յարկ, յարձակվել, յարմար, յարութիւն, յավետ, յավիտեան, յափրանալ, յեղ, (աչրգել...), յենել, յեսին, յիմար, յիշել, յղփանալ, յղել, յղկել, յղփութիւն, յոբելեան, յոգնակի, յոգնել, յօղ, յօղված, յողդողդ, յոնք, յոռի, յովազ, յովատակ, յոբանջել, յորդ, յորդորել, յուզել, յուլն, յուլա, յուշ, (արաբ ..), յստակ: (Բառերը ջոկված են «Առաջնորդի» ցանկից): Հատուկ անուններից՝ Յիսուս, Յուդա, Յուլիոս, Յուսիկ և այլն:

1) Այս առաջարկությունը մանրամասն պատճառաբանած եմ մի հոդվածում «Մարտակոչ»-ի մեջ (1923. № 252):

դ. Ա-ի ղուդապրության մեջ դուրս ձգել.—վկաի, ազգաին, կաբդաիր:

Անկախ նոր ուղղագրությամբ հարուցված ուղղագրական կետերին վերաբերյալ այս առարկություններից՝ իմ կողմից լրացուցիչ կերպով առաջարկում եմ—

7. Մշակել հատատուն տառադարձություն ֆրանսերեն և ռուսերեն այբուբենների: (Ինչպես արտահայտել Hugo, national, re'volution, Margot. Крылов, Ломоносов և այլն):

8. Մշակել գիտական այբուբեն (համապատասխան միջազգային գիտական այբուբենի)՝ գավառաբարբառները ճշտիվ գրի առնելու համար:

9. Մշակել կանոններ՝ յերբ անհրաժեշտ է ը-ի գործածությունը արձակ խոսքում և տաղաչափության մեջ:

10. Միօրինակ գրություն ընդունել հետևյալ քերականական ձևերի համար—

ա) չի խոսի, չի գնա—չի խոսիլ, չի գնալ.

բ) չի կարող, չի ևնթարկվել—չէ կարող, չէ ևնթարկվել.

գ) մի գրի, մի գրիր—մի գրիլ, մի գրեր.

դ) կխոսեմ, կայրեմ—կը խոսեմ, կ'այրեմ.

յե) չխոսեմ, չայրեմ—չը խոսեմ, չ'այրեմ:

11. Ստեղծել, «և» փակագրի նման, միատառ նշաններ (փակագրեր) «ու», «իւ», «եա» հնչյունների համար [1]):

---

1) Այս առաջարկությունը մանրամասն պատճառաբանած եմ մի հոդվածում «Մարտակոչ»-ի մեջ (1923. № 252):

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ՎՈՐ ԱՐԵԼ ԵՆ ՁՈՐՍ ՋԵԿՈՒՅՈՂՆԵՐ

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, ԱՍ. ԽԱՉԱՏՐՅԱՆ. ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆ ՅԵՎ ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

	Կողմնակից	Հակառակ
I. ՅԵՎՐՈՊ. e ՀՆՉՈՒՄԸ		
1. Բառասկզբում գրել է և վոչ թե ե, ինչպես՝ էգ, էութիւն, էդիսոն, էքսպերտ.	չորս էլ	
2. Բառի մեջ ձայնավորից առաջ գրել է և վոչ եյ, ինչպես՝ բոպէական, մարգարէութիւն, բէալական. . . .	Ա.Ճառյան Ղափանցյան Մալխասյան	Խաչատրյան
3. Բառավերջում գրել է, ինչպես՝ մարգարէ, գիտէ	Ա.Ճառյան Ղափանցյան Մալխասյան	Խաչատրյան
4. Բառի մեջ բաղաձայնից առաջ միշտ գրել ե, ինչպես՝ հանդես, հրավեր, սեր, կետ	չորս էլ	
5. Բայական թեքման ժամանակ հին է-երը պահել, ինչպես՝ գիտէք, գիտէը, գիտցէք	Ղափանցյան Մալխասյան	Ա.Ճառյան Խաչատրյան
II. ՅԵՎՐՈՊ ye ՀՆՉՈՒՄԸ		
6. Բառասկզբում գրել ե և վոչ թե յե, ինչպես՝ ես, երկու, եզ	չորս էլ	
III. ՅԵՎՐՈՊ. o ՀՆՉՈՒՄԸ		
7. Բառասկզբում գրել օ և վոչ ո, ինչպես՝ օդ, օգուտ, օր	չորս էլ	
8. Բարդութեանց և ածանցմանց մեջ՝ պահելով սուգաբանական ճշտութիւնը գրել օ կամ ո, ինչպես՝ անօգուտ, տնօրինել, միջօրէական, անողոք, անողորմ	Ղափանցյան Մալխասյան	Ա.Ճառյան Խաչատրյան
9. Բառամիջում գրել միշտ ո, ինչպես՝ Ռոդոս, կոշիկ, կոալիցիոն, կոոպերացիա.	չորս էլ	
10. Բառավերջում գրել ո, ինչպես՝ այո, Մկո, Սաքո.	չորս էլ	

IV. ՅԵՎՐՈՊ. ov ՀՆՉՈՒՄԸ		
11. Բառասկզբում գրել ով և վոչ թե ով, այսպես՝ ով, ովկիանոս, ովազիս . .	Ա.Ճառյան	Խաչատրյան Ղափանցյան Մալխասյան
12. Հունական օմեգա տառը արտահայտել ո տառով բառամիջում և օ տառով բառասկզբում և վոչ թե ով, ինչպես՝ Թոմաս, Յոսեփ, Օաննա, Օկիպնոս .	Ղափանցյան	Ա.Ճառյան Ղափանցյան Մալխասյան (համարում են լեզվական խոցիր)
V. ՅԵՎՐՈՊ. vo ՀՆՉՈՒՄԸ		
13. Բառասկզբում գրել ո և վոչ թե վո, ինչպես՝ որդի, որ, որսորդ . . .	Ա.Ճառյան Ղափանցյան Մալխասյան	Խաչատրյան (առաջարկում է վո)
VI. ՅԵՎՐՈՊ. v ՀՆՉՈՒՄԸ		
14. Այսեն դեպքում գրել վ և վոչ թե մերթ ե, մերթ ու, մերթ վ, ինչպես՝ ավազ, ազնիվ, հոդված, նվաստ , . .	չորս էլ	
ԾԱՆՈԹ. և փակագիծ գործածութիւնն ընդունել, արևելք, տերև .	Ա.Ճառյան Խաչատրյան Մալխասյան	Ղափանցյան (բնդունում է միայն և ստորակապի մեջ)
VII. ՅԵՎՐՈՊ. uy (ՈՒՅ) ՀՆՉՈՒՄԸ		
15. Այսեն դեպքում գրել ույ, ինչպես՝ բույս, լույս, կույր, և վոչ թե բոյս, լոյս, կոյր	չորս էլ	
ԾԱՆՈԹ. ույ գրութիւնը կարդալ միշտ oy, ինչպես կոյուղի, գոյական, Նոյ, խոյ		
VIII. Ֆ ԳՐԻ ՄԱՍԻՆ		
16. Յ գիրը բառասկզբում վերածել հ-ի, ինչպես՝ հարմար, հղի, հուլիս . .	Ա.Ճառյան Խաչատրյան	Ղափանցյան Մալխասյան (պահել յ)
17. Բառասկզբում դեն գցել վորտեղ կարելի չե, ինչպես՝ եռ, առաջ, եսան. .	Ղափանցյան Խաչատրյան Մալխասյան	Ա.Ճառյան (համարում է լեզվական)
18. Բառավերջում անձայն յ չգրել, ինչպես՝ վկա, ծառա, պաշտոնեա . . .	չորս էլ	
19. Չգրել ա և ի ձայնավորների միջև, ինչպես՝ վկաի, ազգաին	Խաչատրյան Մալխասյան	Ա.Ճառյան Ղափանցյան
IX. Ի՞Ի		
20. Ի՞ գրութիւնը պահել անփոփոխ, ինչպես՝ միութիւն, գիւղ, թիւրք և վոչ թե՝ միություն, գյուղ, թյուրք . . .	չորս էլ	

X. ԵԱ		
21. Եա գրությունը պահել անփոփոխ, ինչպես՝ կեանք, ժեծուքեան, պաշտոնեա, Մամիկոնեան	չորս եղ	
XI. ԵՕ		
22. Եօ գրությունը վերածել եո, ինչպես՝ եոթը, արդեօք, և վոչ թե՝ յոթը, արդյօք կամ՝ եօթը, արդեօք	չորս եղ	
XII. ՌԱՂԱՋԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ		
28. Յեվրոպական բառերի կրկնակ բաղաձայնները հայերենի մեջ պահել, ինչպես՝ կոլլեկտիվ, ապպարատ, մասսա, կոմմունա	Ղափանցյան	Աճառյան Հեվ Խաչատրյան (համարում են լեզվական)

ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՀԻՆ ՅԵՎ ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ՄԵՋ

Հանձնաժողովը, նախորդ նիստերից մեկում, ինձ վրա պարտք եր դրել քննության առնել՝ թե հին և նոր ուղղագրությունների մեջ ինչ տեղ և քանում խնայողության, տնտեսման խնդիրը՝ և քննության արդյունքը թե վոր կողմն է առավելությունը, փաստական ու թվական տվյալներով ներկայացնել ժողովին. այսոր ահա իմ այս զեկուցումը, հույս ունիմ, բավարար չափով կը պարզի այդ խնդիրը։

Ամենից առաջ յես պետք է ասեմ վոր խնայողության հարցը տարբեր է գրության և տարբեր տպագրության մեջ։ Գրության ընթացքում ամեն մի ավելորդ գիր մեզանից, կարելի յե ասել, միայն **ժամանակ** և խլում. անհատական գործ լինելով, չունի օբյեկտիվ անհարմարություններ, ու նրա գրաված տեղն ել, գրության թղթի վրա, մի առանձին նշանակություն չունի տեխնիկական տեսակետից. մինչդեռ տպագրության գործում ավելորդ շարվելի տառերը վոչ միայն ավելորդ ժամանակ ու ֆիզիքական յեռանդ են պահանջում գրաշարից, այլ և շարվածքի մեջ գրավում են առանձին **տարածություն**։ Գրության ժամանակ մենք յերբեմն սեղմ ենք գրում, յերբեմն լայն, տարածուն, չափ ու ձևի յենթարկվելու ստիպողական պահանջը չունենալով, ինչպես այդ ունեցին միջնադարյան գրիչները. մենք տառերը կպցնում ենք միմյանց և, ժանավանդ արագ գրելիս, մեր գրելու ձևը հասցնում ենք մի տեսակ սղագրության։ Իսկ տպարանական տառերը, ինչպես հայտնի յե, ամենքն իրանց մշտական-ձուլածո չափն ունին և իրենց թանձրությամբ ու ծավալով շարվածքի մեջ տեղավորվելու հատուկ տեղապահանջը, յեթե կարելի յե այսպես արտահայտվել։ Այս կրկնակի հանգամանքներն ինձ իրավունք են տալիս իմ զեկուցման մեջ զբաղվելու մեր ուղղագրությունների միայն տպագրական գործում ունեցած տնտեսման տարբերությունների խնդրով, և, կարծում եմ, Հանձնաժողովի ցանկությունն ել այդ է յեղել։

Նոր ուղղագրության հեղինակը՝ Մ. Աբեղյան, անտես չի արել խնայողության, տնտեսման խնդիրը իր՝ առաջին իսկ զեկուցման մեջ. նա վերցրել է Շիրվանզադեյի «Արտիստ» պատմվածքի տպագրված որինակը (հին ուղղագրությամբ) և նրա առաջին 16 յերեսի շարվածքը համեմատական հաշիվների յենթարկելով ստացել և հետևյալ պատկերը.—

> «Հաշվելով յերեսը 30 տողից և տողը՝ 30 տառից, բարեփոխված ուղղագրությամբ՝ 1) ավելանում են՝ վ տառը (վո փոխանակ ո-ի) թվով 66. յ տառը (յե փոխանակ ե-ի) թվով 89. յ տառը եյի, եյու, յու կապակցություննների մեջ (փոխանակ էի, էու, իւ գրություննների) թվով 50. ու յերկտառը (ու փոխանակ ո-ի, լույս—լույս) թվով

*26. ավելանում է ուրեմն ընդամենը 231 տառ. 2) պակասում են՝ յ, ե տառերը ծառա, յերեկոյան և նման բառերի մեջ, փոխանակ ծառայ, երեկոյեան) թվով 36. ու յերկտառը (զվարթ, փոխանակ զուարթ և այլն գրութիւնների մեջ) թվով 65. ընդամենը 101 տառ: Ավելացրած տառերի թվից հանելով պակասած տառերի թիվը, 231—101=130, ավելանում է ուրեմն, ընդամենը 130 տառ, ուրեմն $4^1/_2$ տող 16 յերեսի մեջ: Այսպես հին ուղղագրութեամբ: Իսկ նրանց հաշար, որ զուարթ և նմ. գրում են արդեն մի տառով՝ զվարթ (թվով 65) ավելանում է 195 տառ, ուրեմն, $6^1/_2$ տող 16 յերեսի, որ է՝ 480 տողի մեջ *)»:*

Այսպիսի հաշիվ անելով իր Զեկուցման մեջ հարգելի հեղինակը գալիս է այն յեզրակացութեան, որ «$4^1/_3$ կամ $6^1/_2$ տողի ավելի շարվածքի տընտեսումն այնքան փոքր է ժանկավարժական տնտեսման դիմաց, որ դրա համար պետք չէ կանգ առնել մեր ուղղագրութիւնը բարեփոխելու»:

Զը մտնելով այն խնդիրների մեջ թե «ժանկավարժական տնտեսման դիմաց» տպարանական շարվածքի տնտեսումը մեծ է թե փոքր, ինձ թվում է թե վերևում բերված հաշիվն այնքան էլ խնամքով չի կազմված. Նոր ուղղագրութեամբ պակասող 3 տառերից ու յերկտառը (զուարթ և նման բառերի մեջ) որի թիվը հեղինակը հաշվում է 65, չի կարելի ընդունելի համարել, նախ՝ այն պատճառով, որ յեթե ու-ն պակասում է այդ բառերի մեջ, նրա տեղը բռնում է վ տառը (զվարթ). իսկ այսպիսի վ-երը Աբեղյանի ակտիվի մեջ չեն հաշված, գոնե այդ մասին ինքը հիշատակութիւն չունի. յերկրորդ՝ այսպես կոչված Աղայանի ուղղագրութեամբ, նոր ուղղագրութեան այդպիսի վ-երի տեղ բռնում եր է տառը (զէարթ) որ ավելի բարակ է քան ահագին վ-ն: Պակասող տառերից յերկրորդը ե-ն՝ յերեկոյեան և նման բառերի մեջ (մի՞թե շատ կան այդպիսի բառեր) խիստ հազվադեպ գործածութիւն ունի, և «Արտիստի» վոչ միայն հազվի տասը 16 յերեսում, այլ ամբողջ գրքի մեջ (96 յերես) կա միայն 6 որինակ. «յերեկոյեան» բառը 4 անգամ և «հայեացք» բառը 2 անգամ, այնպես վոչ մի բառ: Մնում է յ տառը որ իրոք նոր ուղղագրութեամբ վերանում է բառավերջերից (ծառա, ապագա): Հայտնի չէ սակայն, որ ԽԲԳ ուղղագրութեամբ էլ բառավերջի յ-ի գործածութիւնը վերացած եր ինչպես հատուկ անուններին, դերանուններին, հրամայական բայերին, այնպես էլ մակբայների և այլ ձևերի գրութեանց միջից. (հիմա, անա, վրա և այլն):

Այժմ չես մի ուրիշ հաշիվ կը բերեմ այստեղ, ավելի ծավալուն և ավելի մանրամասն:

Նախ ծանոթանանք տպարանական այն արճճյա տառերին (շրիֆտ) որոնք տեղափոխութիւններ են կատարում ԽԲԳ և Նոր ուղղագրութիւնների մեջ. տեսնենք նրանց յուրաքանչյուրի թանձրութիւնը (հաստութիւնը) մեկը մյուսի հանդեպ և թե միմյանց տեղ բռնելով ուղղագրութիւններից վերն է դահում տեղի տնտեսման տեսակետից:

1) Ե-ի տեղ յ (կեանք—կյանք). վորովհետև յ տառն ավելի բարակ է քան ե տառը, շահում է Նոր ուղղագրութիւնը.

2) Ու-ի տեղ վ (զուարթ—զվարթ). վ տառը քիչ ավելի բարակ է քան

*) Մ. Աբեղեան.—Զեկուցում հայոց լեզուի ուղղագրութեան ռեֆորմի մասին, Էջմիածին, 1921. եր. 19:

ու տառը կազմող յերկու նշանը միասին, ուրեմն շահում է զարձյալ Նորը. բայց Աղայանի ուղղագրութեան հանդեպ (զէարթ) շահում է վերջինս, ԽԲԳ:

3) Ց-ի տեղ հ. (յատուկ—հատուկ). հ տառն ավելի հաստ է քան յ-ն. շահում է ԽԲԳ:

4) Յերկու ձայնավորի միջև և բառավերջին վ հնչյուն ունեցող բառերի մեջ (աւազ, աւիշ, լաւ, աղնիւ) շահում է ԽԲԳ. ւ ավելի փոքր տառ լինելով ինչպես ասացինք քան վ-ն (ավազ և այլն):

5) Կրավորական բայերի մեջ քիչ շահում է Նոր-ը, յեթե համեմատենք հին ուղղագրութեան շատ հնացած, գրեթե անգործական դարձած ձևի հետ (ինչպես տարբերուում է –տարբերվում է). բայց քանի վոր հին ուղղագրութեան մեջ արդեն վեվականները գրում էին վ-ով (Նոր ուղղագրութեան նման) և հյուճականները ւ-ով (տարբերուում է) ուրեմն դարձյալ վերևի պատճառով, շահում է ԽԲԳ:

Հին և Նոր ուղղագրութիւնների մեջ տառերի թանձրութիւնից կամ բարակութիւնից առաջացող փոփոխութիւնն այնքան մեծ չէ համեմատած այն խոշոր տարբերութեան, վոր առաջ և գալիս այժմյան ուղղագրութեան մեջ բոլորովին նոր տառերի ավելացումով:

Տեսնենք ինչպիսի պատկեր է ստացվում յերկու ուղղագրութիւնների շարվածքի մեջ այդ փոփոխութիւնների կատարումից:

Յես վերցրել եմ «Խորհրդային Հայաստան» լրագրի համարներից մեկը, պատահական, (1926 թ. № 262) և հաշվել թե վոքան տառեր ավելի յեն շարված այնտեղ հին ուղղագրութեան համեմատութեամբ. ավելորդ տառեր են—

յ տառը. (ես, էի, իւր—յես, եյի, յուր)

վ տառը. (ոսկի, որսորդ—վոսկի, վորսորդ)

ւ տառը. (լոյս, բոյս, նոյն—լույս, բույս, նույն)

«Խորհրդային Հայաստանի» մի համարում ըստ Նոր ուղղագրութեան, հին հանդեպ ավելորդ շարված են յ, վ, և ւ տառերը հետևյալ քանակութեամբ—

	Յերես	յ	վ	ւ	Ընդամենը
	առաջին	246	96	17	359
	յերկրորդ	196	140	23	359
	յերրորդ	225	114	36	375
	չորրորդ	177	45	17	239
Ընդամենը	ամբողջ թերթ	844	395	93	1332

Նոր ուղղագրութեամբ պակասել են յ և ե տառեր (բառավերջերում և «յերեկոյ(ե)ան» բառի մեջ, ա. յերեսում 18, բ. 10, գ. 12 և դ. 12, ընդամենը՝ պակասել է 52 տառ. ուրեմն ավելորդ շարվածք 1332 տառերի թվից դուրս գալով այդ 52 տառը, մնում է 1280 ավելորդ շարված տառ:

«Խորհրդային Հայաստանի» մի համարն ունի.

4 յերես
|
յերեսը 7 սյունյակ
|
սյունյակը 140 տող
|
տողը (միջին հաշվով) 27 տառ.

Ուրեմն լրագրի ամբողջ համարն ունի՝

$4 \times 7 = 28$ սյունյակ, $28 \times 140 = 3920$ տող, և կամ

$4 \times 7 \times 140 \times 27 = 105,640$ տառ*).

Այսպիսով կը տեսնենք, որ ավելորդ շարված 1280 տառերը իրենց թիվով կազմում են լրագրի մի համարի ամբողջական շարվածքի (105,640 տառի)՝ $1,22\%$-ը։

Վորովհետև լրագրի ամեն մի տողը, ինչպես ասացինք, միջին հաշվով 27 տառ է, ապա ուրեմն այդ ավելորդ շարված 1280 տառերից կարող էինք ստանալ $1280 : 27 = 47$ տող և 11 տառ. այսինքն ամեն մի համարում կարելի կը լիներ տեղավորել $^1/_2$ սյունյակից ավելի նոր նյութ։ Բանի որ թերթի մի համարն ունի 3920 տող, ուրեմն ավելորդ տառերից մեր շահած 47 տող 11 տառը կազմում են նրա, կլոր թվով ասենք, մի 83-րդ մասը. սրանից հետևում է որ այդ տնտեսությամբ կարելի կը լիներ լրագրի ամեն մի 83 համարից հետո մի ամբողջ համար շարել ձրի, այսինքն տարեկան 3—4 համար։

Այժմ տեսնենք թե վոքրան ավելորդ յեռանդ և խլում գրաշրջներից և ինչքան ծախս անում ամեն որ այդ 1280 տառը։

Գրաշարը 1000 տպանշանը շարում է 1 ժամում, կամ 100-ը 6 րոպեյում։ Ուրեմն մեր 1280 տառը կը շարի 1 ժամ 17 րոպեյում։ Սրբագրության և ցրվածքի համար պիտի ավելացնենք պահանջվող քառորդ ժամանակը, վոր է՝ 19 րոպե, կը լինի ընդամենը 1 ժ. 36 րոպե։

Ամսական աշխատանքի լրիվ որերը (արդեն կիրակիները դուրս յեկած) մենք հաշվում ենք վոչ 26, այլ 25 որ, վորովհետև 4 շաբաթ-որերը դրաշարանոցն աշխատում է 2-ական ժամ պակաս, հավասար աշխատանքի մի լրիվ որվան։ Ուրեմն որականի 1 ժ. 36 րոպեն բազմապատկենք 25-ով, կստանանք ամսական 40 ժամ, վոր ասել է 5 որ։

Այսպիսով լրագրի վարչությունը ամեն ամիս գրաշարանոցին վճարում է 20 ռուբլի այնպիսի աշխատանքի համար, վորի կատարումը անհրաժեշտ չեր։

Տարեկան կստանանք՝

ժամանակի կորուստ 480 ժամ կամ 60 որ, և կամ՝

Դրամի կորուստ՝ (գրաշարի 1 ժամը՝ 50 կ. հաշվելով) 240 ռուբլի։

---

*) Տպարանական գործառնության մեջ բացի տառերից շարվածքի մեջ հաշվում են նաև կետերը և չերևացող շպացնները, շպոնները և այլն. ամեն մի տպանշան, վորոնք գործ չունին մեր խնդրի հետ ուղղագրակ. տեսակետից, նրանք գործ ունին գրաշարի աշխատանքը գնահատելիս. տպական մեջուսա նշանները հաշվում են տառերի 5%-ը. այնպես վոր «Խորհրդ. Հայաստանի» ամեն մի տողը այդպիսի դեպքում կազմվում է 33 տպանշանից։

Ամբողջ լրագրի շարվածքն այսպիսով (մամուլը=40,000 տպանշանից) հավասարվում է մոտ 3 տպագրական մամուլի, ութածալ (in octavo).

Պարզ է ուրեմն վոր գրաշարի 65 որվա աշխատանքը նոր նյութ չի տալիս գրականության ու ընթերցողին այլ տալիս է միայն նոր ուղղագրության հարկը։

Ժամանակի ավելորդ վատնումի այսպիսի խոշոր տարբերության գիտաց մեծ չէ այն տարբերությունը վոր ստացվում է գարձյալ գրաժականի տեսակետից, այն է տպարանում այդ 1280 ավելորդ տառերի ժաշումից և փչացումից։ Այդ քանակի տառերն իրենց ծանրությամբ կշռում են վոչ ավելի քան մի կիլոգրամ. յեթե ընդունենք, վոր նրանք ամեն որ գործածվելուց մի տարի միայն կարող են դիմանալ, ապա այդ տառերի արժեքը կը լինի 10—12 ռուբլի։ Ավելի նվազ արժեք կունենա այս խնդիրը տողատիպ (լինոտիպ) տպագրության անցնելիս։

Կան հաշվեհաններ վոր հաշվում են նաև ավելորդ տառերի հաժար տպարանում գործածվող ներկը (մուր) և տպագր. թուղթը. լրագրի տպագրության համար այդ հաշիվը սխալ է և ավելորդ. տպագրական վորոշ չափի մեջ շրջանակված շարվածքը (ինչպես լրագիրն է իր անխուսափելի ֆորմատով) ներկի և թղթի իր պահանջելի չափն ունի, անկախ թե ինչ ուղղագրությամբ է շարված և ինչ է շարված. չե վոր ավելորդ տառերի բռնած տեղերը սպիտակ չեն մնալու այլ գրավելու են ուրիշ տառեր, մինչև թերթի ֆորմաթը լցվելը. ինչ վերաբերում է գրքերի, բրոշյուրների տպագրության, դա անշուշտ ունի իր նշանակությունը. այնտեղ շարվածքը մի քանի յերես պակաս լինելով, պակաս պահանջելի կը դառնա և տպագր. ներկը և թուղթը։

Յեթե միայն մի լրագրի շարվածքի հաշիվը խնայողության հակառակ մեղ այսպիսի թվեր է տալիս, ապա Հայաստանում նոր ուղղագրության սկզբից մինչև այժմ, ավելի քան 5 տարի, վոքրան լրագիրներ ու գրքեր են տպագրվել ու դեռ տպագրվում են. ել չենք խոսում Միության այլ յերկրներում տպագրված ու տպագրվող հայերեն հրատարակությունների մասին. (Թիֆլիս, Բագու, Մոսկվա և այլն)։

Առնենք որինակի համար Հայաստանի Պետհրատի միայն մի տարվա հրատարակությունները։ Այդ հիմնարկությունը անցյալ 1926 թվին հրատարակել է 185 անուն գիրք, 1506 տպագրակ. մամուլից կազմված։ Ուրեմն, յեթե, ըստ մեր վերին հաշվի, ամեն մի լրագրին այդքան ավելորդ ժամանակ կամ ծախս է արված, այստեղ ել կստացվի նույն հարաբերությունը.—

Բանի վոր լրագրի մի ամբողջ համարի մեջ (վոր մոտ 3 տպագրական մամուլի յև հավասար) ավելորդ շարված է 1208 տառ, ապա ուրեմն գրքի ամեն մի մամուլին հանում է 427. Պետհրատի 1506 մամուլին ընկնում է կլոր թվով 641,000 ավելորդ շարված տառ, վոր նշանակում է ավելի քան 17 տպագրական մամուլ. այսինքն Պետհրատն ամեն տարի կարող եր 272 յերեսանոց մի գիրք հրատարակել ձրի, իր թղթով, վորովհետև գրքերի մեջ ավելորդ տառերը և ավելորդ թուղթ են սպառում։

Ահա թե ինչպիսի պատկեր է ներկայացնում մեր առաջ **ութ և ճոռ** ուղղագրությունների միջև յեղած խնայողության տարբերությունը։

ՋԵԿՈՒՅՑՈՒՄՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԿԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՅԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I

Գիտության և Արվեստի Ինստիտուտի Ուղղագրական Հանձնաժողովին կից կազմված Մանկավարժական Ցենթրահանձնաժողովը իր աշխատանքները սկսել է 1926 թվի նոյեմբերի 28-ից և ունեցել է ընդամենը վեց նիստ, ուր քննության են առնվել Մ. Աբեղյանի նոր ուղղագրական բարեփոխությունների («Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության») բոլոր կետերը, թե ինչ դյուրություններ և դժվարություններ ունի այդ նոր ուղղագրությունը հին հանգեպ տարրական գրագիտության և ուսուցման տեսակետից՝ և թե ինչ նոր առաջարկներ կարելի է անել այդ ուղղությամբ և ինչ պատճառաբանություններով։

1. Ցենթրահանձնաժողովի կազմը.— Ցենթրահանձնաժողովը սկզբում բաղկացած էր 14 հոգուց, սակայն Ցենթրահանձնախումբն իր նոյեմբերի 28-ի նիստում ցանկալի համարեց աշխատանքի հրավիրել դարձյալ 14 հոգու՝ առաջին ասոիճանի շարքային դասատուներից։

Այս 28 հոգին ուղղագրական բարեփոխությունների վերաքննության աշխատանքներին մասնակցել են հետևյալ կերպով.—Նիստերին բոլորովին չեն մասնակցել 4 հոգի. բոլոր վեց նիստերին մասնակցել են վեց հոգի, հինգ նիստի մասնակցել են 4 հոգի, չորս նիստի՝ 3 հոգի, յերեք նիստի՝ 5 հոգի, յերկու նիստի՝ 4 հոգի և մեկական նիստի՝ 2 հոգի։

Առաջին նիստին (նոյեմբերի 28-ին) մասնակցել են Ցենթրահանձնաժողովի անդամներից 10 հոգի. յերկրորդ նիստին (դեկտ. 5-ին) 19 հոգի. յերրորդ նիստին՝ (դեկտ. 12) 20 հոգի, չորրորդ նիստին՝ (դեկտ. 19-ին) 18 հոգի, հինգերորդ նիստին՝ (դեկտ. 26) 12 հոգի և վեցերորդ նիստին՝ (1927 թ. հունվ. 9) 14 հոգի։

2. Ժողովի գբաղմունքները.—Նախքան որևէ կարգի խնդիրներին անցնելը՝ Մանկավարժական Ցենթրահանձնաժողովը իր աշխատանքները կանոնավորելու համար, հենց առաջին նիստում գբաղվել է գուտ կազմակերպչական խնդիրներով. յերկրորդ նիստից (դեկտ. 5) ընտրել է իր նախագահությունը (Նախագահ ընկ. Մ. Տեր-Մարտիրոսյան և քարտուղար՝ Արշակ Մեհրաբյան) և անցել է աշխատանքներին։

Դեկտեմբերի 5-ին գումարած հերթական յերկրորդ նիստում, Մանկավարժական Ցենթրահանձնաժողովը իր աշխատանքները տանելու հաժար գի-

կավարող սկզբունք ընդունեց—ուղղագրական բարեփոխություններն անելիս՝ ինչքան ունենալ մի կողմից՝ ուղղագրության դյուրացումը, մյուս կողմից՝ անել այնպիսի բարեփոխություններ, վորով վարժվողների համար չդժվարանա հին գրականության ընթերցումը։

3. Առաջարկված հոսանքները.—Հենց յերկրորդ նիստից, յերբ ժողովը անցավ իր աշխատանքներին՝ նկատելի յեղան յերեք հոսանքներ, վորից մի հոսանք (յերկու հոգուց բաղկացած) հենց այդ նիստում արեց հետևյալ հայտարարությունը.—«Քանի վոր ուղղագրական բեֆորմն անցկացնելու համար ժողովը հիմք ընդունեց գրական-դպրոցական արտասանությունը, վորը մեր կարծիքով հաստատուն չի և ինչքան չառնվեց Մհսրոբյան շրջանի արտասանությունը, վորը կլիներ միակ տրամաբանականն ու ճշմարիտը, այսուհետ բոլոր վորոշումների ընթացքում մենք կբմնանք ձեռնպահ»։ Այս հայտարարությունից հետո, այդ յերկու ընկերներն իրոք չեզոքացան և համարյա թե վոչ մի ակտիվ մասնակցություն չունեցան մեր աշխատանքներին։

Յերկրորդ հոսանքը, վորը կողմնակից եր Աբեղյանի նոր ուղղագրությանը՝ վոչ մի դիջում չեր ուզում անել ուղղագրական կետերից և սկզբի յերկու ժողովներում նրանցից յերկուսը մեր աշխատանքներին բավական ակտիվ մասնակցություն ցույց տալուց հետո, նախագահությունից և ժողովից անկախ պատճառներով, դադարեցին ժողովներին հաճախելուց։

Յերրորդ հոսանքը, վոր քննադատորեն եր մոտենում Մ. Աբեղյանի նոր ուղղագրական բեֆորմի բոլոր կետերին՝ հիմնական սկզբունք ընդունելով մի կողմից՝ ուղղագրության դյուրացումը և մյուս կողմից՝ անել այնպիսի փոփոխություններ, վորով վարժվողների համար չդժվարանա հին գրականության ընթերցումը՝ իրենց աշխատանքների ընթացքում աշխատում եյին Աբեղյանի ուղղագրական կետերից պաշտպանել ու անցկացնել այն ուղղագրական ձևերը, վորոնք բավարարում և համապատասխանում են վերը առաջադրած նպատակներին և մյուս կողմից, վորոնց ընդունելով՝ չեն փոխվում մեր հին գրականության բառապատկերները. այս աշխատանքի հետ միասին ջանում եյին կյանքի կոչել նախաբեֆորմյան շրջանի այն ուղղագրական ձևերը, վորոնք առանձին դժվարություն չեյին ներկայացնում ուղղագրության ուսուցման տեսակետից մանկավարժական աշխարհում։ Այս հոսանքին պատկանողները, մինչև բոլոր աշխատանքների ավարտումը՝ ակտիվ մասնակցություն ունեցան բոլոր ժողովներում։

II

Ուղղագրական բարեփոխությունների հարցը.—Վորոնք են «Առաջնորդ»-ի այն կետերը, վորոնց առանց վիճաբանության ընդունել է Մանկավարժական Ցենթրահանձնախումբը։

1. ւ տառի փոխանակ վ, յերբ ւ տառն արտասանվում է իբրև վ.—ավազ, ավազ և այլն։

> ՕԱՆՈՒԹ.—«և» նշանագիրն իբրև տպագրության նշան, պահվում է, ինչպես՝ տերեվ կամ տերև, տեվել կամ տևել, բայց տողադարձի ժամանակ պետք է գրել **եվ**.—տերե-վի, տե-վել։ «և» շաղկապը նույնպես պահվում է «և» ձևով. բայց յերբ հարկավոր է ամբողջությամբ գրել կամ շարել, հին «եւ» կամ «եև» ձևերի փոխանակ պետք է գրել **եվ** կամ **Եվ**։ «նաև» բառի նկատմամբ պահպանել նախաբեֆորմյան ուղղագրական ձևը—«նաև»։

2. Ու յերկտառի փոխանակ վ, յերը ու-ն արտասանվում է իբրև վ.— զվարթ, նվեր, պատվեր։

1. ԾԱՆՈԹ.—Յերը ու յերկտառը պահում է պարզ ու ձայնավոր հնչյունը, պետք է թողնել անփոփոխ, ինչպես՝ տիրացուական, յերկուական, վերարկուի, յերը չեն արտասանում կամ չեն ուզում արտասանել իբրև տիրացվական, յերկվական, վերարկվի. նույնպես ոտարազգի անուններն ու բառերը՝ Լուկա, Լուարա, բուրժուա և նմանները։

2. ԾԱՆՈԹ.—Բազաձայն վ հնչյունն ամեն դեպքում արտահայտվում է միայն վ տառով, իսկ ձայնավոր ու հնչյունը՝ միայն ու յերկտառով, վորով և ւ տառն առանձին գործածությունից դուրս է ընկնում և ՚ին է միայն իբրև ու ձայնավոր նշանագրի մի մաս։ Իսկ 2-րդ ծանոթության ՚ին բացած կտորը, վոր առնված է չակերտների մեջ և վերաբերում է ւ-ով ու տառը փոխարինելու խնդրին, ամբողջովին դուրս է ընկնում իբրև ապագային վերաբերող խնդիր։

3. Ո տառի փոխանակ ու, յերը ոյ կապակցությունն արտասանվում է ույ. բույս, լույս, կույս։

1. ԾԱՆՈԹ.—Ոյ կապակցությունը ՚ին է միայն ոյ արտասանության համար, ինչպես՝ խոյ բառի մեջ և։

2. ԾԱՆՈԹ.—Կան բառեր, վորոնց մեջ ոյ կապակցությունն արտասանվում և պարզապես իբրև ու, ինչպես՝ զգույշ, մեղույշ, անույշ, ոյժ և այլն. վոր պետք է գրել պարզաբար՝ զգուշ, մեղուշ, անուշ, ուժ և այլն. ինչպես վոր արդեն գրում ենք՝ պուտ (ծաղիկը), շուտ, խուլ (ուռուցքը), և վոչ ինչպես հին լեզվի մեջ՝ պոյտ, շոյտ, խոյլ։

Այս կետը նույնպես իր յերկու ծանոթություններով անցնում է ժխտական, միայն ժողովականների կողմից ցանկություն և հայտնվում, վոր վորքան կարելի չե Հանձնախումբը հոգ տանի և վերը հիշած բառերի նման՝ շատացնի նրանց թիվը։

III

Ճշգած բացատրությունը.—Ձայների մեծամասնությամբ անցած բանաձևերն իրենց պատճառաբանությամբ։

1. Ո և Օ-ի խճգիրը.—Օ-ն վտարելով մեր այբուբենից և նրան ամեն տեղ փոխարինելով ո-ով, ինչպես առաջարկում է ընկ. Աբեղյանը, մենք մի շարք դժվարությունների արդեն հաղթահարել ենք։ Այս վերջին 3—4 տարիների փորձը ցույց է տվել ուսուցչությանը, վոր այս բնագավառում աշակերտների տետրակներում հսկայական չափերով կրճատվել են տառասխալները. իսկ սա խոշոր նվաճում է մեր դպրոցական գործում, այնպես վոր հետագա աշխատանք չպիտի կատարվի այս խնդրում, մանավանդ վոր, այս առաջարկն ընդունելով՝ ամենևին վեճի նյութ էլ չի կարող դառնալ հին գրականության դժվար ընթերցելու խնդիրը, ուստի պիտի ընդունենք ընկ. Աբեղյանի առաջարկությունը—ո տառի փոխանակ ո ամեն դեպքում, ո տառի անունը պետք է արտասանել և սովորեցնել վոչ թե իբրև յերկտառ վո, այլ իբրև պարզ ո ձայնավոր. բառասկզբում ո տառից առաջ ավելացնել վ տառն ամեն անգամ, յերբ արտասանվում է։

2. Նախգիր յ-երի մասին.—ա) ե և է, բ) եա, եօ և իւ յերկբարբառները։ Այս կետերի նկատմամբ ընկ. Աբեղյանի առաջարկները քննադատելի չեն.—Գիտական հետևությունները թողնելով մի կողմը և մեր առաջ դրված խնդրին մոտենալով զուտ գործնական-մանկավարժական տեսակետից՝ տեսնենք, թե արդյոք վերջին նոր ուղղագրության բարեփոխությունը ե և է-ի նկատմամբ ծառայել է իր առաջադրած նպատակներին։ ե և է-ի նկատմամբ յեղած նոր առաջարկությունը վոչ միայն մեզ կտրել և հին գրականությունից, այլ և նորից. չնորհիվ այս ուղղագրությանն է, վոր չի կարգացվում մեր նոր գրականությունը, մի տեսակ անջրպետ է ստեղծվել գրականությունների միջև։ Մանկավարժական-գործնական տեսակետները խոշոր դեր պիտի խաղան ուղղագրական այս կամ այն բարեփոխությունն անցկացնելիս։ Աբեղյանի առաջ բերած սկզբունքների դեմ կարելի չե չվիճել. սակայն, յերբ նա անցնում է իր գործնական առաջարկներին՝ այստեղ է, վոր մանկավարժությունը կանգնում է նրա առաջ, այստեղ է, վոր առաջ է գալիս հին գրականությունն ընթերցելու կարևոր խնդիրը, վորովհետև նոր ուղղագրությամբ հնի բառապատկերները չափազանց փոխված են։ ՃՃ-երի տարափ տակ ճնշված է մեր դպրոցական-մանկավարժական գործը, մանավանդ վոր այդ յ-երի գործածության մասին չկան նոր ուղղագրական դրական և հատատուն կանոններ, շատ հաճախ նրանք թողնված են համայնականության։ ե և է տառերի ուղղագրության խնդիրն է դրված մեր առաջ. թե ինչ հնչյուն են ունեցել դրանք առաջ, դուցե ճիշտ են այն բոլոր ասածները, ինչ վոր ասում են վերը հիշատակված տառերի մասին մեր լեզվաբանները, բայց այսոր փաստն այն է, վոր մեր ձեռքին յեղած և վերջին 3—4 տարիներ գործագրված նոր ուղղագրությունը, վորը կոչված եր հեշտացնելու գործը և պետք պահելու աշակերտությունը սխալներից, ընդհակառակը, դոնե այս քննագավառում բավական բարդացել ու խճողվել է գործը. սխալները այս առհասնում, վորքան կամենաք։

Մի հնչյունին մի դեր սկզբունքը՝ պաշտամունք չպիտի դառնա մեզ համար և կուրորեն ընդունենք այդ, թեկուզ մանկավարժական աշխարհում կանգնած լինենք խոշոր դժվարությունների առաջ. գործի նպատակահարմարության և ոգտակարության տեսակետից, յերբեմն և մի հնչյունին կարող ենք ընդունել յերկու տառ։ Ահա այս տեսակետից յելնելով՝ նախկին ուղղագրության է տառը պիտի պաշտոնի կոչվի և գրվի միմիայն բառասկզբնեբում, ուր նա արտասանվում է և բարդությունների ժամանակ ա ձայնավորից առաջ, վորպեսզի եա չկարդացվի. Ինացած բոլոր տեղերում՝ թե բառամիջում և թե բառավերջում՝ գրել ամեն տեղ ե։ Վերականգնել նախկին ե և է տառերի հնչյունները։

Այսպես ուրեմն՝ բառասկզբում գրել է տառը, յերբ նա արտասանվում է—էջ, էշ, էակ և այլն։

Բառասկզբում գրել ե, յերթե արտասանվում է. որինակ՝ եթէ, Երևան, Եվրոպա և այլն։

Բառամիջում և բառավերջում գրել ե տառը և հնչիլ է, որինակ՝ խենթ, չենք, թեկուզ, թեպետ և այլն, նույնպես և՝ մարզարե, բազե։

Ոժանդակ բայի խոնարհման ժամանակ ամեն տեղ գրել ե տառը—գրում եմ, գրում ես, գրում է. գրում ենք, գրում եք, գրում են։

Ոժանդակ բայի խոնարհման ժամանակ յ տառը բոլորովին հանել և՛

մեջից, և՛ սկզբից. գնալու եմ, գնալու ես, գնալու է. գնում եմ, գնում ենք, գնում եք։

3. Գալով յերկբարբառներ եա, եօ, իւ-ի ուղղագրության խնդրին՝ մենք թե Աբեղյանի և թե նախարեփորյան ուղղագրական ձևերի մեջ վրոնենք այնպիսի կետեր, վորոնք այսոր արդեն հասունացած խնդիրներ են և վորոնց նկատմամբ մեր լեզուն ունի վորոշ չափով ձևակերպված պատասխաններ. մտցնենք այնպիսի բարեփոխություններ, վոր և՛ հեշտ լինի, և՛ նպատակահարմար, և մեր ընդունած բարեփոխություններով միաժամանակ շատ չնչին փոփոխությունների յենթարկվին նախարեփորյան շրջանի բառապատկերները. ուստի այս տեսակետներից յելնելով՝ ժողովի մեծամասնությունը կանգնում է յերկբարբառների նկատմամբ նախարեփորյան շրջանի ուղղագրական ձևերի վրա—եա, եո, իւ, մի տարբերությամբ միայն, մեր նախկին վորոշումների համաձայն եօ-ի կլոր օ-ն փոխարինելով ո-ի, քանի վոր այս ձևերն ուսուցանելու գործում՝ յերբեք մանկավարժությունը դժվարության առաջ կանգնած չի յեղել և աշակերտներն ամենևին տառասխալներ չեն արել այդ բնագավառում. ինչու՞ ուրեմն բարեփոխության խնդիր առաջ բերել իզուր տեղը չափազանց պարզ ու վորոշ խնդրի նկատմամբ. մանավանդ վոր մեր լեզվում այս յերկբարբառներով գործածվող բազմաթիվ բառեր կան, հաճախակի չեն հանդիպում նրանք, ուստի և բարեփոխություն այս սահմանում՝ նշանակում է զգալի փոփոխություններ մըտցնել մեր բառապատկերների մեջ, վորով չափազանց պիտի դժվարանա հին գրականությունն ընթերցելու խնդիրը։

Ուղղագրությունը պիտի լինի այնպիսին, վոր հայության բոլոր հատվածներին բավարարի և վորի շնորհիվ գրաճանաչության միջոցով հասկանալի դառնանք իրար։ Այսորվա գործնականը մեզ ասում է, վոր մեր գրաճանաչները դժվարանում են կարդալ նախարեփորյան գրականությունը. իսկ մեր սահմանից դուրս գտնված հայության մի խոշոր հատված՝ նոր ուղղագրական բարեփոխությունների շնորհիվ առաջացած բառապատկերների փոփոխման հետևանքով, չի կարդում մեր նոր գրականությունը։ Հոգացողությունն այստեղ մի կողմից կուլտուրական ընդհանուր ճակատ ստեղծելն է, մյուս կողմից՝ ուսուցման և ուղղագրական գործի պարզության ու դյուրությունը—ազատելով մեր դպրոցական մանուկ սերունդը բազմաթիվ քերականական խճողված կանոններով նրանց հիշողությունները ծանրաբեռնելուց։ Յեթե տասնյակ-հարյուրավոր տարիներ դժվարություններ չենք զգացել եա, եո, իւ յերկբարբառները գործադրելիս, կարծում ենք այսուհետև էլ դժվարություններ չենք ունենա։ Այլ խնդիր է, ի հարկե, յեթե ապագայում հասունանա և վորոշ ձևակերպություն ստանա այսոր նոր ուղղագրական բեֆորմի հետ հրապարակ յեկած եա, եո և իւ յերկբարբառների համար մի-մի տառ ունենալու խնդիրը. իհարկե դրանով գործն ավելի պարզված և շահված կլինի, յեթե միմիայն ձևակերպված նոր տառերն իրենց պատկերներով շատ չտարբերվին յեղած յերկտառ գրերից։

4. Ց տառը բառերի վերջում և յերկու ձայնավորների միջև.—բառերի վերջում յ չգրելու խնդիրը հասունացած էր նաև նախարեփորյան շրջանում, այնպես վոր բառերի վերջում անձայն յ տառի դուրս ձգելն առաքություն չի վերցնում, սակայն այս կետին մի ծանոթություն պիտի կըպցնենք, վոր յ-ն վերանում է բառերի վերջում ա և ո ձայնավորներից հետո,

բայց հոլովումների ժամանակ և բարդություններում՝ յ-ն նորից վերականգնվում է. այսպես՝ ծառա, արքա. բայց հոլովելու և բարդության ժամանակ՝ ծառայի, արքայի, ծառայական, արքայական և այլն։

Սակայն ինչպես վարվել ե, ու, ի ձայնավորներից հետո, արդյոք գրե՞լ յ բաթգությունների և հոլովումների ժամանակ, թե՞ վոչ։ Արտասանության խնդիրն առհասարակ շատ անկայուն հիմք է ուղղագրական բեֆորմ առաջադրելու համար և մանկավարժորեն կարող ենք մեծ սխալանքների մեջ ընկնել, յեթե հիմք ընդունենք միայն արտասանությունը. դրանից կստեղծվի վոչ թե կանոնավոր ուղղագրություն, այլ քաոսային, անկայուն մի ուղղագրություն։ ա և ո ձայնավորներից հետո, թե բարդությունների և թե հոլովական ձևերի մեջ վերականգնել յ տառը, այս առաջարկը բանավոր և նպատակահարմար, քանի վոր այդպես է յեղել թե հին ուղղագրության մեջ, այդպես է ասում նաև Աբեղյանը. խնդիրն այստեղ մյուս ձայնավորներից (ե, ու, ի) հետո գրելն է. այստեղ ևս չպետք է գրել յ, վորովհետև գրական-դպրոցական արտասանության մեջ չի լսվում։ Ու-ից և ի-ից հետո Աբեղյանը նույնպես կողմնակից է յ չգրելու, տարբերություն միայն ե-ից հետո լսվելիք յ-ն է, վոր պիտի գրվի ըստ Աբեղյանի։ Սակայն դրանից բավական դժվարություններ են ծագում և ինչպես ի և ու ձայնավորներից հետո մերժում ենք յ-ի գրությունը, նույն ձևով պիտի մերժենք նաև ե-ից հետո, վորովհետև այստեղ ևս չի լսվում. սրան ոգնության է գալիս ժանավանդ մեր լեզվի հատուկ լեզվաբանական որենքը, վոր ա և ո ձայնավորներից հետո առաջներում յեղել է յ և արտասանվել է՝ ծառայ, յերեխայ և այլն, բայց ե, ի, ու ձայնավորներից հետո յ չենք ունեցել. մյուս կողմից խնդրին չեթե մոտենալու լինենք ժողովրդական բարբառների տեսակետից, մեր ժողովուրդն էլ շատ չի սիրում իր խոսակցության մեջ յ-երի հաճախակի գործածությունը. նա շարունակ խուսափել է դրանից.—Արութին, ծառայութին և այլն։ Այսպես ուրեմն յ գրել ա և ո ձայնավորներից հետո, մնացած տեղերում՝ դուրս ձգել և յեթե տեղ-տեղ գանազան գավառաբարբառների ազդեցության տակ յերբեմն լսվում է, կամ ավելի ճիշտը՝ լսեցնել ենք տալիս յ, դա միայն զոռով մտցրած բան է, անբնական է, պետք է վերացնել և գրել առանց յ-ի պաշտոնեական, մարգարեական, վերարկուի, տիրացուի, գյուղացիական, քաղաքացիական և այլն։ Այսպիսի առաջարկով և՛ մեծ չափով պահպանած ենք լինում Աբեղյանի ուղղագրությունը, և՛ բավարարած ենք լինում հին ուղղագրությանը։ Դժվարություն կարող է լինել միայն եա արտասանության նկատմամբ. արդյոք նոր գրաճանաչ յերեխայի ձեռքը տալով պաշտոնեական, մարգարեական ուղղագրական ձևերը՝ կարդալու չե պաշտոնէական, մարգարէական, թե՞ արտասանելու չե վորպես եա և պիտի կարդա՝ պաշտոնյական, մարգարյական։ Այս դժվարությունից խուսափելու համար ժողովի մեծամասնությունն առաջարկում է մի փոքրիկ շտկումն՝ ա ձայնավորից առաջ միայն բարդությունների ժամանակ ընդունել է-ի գրությունը, վորպեսզի յերեխան կարդա պաշտոնէական, մարգարէական։

Այսպես ուրեմն ա և ո ձայնավորներից հետո պահել յ տառի գրությունը, իբրև վերականգնումն հնի և վոչ թե նոր մուծում՝ տղա-տղայի, ծառա-ծառայական, իսկ ե, ի, ու ձայնավորներից հետո՝ չգրել յ տառը, հնումն էլ չի գրվել. իսկ այստեղ հարկ չկա վերականգնելու։

5. Ց տառի փոխանակ ի բառասկզբում, յերբ յ տառն արտասանվում է

իրը հագագային հ հնչյուն—հագենալ, անհագ, համանուն և այլն։ Յեթե այս խնդիրը վճռելու համար ընդունելու լինենք իրրև հիմք գավառաբարբառային արտասանութիւնը, չափազանց խոշոր թյուրիմացութիւնների մեջ կընկնենք, վորովհետև քանի գավառ, այնքան էլ գավառաբարբառ, այնքան էլ արտասանութեան տարբեր ձևեր, ուզենք-չուզենք պիտի ընդունենք գրականը, վորը նույնն է թե՝ Արարատյան բարբառը։

Անշուշտ նոր գրական լեզվի մեջ յ հնչյունը կորցրել է բառասկզբում իր արժեքը, իսկ մի քանի տեղերում դարձել է հ։ «Առաջնորդի» հեղինակ ընկ. Աբեղյանն էլ վորոշակի չի վճռում այս խնդիրը և հաճախ շփոթութեան է մատնում իր առաջարկների մեջ, դրա պատճառն այն է, վոր մեր գրական լեզուն դեռևս իր վերջնական պատասխանը չի տվել յ և հ տառերի արտասանության խնդրին, թեև ի հարկե վորոշ տենդենց նկատվում է յ-երի անհետացման։ Այս խնդիրը բարեփոխութիւնների խմբում ամենառաջադեմ առաջարկներից մեկն է և մեր գրության մեջ ամենից շատ սխալներ պատահում հենց այս բնագավառում. բոլոր յ-ով սկսվող բառեր հենք անգիր անել տալիս մեր աշակերտներին, վոր վարժվեն նրանց ուղղագրությանը. բացի այդ, մեր քերականական դասագրքերի մեջ հատուկ քերականական կանոններով ծանրաբեռնում հենք աշակերտների հիշողությունները։ Յ և հ-ի նկատմամբ Աբեղյանի առաջարկած բարեփոխութիւնը ուղղագրությունը բավական հեշտացրել է և հասել է իր նպատակին. ուստի կանգնելով նրա տեսակետի վրա՝ բառասկզբներում պիտի վերացնենք յ-երի պատկությունը, և այնտեղ, վորտեղ յ արտասանվում է վորպես հ, գրել հ. իսկ այն բառերի մեջ, ուր հնարավոր է բառասկզբի յ-երը դուրս ձգել և դրանից ամենևին շփոթություն առաջ չի գա բառապատկերը ստանալու, դեն ձգել յ-երը։

Այսպես ուրեմն բառասկզբում յ չկա. նրանք փոխարինվում են ե-ի, յերբ յ տառն արտասանվում է իրրև հագագային հ հնչյուն։

Այն բառերում, վորոնց բառասկզբի յ-երը կարելի չի դեն ձգել և բառը չի կորցնում իր նշանակությունը՝ դեն ձգել յ-երը։ Բարդությունների ժամանակ բառերը ճիուռ են իրենց նախկին ուղղագրությամբ։ Միաժամանակ ցանկություն հայտնել, վոր շատացվի այն բառերի թիվը, վորոնց բառասկզբի յ-երը կարելի չե դեն ձգել։

Քաղվածք արձանագրություններից

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՅԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՆՑԱԾ ԲԱՆԱՁԵՎԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

*ՅԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ *)*

Դեկտեմբ. 5.

Հիմնական սկզբունք

Ուղղագրական բարեփոխությունն անելիս՝ ի նկատի ունենալ մի կողմից՝ ուղղագրության դյուրացումը, մյուս կողմից՝ անել այնպիսի փոփոխություններ, վոր սովորողների համար չդժվարանա հին գրականության ընթերցումը։

*) Առաջին նիստը նվիրված է յեղել գուտ կազմակերպչական խնդիրներին։

*1. Ամեն տեղ ո-ին փոխարինել օ ով, բառասկզբում ավելացնելով վ-։ (Շահում է **2** ձայն)։*

*2. Կյանքի կոչել օ-ն բառասկզբում. բառամիջում ամեն տեղ ընդունել ո. վերականգնել նախարեֆորմյան ուղղագրությունը։ (Շահում է **4** ձայն)։*

*3. **Օ** տառի վոխարեն ամեն տեղ ո և ո տառից առաջ բառերի սկզբում ավելացնել անկախուն **վ** տառն ամեն անգամ, յերբ տրտասանվում է։*

*(Շահում է **12** ձայն. մեծամասնությամբ անցած է համարվում այս բառաձևը)։*

(Ժողովին ներկա եյին 19 հոգի)։

ՅԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

Դեկտեմբ. 12

1. Յելնելով Աբեղյանի ուղղագրության հիմնական սկզբունքներից՝ գրել-կարդալու գործը հեշտացնելու խնդրի առթիվ, այսինքն՝ ա) մի տառին՝ մի հնչյուն և մի հնչյունին մի տառ, և բ) յերբ բառերի մեջ կամ բառերի սկզբում ավելացել են նոր հնչյուններ, պետք է գրության էլ ավելացնել դրանց համապատասխան տառերը, պահել Աբեղյանի փոփոխությունները ե-ի և է-ի վերաբերյալ այնպես, ինչպես այն գոյություն ունի «Առաջնորդի» մեջ, վոր բավարարում է թե՛ ժանկավարժական պահանջները, և թե՛ ընդհանրապես համապատասխանում է մեր լեզվի պատմական զարգացմանը և ներկա դրությանը։

*(Շահում է **6** ձայն)։*

2. Գրագիտությունը դյուրությամբ սովորեցնելու միակ միջոցն է յերկրաբառ հնչյունները նշանագրել մի մի տառով։ Այս ձևն ազատում է մեզ նաև ժամանակի, տարածության և եներգիայի ավելորդ վատնումներից, ուստի և առաջարկվում է է և ե հնչյունների համար գործ դնել միայն է նախկին տառը, դուրս թողնելով ե տառը։

Ե՛ հնչյունը մեր լեզվում է հնչյունի մի տատնեորդ տեղն իսկ չի բռնում։ Է տառը պահելով իրը արտահայտիչ է հնչյունի- նա կլինի արտահայտիչը նաև յե հնչյունի. բավական է, վոր նրա գլխին դնենք մի նշանակշռի՝ ապաթարցի նման մի նշան։

*(Շահում է **մի** ձայն)։*

3. Միայն բառի սկզբում թողնել ե տառը, յերբ լսվում է յե. իսկ ճնացած բոլոր դեպքերում յերբ լսվում է է՝ գրել է, թե բառի սկզբում, թե բառի միջում և թե վերջում. բացի այս՝ եյի, նայել և այլն—գրել առանց յ-երի։

*(Շահում է **մի** ձայն)։*

4. Դուրս ձգել է տառը թե բառամիջից, թե բառասկզբից, թե ոժանդակ բայերի միջից և փոխարինել ե տառով. այն բառերը, վորոնք սկսվում են ե տառով՝ վրան դնել ապաթարց նշանը, վոր զանազանվի է-ով սկսվող բառերից։

*(Շահում է **մի** ձայն)։*

5. ա) Բառասկզբում գրել է տառը, յեթե նա արտասանվում է—էջ, էշ, էակ և այլն։

բ) Բառասկզբում գրել ե, յեթե արտասանվում ե. որինակ՝ եթե, երևան։

գ) Բառամիջում և բառավերջում գրել ե տառը և հնչել է—որինակ՝ խենթ, չենք, թեկուզ, նույնպես և մարգարե, բազե և այլն։

դ) Ոժանդակ բայի խոնարհման ժամանակ ամեն տեղ գրել ե տառը—գրում եմ, գրում ես, գրում է. գրում ենք, գրում եք, գրում են։

ե) Ոժանդակ բայի խոնարհման ժամանակ յ տառը բոլորովին հանել և՛ սկզբից, և՛ սկզբից.—գնալու եմ, գնալու ես, գնալու ե. գնում եի, գնում եիր, գնում եր և այլն։

(Այս բանաձևը համարվում ե մեծամասնությամբ անցած, վորովհետև շահում ե **11** *ձայն)։*

Ժողովին ներկա եյին 18 հոգի

«Առաջնորդ»-ի 3, 4, 5, 6 յեվ 7 կետերի բննությունը

1. Մի քանձայն անցնում ե Աբեղյանի առաջարկած ե տառի փոխանակ վ, յերբ ե տառն արտասանվում ե իբրև վ—ավազ, ավագ և այլն։

ԾԱՆՈԹ. «և» նշանագիրը, իբրև սղագրության նշան, պահվում ե, ինչպես՝ տերեվ կամ տերև, տեվել կամ տևել. բայց տողադարձի ժամանակ պետք ե գրել եվ. տերեվի, տե-վել. «և» շաղկապը նույնպես պահվում ե «և» ձևով, բայց յերբ հարկավոր ե ամբողջությամբ գրել կամ շարել հին «եւ» կամ «Եւ» ձևերի փոխարեն պետք ե գրել եվ կամ Եվ. իսկ «նաև» բառն ամբողջ գրությամբ լինում ե «նայեվ»։

Այս բանաձևն անցնում ե միաձայն «նաև» բառը պահպանելով նախարեֆորմյան ուղղագրությամբ՝ «ն ա և»։

2. Ու յերկտառի փոխարեն վ, յերբ ու-ն արտասանվում ե իբրև վ.—աստված, վարթ, նվեր և այլն։

ԾԱՆՈԹ. 1 Յերբ ու յերկտառը պահում ե պարզ ու ձայնավոր հնչյունը, պետք ե թողնել անփոփոխ, ինչպես՝ տիրացուական, յերկուական, վերարկուի, յերբ չեն արտասանվում կամ չեն ուզում արտասանել իբրև տիրացվական, յերկվական, վերարկվի. նույնպես ոտարազգի անուններն ու բառերը՝ Լուիզա, Լուարա, բուրժուա և նմաններդ։

ԾԱՆՈԹ. 2. Բաղաձայն վ հնչյունն ամեն դեպքում արտահայտվում ե վ տառով. իսկ ձայնավոր ու հնչյունը՝ միայն ու յերկտառով, վորով ե տառն առանձին գործածությունից դուրս ե ընկնում և միում ե միայն իբրև ու ձայնավոր նշանագրի մի մաս։

(Այս կետն իր յերկու ծանոթություններով անցնում ե **միաձայն***)։*

3. Ո տառի փոխանակ ու, յերբ ոյ կապակցությունն արտասանվում ե իբր ույ.—լույս, բույս, կույս և այլն։

ԾԱՆՈԹ. 1. Ոյ կապակցությունը միում ե միայն օյ արտասանության հաժար, ինչպես՝ խոյ բառի մեջ ե։

ԾԱՆՈԹ. 2. Կան բառեր, վորոնց մեջ ոյ կապակցությունն արտասանվում ե պարզապես իբրև ու. ինչպես՝ զգույշ, մեղույշ, անույշ, ույժ և այլն, վոր պետք ե գրել պարզարար՝ զգուշ, մեղուշ, անուշ, ուժ և այլն. ինչպես, վոր արդեն գրում ենք՝ պուտ (ծաղիկ), շուտ, խուլ (ուռուցքը), և վոչ ինչպես հին լեզվի մեջ՝ պոյտ, շոյտ, խոյլ։

Այս կետը նույնպես անցնում ե **միաձայն***. ցանկություն ե հայտնվում միայն ժողովականների կողմից, վոր վորքան կարելի յե Հանձնախումբը հոգ տանի՝ վերը հիշած բառերի նման շատացնի նրանց թիվը։*

Ե և Է տառեր

4. ա) Ի նկատի ունենալով, վոր գրական արտասանությունը դեռևս անկայուն ե, վոր ժողովրդական բարբառների մեծագույն մասը յ պարզ հնչյուն առանց ի-ի փոխվելու, վոր ժողովրդի մյուս մասն ել իր բարբառներում յ-ն բոլորովին դուրս ե ձգում և վոչ թե այն փոխարինում ի-ի, ինչպես արհեստական կերպով մտցնում ե Աբեղյանը, առաջարկվում ե՝ այն դեպքերում, յերբ յ-ն նախկին նախդիր ե յեղել, դուրս ձգել (յառաջ—առաջ), վորտեղ ժողովրդական բարբառներում դուրս ե ձգված, դուրս ձգել (յատակ—իատակ, Յարություն—Արություն). իսկ մնացած փոքրաթիվները պահել նույնությամբ, ինչպես եր նախարեֆորմյան շրջանում, մինչև վոր կյանքն ինքը կվճռե նրանց բախտը։

(Այս բանաձևը շահում ե **3** *ձայն)։*

բ) Բառասկզբում յ տառը չկա, նրանք փոխարինվում են ի-ի, յերբ յ տառն արտասանվում ե իբրև հագագային հ հնչյուն։

Այն բառերը, վորոնց բառասկզբի յ տառերը կարելի չե դեն ձգել և բառը չի կորցնում իր նշանակությունը՝ դեն ձգել յ-երը։ Բարդությունների ժամանակ բառերը միում են իրենց նախկին ուղղագրությամբ։ Միաժամանակ ցանկություն հայտնել, վոր շատացվի այն բառերի թիվը, վորոնց բառասկզբի յ տառերը կարելի չե դեն ձգել։

(Այս բանաձևն անցնում ե մեծամասնությամբ և շահում ե **14** *ձայն)։*

5. եա, իւ, եօ յերկբարբառներ.

ա) Թողնել նույնությամբ յերկբարբառների նկատմամբ Աբեղյանի առաջարկած բարեփոխությունը—յա, յու, յո։

(Շահում **7** *ձայն)։*

բ) յա, յո, յու յերկբարբառների հիմնական ձայներն արտահայտել ապաթարցով (ա, ո, ու) վերջին ու-ն ըստ Աբեղյանի վերածելով ւ-ի։

(Շահում ե **մի** *ձայն)։*

գ) Ընդունել յերկբարբառների նախարեֆորմյան ուղղագրական ձևը.—եա, իւ, եո (եօ-ի մեջ միայն օ-ն փոխարինելով ո-ի)։

(Այս բանաձևը համարվեց մեծամասնությամբ անցած. շահել ե **9** *ձայն)։*

Ներկա յեն 12 հոգի. *(քննության են առնվում 8 և 9-րդ կետերը)։*

8 *տառի գործածությունը բառերի վերջում, բառամիջում և ոժանդակ բայերի մեջ։ Առաջարկվում ե յերեք բանաձև.—*

1. Ց պահել յերկու ձայնավորների մեջ, նաև ե-ից և ի-ից հետո բարդված բառերում և հոլովական ձևերում։
(Շահում է 4 ձայն)։

2. Ց թողնել ա և ո ձայնավորներից հետո ա և ո ձայնավորով բարդված բառերում. Ծնացած դեպքերում՝ դուրս ձգել յ տառը։
(Շահում է մի ձայն)։

3. ա և ո ձայնավորներից հետո պահել յ տառի գրությունը, իբրև վերջակետնգնումն հնի և վոչ թե նոր մուծում—աղա-աղայի, հայ-հայի, ծառայ-ծառայական. իսկ ե, ի, ու ձայնավորներից հետո չգրել յ տառը. հնումն էլ չի գրվել, իսկ այսոր էլ հարկ չկա վերականգնելու։
(Ձայների մեծամասնությամբ անցած է համարվում այս բանաձևը։
Շահում է յոթ ձայն)։

ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏ
1927 թ. հունվ. 9

Ներկա յեն 14 հոգի։

(Բոլոր վորոշումների ընթերցումը և ցանկալի շտկումները)։

Բառավերջում և բառամիջում ընդունել ենք ե տառի գրությունը, վորը հնչվելու չի իբր է. բարդվելու ժամանակ կարող և դժվարություն առաջանալ. որինակ՝ մարգարեյական. ինչպես գրել և ինչպես կարդալ. արդյոք եա՞, թե՞ էա. այս և նման դժվարություններից խուսափելու համար առաջարկվում է յերկու բանաձև.—

1. Բառամիջում ա-ից առաջ գրել է, վորպեսզի եա չկարդացվի։
(Շահում է ութ ձայն)։

2. Բոլոր ձայնավորներից առաջ գրել է բարդությունների ժամանակ։
(Շահում է հինգ ձայն)։

Ձայների մեծամասնությամբ անցած և համարվում առաջին բանաձևը, վոր բառամիջում է պիտի գրել միայն ա ձայնավորից առաջ. Ծնացած դեպքերում՝ մեր նախկին վորոշումները Ծնում են իրենց ուժի մեջ։

Մյուս բոլոր վորոշումներն անփոփոխ հաստատվում են։

Նախագահ՝ Մ. ՏԵՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Քարտուղար՝ ԱՐՇ. ՄԵՀՐԱԲՅԱՆ

10 հունվարի
927 թ. Յերևան.

ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՐՑԸ

I

Տարիներից ի վեր խոսվում է հայերին տպագրական տառերին ավելի լավ և կատարելագործված ձև տալու անհրաժեշտության մասին։ Հայաստանի խորհրդայնացումից հետո այս հարցն իր ձեռքն է առել մեր Լուսավորության ժողովրդական Կոմիսարիատը և այսպիսով նա զարձել է մեկը Հայաստանի պետական կարևոր հարցերից։ Մինչև այժմ արվել են շատ փորձեր մասնավոր անհատների և հատուկ այդ նպատակի համար կազմված հանձնաժողովի կողմից, վորոնք ցույց են տալիս թե ընդհանուր առմամբ ինչպես և հասկացվում առաջադրած ռեֆորմի էությունը։

Բոլոր յեղած առաջարկություններից կարելի չի հանել այն յեզրակացությունը, վոր տառային ռեֆորմը պիտի ունենա մանավանդ յերևույթ։ Նկատի առնվում է տպարանական տառերի մի տեսակը միայն, այն, վոր սովորականն է և ամենագործածականը։ Դրանք այն տառերն են, վորոնցով տպվում են գրքերն ու լրագիրները և բաղկացած են հասարակ տառերից և իրանց պատկանող գլխագրերից։ Կան և ուրիշ շատ տեսակի տառեր և գլխատառեր, բայց դրանց մասին հարց չը կա դրված։ Ուրեմն մեր այս զեկուցման մեջ մենք նկատի կառնենք բացառապես առորյա սովորական տառերի (գրքերի և լրագիրների) հարցը։

II

Այս հարցը, չը նայած իր մասնավոր բնավորության, մի քանի նկատառումներով նույն իսկ ավելի կարևոր է քան ուղղագրության հարցը, ամենից առաջ հենց այն պատճառով, վոր տպարանական տառերի ձևափոխությունը կապված է անգլին ծախսերի հետ, վորոնք պիտի դուր կորչեն, յեթե յենթադրված ռեֆորմը չընդունվի հայության մեծամասնության կողմից։ Ձափազանց կարևոր է և հետևյալ հանգամանքը։ Յեթե ուղղագրական ռեֆորմից պահանջվում է և վոր բառերը չը կորցնեն կամ գոնե շատ քիչ կորցնեն իրանց պատկերը, ապա վորքան այս պահանջը պիտի խիստ լինի տպագրական տառերի վերաբերմամբ, վորպեսզի մեր տպագրությունները ընթեռնվի լինեն ընդհանուրի համար։ Յուրաքանչյուր ժողովրդի տառերը կրում են իրանց առանձնահատուկ տեսքը, վոր և կոչվում է բնավորություն (քարաքտեր)։ Այս տարբերություններից չեն խուսափում և մի ընդհանուր վայր-այրուբենից ծագած հատուկ ազգային այրուբենները, որինակ լատիներեն տառերը գերմանացիների ընդգրկած գոթիք ձևով, լեհական այրուբենը, հունգարականը և այլն։ Հայերեն այրուբենն էլ ունի իր շատ ինքնատիպ կերպարանքը, վոր չի կարելի փոխել անճանաչելի դառնալու չափ, առանց ստեղծելու հայոց բազմադարյան դպրության մեջ մի աներևակայելի քաոս։

Այս կարևոր հանգամանքի հետ հաշիվ չեն տեսել մինչև այժմ մեզ բերված առաջարկությունների շատերը։ Կան նրանց մեջ այնպիսիները, որոնք իսկապես անճանաչելի չեն դարձնում հայերին տառերը։ Ռեֆորմ առաջարկողներից վոչ մեկն էլ նկատի չէ առել այն հանգամանքը, որ ներկայումս հայերն ունին գործածության մեջ հարյուրից ավել տեսակ տառեր և յեթե ընդունվի իր առաջարկած նորաձևությունը, այն ժամանակ կերպարանափոխությունների պիտի յենթարկվեն և գործածության մեջ յեղած տառերը, իսկ այս բանը, չը խոսելով ուրիշ անհարմարությունների մասին, կը պահանջե այնպիսի ծախսեր, որոնց չի դիմանալ մեր պետության նման և վոչ մի պետության գանձարան։

Ուղղագրության նվիրված պատմական տեսության մեջ յես ցույց տվի, որ գոյություն ունի ժողովուրդների մեջ ազգային պահպանողական հոգեբանություն, որ դիմադրում է հախուռն նորաձևություններին։ Միևնույնը պիտի մատնանշեմ և տառերի հարցի մեջ։ Այստեղ ամենախոշոր որինակը մեզ տալիս է այն մեծ ազգը, որ տվել և աշխարհին տպագրության սքանչելի գյուտը և որ այսոր էլ ամբողջ աշխարհի ուսուցիչն է տպագրության գործի մեջ, այն է Գերմանիան։ Մեր նորասեր ռեֆորմիստների համար տարորինակ, անհասկանալի պիտի լինի այն փաստը, որ գերմանացին այսոր էլ պինդ կառչած է իր ծուռ ու մուռ, մազալին գծերով բեռնավորված, դժվար ընթեռնելի գոթիկ շրիֆտին և չի ուզում բաժանվել նրանից վոչ գրպրոցում, վոչ գրականության մեջ։ Միանգամայն անխորհուրդ մի հնաժոլություն—գուցե այսպես վորակեն մեր ռեֆորմիստները. բայց գերմանացու համար, ի հարկե, այս այսպես չե։

Այս թռուցիկ ակնարկն էլ բավական է, կարծում ենք, որ պարզե թե ինչ պահանջով պիտի մոտենանք մենք տառերի ռեֆորմին։ Գլխավոր ու անժխտելի պահանջն այն է, որ մենք չը կորցնենք մեր տառերի պատկերը, որ մեր ռեֆորմը չը լինի և վոչ մի դեպքում ձևափոխություն։

Ձևը, պատկերը, ևյությունը չենք փոխում։ Բայց այս չե նշանակում թե անելու բան այլ ևս չունինք։ Վոչ, կա մյուս խոշոր պահանջը—բարելավել ձևերը, գեղեցկացնել, նրբություններով և կատարելագործություններով ճոխացնել և բազմապիսացնել նրանց։ Այս, սակայն, վոչ նոր պահանջ է, վոչ էլ հատուկ հայկական։ Այս մի համամարդ պահանջ է բոլոր ժամանակների և ազգերի համար, մի պահանջ, որ կապված է տպագրական արվեստի հետ Գուտտենբերգի որից և միշտ կա ու գոյություն ունի և գնալով վոչ թե պակասում է և թուլանում, այլ մեծանում է և անհունապես բազմակողմանի դառնում։

Հայկական տպագրության պատմությունն էլ ունի իր մեջ այդ պահանջի կատարումը պատկերացնող փայլուն էջեր։ Մենք անցյալում շատ գեղեցիկ և շատ խոշոր աշխատանք ենք կատարել այդ ուղղությամբ։ Այժմ մենք պիտի շարունակենք այդ աշխատանքը։ Բայց շարունակել կարող ենք լավագույն այն դեպքում, յերբ իմանանք թե ինչ է յեղել, ինչ է կատարվել, յերբ, այսպիսով, կյուրացնենք տպարանական արվեստի այն նուրբ ճյուղը, որ կոչվում է տառագիտություն։

III

Բայց նախ և առաջ մի շատ կարևոր հարց։ Ո՞վ պիտի իրագործե տառերի բարելավման պահանջը։

Սովորաբար կարծվում է վոր տառերի գեղեցկացման և կատարելագործման կարելի յե հասնել նկարիչների միջոցով։ Այստեղ կա մի խոշոր անճշտություն։ Նկարչությունն, ի հարկե, մեծ տեղ ունի ամեն մի բանի մեջ, վոր պահանջում է գեղեցկություն, նրբություն, ճաշակ։ Բայց այս չե նշանակում թե յուրաքանչյուր, անգամ տաղանդավոր, նկարիչ վարպետ է տպարանական տառերի գիտության մեջ։ Այստեղ խոսքը պատկանում է մասնագիտորեն պատրաստված գծագրողին և փորագրողին։ Ստեղծագործական աշխատանք տառագիտության մեջ կարող են մտցնել այդ համեստ և հաճարյա միշտ անհայտ մնացող գործիչները, որոնց միջավայրն է ձուլարանը։ Այստեղ են պատրաստվում հարյուր ու մի ձևեր ու նորություններ, որոնք և տեղ են նվաճում տպագրական աշխարհում։

Մի որինակ։ Յեթե 1860-ական թվականների սկզբից ռուսական տառերն ընդունում են նոր, գեղեցիկ ու բազմատեսակ ձևեր, այդ այն պատճառով չէր վոր Ռուսաստանն ուներ շատ քանքարավոր նկարիչներ։ Այդ մեծ ռեֆորմը Ռուսաստան մտցնողը և նրան ամեն անկյուն տարածողը յեղել է Փլինչի ձուլարանը Ֆրանկֆուրտում (Մայնի վրա)։ Յեվ առհասարակ կարելի յե ասել վոր Ռուսաստանի ամբողջ ձուլարանական գործը գտնվել է, և այժմ էլ գտնվում է, գերմանացիների ձեռքում։

Չափազանց նշանակալից բովանդակություն և ստանում այս պատմական իրողությունը, յերբ հարցը գալիս և այն միջոցներին ու հնարավորություններին, վոր կարող է ունենալ Ծորհրդային Հայաստանն իր ընդունած բարելավության ռեֆորմն իրագործելու համար։

Հայերն ահա 400 տարուց ավելի յե, վոր ունին սեփական տպագրություն, բայց այդքան ժամանակի ընթացքում միայն մի հատ մասնագետ փորագրիչ և ձուլող—Մյուհենտիսյանը Կ. Պոլսում։ Մնացած բոլոր դեպքերում յեվրոպացիներն են յեղել, վոր հայերեն տառեր են գծագրել ու փորագրել։ 17—18-րդ դարերում հայ վաճառականներն էլին, վոր տառեր էլին պատրաստել տվել հոլանդացի, իտալացի և այլ ազգությունների պատկանող փորագրիչներին։ Մենք ունինք, ինչպես կը տեսնենք շուտով, և այնպիսի մի դեպք, յերբ տառերի գծագրումը կատարում է մի հայ, բայց չե կարողանում արդյունավորել այդ գործն առանց ֆրանսիացի մասնագետների աշխատակցության։

Հետևում է այս բոլորից, վոր հայ նկարիչները, վորքան և տաղանդավոր լինեն նրանք, չեն կարող, յեթե, ի հարկե, մասնագիտորեն չեն ուսումնասիրել ընդհանուր և հայկական տառագիտությունը ձուլարանական արվեստի տեսակետից, բավարարություն տալ տառերի ռեֆորմի պահանջներին։ Ապա, ուրեմն, պետք է մասնագետ գծագրողների և տպագրողների փորձն մասնակցություն։

IV

Հայկական տպագրությունը հաստատվում եր, 16-րդ դարի սկզբից, Յեվրոպայում, հայկական միջավայրից շատ հեռու։ Հայերեն տպարան նշանակում եր հայերեն տառեր։ Տպարանական մարդիկ, հոգևորականներ և

վաճառականներ տառեր եկին ձուլել տալիս յեվրոպացի վարպետներին, տպագրություններ եկին անում։ Յեվրոպացի վարպետը հայ տառերի պատկերը պիտի վերցներ հայերեն ձեռագիր գրքերից, որոնց մեջ տիրապետողը բոլորագիր ասված գրության ձևն եր։ Յեվ փորագրված տառերը, բնականաբար, պիտի այն պատկերը կրեին, ինչ տալիս եկին ձեռագրերը։ Առաջին տպագրությունները, որոնք լույս տեսան 1512 – 1513 թվականներին, գրեթե մշակման և բարելավման վոչ մի հետք չեն կրում։ Ձեռագրի և տպագրի մեջ տարբերությունը շատ թույլ է, այնպես վոր այսոր տպագրներ կան, որոնք ձեռագիր են համարվել յերկար ժամանակ և պահվել են ձեռագրների հետ։ Տառերն ընդհանրապես տձև եկին, կոշտ ու կոպիտ, հետևաբար և տպագրական արվեստը շատ անկատար և նախնական։

Բայց հետզհետե անհարթությունները շտկվում են, տպագրական տեխնիկան զարգանում է հանդիսանում. 17-րդ դարի կեսից մենք արդեն ունենք տպարանական տառերի վորոշ և հաստատուն պատկեր, վոր այնուհետև մնում է անշարժ յերկար ժամանակով և տարածվում է ամեն տեղ։ Որինակ, իհարկե, դարձյալ ձեռագրերի բոլորագիրն է, վոր անտաղարտ է պահում իր գծագրական բոլոր մանրամասնությունները և այսպիսով մի շարք պահանջներ է անում տպագրական արվեստին, պահանջներ, վորոնց բավարարություն տալու համար տպագրական տեխնիկան պիտի կոմֆնակի շատ բաներ ավելացներ, իրրև հայերեն տառերի անհրաժեշտ և անխուսափելի սեփականություն։

Ահա թե ինչպես։

Հայերեն տառերից յոթը հատ — գ, ս, պ, շ, չ, ջ և վ, պոչավոր են։ Այդ պոչերից նրանց զրկել անհնարին եր համարվում, և վորովհետև պոչերը չեին թողնում վոր վերևից հերքն իջնող տառերը կանգնեն իրանց յետևում, ուստի բացի սովորական 39 տառերից, ձուլվում եկին և քսան հատ կարճ տառեր — բ, դ, զ, թ, խ, լ, խ, կ, ղ, յ, շ, չ, պ, ջ, վ, ր, ց, փ, ք, վորոնք կոչվում եկին ծ ո ց ա գ ր ե ր կամ ծ ո ց ա տ ա ռ ե ր, վորպեսզի նրանք, առանց պոչավոր տառերի պոչերին ձեռ տալու, մտնեն նրանց ծոցը և այդպես հաշնգիստ կանգնեկին շարքի մեջ։

Հետո գալիս եր մ տառի հարցը։ Նրա քիթը, վոր յերկարում և դուրս եր գալիս տառի մարմնից, շարունակ կոտրվում եր, յերբ նրանից հետո մեկնույն բառի մեջ գալիս եկին տողի վերևի մասին հասնող տառեր։ Յեվ ահա մ-ի կնճիթը կոտրվելուց ազատելու համար կազմում եկին 6 հատ ջուխտակ ձուլված տառեր — մե, մէ, մթ, մի, մխ, մկ։

«ն» տառն էլ իր պահանջն եր անում «մ» և «վ» տառերի կոպքին կանգնելու համար, ուստի նրան էլ միացնում եկին այդ տառերի հետ և ստացվում եկին նորից յերկու միացյալ տառեր — յերկվորակներ — «մն» և «վն»։ Մի քանի տառերի մեջ «ճ» միացվում եր և «ն»-ի հետ, դառնում եր «ճն»։

Յեվ ահա հայերեն տպագրական այբուբենը դառնում եր բաղկացած 68 հասարակ տառերից։ Յեթե ավելացնենք սրա վրա և 38 գլխագիր, կը ստանանք 116 տառեր։ Բացի դրանից, պետք է հաշվել մինչև 55 հատ զանազան նշաններ (պատիվ անունով նշանը կրող տառեր, փակագրեր, կետադրական և առոգանական նշաններ) և այն ժամանակ կը ստանանք մի գրաշարական արկղ, վոր պիտի ունենար 171 խորշեր... Հասկանալի յե թե

վորքան թանգ պիտի նստեկին հայերեն տառերը և վորքան պիտի թանգացնեկին տպագրությունը։

Այս հանգամանքն, անշուշտ, պակաս ազդեցություն չե արել այն յերևույթի վրա, վոր 16-րդ դարից մինչև 19-դի կեսն առհասարակ չափազանց աղքատ են մեր տառերը բազմատեսակության կողմից։ Գրեթե միայն յերկու տեսակ մեծություն ունին — 12 և 10 աստիճանի, շատ հազվագյուտ և 16 աստիճանը։ Բայց ավելի ևս շատ և աչքի ընկնում գլխատառերի աղքատությունը։ Նրանք միայն յերկու տեսակ գծագրություն ունեն. 12 աստիճանի և նրանից բարձր աստիճանների գլխագրերն աչքի յեն ընկնում իրանց տձևությամբ։ Նրանք բաղկացած են իրարից կտրված մասնիկներից, այնպես վոր, որինակ, Զ գլխագիրը չորս տառանձին կտորներ ուներ։ Այդ բառերի խոշորությունը տգեղացնում եր տպագրությանը, և վորովհետև նրանք տարբերվում եկին վոչ թե ձևերի պեսպեսությամբ, այլ միմիայն աստիճանների մեծությամբ, ուստի շատ մեծրինակ և անճաշակ տպավորություն եկին թողնում։

Ներկայումս այս հին տեսակ տառերը պահել են իրանց գոյությունը միայն Վիեննայի Մխիթարյանների տպարանում, ուր այսոր էլ կարելի յե նրանց տեսնել գործածվելիս «Հանդես Ամսորյա» ամսագրի մեջ։ Վանքի այս համառ հնապաշտությունը այսոր էլ մեծամեծ թյուրիմացություններ և պատճառում հայերեն տառերով հետաքրքրվողներին, կարծել տալով նրանց թե մենք տակավին ապրում ենք ծոցատառերի ժամանակները, մինչդեռ նրանք վաղուց են անցել։

•

Անիրատ և տառատեսակ բաներ են և չեն իրի պատմական վերաբերմունքը։ Շատ անգամ ես ուրախացել եմ, երբ մի վիճակագրի կամ տնտեսագետի գրքում տեսել եմ, թե ինչքան ժամանակ և ինչքան աշխատանք է պահանջվել մի տառատեսակ ստեղծելու համար։ Շատ անգամ ես ափսոսացել եմ, որ մեր գրքերում չկան տառատեսակների մասին տեղեկություններ։

1. Վիեննայի Մխիթարյան տառեր։ — Ձեռքում են ծոցագրերը, հին ձևի գլխագրերը։

Իսկ 19 աստիճանի տառերի գլխագրերը տարբերվում եկին նախորդից նրանով, վոր նրանք կտորտանքներից չեկին կազմված, այլ այդ անչատ կտորտանքները միացված եկին իրար հետ գծերով։

Այս եր ահա այն տպագրական գույքը, վոր մենք ունեկինք գրեթե $3^1/_2$ դարերի ընթացքում։ Շատ փոքր ու շատ աղքատ եր այդ գույքը՝ համեմատությամբ այն բազմազան ճոխությունների, վոր ունեկին յեվրոպական ազգերը։ Մեր գրքերը թեև մեծագույն մասամբ տպվում եկին Յեվրոպայում (Վենետիկ, Վիեննա), բայց մեր տառերը ներկայացնում եկին մի շատ հետամնաց մշակույթ։

V

Բայց հայ տպագրական տառապիտությունն էլ ունեցավ վերածնության վոսկեդար։ Յերկու անձնավորություններ եկին, տարբեր դիրքերի և ընդունակությունների տեր մարդիկ, վորոնց հայկական մշակույթը պարտական է

այդ վոսկեգործը.—մեկը մի Մխիթարյան վարդապետ, Դաբրիել Այվազովսկի, մյուսը՝ մի հասարակ արհեստավոր, Ճանիկ Արամյան, Թյուրքիայի Նիկոմեդիա քաղաքից։ Վոսկեգործի հիմնադիրն ու հոգին Այվազովսկին եր, հռչակավոր ծովանկարիչ Այվազովսկու յղբայրը, վոր նույնպես ժառանգել եր գեղարվեստագետի տաղանդ, բայց բացառապես գծագրական արվեստի մեջ և այդ տաղանդը նվիրեց հայերեն տառերի գեղեցկացման մեծ և արդյունավոր գործին։

Վերածնության սկիզբը Այվազովսկին դնում եր Վենետիկում 1840-ական թվականներին, յերբ նա կազմում եր բազմաթիվ քարտեզներից բաղկացած աշխարհագրական Առլասը, մի հոյակապ գեղարվեստական գործ, վորի նմանը մինչև այսոր չե յեղել հայերի մեջ։ Քարտեզները ծածկող աշխարհագրական անունները ներկայացնում են բազմատեսակ տառանմուշներ, վորոնք առաջին անգամն եյին յերևան գալիս մեզանում և վորոնց ձևերը (մանավանդ գլխագրերը) այնուհետև տիրապետող են հանդիսանում մեր մեջ։

1850-ական թվականներին Այվազովսկին, Մուրադյան վարժարանի վարիչի պաշտոնով, հաստատվում է Փարիզում, ուր այդ ժամանակ ապրում եր Ճանիկ Արամյանը։ Սա արհեստով դերձակ եր, բայց թողնում է այդ արհեստը և յեռանդով նվիրվում է հայ տպագրական գործին։ Մենք ունենք այս նշանավոր մարդու գրությունը և տեսնում ենք վոր նա առանձին գծագրական և գեղագրական ընդունակություն չուներ, բայց, ինչպես ինքն է խոստովանում, գործել է Այվազովսկու ցուցմունքներով և աշխատակցությամբ *)։ Այդ գործը յեղել է գլխավորապես այն, վոր Արամյանը վորոնել է և գտել հայերեն տառերի գրության զանազան ձևեր հին ձեռագրերի մեջ։ Այսպես է նա վկայում իր «Դասարան Հայկազն Մանկանց» այբուբենի առաջաբանում։ Բայց յերկուսն էլ, թե Այվազովսկին և թե Արամյանը վկայում են վոր իրանց գործը վերջնականապես գծագրողները ու փորագրողները յեղել են ֆրանսիացի ճարտար վարպետները**)։ Ստացվում է, ուրեմն, այն, վոր յերկու հայեր, մեկը հմուտ գծագրիչ և մյուսը ժիր հնարուլղ իրանց հում նյութերն են բերել ֆրանսիական արվեստին և սա իրան հատուկ նուրբ գեղարվեստական ճաշակով կերտել է հայկական նորատեսակ տառեր։

1855 թվին Ճանիկ Արամյանն ունի իր գրաշարանոցը Փարիզի տպարաններից մեկում և շարում է յերկու հայերեն պարբերական հրատարակություններ—«Արևելք» յերկշաբաթաթերթը Ստեփան Վոսկանի և «Մասյաց Աղավնի» ամսագիր, վորի խմբագիրներից մեկն եր Այվազովսկին։ Առաջինի տառերը հին ձևի եյին, այսինքն շեղ, յերկրորդի տառերը նորաձև եյին, միանգամայն գեռ անհայտ մինչև այդ։ Սակայն յերկու տեսակ տառերն էլ բերում եյին այն չափազանց խոշոր նորությունը, վոր այլ ևս չը կային ծոցագրեր և չուխտակ գրեր։ Ստեղծված եր հայկական գրերի նոր վոճ—վարիքյանը։

> Անի յեւին զահ եւ պատուար Այրարատեան աշխարհի, գեղեցկազոյնն ծանուցեալ եւ արքայնազոյն քաղաքաց նորա, սիրելին սմբալին եւ տիրապալին շինամայր Հայոց, եւ Յերեւս կենդանայուշն եւ սրտառուչ ամենայն աւերակաց. որոց ի հնոյ զարուց հետէ, համբաւեալ ընդ ամենայն Հայս, եւ իբր ի բառասուն ա-

2. Արամյան շեղ տառեր (10^{0}), վորոնցով տպվում եր «Արևելք» կիսամյա թերթը։

*) «Մասյաց Աղավնի», Փարիզ, 1865, յեր 190—192։
**) Անդ. տես և «Արևելյան մամուլ», 1880։

Այս տեսակ տառերի հետ միաժամանակ ձուլվեցին նրանց շատ նման, բայց և իրանց տարբերություն ունեցող տառեր, վորոնք ապագայում դուրս

> Այս տառերուն առաջին գծագրողն ու մեծ վարպետ կատարելագործողն է Վ. Հ. Յովհաննէս Վարդապետեան Սորկուճեան ի Մխիթարեան միաբան վենետկոյ. եւ մեր հոս ընծայածն ալ անոր չինածէն օրինակած է. միայն թէ ամենափոքր տարբերութիւն մը ատոնց ենք տառերնուս, այնպէս որ Վերապատուելի Հայրը չէ ուզած

> Վ.ի երը գրուած հինգ տեսակ գրքերուն ոմանց մանրերուն ունինք, եւ խոտարկանիկն ալ (նօտր-գիրք) հետզհետէ կըլլնայ, մանաւանդ 11^{0} գրչինիս որ փիչ առնելն պիտի լրընայ, եւ ամենէն գերըշխհանելն ու վայելուչը պիտի ըլլայ։

3. Արամյան շեղ տառեր 10^{0} և 8^{0} մեծության։

մղեցին առաջին տեսակի տառերը գործածությունից և ընդարձակ տարածում գտան։ Ներկայումս էլ այս տառերը միահեծանորեն են տիրում մեր գրականության և մամուլի մեջ։

Այսպիսով, ուրեմն, հին ձևի տպարանական տառերը յենթարկված եյին արմատական բարեփոխության, վորի հետևանքով նրանք գեղեցկանում եյին, տեխնիկական հարմարություններին ավելի մեծ չափով եյին համապատասխանում։ Մանավանդ այն հանգամանքը, վոր հին ձևի տգեղ գլխագրերը տեղի եյին տալիս նոր ձևի՝ գեղեցիկ, ճաշակավոր հորինված և նուրբ գծագրված գլխագրերին, մի ամբողջ հեղաշրջում եր մտցնում հայ տպագրական գործի մեջ, բաց եր անում մի ամբողջ նոր դարագլուխ։

Բայց այս ռեֆորմը բավական չը համարեց Այվազովսկին։ «Մասյաց Աղավնի»-ի մեջ տպված իր հոդվածում*) նա հին ձևի տառերի մեջ յերկու խոշոր պակասություն եր գտնում. 1) վոր հայերեն տառերը ուղղահայաց չեն, ինչպես յեվրոպական ազգերի տառերը, այլ դեպի առաջ են թեքված, շեղ են և այս հանգամանքը դարձնում է նրանց տեսողությունը հոգնեցնող, դժվարընթեռնելի. 2) վոր հայերեն տառերը գրեթե ամբողջովին զուրկ են յեվրոպական տառերի կլորակությունից, քառակուսի յեն և այդ պատճառով էլ չափից դուրս միակերպություն ունեն, վորի շնորհիվ շուտ են ձանձրացնում ընթերցողին։

Այս պակասությունները վերացնելու համար նա գծագրեց ուղղահայաց տառեր, վորոնք գեռ չը տեսնված նորություն եյին կազմում հայ տպարանական արվեստի մեջ։ Ամենայն խստությամբ պահպանելով բոլորագիր տառերի բուն հայկական ձևը, Այվազովսկին ճարտար գծագրական կառուցվածքով տալիս եր նրանց յեվրոպականին մոտեցող արտաքին կերպարանք, վոր միանգամայն գեղեցիկ եր, տալիս եր մի ինքնուրույն գեղարվեստական ներդաշնակության տեսարան։ Իր այս տառերի մեջ Այվազովսկին աշխատել եր վերացնել այն չփոթությունը, վոր առաջ եր բերում մի քանի տա-

*) 1855 թ. յեր. 12.

.ռերի (գդ, զդ, ատ, ստ) իրար շատ նման լինելը: Սրա համար նա գ և գ տառերի գլուխներին տալիս էր կիսաբոլորակ ձև, իսկ գ և պ տառերի գլուխներին տալիս էր շատ ընդգծված վորոշութիւն, այնպես վոր այդ տառերը իսկ վոր անկարելի չեր իրար հետ շփոթել: Սակայն մյուս տառերի նմանութիւնները (աս, ստ) նա չկարողացավ նույն աջողութիւնով վերացնել:

Այս ուղղահայաց տառերի առաջին նմուշն էր: Պատրաստելով նրանից յերեք մեծութիւն (12⁰, 10⁰, 8⁰) տառեր, Այվազովսկին նրանցով բազմաթիվ տպագրութիւններ արավ թե Փարիզում և թե Թեոդոսիայում:

Քանի որ մեր ազգին մեջտապազրութեան արուեստը մտաւ, ԺԲ, ԺԳ, եւ ԺԴ դարերուն մէջ գրուած ձեռագիրներուն գեղեցիկ բոլորագրերը օրինակ եղան տպագրութեան գլխուն. անոնց մէջ այ բեպեռ Ոսկան վարդապետին Ամսդերտամ փորագրել տուածները աւելի նահոյ եւ ընդունելի եղան իրաւամբ' քան թէ նոյն տառնները Վենետիկ, Հը-

« Տպագրու Հայաստանաց պրօսը սուաւ, եւ սոս սեռաւ 1405թս:
« Այն բազաւորական պերճութիւնն որ իրեր կամաւորապես
« բոլոր Եր' թագման տառնը նորեն երեւցաւ: Կարդոս Ե (Գագ-
« գիկ բագաւորը) անձամբ գլուխ կենցաւ յուշարկաւորութեան
« հանգիսին, եւ Կիլեսափնեանց Եկեղեցւոյն դասին մէջ վառաւոր
« շիրիմ մը կանգնեց, որուն վրայ Լեւոն ձեռացուցած Եր' բազա-
« տորական ձիրանին վրան առած, գլուխը' բագ, ձեռքը ոսկի գա-
« ւազան, ոտուընին ալ Հայաստանի նշան առիւծին կրրընած.'

4. Այվազովսկու ուղղահայաց տառերի առաջին տեսակ (12⁰ և 8⁰)

Այնուհետև Այվազովսկին տվեց ուղղահայաց տառերի և մի յերկրորդ որինակ, նախկինից ավելի աչքի յե ընկնում իր պեղարվեստական նրբութիւններով և մանավանդ գլխագրերի զարմանալի համաչափ դասավորութիւնով ու քնքուշ գծագրութիւնով: Այստեղ Այվազովսկին ավելի-ևս մոտեցրել է իր տառերը հայկական ձևին, պահպանելով յեվրոպական ձևին մոտեցնող բոլորակութիւնը: Այս տառերով են տպագրված մի քանի հայ տպագրական շեղեակրներ, որինակ «Ճեմիաքի» փարիզյան հրատարակութիւնը:

Մարախին վրայ Արաբացիք այսպիսի պատմութիւն մի եւս ունին, որ ամէն բնական պատմութենէ դուրս է: Կըսեն իրենք Թէ երկու տեսակ է մարախը. մէկը ջրային, միւսը ցամաքային: Ջրային մարախին գլուխը քառակուսի է, ու մամուկի պէս երկայն ոտքեր ունի' 10 հատ. իսկ

5. Այվազովսկու ուղղահայաց բոլորագիր, յերկրորդ տեսակ (10⁰).

Ճանիկ Ալամյանն էլ իր համար և պատրաստում ուղղահայաց տառերի յերկու տեսակ:

Առաջին տեսակն ունի իր մեջ Այվազովսկու ազդեցութեան շատ նշանները և ամենից առաջ այն, վոր այստեղ էլ, Այվազովսկու առաջին տեսակի նման պոչավոր տառերի պոչերը ծալված են, կեսի տեսք ստացած: Այստեղ մ-ի կնճիթին այնպես և փոքրացված ու վոլորված, վոր նրա հետ կարող են անարգել կանգնել ե, ի և այլ տառերը. Բայց միաժամանակ այս ուղղահայաց բոլորագիրը Այվազովսկու բոլորագրի պատճենը չե, այլ ներկայացնում է և տարբերութիւններ, որինակ ճ տառն այստեղ բոլորովին այլ ձև ունի: Արտաքին յերևույթով, սակայն, այդ յերկու տեսակ տառերը յերկվորյակներ են:

Տարսոնի դպրեվանքի մէկը կերեւցայ մեծ Գերեզմանոցին մէջ որ Տէմիր-գավուռ (Երկարի դուռն) կըսուի. վրայի կամարը կլսաբոյոր է: Կերեւցայ թէ այս դուռը Հերմոյ Նորոգած բերդին կտորն է:
Պօղոս Ղուկասի ըսածին նայելով' ԺՆ դարուն վեր-

6. Արամյան ուղղահայաց տառեր (10⁰) առաջին տեսակ.

Յերկրորդ տեսակի մեջ Արամյանը կամ, ավելի ճիշտ, նրա համար աշխատող ֆրանսիացի արվեստագետը, մի կողմից, Այվազովսկու նման, աշխատել է մոտեցնել նոր ձևը հին ձևին: Յերկուսն էլ, Այվազովսկին և Արամյանը, այլևս չեն ծալում կծկում տառերի պոչերը, այլ, ըստ ավանդականին, մազային գծի կերպարանք են տալիս պոչերին: Յերկուսն էլ ստիպված են յերկու տեսակ ունենալ, մեկը՝ կնճիթավոր, մյուսն անկնճիթ՝ հատկապես ե, ի և այլ այսպիսի յերկար տառերի հետ կանգնեցնելու համար:

Բայց Արամյանն իր յերկրորդ տեսակի մեջ մոցնում է և վիանգամայն չեղած ու չը տեսնված, հեղափոխիչ նորութիւններ. մեր ս-ը դառնում է լատիներեն s (անշուշտ, գլխատառի հետ ունեցած նմանութեան պատճառով), մեր ր-ն դառնում է լատիներեն r, ֆ-ն՝ լատիներեն f: Բացի դրանից՝ այս տառերի մեջ շ-ն իր սովորական ձևը չուներ, այլ գլխագրի ձևն ուներ: Այս մի համարձակ նորմուծութիւն եր, վոր յեթե շատ աչք ծակող չեր, պատճառն այն եր, վոր սահմանափակվում եր մի հատ տառով և կատարված եր շնորհալի կերպով:

Գրամագրուխ եւ պահեստ
Ընթացիկ ապահովագրութիւնի
1903ին գանձուած ապահովագիներ
Մինչեւ 1903ի վերջը հաստացեալ վճաւք

7. Արամյան ուղղահայաց տառեր, յերկրորդ տեսակ.

Լաւինական r և s տառերի կիրառութիւնը Արամյանը մոցնում եր նաև իր փորագրել տված հին ձևի մի գեղեցիկ շղագրի մեջ։

Խօսացուած դրամը . իրրև կաշառք կը նեւ կայացնէ մեր տեսրակին համար. եւ այսպիսի նենգաւոր հնման վրայ իր զգայուեցութիւնները ծառայելով՝ վեց ամիս շարունակ կը ջլուայէ իւր սակաւաթիւ ընթերցողաց ականջին քանի որ այն խնդիրը Ջալալեան Սարգիս Սրազանի Բողոքածեսրին կը վերաբերէր, որոյ տպագրութենան հաշիւն ալ (Ո՛չ եւ չկրնք ուզիր ըսել, որովհետեւ այնպիսի ջնջին զումարէ վճարման համար կասկած կամ

ակզբնաւորութենէ թատրատունի
թագաւորութենան Հայոց յաշտոյ
բարմանէ թատրատունի թագա-

8. Արամյան նեղ շղագիր (8⁰ և 6⁰).

VI.

*Մենք տեսանք վոր թե Այվազովսկին և թե Արամյանն իրանց յերկրորդ տեսակի ուղղահայաց տառերի գծագրութեան մեջ ստիպված եյին վիջողութիւններ անել հին ավանդական գծերին։ Այս մի պատահական և քմածին յերևույթ չեր։ Պարզապես յերկու ռեֆորմատորները հանդիպեցին ռեյակցիայի։ Արամյանը գրում է իր «Դասարան Հայկազն Մանկանց» գրքի առաջաբանում *) վոր իրան բամբասում են իր տառերի համար։ Նորաձեվութիւնների դեմ եր այն ժամանակվա հայ հասարակութիւնը և այս հակառակութեան պիտի ընդհարվեր մանավանդ Այվազովսկին, յերբ 1850 թվականների վերջերում տեղափոխվեց ռուսահայերի մեջ, վորոնք միանգամայն անպատուղ են հանդիսացել տպարանական տառագիտութեան մեջ։ Տեսնելով վոր ուղղահայաց բոլորագիրը չեն ժողովրդականանում, դժվարութիւններ հարուցանում, նա վերադառնում է հին շեղ բոլորագրին, տալով նրան իր տաղանդին հատուկ ճարտար ու գեղեցիկ գծագրութիւն և պատրաստելով այդ նամուշից յերեք տեսակ (16⁰, 12⁰, 8⁰) մեծութեան տառեր, նրանցով եր գլխավորապես տպագրում «Մասյաց Աղավնին» և ուրիշ գրքեր Թեոդոսիայում։*

= ժամը 1-ին կէ օգտուելնէ նորը վատառոր Հանդիսիւ տուրը պատասխաղը մուտյ նորընտիր արքեպիսկոպոսն, Լմայր Եկեղեցւոջն, ուր ներկայ էին ընդ խառն ժողովրդեան եւ ամենայն քաղաքական եւ պինոյորական պաշտօնակալք։ Այնուհետեւ ամ-

Աղջկան տներու քաղցրութիւնը՝— Հայրենեաց օրը. — Պաղպղիյ տնտեսմբութիւնը. — Յիշատակ Աղբատաց. — Պօլսեցւոց աղքատսիրութիւնը. — Փրկչի գանձանակը. — Փողի պէս հնչող ձայն մը. — Զրի զուարճութիւնը եւ Թատրոնը իջարկ. — Օպէրի Կա Միւերը. — Վերնոն օրիորդը. — ÷ Էմմա Վոլկի օրիորդը.— Մահուան մանդաղին տակ Լնկած Ծաղիկ մը. — Վերատնուհւոյ

9. Այվազովսկու շղագիր տառեր (12⁰ և 8⁰)։

*) Փարիզ, 1860.

Իսկ Ճանիկ Արամյանն ել տալիս և հին նմուշով փորագրված մի տեսակ գծագրական վոճ, վորի մեջ նա աշխատել եր հնար յեղածին չափ մեղմացնել տառերի շեղութիւնը։ Այս միջին հատուածյան, սեղմ տառերի մի տեսակ եր, վորի մանավանդ 8 աստիճանը չափազանց գեղեցիկ եր և նրանցով նա մի շարք փոքրագիր հրատարակութիւններ կատարեց։

Երբոր ժողովուրդ մը իր օրինաց կը հնազանդի՝ միանգամայն ինքզինքը կը պատուէ, իր իշխանութիւնն ու ազատութիւնը կը պաշտպանէ։ Աշխարհիս վրայի ամենէն զօրաւոր իշխանն ալ գիտէ, որ ի շնորհս օրինաց կ՚իշխէ, և այն օրէնքն ու իշխանութեան զօրութիւնը ժողովրդեան արդար կամաց և անոր պաշտպանողական ուժին արգասիքն են։ Ընտրեհն Աս-

(1) Ի վերջոյ 1831 Յունուար Հին յաջողության հարիւր տարուան պայթրարէ մը յետոյ ձեռք բերել անջատ հատարակութիւն մը ընդլայնու իրաւունքը պարձեալ թրանսատան գեռաքանին պաշտպանութեամբը։

10. Արամյան միջակ շեղ բոլորագիրը։

Այս է, համառոտ գծերով, այն մեծ ռեֆորմի պատկերը, վոր տեղի ունեցավ Փարիզում 1850-ական թվականներին և վոր միանգամայն հեղաշրջեց հայկական տպագրութիւնը, բարձրացնելով նրան իր աղքատութեան խորխորատից և դնելով յեվրոպական ազգերի մշակութային բարձունքի վրա։ Հայ տպարանը տիրանում եր մի խոշոր և բազմապիսի հարստութեան։ Այստեղ է ահա Ճանիկ Արամյանի, վորպես մեծ տպագրիչի, անմահ նշանակութիւնը։

Գնահատել մեր յերկու ռեֆորմատորների գործը կարելի յե հենց նրանով, վոր փարիզյան տառերը մեացին անգերազանցելի մինչև այժմ։

Այնուհետև բազմաթիվ փորձեր յեղան նորատեսակ տառեր ստեղծելու, բայց այդ փորձերից հիշատակութեան արժանի յեն յերկուսը միայն)։ Առաջինը պատկանում է Կ. Պոլսի հմուտ փորագրիչ Մյուհենտիսյանին, վորի փորագրած յերկու տեսակ տառերը (12⁰ և 10⁰) 1860-ական թվականներին մեծ ընդունելութեան գտան արևմտյան հայութեան մեջ շնորհիվ իրանց գեղեց-*

*) *Մենք չենք մոռանում վոր Վիեննայի Մխիթարյան վարդապետ Այդընյանը գծագրել և և ձուլել և տվել շատ տեսակ հայերեն տառեր։ Բայց մեր խոսքն այստեղ լոկ գրքական տառերի մասին է, վորոնց թվին չեն պատկանում կամ շատ քիչ են պատկանում վիեննական տառերը։*

կութեան։ Բայց այս տառերի մէջ հին տառագիտական սկզբունքներից շատերը ճաշին անխախտ. (որինակ) ջուխտակ տառերը,

Ուրախանչիւր ընկերը պարտ էր տան դահլիճն առնել ու օր ըստ նպաստել ընկերութեանն առ՝ ի հայթայթել զինծ դումար դրամոյ՝ բաւական լինել գպրոցական ծախուց։ Եւ մինչ յառաջացին իղձք և աչխատութիւնք ընկերութեան, տեսանելով օր ըստ օրէ զանգատս յաւելեալ և բաժնացեալ և հասեալ ի նպատակն, ունելով պատրաստ ի ձեռին զդումար դրամոյ, գնեցին նոքա և կամուրջս, կամ՝ շինեցուցին տա-

Նաւութեանց) պատմութիւններուն մէջ։ Ա. յս պատմութիւնը կը գտնուին Բաբրանեներու մէջ, զըրուած որ քանի մը հարիւր տարի յետնագոյն են քան զվէպանները, եւ կը ցուցնեն կրօնք մը շատ աւելի տարբեր քան նոքանի ժամանակակից կրօնքը

11. *Մյունհոփյան տառեր (12° և 10°).*

Իսկ յերկրորդ փորձը ավել ե Վենետիկի Մխիթարյան միաբանութիւնը, 20—25 տարի առաջ լուս հանելով Գերմանիայում վորագրել աված յերկու տեսակ տառեր, վորոնք բավական գեղեցիկ գծագրութիւն ունին և շատ հարմար են իբրև գրքական տառեր։ Գծագրութեան հեղինակը չե կարողացել ազատվել հնից ժառանգութիւն մնացած ջուխտակ տառերից, բայց և մի յերկու քայլ առաջ ե գնացել բարենորոգման ուղիով։ Այվազովսկու որինակին հետևելով, կիսակլոր գլուխ և տվել գ և գ տառերին, գ-ից և դ-ից զանազանելու համար։ Իսկ իր սեփական նորմուծուածն այն ե ո տառի միջին ճյուղը ավելի բարակ ե, քան յերկու կողքի ճյուղերը և այսպիսով այդ տառը չե կարող շփոթվել ա-ի հետ։ Նույնպես և ա տառը չե կարող շփոթվել ո-ի հետ, վորովհետև ա-ն ներքևում ունի կիսաբոլորակ ձև, վոր նրան մոտեցնում ե գլխագիր ա-ին։ Բայց պետք ե առհասարակ նկատենք, վոր գծագրական տեսակետից յերկու տեսակ տառերն ունին և տարբերութիւններ, և ամենից առաջ այն, վոր փոքր տեսակի տառերն ավելի մոտ են ուղղահայաց գիրքին, ինչպես ցույց են տալիս նրանց գլխագրերը։ Նույն իսկ մեր ցույց աված գծագրական բարեփոխութիւններն ել հավասարապես հատուկ չեն յերկու տեսակներին։

ոչ յաճախ, փոխադարձ դայեկութեան օրինակներ։ Տաճատ Ոշտունի և Շաւասպ Արծրունի՝ տակաւին «տղայը առնդհայր», և Տիրանայ կուսորածն ազատած ու յանձնուած առեալական դայեկայ, վերստին բե-

խօսել։

Երկար և ծանր պատրաստութիւններիս վրա հիմնված՝ կարող եմ վստահութեամբ ասել, որ անխերի կատարել եմ այն ամենազլխաւոր պարտականութիւնը, որ դրված է այսպիսի մի աշխատութեան հեղինակի վրա, այն է՝ ուչադրութեամբ վերաբերվիլ դէպի ընթերնեան ներկայված ամեն մի գիրք։ Եղել են գրքեր, որոնց ես կարդացել եմ երեու անգամ" ստացած տպա-

12. Վենետիկյան նորաձույլ տառեր.

VII

Այս և ահա համառոտ ուրվագիծն այն եվոլյուցիայի, վորին յենթարկվեցին հայերեն տպագրական տառերը 400 տարվա ընթացքում։ Ինչպես տեսնում ենք, շատ ել մեծ չեն այդ շարժման չափը, և յեթե չը լիներ Փարիզի մեծ ռեֆորմը, այսոր ել ամեն տեղ կառչած կը լինեին հայ տպարանները ծոցագրային նախնական տեխնիկային, ինչպես կառչած և ճուռմ Վիեննայի Մխիթարյան տպարանը։

Փարիզի ռեֆորմի յերկու հեղինակները տեղափոխեցին նոր տպարանական հարստութիւնը արևելք։ Այվազովսկին Թեոդոսիայում հաստատեց տպարան, Արամյանը—կ. Պոլսում։ կ. Պոլիսը պահեց և մինչև այսոր պահպանեց Արամյան տառերի բազմազանութիւնը, իսկ Թեոդոսիայի տպարանը շատ չնչին ազդեցութիւն արավ ռուսահայոց տպարանական գործի վրա։ Այստեղ բռնացած Մնացին Վիեննայի ծոցագրերն ու անճաշակ գլխագրերը և միայն Համբարձում Ենգիճարյանի տպարանն եր Թիֆլիսում, վոր միացրեց Վիեննան Փարիզի հետ, տալով խառն շարվածքներ, վորոնց մեջ գերակշռողը, սակայն, Փարիզն եր։ Յերկու գերմանական ձուլարաններ—Հերբեկինը Մոսկվայում և Մազերինը Թիֆլիսում մի շարք փորձեր արին՝ հայերեն տառերին նոր ձևեր և բարեփոխված տեսք տալու համար։ Բայց այդ փորձերն անհաջողութեյան հանդիպեցին։ Հերբեկի աշխատանքը վիեննական տառերին կարկատաններ դնելուց հեռու չը գնաց, իսկ Մազերն ոգտվում եր Թիֆլիսի հայութեյան գեղագրական և գծագրական արվեստից, վոր, սակայն, կոպիտ ու անճաշակ որինակներ մատակարարեց նրան, ուստի և նրա ձուլած 3—4 տեսակ տառերը չեյին կարող համեմատվել անգամ կ. Պոլսի (Այսինքն Արամյան) տառերի հետ։

Յեվ այս արևելյան աղքատութիւնը վերանալ սկսեց 30—35 տարի առաջ, յերբ ինձ աջողվեց բերել տալ Բագու և Թիֆլիս Արամյան տառերի 6—7 տեսակները և նրանցից մեկի վրա յեր վոր Մազերը փորագրել տվեց Գերմանիայում այն չորս մեծության գրքական տառերը, վորոնք այժմ միակ գործածականն են մեզանում գրքերի ու լրագիրների մեջ։

Բայց այս, ի հարկե, մի իդեյալական դրութիւն չե։ Ներկայումս մեր տպագրութեյունը զարձել է ապշեցուցիչ աղքատ ու միանման, և այս՝ շնորհիվ այն հանգամանքի, վոր գործ են ածվում միայն մի տեսակ տառեր, մինչդեռ փարիզյան ռեֆորմից ի վեր հայ տպարանական տառերի բազմազանութիւնը ցուցադրվում է գրեթե 50 որինակներով։ Մեր խոսքը միշտ գրքական տառերի մասին է։ Իսկ յեթե ավելացնենք և ուրիշ տեսակի տա-

ռերը, ինչպես, որինակ, գլխագրերը, այն ժամանակ կը տառնանք 100 տեսակներից եւ ավելի։

Ի՞նչ կարող է տալ մեզ այն ռեֆորմը, որի մասի խոսում ենք այսօր։ Նայելով բոլոր արած առաջարկութիւններին, նկատի չի առնվում տառերի միայն մի տեսակ։ Արդ չեթե ընդունվի մի հատ տեսակ նորաձև տառեր, այս կը լինի մի կատարյալ դժբախտութիւն մեր կուլտուրական արժէքների տեսակետից։ Հասկանալի կը լիներ, չեթե առաջարկված լինելին գոնե մի 5—6 տեսակ, այսինքն տարբեր նկարներ ունեցող տառեր։ Բայց այս դեպքում մեր պետական գանձարանը, ինչպես այս ցույց է տալիս Վրաստանի կառավարութեան ձեռնարկած տպարանական ռեֆորմը, պիտի ծախսե 400 հազար րուբլուց վոչ պակաս մի գումար, և այս մի շատ փոքր արդյունք ստանալու համար։

Յեվ սակայն մենք կարող ենք չափազանց համեստ ծախսեր անելով՝ վերակենդանացնել մեր տպագրութիւնը։ Դրա համար հարկավոր է վոր հայոց կառավարութիւնը վերականգնե փարիզյան ռեֆորմի ժամը տառերի ամբողջ բազմազանութիւնը, գործածութեան մեջ մտցնելով այն բոլոր տառերը, վորոնք այժմ մոռացված են։ Այս մի դժվար գործ չէ։ Մեծ ոգնութիւն ցույց կը տան այս բանի մեջ Կ. Պոլսի ձուլարանները։ Եջմիածնի տպարանում կային շատ սիրուն և բազմատեսակ տառերի մայրեր, վորոնք այժմ, տարաբախտաբար, կատարյալ մոռացութեան են մատնված։

Իսկ ինչի՞ մեջ պիտի կայանա մեր քննութեան չենթարկված ռեֆորմը։ Յես կարծում եմ վոր նա պիտի լինի մասնակի և վոչ ամբողջական։ Պետք է քննել և վորոշել թե ինչ պակասութիւններ են ծնացել մի քանի տառերի վերաբերմամբ փարիզյան ռեֆորմի մեջոցին և շտկել ու բարեփոխել այդ մասնակի, անհատական պակասութիւնները։ Այս կարելի չի անել առանց մեծ ծախսերի։ Ավելի հեշտ է և ձեռնտու բարեփոխել մի քանի տառեր մի տեսակաշարքի (гарнитура) մեջ, քան փոփոխել ամբողջ տեսակաշարքը։

Հուսկ բանի պետք է ավելացնել վոր չափազանց ցանկալի չի, ի հարկե, վոր այժմ էլ, և այսուհետև էլ, հայերեն տառերը ճոխանան նրանց գծագրական նրբութիւններով ու ինքնուրույն տիպերով, բայց այն պայմանով, վոր նորերը գան արդեն ունեցած պաշարը հարստացնելու և ճոխացնելու համար և վոչ թե այդ պաշարը անճանաչելի ու անբնթեռնելի դարձնելու համար։

Դ. Լեվոնյան

ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայերեն տպագրական տառերի բարեփոխութեան կամ բարեձևութեան խնդիրը նոր ծագած խնդիր չէ մեր տպարանական տառերը առավել կամ նվազ չափով, յերբեմն զանգաղ, յերբեմն արագ թափով, բարեփոխութիւնների յենթարկվել են շարունակ, սկսած 17-րդ դարից։ Բավական և ժամանակագրական կարգով աչքի անցնել գաղութահայ զանազան քաղաքներում ու տպարաններում լույս տեսած գրքերը՝ և տառերի կրած առաջադիմական փոփոխութիւնը խոկույն ակնհայտնի կը դառնա։ Յեվ հայ տպագրութեան տարեգրութեան մեջ հիշատակվում են այն անունները, վորոնք նորաձև տառերի հնարիչ, գծագրիչ, փորագրիչ կամ ձուլիչ հանդիսանալով, հարստացրել են հայ գրքի տպագրութեան տեխնիքական-գեղարվեստական կողմը։ Մեծ սեր դեպի գործը, անձնական-անհատական ձեռներեցութիւն և ծանոթութիւն տպական-ձուլարանական գործի—այդպիսի անուններից են Բյուրքճյան, Մյուհենտիսյան, Արաժյան, Դար. Այվազովսկի, Մատթեոսյան, Արապյան, Այդընյան և այլն։

Սակայն մեր նյութի պատմական ժամանակը դուրս է իմ ծրագրից, այդ շրջանի մասին իր զեկուցումը ավեց նախորդ նիստում հանձնաժողովի անդամ Լեոն. յես կանգ կառնեմ Նոր շրջանի վրա։

Մինչև այժ գոյութիւն ունեցող հայերեն տպագրական տառերը զանազան են մեծ մասամբ իրենց չափերով և ավելի ևս գլխագրերով, բայց վոչ տեսակներով և հասարակ, տեքստի տառերի քանակութեամբ, այնպես վոր չեն կարողանում բավարարել ներկա բազմապիսի պահանջներին, մանավանդ վոր հնացած են ըստ վոճի և բնույթի և անհարմար են նորագույն գրական ու գեղարվեստական պետքերի համար։ Մինչ յեվրոպական և, նրանից առնելով, ռուսական տպագրական տառերը շատ են հարստացել իրենց տեսակներով ու ձևերով և նրանցից յուրաքանչյուրը ոգտագործվում է իր պահանջված տեղում, մեզանում տեքստի գործածական տառերը գրեթե միատեսակ են և դեռես չեն ազատվել կրելու իրենց վրա հին, այսպես ասած, «միջնադարյան» բնույթը։ Ինչպիսի հրատարակութիւն էլ վոր հանձնում ենք տպագրութեան, լրագիր թե հանդես, բանաստեղծութիւններ թե գաստպիրք, գեղարվեստական ժողովածու թե թռչնաբուծութիւն, այդ բոլորի համար գրաշարը կանգնում է նույն կաստայի առաջ և շարում է միևնույն տառերով։

Յես ձեզ մի որինակ բերեմ.

Մեր կենտգործկոմի և ժողկոմխորհի հրատարակութեամբ տպագրվում է Հայաստանի խորհրդայնացման 5-ամյակին նվիրած մի հարուստ տեղե-

կապիր-ժողովածու. շարվում է լինոտիպով. տառերը պատրաստված են Ամերիկայում, իրևի բիբլիական տառերի որինակով. այնպես վոր մեր ժողովածուն, մանավանդ վոր իր գիրքով և իրկայունյան յերեսներով համաչափ և բիբլիային, իր տպավորությամբ շատ է հիշեցնում հին, յեկեղեցական գրքերը. և այդ բանը նկատել են արդեն դեռևս գիրքը լույս չտեսած, և այդ բանի համար կարծեք թե ինձ են մեղադրում, վոր գրքի տպագրական տեխնիքական մասի հետևողն եմ։

Ահա այսպիսի հանգամանքը չեր կարող ի նկատի չառնվիլ գրականության ու տպագրության մոտ կանգնած մարդկանց կողմից. սակայն այդպիսիները անցյալում հայտնել են իրենց ցանկությունը միայն նոր տառակի տառեր ունենալու մասին, խորհրդակցություններ են ունեցել այս ու այն քաղաքներում, տառերի նախագիծ կաղապարներ են պատրաստել, բայց վորպես մանավոր անհատներ, անդրամ և անիրավունք, անկարող են յեղել գործնական վորևե քայլ անել. այդպիսի անձերից ինձ հայտնի յեն Ղ. Աղայան, նկարիչները Վ. Սուրենյան և Յե. Թադեոսյան։

Նորագույն շրջանը Խորհրդ. Հայաստանի շրջանն է։

Հայտնի յե վոր 1922 թ. մարտի 4-ին պաշտոնապես պարտադիր և դառնում նոր ուղղագրությունն։

Յերկու և կես տարի անց, այն է 1924 թ. դեկտեմբ. 12-ին Լուսժողկոմ ընկ. Մռավյանի կարգադրությամբ Յերևանում կազմվում է «Հայկական տառերի վերամշակման հանձնաժողով» վորին և հանձնվում է տառերի վերամշակման գործը։ Այդ հանձնաժողովի կազմին է Ստ. Լիսիցյան, Լ. Յաղուբյան, Մ. Եփրիկյան, նկ. Հ. Կոջոյան և Ար. Տեր-Հարությունյան։

Այդ հանձնաժողովը շուտով իրեն վերանվանում է «Հայերեն տառերի ձևափոխման հանձնաժողով», հակառակ Լուսժողկոմի ընդունած «վերամշակության», և իսկապես վոր չի վերամշակում, այլ ձևափոխում է հայոց տառերը։ Իմ տրամադրության տակ է այդ հանձնաժողովի ա. նիստի (դեկտ. 12-ին) արձանագրության պատճենը, վորից յերևում է վոր հենց այդ առաջին նիստում էլ արվում են հետևյալ մի շարք վորոշումները։

1. Տառերի ձևը ուղղահայաց դարձնել.

2. Տառերի միջին յերկու գծերը մի փոքր լայնացնել.

3. Տառն ազատել ավելորդ գծերից և խուսափել տառերի միանման ձև ունենալուց։

4. Ջ, Ջ, Ջ, Ց, Ջ, Ց, գլխատառերը նմանեցնել փոքրատառերին։ Գլխատառ Հ-ի ձևը նմանեցնել հասարակ հ-ի (լատինական), բայց գլուխը իջեցնել կորաձև գծով ու կետով վերջացնել։ Ու և Իւ միացնել իրար մի տառ, նույնը նրանց գլխատառերի վերաբերմամբ։ Ո-ի յերկրորդ ծայրը կորաձև անել, ծայրը մեջն առնելով, այսինքն դարձյալ պահել յերկու գծի մեջ, սղելով յերրորդ գիծը։

5. Պոչեր ունեցող տառերի պոչերը կլորացնել և վերջացնել վոչ թե մազիկով, այլ կետանման գծով։

6. Բոլոր գլխատառերը սկսանում են առաջին յերեք գծով։

7. Ֆ-ի միջին գիծը բարակացնել.

Ընդունված ուղղումներով հանձնանարել Հ. Կոջոյանին նկարելու այբուբենը և ներկայացնել մեկ շաբաթ հետո, կոմխոսխայի վերջնական քննության և հաստատության։

Նկարիչ Կոջոյանը իր ժամանակին ներկայացրել է տառերի որինակները յերկու թերթի վրա գծագրված։ Անշուշտ այդ տառերը «կոմխոսխայի վերջնական քննության և հաստատության» արժանացել են, վորովհետև գործը հանձնված է Լուսժողկոմատ։



Այժմ քննենք այդ հանձնաժողովի աշխատանքը իր կետերով մի առ մի, վորոշումների կարգով.—

1. Տառերի ձևը ուղղահայաց դարձնել.—Սա նորություն չե. հայ տպագրության մեջ ուղղահայաց տառեր շատ են յեղել անցյալում և այժմ էլ կան *)։

2. Տառերի միջին յերկու գծերը մի փոքր լայնացնել.—Դա նպատակահարմար վորոշում և սկզբունքով, տառերի բուն-մարմինն ավելի խոշոր ցույց տալու համար. բայց ինչ է նշանակում «մի փոքր», ինչքան, համեմատությամբ դրսի գծերի հետ։

*) Տես դեռևս 1772 թվին Մադրասում տպագրված «Յորդորակը. ինչպես նաև անցյալ դարի կեսերին Փարիզում և Թեոդոսիայում տպագրված գրքերը։

3. Զ, Ջ, Ջ, Յ, Ջ, Ց և Հ գլխատառերը նմանեցնել փոքրատառերին.—Ինչո՞ւ. ինչ նպատակով հայտնի չէ. Հ-ն ինչո՞ւ լատինականացնել, նույնպես հայտնի չէ։

Բանն այն է որ գծված տառերի մեջ չէի պահպանված հանձնաժողովի այդ վորոշումը. (տես Զ, Ջ, Հ և այլն)։

4. Տառն ազատել ավելորդ գծերից և խուսափել միանմանն ձև ունենալուց.—ա. մասում վարվել են հակառակը։

5. Պոչեր ունեցող տառերի պոչերը կլորացնել և վերջացնել վոչ թե մազիկով այլ կետանման գծով.

Նկարի մեջ չէի արված ինչ վոր այստեղ ասվում է։

6. Բոլոր գլխատառերը միանուման առաջին յերեք գծով. (ուզում են ասել տեղավորվում են առաջին յերեք տողի մեջն)։

Այս նորություն չէ. սի՞թե արդեն այդպես չեն մեր գլխատառերը։

7. Ի-ի միջի գիծը բարակացնել.

Զարմանալի չէ. մի տառի միջին գիծը բարակացնելու համար առանձին վորոշում կա, բայց գծագրված տառերի մեջ բազմաթիվ նոր ձևափոխություններ կան, վորոնց մասին արձանագրության մեջ վոչինչ չկա. տես Ա, ա, Ն, Զ, վ, ք, և այլն։

Այժմ ընդհանուր դիտողություններ այդ տառերի մասին։

ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ԳՈՐԾԸ

Վոչ մի աշխատավոր գյուղացիներ ու աշխատավոր գյուղացիները մի առաջնորդ ունեին. դա ընկ. Լենինն եր։ 30 տարի շարունակ նա բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության ազատագրման գործի ու սիրտն եր, նա յեր կռվի ոլան գծողը։

Հայերեն տառերի կերպարանքը կորսված է. տես՝ լ, ր, յ, Յ, Զ, Ց, և այլն. վոմի տեսակետից տառերը ներդաշնակ չեն և խանգարում են միմյանց. այդ առաջացել է նրանից, վոր նկարչից պահանջել են «խուսափել տառերի միանման ձև ունենալուց»։

Տառերը միատեսակ կեցվածք չունեն. թեք, ուղիղ, բարակ, հաստ, անկյունավոր, կոր՝ ամեն տեսակ գծեր կան տառերի նույնանման մասերում, վոր չկա վոչ մի ազգի տառերի մեջ։

Յերկու թե յերեք ստեղն.

Թեև հանձնաժողովի վորոշումների մեջ այդ մասին վոչ մի կետ չկա, բայց նկարիչը 3 ստեղնի տառերը վերածել է 2-ի, սեղմելու, տնտեսելու նպատակով. բայց յեթե խ-ն և պ-ն կարելի յեր թողնել 3 գծերով, ինչո՞ւ չեր կարելի ա-ն պահել իր կերպարանքով։

Ինաջող են կազմված յերկբարբառները ու, յու, յա, մանավանդ նրանց գլխագրերը։

Ընդհանրապես այս գործը յես գտնում եմ անընդունելի։

Ուրիշ ինչ առաջարկներ կան տառերի բարեձևության մասին։

Նկատելի յե մի հանգամանք, վոր հայերեն տպագրական տառերին նոր, գեղեցիկ, վոճային, սեղմ և գործնական ձև տալու, դեղեցկացնելու խնդիրը, վոմանք հասկացել են իբրև բոլորովին նոր ձևի տառեր հնարելու, կամ այբուբենի մեջ նոր տառեր ավելացնելու խնդիր. յես կարծում եմ վոր Հանձնաժողովը հրապարակով պետք է պարզե այս խընդիրը և քննության չառնի այն տեսակի առաջարկները, վորոնց հեղինակները վորպես նոր Մեսրոպներ, նոր տառեր են հնարում։

Մամուլի մեջ հայերեն տառերի բարեձևության խնդրին վերաբերյալ հիշում եմ Ս. Լիսիցյանի հոդվածը կամ զեկուցումը, տպագրված «Նորք»-ի 1923 թ. 3-ում, և Սա. Մալխասյանի յերեք հոդվածները «Մարտակոչ» լրագրի 1923 թ. 252-րդ 1926 թ. 216-րդ և 1926 թ. 242-րդ համարներում, և Ա. Ջահուկյանի մի հոդվածը «Խորհրդային Հայաստան»-ում։ Այս առաջարկները յես քննության չեմ առնում. Հանձնաժողովի նիստերում, յերբ ժամանակը գա, կարող են հանդես գալ հեղինակները իրենց առաջարկները պաշտպանելու։

Յես այստեղ Հանձնաժողովին կը զեկուցեմ դրսից ստացված մի քանի առաջարկների մասին ու ապա կանեմ իմ գործնական առաջարկը։

2. Առաջարկ Վահագն Դեմիրճողլյանի (Յերևան). Բոլոր առաջարկներից ամենառադիկալը, յեթե վոչ ուղղակի լատինական տառերին անցնելու, այլ լատինաձև հայերեն տառեր հորինելու մեջ։

«Հարկավ, ամենակարուկ միջոցը կը լիներ անցնել ուղղակի լատինական շրիֆտին—ասում է հեղինակը իր զեկուցման մեջ—իսկ յեթե ներկայիս մի այդպիսի բարեփոխություն ինչ-ինչ պատճառներով համարվում է վաղաժամ, գուցե և անհարմար, ապա Ճուում է դիմել մի կիսամիջոցի, այն է, հայերեն տառերը, ըստ հնարավորության, նմանեցնել լատինական տառերին և վերացնել նոցա անհարմարությունները»։

Քաղաքացի Դեմիրճողլյանը չի մտածել վոր յեթե յեղել են մարդիկ, վոր առաջարկել են ուղղակի լատինական տառերին անցնել, դա դեռևս մի նպա-

տակ ունի, վոր իբր յեվրոպացիք կարողանան կսորդալ հայերենը. բայց ինչ պիտի անի իր կիսամիջոցը, վոր վոչ հայերեն և վոչ լատիներեն և։

ՊՐՈԼԵՏԱՐԱԿՔ ՐՈԼՈՐ ՅԵՐԿՐԱԿՔԻ, ՄԻԱՑԵՔ! ՅԵՐԵՎԱԿԱՅԱՑ ՊԵՏՇԸ, ԲԻՒՐԱԿԱՑ ԷԼԵՒԵԿՑՏԱԿԻՐ, ԱՒԵՏՄԸ ՄԵԶԻ ՀԱՍԱՐ,

Ահա ներկայացնում եմ Հանձնաժողովիդ Դեմիրճողլյանի նորաստեղծ «հայ» տառերի նմուշները, տեսեք վորքան աշխատանք և գործ դրված, և դուք սշխատանք, հայ տառերին լատինական զգեստ հագցնելու գործում։

3. *Առաջարկ Հակոբ Մարտինի (Թիֆլիսից).—Մարտինը չի բավականանում նոր տառերի առաջարկով, այլ առաջարկում է նաև մի քանի տառերի հնչյունները փոխել։*

Ընդունելով վոր հարցը իր «լիակատար լուծմանն է սպասում», ինքը, վորպես «նախանձախնդիր», բերում է իր «լումանն», խնդիրը բաժանելով 4 գլխավոր կետերի.

ա. Գրերին տալ գեղեցիկ ձև. ձևակերպումը կատարել այնպես վոր գրերը իրենց նախատիպը պահպանած լինեն։

Ընդունելի չի լիովին.

բ. Ջանալ նրանց ամփոփել, վորպեսզի հնար չեղածին չափ քիչ տեղ գրավեն։

Սկզբունքով ցանկալի չի, բայց վոչ ստիպողական.

գ. Տառերը վորոշ ու պարզ հնչյուն ունենան և ուր վոր գրվելու լինեն, միևնույն հնչյունը արտաբերեն։

Այս կետը պատկանում է ուղղագրության, «մի հնչյունին մի գիր» սկզբունքին։

դ. Համանման հնչյուն ունեցող տառերից ավելորդ համարվածները դուրս ձգել.

Նախ՝ վոքրանք են այդ համանման հնչյուն ունեցողները և յերկրորդ՝ այս հարցը ինչ կապ ունի տառերի բարեձևության խնդրի հետ։

Հակոբ Մարտինը իր ժողովածներով և տրամագրություններով դեպքում է մի ջինաղարյան սքոլաստիկայի մեջ, նա միտք ի, կրոնական մարմանջի ազդեցության տակ։

Գրերի նախատիպը համարում է մարդուն—նրա ֆիզիքականին. «ամենը մարդն է, առանց մարդու չկա գիր». գրերը ունեն «գաղտնի խորհուրդ»։

Այբը վորպես առաջին գիր, համարողական հաշվով նշանակում է մեկ. իսկ մեկ և Ա֊ն. և վորովհետև ըստ քրիստոնեական հանգանակի Ա֊ն յերեք անձն ևր, դրա պատճառով էլ ա֊ն ունի յերեք ուղղահայաց գիծ, ամեն մի գիծը հատկացված է յերրորդության մի մի անձին։ Այս այսպես ընդունելով հանդերձ, Հակոբ Մարտինը այբը փոխում է մի ձևի, վոր նման է շերեփուկի, կամ գդալի։

Հայերեն տառերից բոլորովին այլանդակված են 7-ը՝ ա, ղ, խ, պ, փ, ք, ֆ. փոփոխված են չափավոր՝ 5-ը՝ գ, թ, չ, ո, ւ. մնացած տառերը մնացել են անվտանգ։

4. *Առաջարկ Վահան Տեր-Առաքելյանի (Թիֆլիսից).—«Առաջարկելով վորոշ տառերի բարեփոխության իմ դիտողությունները—գրում է նա—ես միայն կամենում են Հանձնաժողովիդ ուշադրությունը հրավիրել դրանց վրա. գուցե վորևե շահավետ բան գտնեք իմ առաջարկի մեջ։ Ցես տալիս եմ նշանագրերի փոփոխության լոկ սքեման, աշխատելով չը խախտել մեր այբուբենի առանձնահատուկ պատկերը։ Ջեռնհաս նկարիչը պետք է դրանք վերածի սիստեմի և ստեղծի այբուբենի նոր ու ճաշակավոր առանձնահատուկ պատկերը»։*

Ք՛աղաքացի Տեր-Առաքելյանը փոփոխություններ է առաջարկում 13 տառերի, վորոնք են՝ ա, գ, դ, ղ, թ, ժ, ծ, խ, ղ, մ, պ, վ և ո.

Ի՞նչ է այդ փոփոխության նպատակը, գեղեցկացնե՞լ, վոճավորե՞լ—վոչ. դարձյալ տեղ խնայելու հարցը, յերեք ստեղնից յերկու չինել, կամ լայնությունից նեղացնել. յեթե այդ տեսակետից էլ մոտենալու լինենք, նրա փորձերը հաջողված են մասամբ միայն, 3 տառի նկատմամբ գ, ղ, վ. մնացած տառերից դ, խ, պ այլակերպված են, գ, թ, ժ, ծ գրսի ծայրերը կրճատված, իսկ ա և մ նմանեցրած գլխատառերին, փոքր փոփոխությամբ։

Անհաջող են նաև ու, իւ և եա յերկբարբառների համար առաջարկված նոր տառերը։

Տեր Առաքելյանի մյուս առաջարկությունները վերաբերում են ուղղագրության։

Վերջում նպատակահարմար է համարում տողից վերև ու ներքև գրելու ձևը փոխել և գրել միևն տողից վերև, վորի համար «հարկ կը լինի վորոշ տառեր ո, ս, ու, ո, օ ավելի խոշորացնել, իսկ մնացած տառերը փոքրացնել»։

5. *Առաջարկ Սարգիս Սողոմոնյանի (Թիֆլիսից).—Այս առաջարկությունը բաղկանում է 9 կետից, Ջ֊ը ուղղագրական հարցեր են, (ընդունել է և օ). մնացածը վերաբերում է տառերի փոփոխության.*

ա. կետում այբն է. ընդունում է 3 մասից 1֊ը, այսինքն փոխանակ գրելու յերեք ստեղնի, գրել 1 ստեղնով. (ւ). իսկ գլխատառ այբը ուղղակի միջից յերկու կես է անում ուղղահայաց գծով և ընդունում յերկրորդ կեսը Ւ.

2. Ն տառը գրել գլխատառի տեղ, իսկ հասարակը դարձնել ձեռագիրը կրճատված ն֊ի պես, նման ռուսական e֊ին։

3. Տ֊ի համար թե մեծատառ թե հասարակ առաջարկում է գործածել ֆրանս. S, այսինքն Արամյանի տառ.

4. Գլխատառ Ի-ին վերջ և տալիս, առաջարկում և միշտ գրել փոքրատառ ւ-ի ձևով։

5. Ֆ գլխատառը պարզում և ավելի, f, իսկ հասարակի համար առաջարկում և պարզ ձեռագիր f-ի գործածությունն։

6. Ֆ-ի փոխարեն առաջարկում և իր կրճատված ձևը՝ վոր դեպի ձախ կամ դեպի ալ թեքված մի կեռ և, ֈ։

7-րդ կետը վերաբերում և յերկբարբառներին. եա-ի և իւ-ի համար առաջարկում և այն նշանները, ինչ Մալխասյանը. իսկ ու-ի մեցման համար նա առաջարկում և ընդունել ո-ն, իսկ ո-ի համար ձեռագիր ո, այսինքն ս-ի նման բացվածքը վերևից։

6. *Առաջարկ Էնասի (Թիֆլիսից)։* Հեղինակն առաջնորդվել և հետևյալ սկզբունքներով—

1. Բոլոր տառերը իրանց ուղղահայաց գիրքով լինելն յերկպիծ, մի գծաչափ ել միջանցքները հաշված. այնպես վոր մի գիրը 3 գծաչափ տեղ գրավե։

2. Բոլոր պոչավոր տառերը վորոնք վերից, վարից կամ կենտրոնից աջ ձգված գիծ ունեին, այդ գծերն ել դարձնել դեպի ձախ, տառի կենտրոնի վրա ճնացած զուտարկ տարածության վրա։

Այս հիմունքներով քաղաքացի Էնասը տառերը բաժանում և 2 կարգի. առաջին կարգ՝ 19 տառ վոր յերկպիծ են, համարում և անփոխոխելի (բ, ե, է, ը, ժ, ի, լ, ծ, կ, հ, ձ, ճ, յ, ո, ս, ր, ց, ւ, օ). իսկ «մնացյալ 20-ը փոփոխության յենթակա, վորոնք կամ իրանց կենտրոնի վրա կամ վարում, վերում ձգված կտուցով կամ պոչով յեռագիծ են».

Յեվ հեղինակն իր խորհրդածությունները սկսում և ա տառից. հավատալով վոր ա տառը «կազմված և կրոնական խորհրդով, վոր և նշանակ յերեք անձնավորության և մի աստվածության», առաջարկում և վոր յեթե այդ տառն անպատճառ պետք և փոփոխության յենթարկվի, գոնե նրա տեղ ընդունել նույն շերեփուկի կամ գդալի պատկերը «վոր և մարդ արարածի սկզբնական սաղմնիկի կենդանի գոյությունը». Յեթե այդ ել չի ընդունվի, այն ժամանակ «գոնե տալ նրան Աոչ համաստեղության նշանը վոր և այս՝ V»։

Յես այսչափը բավական յեմ համարում խոսել այս առաջարկի հեղինակի մասին, մի հեղինակ, վոր տառերը աստվածությանն և համաստեղությանն շնորհներով այլակերպելուց հետո գրում և այսպես.—

«Պետք և շատ զգուշությամբ մոտենալ գրերի խնդրին և անխոսուն գրերով չը բազմացնել մեր գրոց թվերը, վորոնք ռուսական հոսման մեջ հայ լեզվի համար ալիք չունեին»։

7. *Առաջարկ Լևոն Բունիաթյանի (Լենինականից).* Տառերի նմուշներ չի առաջարկում, այլ հայտնում և իր ցանկությունները սկզբունքային խնդիրների մասին.—

«Գեղարդասեի յեն բարակ տառերը, հաստ տառերը մարդու աչք են հոգնեցնում։ Մոտիկ տառերը ուղղակի փչացնում են աչքերը։ «Заря Востока»-ի ընթերցումը կատարյալ նահատակություն և։ Թող թուղթ շատ դնա, միայն թե մեր աչքերը չը փչացնի։ Տառերի

ուղղահայացությանն ել պետք և մեծ նշանակություն տալ. մարդիկ ավելի շատ և ավելի հեշտությամբ թեք շարժուձևեր են անում կամ ուղղահայաց կամ հորիզոնական»։

8. *Առաջարկ Տիգրան Զիլֆունու, (Էրմոն, Ֆրանսիա).*

«Պատիվ ունիմ Ձեր ուշադրության ներկայացնելու հայերենի տառերուն սեղմ ձևերը խոտացնող նախարդակ մը, հուսալով թե պիտի նպաստած ըլլայ արդիական սեղմ տառերու ձևավորման Ձեր ճիգերուն»։

Յեվ քաղաքացի Զիլֆունին մի առանձին որինակի մեջ գծագրելով իր առաջարկած այբուբենը, այսպես և նպաստում մեր ճիգերուն։

Գտնելով վոր «սեղմ գրության համար հիմնովին փոփոխելի չեն» ա, գ, դ, թ, ժ, խ, մ, պ, ռ, տ, փ, ֆ տառերը, նա այս ամենի համար նոր ձևեր և առաջարկում. ա տառի համար ունի 3 ձև 1) կանգնեցրած ɜ, 2) գլխատառի նման, միայն պոչը ներս տարած, և 3) գլխատառ Ս-ի նման, տակը ոլի կետ. գ, դ, թ, ժ տառերի աջ (հիմնական) գծից դուրս յեկած ծայրերը ջնջում և, պ-ն իր առաջարկած ɜ-ն և, հիմնական գիծը յերկարացրած, ռ-ի գծիկը ներս և քաշել, տ-ին ավել գլխատառի, կամ ֆրանս s-ի ձև և այլն։

Սեղմելու պատժից չեն ազատված և մյուս տառերը վորոնք, բացի ց, ղ, վ տառերից պետք և ասել «հիմնովին» փոփոխության չեն յենթարկվել հեղինակի կողմից, այլ բարակել ու նիհարել են։

Հայերեն տառերի նահատակությունը դրանով չի վերջացնում Զիլֆունին. նա իր սեղմելու յեռանդն ավելի զարգացնելով անում և ուրիշ առաջարկներ՝

1. «Թե լայնքեն և թե յերկայնքեն շահելու համար», ներս և քաշում կարճացնում տառերի բոլոր ծայրերը.

2. կամ «գրել բոլոր ձևերն ալ միջին տողամեջ, առանց վեր վար ձևերու» սկզբունքով իր հյուծված բոլոր տառերը միաշար տեղավորում և յերկտողի մեջ։

Յեվ իր գործը համարելով վերջացած, առաջարկի հեղինակն անում և այսպիսի յեզրակացություն.—

«Առաջարկածս ձևերը համեմատականի յերը դրվին գործածության մեջ յեղած տպագրական տառերու ձևերուն հետ, կը տեսնվի վոր՝

1. ա, թ, խ, պ, տ, փ, ֆ յեռաձղի լայն տառերը կը վերածենք միաձյուղ և յերկձյուղ ձևի։

3. Իսկ մեկ շարքի վրա (մեջին տողամեջ) տպագրելու և գրելուն ձևերը չը միասելու չափով կարճ սեղմ և նուրբ տառերու ձևեր ձուլելու պարագային՝ կը շահենք թե լայնքեն և թե յերկայնքեն»։

Վերջացնելով իր ասելիքը և իր առաջարկած տառերն անվանելով Զիլֆունի տառեր, հեղինակը հավատում և վոր նրանց, «տպագրականեն ձեռագրի և գլխագրի գործելը նույնքան հեշտ և՝ վորքան հին ձևերը, համատ գեղագիրներու ձեռքով»։

9. Առաջարկ Մուշեղ Իփեքճյանի (Նոր-Նախիջևան)։

«Առաջարկում եմ գրերի նոր ձևեր, հայ ձեռագիրը գեղեցկացնելու նպատակով։ Այդ ձևերը ի հարկե չեմ հնարած չեմ, այլ միմիայն հենց մեր գրերից ձևակերպել եմ»։

Ինչպես տեսնում եք քաղաքացի Իփեքճյան վոչ թե տպագրական տառերն է ուզում գեղեցկացնել, այլ ձեռագիրը. վոչինչ, ձեռագրից կարելի չի տպագիրը տառեր շինել։

Ի՞նչպես է գեղեցկացնում տառերը և ինչ սկզբունքով.

«Գեղեցիկ գրի գլխավոր պայմանն է—ասում է նա—մինչև գրի (փոքր գրերի) շատությունը, վորը մեզանում ամեն-ամենը 5—6 հատ են. ա, ո, ռ, ս, ե, և, օ, մինչ ֆրանսերենում 13 հատ—ահա այս հիման վրա մեր գրերից վոմանք վարից, վոմանք վերից կրճատելով, կարճացնելով փոքրացրել եմ». և Իփեքճյան վարից-վերից կրճատել է բ, կ, թ, խ, ծ, ճ, ն, վ, փ, ֆ տառերը. 3 տողի միջև գրվող տառերը տեղավորել է 2 տողի, և 4 տողի միջև գրվողները 3 տողի մեջ։ Բացի սրանից իր սկզբունքից դուրս մի քանի տառերի էլ նոր ձևեր է տվել. է-ին տվել է թ-ի գլխի կերպարանք, չ-ին ֆրանսերեն r-ի տեսք, ջ-ին ձեռագիր ձ-ի և ե-ին ռուսական ձեռագիր s-ի ձև։

«Այս ձևի գրերով վոչ միայն գեղեցիկ այլև շուտ կարելի չի գրել և ժամանակը խնայիլ» հավատացնում է մեզ առաջարկի հեղինակը։

Ցես կասկածում եմ վոր ք. Իփեկճյանի առաջարկած տառերը գեղեցիկ կարելի է համարել. կասկածում եմ նույնպես վոր նա այդ տառերը շուտ է գրել և խնայել ժամանակը. բայց վոր նրա փոփոխության ենթարկած տառերը հայերեն չեն, այդ մասին չեմ կասկածում։

Ահա սրանք են այն բոլոր առաջարկները վոր արված են մինչև այժմ հայերեն տառերի բարեփոխման վերաբերյալ։ Բացի ա. և բ. առաջարկներից, վորոնք ներկայացնում եմ Հանձնաժողովի քննության, մյուսները, ինչպես տեսնում եք, պատահական գործեր են, ու չեն կարող մեր քննության առարկա լինել։

Ինձ թվում է թե Հանձնաժողովը պետք է մի քանի սկզբունքային հարցեր պարզե, վորոշումներ անի և այդ վորոշումները հայտարարե, վորպեսզի մասնագետ արվեստագետ գծագրիչներ ու նկարիչներ հանձն առնեն կազմել նոր ձևի այնպիսի այբուբեն, վոր կարողանա դիմանալ քննադատության։

Վորոնք են այդ սկզբունքները.

ա. Ամենից առաջ այն, վոր նոր տառերը պետք է լինեն հայերեն, անպայման հայ գրերի պատկերը պահպանած լինեն և վոչ թե նորաստեղծ նշաններ լինեն հայ տառերի անուններով։

բ. Վոր պետք է հայերեն նոր տառերը պահեն իրենց արևելյան բնույթը, չը պետք է յեվրոպականացած լինեն։

գ. Ունենան վորոշ ստիլ և գեղեցկություն։ Իրենց խմբավորման և շարվածքի մեջ լինեն ներդաշնակ, ռիթմիկ։

դ. Վոր տպարանական տեխնիքայի տեսակետից լինեն պրակտիք, ամփոփ և թե տեսության հաճելի, թե ընթերցման դյուրություններ ընծայող։

ե. Վոր առաջարկվելիք տառերը պետք և ունենան իրենց համապատասխան գլխատառերը և կուրսիվը։

Ինչ վերաբերում է տառերի ուղիղ կամ շեղ դրության, դա յերկրորդական խնդիր է. նույն տառերը կարելի չի պատրաստել և ուղիղ և շեղ, ինչպես ուրիշ ազգերի տառերն են։ Թեքությունը չը պետք է 80°-ից պակաս լինի, ինչպես Պարիզի նոր տառերը՝ վոր հասնում են 70°-ի։ Ինչպես դրության պատճառ բռնելով չը պետք է տառերն այլանդակել 3 ստեղնին անպատճառ 2-ի վերածելով. բոլոր ազգերի տառերի մեջ այդ բանը կա և նրանցից վոչ մեկը չի մտածում այդպիսի խնայողության մասին. մինչև 3 ստեղնի չեն ռուսերենի մեջ ж, ш, ю, ы, щ, ъ տառերը։

Գալով գրության 4 տողի մեջ տեղավորված լինելուն՝ վոր ուզում են վերևի յերեք տողի մեջ տեղավորել, կամ միջին յերկու տողի մեջ միայն, ինչպես մեր յերկաթագրերն են, դա նույնպես անկարելի բան է հատարակ տառերի համար։ Յեվրոպական և ռուսական բոլոր տառերը 4 գծի դրության ունեն, միայն պետք է տառերի բուն կորպուսը, իրանը մեծացնել և վերևի ու ներքևի ծայրերը կարճացնել 2—3—2 հարաբերականով։

Այժմ յերկրաբրտառերի միացման մասին. յես առանձնապես դեմ եմ նոր տառեր հնարելուն և հայոց այբուբենը 39 տառից հասցնել 42—43-ի։ Յեթե ֆրանսիացիք ու գրելու համար յերկու տառ են գործածում՝ (ou), շ գրելու համար՝ 2, (ch), չ գրելու համար՝ 4, (tsch), գերմանացիք շ-ի համար՝ 3, (sch), խ-ի համար՝ 2, (ch). և այլն, ինչ կա վոր մենք էլ ու կամ եա կամ իւ գրենք 2 տառով. ինչու պետք է անպատճառ ռուս այբուբենից որինակ վերցնենք. մի լեզու, վոր հեշտությամբ կարող եր լատինականից h տառը վերցնել վոր r չը գրի, (Гейне, Гамлет) կամ ջ-ն յերկու տառով չը գրի, (бюджет)։ Ժամանակը վոսկի չի ասող անգլիացիք հայտնի չի թե վորքան տառեր են գրում «իզուր տեղը» և չեն կարդում, յերբեք չը խորհելով խնայել իրենց ժամանակը կամ թանաքն ու թուղթը։

Զարմանալին այն է, վոր մի կողմից գնում են յերկբարբառների միացման խնդիրը, մյուս կողմից միացած տառեր, յեթե ունենք, բաց են անում. և-ը գրում են յեվ, ո-ն=վո, ե=յե, ահա ձեզ խնայողություն։

Իմ զեկուցման վերջում յես անում եմ հետևյալ առաջարկը.

Հանձնաժողովը վերև հիշված սկզբունքներն ընդունելով պետք է նշանակե հրապարակային մրցություն, (կոնկուրս) հայերեն նոր ձևի տառերի համար. մրցության կարող են մասնակցել բոլոր յերկրներում գտնվող մասնագետ արվեստագետները՝ նկարիչներ, փորագրիչներ, գծագրիչներ, գրաձուլիչներ. նշանակել ա, բ, և գ. մրցանակ, տարբեր պարգևներով. յեթե ներկայացրած նախագծերից վոչ մեկը չընդունվի, կանչ առնել մեր այժմ յեղած լավագույն տառերի վրա. կան այնպիսի տառեր վորոնք և սեղմ են և գեղեցիկ և տպարանական տեսակից պրակտիք. այդ տառերը գործածությունից դուրս յեկան այն որից, յերբ գրաշարներն սկսեցին կտրոով աշխատել։

Մի նոր տեսակի տառեր ընդունելով չի վերանում հին, այժմյան տառերով գրքեր տպագրելը, մինչև վոր ժամանակին աստիճանաբար նոր տառերը հներին գործածությունից դուրս կը վանեն, ինչպես գործածությունից դուրս են յեկել մեր տպագրական տառերի հին ձևերից շատերը։

Պրոֆ. Հր. Աճառյան

ՀԱՅ ՏԱՌԵՐԻ ԲԱՐԵԶԵՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գիղարվեստագետ չեմ, վորպեսզի իրավունք ունենամ իբրև մասնագետ խոսելու տառերի գեղեցկության ու տգեղության մասին։ Տպարանական աշխատավոր կամ ձուլիչ էլ չեմ, վորպեսզի կարենամ տառերի տեխնիքական հարմարության կամ անհարմարության մասին խոսել։ Բայց չես ունիմ մի առավելություն, վոր շատ քչերն ունին և վոր տալիս է ինձ իրավունք ավելի վստահ կերպով խոսելու տառերի հարմար կամ անհարմար լինելու մասին.—դա չե աչքերիս տկարությունը։

Մասնագիտությանս բերմամբ ստիպված լինելով կարդալ շարունակ զանազան լեզուներով և զանազան գրչությամբ գրքեր, իրավունք ունիմ, կարծեմ, նույնպես համեմատության դնելու զանազան տեսակի գրություններ և տալու իմ գնահատականը մեկի կամ մյուսի վերաբերմամբ։

Մենք անշուշտ գեղարվեստին կամ տեխնիկային ծառայելու համար ստեղծված չենք, այլ գեղարվեստը և տեխնիկան են՝ վոր պիտի ծառայեն մեզ։ Գիրն էլ, արաբական նախշերի նման, հնարված չե գեղարվեստական բարձր ճաշակներին հաղուրդ տալու համար. նա կոչված է մեր վորոշ կարիքները լրացնելու. վոր գիրը վոր ավելի հեշտությամբ ընթեռնվի չե, նա էլ լավագույնն է։

Առանց չերկար ու բարակ քննության մեջ մտնելու, մի անգամից կարող եմ ասել՝ վոր չեթե համեմատության դնենք հայերենը, լատիներենը և ռուսերենը (չերեք այբուբեն, վորոնք ամենօրյա գործածության մեջ են), ամենից հեշտ ընթեռնվի գիրը հայերենն է։ Այս բանը կարող է փորձել ամեն մի մարդ և պիտի տեսնե վոր իմ այս կարծիքը ճիշտ է։ Յերեկոյին, չերբ ճրագվառոցի ժամանակն է, գրեք ձեր առաջ այդ չերեք լեզվով մի մի գիրք և պիտի տեսնեք թե այդ կնստասվերի մեջ վոր լեզվով ավելի հեշտ կամ արագ կարող եք կարդալ և վոր լեզվի ընթերցումը կարելի կլինի ավելի չերկար շարունակել մինչև մութն ընկնելը։ Առաջին տեղը բռնում է հայերենը, չերկրորդ տեղը բռնում է լատիներենը, և չերրորդ տեղը միայն ռուսերենը։—Անշուշտ փորձը պիտի կատարել հավասար մեծությամբ տառերի և հավասար մաքրությամբ տպված գրքերի վրա։

Յես կարող եմ նույն իսկ պատճառաբանել թե ինչու է այս այսպես։ Յեթե առնենք ռուսերեն այբուբենը և տառերի վերևից ու ներքևից մի մի հորիզոնական գիծ քաշենք, պիտի տեսնենք վոր գրեթե բոլոր տառերը այդ չերկու զուգահեռականների մեջն ամփոփված պիտի մնան. 36 տառերից միայն 10 (այժմ 8) б, д, й, р, у, ф, ц, щ, ներկայացնում են գծից վերև կամ ներքև փոքր շեղումներ։ Լատինական այբուբենի **26** *տառերի ճիշտ կեսը (13 հատ) ունի այսպիսի շեղում.* **8** *հատը (*b, d, f, h, i, k, l, t*) գծի վերև և* **5** *հատը (*g, j, p, q, y*) գծի ներքև։ Իսկ հայերեն այբուբենի* **39** *տառերից միայն* **7** *(ա, ո, ռ, ս, տ, ւ, օ) գտնվում են գծի վրա,* **14**-*ը (բ, գ, դ, զ, ը, լ, ղ, յ, շ, չ, պ, ր, ց, ք) իջած են գծի ցած,* **տասը** *(ե, է, ժ, ծ, հ, ձ, ճ, մ, ն, և) բարձրացած են գծի վեր,* **ութը** *(թ, խ, կ, ջ, վ, փ, ֆ) բռնում են ամբողջ տողը։ Առաջինները կոչում եմ միջնական, չերկրորդները ստորնական, չերրորդները վերնական, վերջիններն ամբողջական։*

Սպիտակ տախտակի վրա ձգված միապաղաղ մի սև ժապավենի (ինչպես և ռուսերեն գրությունը) նուրբ մասերը դիտել ու վորոշել շատ ավելի դժվար գործ է աչքի համար, քան այդ ժապավենի վրա վերև ու ներքև կարկառած սյուները։ Ահա թե ինչու ռուսերենը՝ վոր ունի միայն 25% կարկառումներ, ավելի դժվարընթեռնվելի չե քան լատիներենը՝ վոր ունի 50% վերև ու ներքև կարկառումներ։ Իսկ այս էլ ավելի դժվար է քան հայերենը՝ վոր ունի 82% կարկառումներ, ավելի զանազանյալ ձևերով, վոչ միայն վերև ու ներքև, այլ և ամբողջական, վոր չկա լատինականում և կազմում է հայերենի առավելություններից մեկը։

*Միակ պակասությունը՝ վոր նկատում ենք ամենքս հայերեն տառերի մեջ, է մի քանի տառերի չափազանց նմանությունը. այն է՝ ա և տ, գ և դ, ղ և ղ, ո և ս. ճիշտ ինչպես ռուսերեն и, к, п և н կամ լատիներեն l և i, e և o։ Սովորաբար մենք ընթերցման ժամանակ նկատություն չենք կրում այս տառերի հանդեպ, ըստ վորում մենք տեսնում ենք բառերի ընդհանուր պատկերը և վոչ թե տառերն առանձին առանձին։ Բայց հենց վոր պատահում է մի ոտար կամ անծանոթ բառ, խնդրին զգում ենք դժվարությունը, վոր վատ տպագրության մեջ դառնում է անհաղթելի։ Յեվրոպացի լեզվաբաններից մի քանիսը (Klaproth, Pott, Pictet) **ուղղ** բառը կարդալով **ուզս**, այս ձևի տակ էլ ստուգաբանել ելին։ Հունգարահայ հայագետ Patrubány* **գանգաճաւանգ** *բառը կարդալով* **գանգաճաւանգ**, *աշխատել եր ստուգաբանել* **գաճ** *արմատից և Վիեննայի Մխիթարյան միաբանությունը այդ ստուգաբանությունը հրատարակել եր հայագիտական Հանդես Ամսորիայի եջերում (1908 թ. եջ 152)։ Մի ուսուցիչ գիտեմ՝ վոր* **խայտաբղեխ** *բառը շարունակ* **խայտաբզեխ** *եր արտասանում։ Յես էլ վոքր աշակերտ ժամանակս հնդկական սրբազան լեզվի անունը* **սանսկրիտ** *եյի կարդում միշտ, փոխանակ* **սանսկրիտի**։ *Վերջապես ամենքս էլ ասում ենք շագանակ, մինչդեռ բառն է շղագանակ։*

Բայց այս պակասությունը դարմանել անկարելի չե.—Ճանիկ Արամյանը շատ հաջող կերպով հնարել եր տ տառի համար s ձևը՝ վոր գլխատառի փոքրացրածն է և շատ էլ հաճելի ձև ունի։ Արաքսիանյանը հնարել եր գ և դ տառերի համար կողքից թեբաու, իսկ տ-ի համար մյուին սյունը չերկար ձևեր, վորոնք սակայն հաջող չեն։ Լավագույն ձևը մտածել են Վենետիկի Մխիթարյանները՝ վորոնք հնարել և չերկար ժամանակ ի վեր գործածության են դրել գ և դ տառերի համար կլոր գլխով, իսկ տ տառի համար մյուին սյունը բարակ ձևեր։ Այս նորմուծությունները այնքան հաջող են, վոր ասելուց հետո միայն նկատելի չե լինում և վոչ վոքի աչքին խորթ չի չերևում։ Վենետիկեցոց այս նորակերտ տառերը մուտք չեն գտած կովկասում. կովկասում տարածված են սովորաբար մեր տպագրության մեջին շրջանի տառերը. այն էլ հաճախ հնացած, մաշված, կոտրած ու անպետքացած, և ահա այդ տառերի վրա են՝ վոր մեր քննադատները հիմնում են հաճախ իրենց կարծիքները։

Տեսնենք թե ովքեր են այդ քննադատները, ինչ պակասություններ են գտնում մեր այբուբենի մեջ և ինչ բարեփոխություններ են առաջարկում։

Մեր քննադատներին մենք կարող ենք յերկու կարգի բաժանել. առաջին կարգը կազմում են նրանք՝ վոր ուզում են թողնել իսպառ հայերենը և անցնել լատիներեն գրությանը, ինչպես անցան թուրքերը։ Յերկրորդ կարգը կազմում են նրանք՝ վորոնք այնուամենայնիվ չեն թողնում հայերեն այբուբենը և ուզում են միայն բարեփոխված տեսնել այն։

Առաջին կարգի անձերի դեմ վոչինչ չունիմ խոսելու. նրանք նորասերներ են, վորոնց առաջ քննադատությունը անզոր է։ Նրանք պիտի գտնեն հայերենը ագեղ, անճոռնի, անկյունավոր, միջնադարյան, անարվեստ և այլն և այլն, իսկ լատիներենը սիրուն, գեղեցիկ, նոր, արվեստավոր և այլն և այլն։ Սրանց մեջ վոչ թե տառերի եությունն է խոսում, այլ տառերը գործածող ազգերի դիրքը։ Յեթե պատահմամբ լատինական տառերը լինեին հայոց տառերը, իսկ յեվրոպացիք գործածելիս լինեին հայերեն տպագրերը, վերի ածականները անշուշտ իրենց տեղերը փոխանակած պիտի լինեին։ Մի-նույն տառաձևերը յեթե ներկայացնում են մեր ճ, ո, սչ, քչ և այլն տառերը, ագեղ են, իսկ յեթե ներկայացնում են ֆրանսերեն ձեռագիրը գլխատառ d, n, u, f և այլն, գեղեցիկ են։ Անկյուններ յեթե կան հայերեն տառերի մեջ, ագեղ են, իսկ յեթե այդ անկյունները գտնվին ֆրանսերեն տառերի մեջ, գեղեցկություն են. այսպես ա և ո ագեղ են, իսկ F և E տառերը, վոր 9 կամ 10 անկյուն ունին, այսինքն անկյունների մի ամբողջ տրցակ են կազմում, շատ գեղեցիկ են։

Թողնելով ուրեմն սրանց, անցնենք յերկրորդ կարգի քննադատներին։

Սրանք գտնում են հայերեն այբուբենի մեջ հետևյալ թերությունները.

1. Մի խումբ տառեր յեռատուն լինելով՝ տեղ շատ են բռնում, պետք է կրճատել դրանց այուններից մին և վերածել յերկհյուսի. այսպես են պ, խ, տ, փ, և մանավանդ ռ, վոր իր հաճախակի գործածության պատճառով խլում է ահագին տեղ։ Սրա համար էլ առաջարկում են ռ-ի զանազան նոր ձևեր։

2. Հայերեն տառերը իրենց կողքերին կամ ծայրերին ունին ավելորդ թևեր կամ փշիկներ, վորոնք տպագրական տեխնիկայի տեսակետով շատ անհարմար են, հաճախ կոտրվում են և այլն. այսպես բ, գ, դ, թ, ժ և այլն։

3 Հայերեն տառերը շեղ են կանգնած, պետք է ուղղահայաց դիրք տալ նրանց, ինչպես լատինականն են։

4. Հայերեն տառերից վոմանք ձևի մեծ նմանության պատճառով շըփոթվում են իրար հետ և տպագրական փորձերի ժամանակ մեծ նեղություն են տալիս սրբագրիչներին։

5. Հայերեն տառերի մեջ կան մի քանիսը՝ վորոնք բռնում են ամբողջ տողը, այսպես են թ, ի, խ, կ, ղ, վ, փ, ֆ տառերը. այս բանը գեղարվեստական ճաշակին հակառակ է. լատիներենը չունի այդպես բան. այստեղ տառերը կամ վերև են կամ ներքև. պետք է կրճատել այդ հայերեն տառերն էլ և վերածել կամ վերնականի և կամ ստորնականի. օրինակ՝ խ դարձնել ս, փ դարձնել ր և այլն։

6. Հայերեն տառերը ունին տակից յերկարած պոչեր, կամ գլխից

կտուցներ, վորոնք դիպչելով հաջորդ կամ նախորդ տառին, կամ կոտրվում են և կամ նրան հետևը քշում, ճնշում կամ սեղմում։ Այսպես են ղ, շ, մ, ն և այլն։

7. Հայերեն տառերը անկյունավոր են, պետք է վերացնել այդ անկյունները և կլորակ ձև տալ նրանց։

8. Հայերեն տառերի վորոշ միացումներ անտեսանելի տեսակետով անհարմար են, խլում են շատ տեղ, պետք է նրանց հաճար հնարել նոր միաձույլ փակագիր տառեր. այսպես են ու, իւ, եա, եո։

Աշխատենք պատասխանել այս հարցերին մի առ մի։

1. Հայերեն այբուբենի յեռատամ տառերի թիվը 5 է (ա, պ, խ, տ, փ), վորոնց յեթե միացնենք նաև թ, և, ֆ տառերը, դարձյալ ավելի մեծ թիվ չեն կազմում քան ռուսերենի յեռատամ տառերը (ж, м, т, ф, ш, щ, ы, ю).— ռուսերենը 36 տառի մեջ ունի 8 յեռատամ տառ, մեկն էլ դեռ չերեք ու կես տառանով (щ), իսկ հայերենը 39 տառի մեջ՝ առատավելն 8 յեռատամ տառ։ Յեռատամ տառեր ունի նաև լատինական այբուբենը (m, w), յերկու տառ 26-ի մեջ։—

Բայց ինչ պիտի տար մեզ յեռատամ տառերի վերածումը յերկատամի.—տառերի նոր շփոթություններ, վորոնցից աշխատում ելինք խուսափել, այսպես ա շփոթվելու չե ս-ի հետ, պ՝ ղ-ի հետ, խ դառնալու չե խ, տ դառնալու չե ո կամ ս, փ դառնալու չե վ կամ խ, և շփոթվելու չե ե-ի հետ և այլն։

Ինչ պիտի շահեինք խնայողական տեսակետից որինակ ա-ը վերածելով յերկատամի կամ յերկու և կես տատմի.—գրաշարի շարժումները չէին կրճատվելու, վորովհետև մնատամ, յերկատամ, թե յեռատամ մի տառ առնելու համար մի շարժում և հարկավոր.—տեղի և թղթի խնայողության կողմից.—և վոչ իսկ ղերո, վորովհետև ա-երի կրճատումից խնայված տեղը նորից պիտի կորչեր նոր տողերի բաց մասով և գլուխների վերջավորությամբ և սկզբնավորությամբ։

Ընդհակառակը յեռատամ ա-ը այն առավելությունն ունի (խոսում եմ դարձյալ թույլ ու տկար աչքերի տեսակետից), վոր վերնական, ստորնական և ամբողջական տառերի մեջև լայն հարթություններ ստեղծելով՝ տառերի զանազանակերպությունը ավելի խոր և ավելի շոշափելի յե դարձնում։ Զլիներ ա-երի առաջ բերած այս լայն հարթությունը, ցից տնկված տառերի կուտակումը դժվարընթեռնելի պիտի դառնար թույլ աչքերի համար։ Այս բանը կարելի յե նույնպես փորձով իմանալ հայատառ թուրքերեն մի գրվածքի ընթերցումով։ Թուրքերենի մեջ, ինչպես հայտնի յե, ա-երի քանակը շատ ավելի պակաս է հայերենից։ Այս լեզվի մեջ բառերը բաժանվում են յերկու տեսակի, ծանր և թեթև, բոլոր թեթև բառերը սկզբունքով չեն կարող յերբեք իրենց մեջ ունենալ ա, այլ նրա տեղ դնում են է։ Արդ՝ ա-երի այս պակասը՝ իր հետ բերելով լայն հարթությունների էլ պակասը, հայատառ թուրքերենի ընթերցումը ավելի դժվար և դարձնում քան դուստ հայերենինը։

2. Փշիկները հայերեն տառերի անհրաժեշտ տարրերը չեն. այս բանը ամեն մարդ էլ գիտե և դրա համար ապացույցներ մեջ բերելու կարիք չկա բնավ։ Հին տպագրությանց կամ զանազան ձեռագրերի մեջ այդ փշիկները շատ մեծ ու խոշոր ելին. բայց ավելի նոր տպագրությանց մեջ հետզհետե

փոքրացել և գրեթե անտեսանելի չեն դարձել։ Յեթե տպարանական գործում դյանք վորևե դժվարություն են առաջ բերում, առանց այլևայլի կարելի չէ ամբողջապես կրճատել և դրանով հայերեն տառերը վոչնչ կորցրած չեն լինիլ իրենց կերպարանքից։ Ի՞նչ տարբերություն կա բ և բ ձևվերի մեջ։ Վոչինչ։—Արդեն շղագիրը գրության մեջ փշիկի սխտամը վերացված է և վոչ վոք փշիկ չի դնում, յերբ գրում է խ, ք, բ և այլն և այլն։ —Ուզում եմ միայն ավելացնել թե լատինական տառերի մեջ էլ փշիկները կան և այն վոչ թե մի, այլ յերկու կողմից. որ. q, f և այլն.—հարց եմ տալիս մեր բարեկործիչներին. այդ ինչպե՞ս է լինում վոր լատիներեն գրերի տպագրության մեջ փշիկները ամուր մնում են, բայց հենց վոր հայերեն տպելու լինենք, կոտրվում են։

Փշիկների հետ կարող ենք միացնել նաև տառերի մարմնից դուրս կարկառած թևերը, վորոնք նույնպես տառերի անհրաժեշտ մասը չեն կազմում և յեթե հարկը պահանջում է, կարելի յե անմիջապես կրճատել. այսպես ժ, թ, ծ։ Վոչ վոք չպիտի նկատի այս փոփոխությունը։

3. Տառերի ուղիղ կամ թեք դիրքը չի բլում տառերի եությունից. ամեն տեսակ այբուբեն կարելի յե յերկու դիրքով էլ գրել կամ տպել։ Ռուսերենը՝ վոր ընդունել է գլխատառ գրության ձևը և նրա հետ բոլորովին ուղղահայաց դիրքով տպագրություն, ունի և թեք գրերով տպագրություն. այսպես նաև լատիներենը, վոր ունի իտալիկ կոչված թեք կամ շեղատառ տպագրություն։ Հայերենի մեջ էլ կա ուղղահայաց դիրքով տպագրություն։ Յեթե մեր մեջ տարածված է թեք դիրքով տպագրություն, նշանակում է թե մեր ժողովուրդը այդ ավելի յե սիրում։ Փորձի հաժար ավենք նրա ձեռքը ուղղահայաց դիրքով տպագրություն և պիտի տեսնենք վոր նվազ հաճույքով պիտի կարդա։ Վերջապես սա ճաշակի խնդիր է, վորի դեմ վոչ վոք իրավունք չունի խոսելու։ Ովքեր սիրում են ուղղահայաց դիրքով տպագրություն ունենալ, թող այդպես անեն։ Դրանով հայերեն տառերը չեն փոխվիլ։

4. Տառերի նժանության և դրանից խուսափելու միջոցների մասին արդեն խոսել ենք վերևում և նույնը կրկնել ավելորդ է։

Այստեղ ուզում եմ պատասխանել նրանց՝ վորոնք առարկում են թե գ, զ տառերը կլոր գլխով, իսկ գ, ղ տառերը քառակուսի ընդունելով առաջանում է անհամապրություն, և հետևաբար խոտելի յե։—Հայերեն այբուբենը սկզբունքով ընդունում է կլոր տառեր. այսպես՝ կլոր գծեր ունին է, թ, ժ, ծ, հ, ձ, ճ, մ, յ, ն, շ, չ, ջ, ց, ք, օ, ֆ, (17 տառ, վոր գրեթե ամբողջի կեսն է)։ Յեթե սրանց վրա ավելանան յերկուսն էլ, վոչ մի անհամապրություն չի ծագիլ։

5. Զգիտեմ թե ինչու՞ յեն ուզում մեր բարեկործիչները մեր ութը ամբողջական տառերը կրճատելով՝ վերնականի կամ ստորնականի վերածել։ Արդյոք գեղարվեստական կամ ճաշակի վիճելի տեսակետով թե տպագրական հարմարության։ Առաջին պարագային հարց եմ տալիս, հապա ինչու՞ ռուսերենը՝ վոր սկզբունքով ընդունել և միջնական գրության սխտամը, թույլ է տալիս նաև ամբողջական փ տառաձևի գոյությունը։—Անցնենք ավելի գեղեցիկ լատինական գրության։ Հայտնի յե վոր ձեռագիր գրությունը ավելի գեղեցիկ և և ընդունակ ավելի զարդարանքներ ընդունելու քան տպագիրը. արդ՝ ինչպե՞ս է վոր յեթե լատիներենի տպագիր գրությունը չունի

ամբողջական տառեր, ընդհակառակը ձեռագիր գրությունը ունի f, j, s, p և q՝ վոր նույնպես շատեր գրում են ամբողջական ֆ ձևով։

Իսկ յեթե տպագրական տեխնիկայի տեսակետով է, այս մասին կարիք չկա մտահոգության. արդեն հնարված է տողատիպ (linotype) մեքենա, վոր տողերը միանգամից և տառերը ամեն անգամ նորից նոր ձուլելով ազատում է մեզ տառերի կոտրատվելու վտանգից և այլ տեխնիքական անհարմարություններից, յեթե իրոք կան։

Այստեղ ավելացնում եմ և այն՝ վոր ամբողջական տառերի գոյությունը պահանջ է հայերեն այբուբենի մեջ։ Լատիներեն այբուբենը ունենալով միայն 26 տառ, կարող եր միայն միջնական, վերնական ու ստորնական տառերով բավականանալ։ Բայց ռուսերենը՝ վոր տառերի թիվը ավելացրել է, ստիպված է յեղել ընդունել, հակառակ իր սկզբունքին, ամբողջական փ տառաձևը։ Հայերենն էլ՝ վոր ունի 39 տառ, այսինքն լատիներենի $1^1/_2$ անգամը, պարտավոր եր ընդունել մի քանի ամբողջական տառեր։ Առանց դրա շատ տառեր իրար նման ձև պիտի ունենային և ընթերցման ժամանակ շփոթություն առաջացնեին։ Այսպես պիտի լինի այժմ էլ, յեթե լսելով վորևե բարեկործիչի կարծիքը, մենք էլ մեր ամբողջական տառերը կրճատենք։ Ամբողջական տառերի գոյությունը կարևոր և պահելու համար այն պանազանակերպությունը մեր այբուբենի մեջ, վորով, ինչպես զեկուցմանս սկզբում ասացի, հայերեն այբուբենը զերազանցում է ռուսերենից և լատիներենից։

6. Այս կետի վերաբերմամբ էլ յերկար կանգնելու կարիք չունիմ. հայերեն տառերի պոչերի յերկարությունը անհրաժեշտ պահանջ չե և նույնպես կարելի յե կրճատել։ Կա այնպիսի տպագրական ձև, ուր այդ պոչերը շատ կարճացած, հապավված կամ այնի վրա վոլորված են, վորով և ծոցագրի հին սխտամը վերացված է։ Կարելի յե այս տառերը դնել ավելի լայն գործածության։ Ավելացնենք այստեղ էլ այն՝ վոր նորահնար տողատիպ մեքենան այս կետումն էլ ազատում է մեզ յենթադրյալ մտահոգությունից։

7. Սխալ է ասել թե հայերեն բոլոր տառերը անկյունավոր են. մեր այբուբենի գրեթե կեսը (է, թ, ժ, ծ, հ, ձ, ճ, մ, յ, ն, շ, չ, ջ, ց, ք, օ, ֆ, վենետիկյան բարեփոխությամբ նաև պ, ղ) մասամբ կամ ամբողջությամբ կլորաձև են. իսկ գլխատառը ամբողջապես կլորաձև է, բացառությամբ մեկի, այն է առյուծանման կանգնած խրոխտ Հ-ի։ Ընդհակառակը լատիներեն այբուբենն էլ ամբողջապես կլորաձև չե, այլ ունի անկյունավոր տառեր, ինչպ. k, v, w, x, y, z, իսկ գլխատառը գրեթե ամբողջապես անկյունավոր է։ Սրանից հետևում է վոր անկյունավորությունը տգեղություն կամ անպատեհություններ չի ներկայացնում։ Բացի սրանից հայերենն էլ ունի նաև ամբողջովին կլորաձև գրություն. այդպես են Արամյան կոչված տառերը և մի քանի նման գրչություններ։ Գործածությունը կախված է դարձյալ ճաշակից։

8. Միաձույլ տառերի հարցը՝ վոր վերջում են վոմանք, կրկին արժեք ունի. տեխնիքական և լեզվաբանական։ Առնենք նախ լեզվաբանականը։ Բացի ու-ից, մեծ սխալ է եա, եո, իւ (յերբ նա հնչվում է yu) գրչությանց միացումը և հակառակ՝ գիտության տարրական պահանջներին։ Նրանք հակասում են լեզվաբանական այն սկզբունքին, վոր պահանջում է մի հնչյունին մի գիր և մի գրին մի հնչյուն։ Վոր ազգի այբուբենի մեջ

տեսնվել եւ՝ վոր այդ զույգ հնչյունները միատառ լինելին. ֆրանս. ia, ya, ea, yu, գերմ. ja, je, jo, ju, անգլ. you, ye, ya յերկատառ կամ յեռատառ են։ Յենթադրենք թե այս բոլորը սխալվել են և նրանց սխալին մենք պարտավոր չենք հետևելու։ Առնենք այդ դեպքում գիտական լեզվաբանական միջազգային այբուբենը, վոր ամեն նախապաշարումից ու սխալից ազատ, հետևում է միայն և միայն ճշտության և բանականության։ Այստեղ ել գտնում ենք ya, yo, yu, ye և այլն գրչությունները։ Բարենորոգիչները մի զրպիչ պատճառ միայն ունին. կույր հետևողություն ռուսերենի. միակ լեզուն՝ վորի մեջ ունենք я, е, ё, ю միատառ կամ միաձույլ գրչություններ։ Բայց թող հիշեն բարենորոգիչները, վոր նույն իսկ ռուսերենը, յերբ գործ և ածում գիտական տառադարձության, գրում է ja, je, jo, ju. այսպես են գրված ռուսական և բոլոր սլավական բառերը Berneker-ի տառագարանական բառարանի մեջ. հմմտ. Ա հտ. եջ 441—463, ամբողջ j տառը։

Իբր յեզրակացություն բոլորի, կարող եմ ասել թե բոլոր վերոհիշյալ յերևակայալ թերություններն և առաջարկված բարեփոխությունները անտեղի յեն։ Բոլորը միասին ունին միայն յերկու նպատակ և յերկու յելակետ.—անտեսություն և լատինականություն։ Ինչ կա ավելի նժան քան թուղթը, և ինչ պիտի շահինք այդ ամբողջ տնտեսությունից. մի-յերկու եջ ամբողջ գրքի մեջ։ Զարմանալի յե վոր մի կողմից սիրում են մի բառով մի տող գրավել կամ մի գլխի վերնագրի համար մի ամբողջ թերթ (յերկու յերես) նվիրել, իսկ մյուս կողմից ուզում են տառերի թևերը կրճատել՝ տեղ ու թուղթ շահելու համար։ Ավելի լավ չէ՞ մի քանի ավելորդ նախադասություն պակաս գրել, և այն ժամանակ թուղթն ել կխնայվի և թղթի հետ ել ընթերցողի համբերությունը։

Գալով լատինականության, հայերենի տառերը այնպես են, վոր ընդունակ են ամեն ձև ընդունելու. միևնույն **ա** տառը կարող եք գրել ֆրանս. u ձևով, ռուսերեն и ձևով, հունարեն υ ձևով, գենդերեն ,, ձևով, վրացերեն շուռ տված ი ձևով, հնդկերեն u (ya) կամ u (pa) ձևով, մինչև անգամ թուրքերեն—պարսկերեն—արաբերեն ﺎ ձևով, և բոլորն ել կկարդացվին հայերեն ա։ Հատկապես լատինականին գալով՝ հայերեն այբուբենի 39 տառերից գոնե տասը հատը (յեթե վոչ ավելին) ճիշտ լատինականի ձևն ունի.

q	ĥ	ĵ	n	u	s	r	g	f	o
q	h	j	n	u	s	r	g	f	o

Ինչ տարբերություն հայերեն ո-ի և լատինական n-ի միջև. ինչ տարբերություն հայերեն յ-ի և լատինական անկետ j-ի միջև. այսպես և մյուսները։ Այս նժանությունը այնքան խոր է, վոր յերբեմն հայերեն բառը կարելի յե իբրև լատիներեն կարդալ։ Իմ վերջին աշխատություններից մեկի ձեռագրում, վոր տալվեց անցյալ տարի Վենետիկում, յես գրել ելի մի տեղ հայերեն **հճոց** բառը. Վենետկի միաբանները այդ բառը կարդացել և տպել են լատինական տառերով heny (տես Հայերեն նոր բառեր հին ժառենագրության մեջ, հտ. բ, եջ 238)։—Յեթե հաճելի յե ձեզ ունենալ լատինաձև տառեր, կարող եք վերոհիշյալ տասը տառերի տեղ դնել ճիշտ լատիներեն տառերը, իսկ մնացյալն ել ճիշտ նույն վոճով լրացնել։ Դա կլինի հայերեն տառերի մի նոր տեսակ, վոր կարող է ուղողը գործածել։ Դրա գլխավոր հատկանիշը պիտի լինի վերնական և ստորնական դիծը նեղացնել և ընդ-

հակառակը միջնականը լայնացնել, վորով միջնական տառերը ավելի բարձր իրան պիտի ստանան, առանց սակայն իրենց բնական ձևից հեռանալու.

ո ր ի ժ ա ռ ի

Սրանով նման տառերի շփոթության հանդամանքն ել բոլորովին կվերանա։

Մեր բարենորոգիչները շատ սխալ մի կարծիք ունին հայերեն տառերի վերաբերմամբ. կարծում են վոր կա ընդամենը հայերեն 2—3 տեսակ տառ։ Այդ ճիշտ է Թերևս Կովկասի համար։ Բայց դուրս յեկեք դեպի Վենետիկ, Վիեննա և Պոլիս, և կտեսնեք վոր հայերեն տառերի տեսակների թիվը հարյուրների չի հասնում։ Թեոդիկի «Տիալ ու տառ» հրատարակության մեջ ցուցակագրված և նմանահանված է 229 տեսակ հայերեն այբուբեն։ Նույն իսկ գոթական վոճով այբուբեն ունինք հայերեն։

Հնարեցեք դուք ել մի նոր տեսակ այբուբեն, մենք միայն շնորհակալ կլինենք, պայմանով վոր այդ տառերը հայերեն լինին։

Վերջին բառիս վրա կանգնում եմ։

Դա իմ և յելակետն է, և իմ նպատակակետն է և իմ ամբողջ դեկուցմանս ամփոփումն է։ Յեթե յես ուղղագրական բարեփոխության միջոցին, այլ և այլ կետերի հակառակ կանգնեցի, իմ նպատակս եր խնայել հայ ժողովրդի 1500 տարվա գրականությունը և 400 տարվա տպագրական գործունեությունը, չնչին պատճառներով չոչնչացնել, ծովը չթափել այն միլիոնների հարստությունը՝ վոր թափված է 25,000 հայերեն գրքերի հրատարակության համար։ Այժմ ել ավելի ևս հակառակ պիտի կանգնիմ տառերի այն յերևակայալ բարենորոգությանց հանդեպ, վորոնց շարժառիթը ավելի քան վոչինչ է, իսկ արդյունքը պիտի լինի արտադրված հայ գրականության վոչնչացումը։

Ս. Մալխասյանց

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ՌԵՖՈՐՄԻ ՇՈՒՐՋԸ

(Նոր նկարի տառեր)

Հերու «Մարտակոչ»-ի յերկու համարում (№ 216, 23 սեպտ. և № 242, 23 նոյեմբերի) յես քննության յենթարկեցի մեր գրությունը և տպագրական տառերը հատկապես խնայողության տեսակետից և առաջարկեցի մի շարք բարեփոխություններ, որոնց շնորհիվ կարելի կլիներ մեր տպագրական տառերի տարողությունը մինչև 30 տոկոս ավելացնել, կամ որ նույնն է՝ այդքան տոկոսով էժանացնել թղթի, տպագրության, մրի և այլն ծախսերը։

Նույն այդ միջոցին, հոկտ. 17-ին, Խորհ. Հայաստանի լուսժողկոմ ընկ. Մռավյանի առաջարկությամբ Յերևանում, Հայկական Ինստիտուտին կից կազմվեց մի հանձնաժողով, որին հանձնարարվեց բազմակողմանի քննել մեր ուղղագրության և տպագրական տառերի ռեֆորմի հարցերը։

Հայաստանի խորհրդային իշխանության այս ուրախալի նախաձեռնությունը, որ կարևոր նշանակություն պիտի ունենա մեր կուլտուրական հաջող զարգացման համար, անհրաժեշտ է դարձնում նորից քննության առնել մեր տպագրական տառերի ռեֆորմի խնդիրը, բայց արդեն ընդարձակ ծավալով, այսինքն ոչ միայն խնայողության տեսակետից, այլ նաև տեխնիկական և գեղարվեստական գործնական տեսակետներից. (վերջին արտահայտությամբ յես հասկանում եմ տառերի պարզությունը, վորոշությունը, համաչափությունը և դյուրըմբռնելի լինելը)։

Մեր տպագրական տառերի բազմատեսակ պակասությունները այնքան անգամ են քննության տեղիք տվել, այնքան փորձեր են յեղել այդ պակասություններն այս կամ այն կերպով վերացնելու, որ դրանց նույնիսկ համառոտ պատմությունը մի ընդարձակ գրվածքի նյութ կդառնար։ Դրերի ընթացքում, Ամստերդամից սկսած մինչև կալկաթա, Վենետիկում, Պոլսում (Մյուհենտիսյան), Զմյուռնիայում (Տետյան), Պարիզում (Շ. Ասլամյան), Թեոդոսիայում (Գաբր. յեպիսկոպոս Այվազյան), Վիեննայում (Այտնյան), Թիֆլիսում (Մարտիրոսյան, Մադեր), Մոսկվայում (Լեման) և այլն, տեսակ-տեսակ տառեր են ձուլվել, վորոնց ամեն մեկը նպատակ է ունեցել մասնակի կերպով շտկել պակասություններից մեկը կամ մի քանիսը։ Ամենից ավելի արմատական փորձն յեղավ Պարիզում անցյալ դարի հիսնական թվականներին. այնտեղ փորագրվեցին Ճանիկ Արամյանի անունը կրող տառերը, վորոնք նկատված պակասությունները վերացնում էին մեծ մասամբ (վոչ ամբողջապես)։ Բայց այդ տառերը չընդհանրացան, յերևի՝ վորովհետև շատ էին յեվրոպականացրած և մեր այբուբենի վոճը չէին պահած։

Յես իմ կողմից փորձ արի, Յերևանի հանձնաժողովին զեկուցանելու համար, գծագրել տպարանական տառերի մի նոր նկար, նպատակ ունենալով վերացնել այն բոլոր պակասությունները, վոր ուրիշների և իմ կողմից նկատված են յեղել մեր տառերի մեջ, այսինքն այնպիսի ձևեր տալ տառերին, վոր սրանք բավարարեին տպագրական տեխնիկայի, գեղարվեստական գործնական և խնայողության պահանջներին, միևնույն ժամանակ պահպանելով հայերեն տառերի վոճը։

ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀ
ՃՂՆՄՅՆՇՈՉՊՋՌՍՎՏՐ
ՑՒՓՔՕՖ ևՈՒԵԻ

Տառերն յես գծագրեցի մլլիմետրանոց ցանցավոր թղթի վրա մեծ մասշտաբով (20 մլլիմ. յերկարությամբ), վորպեսզի հնարավորություն ունենամ տառերի տարրերի մեջ ճշտիվ պահպանել համաչափությունը, ապա փոքրացնել տվի 4 աստիճանով (ցիցերո — № 12, կորպուս — № 10, պետիտ — № 8, նոնպարեյլ — № 6) և պատրաստել տվի վնկատիպ կլիշեներ, վորոնցից ահա առաջին անգամ տպագրվում են՝ բանասերների դիտողության և քննադատության համար։

ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀ
ՃՂՆՄՅՆՇՈՉՊՋՌՍՎՏՐ
ՑՒՓՔՕՖ ևՈՒԵԻ

ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀ
ՃՂՆՄՅՆՇՈՉՊՋՌՍՎՏՐ
ՑՒՓՔՕՖ ևՈՒԵԻ

ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀ
ՃՂՆՄՅՆՇՈՉՊՋՌՍՎՏՐ
ՑՒՓՔՕՖ ևՈՒԵԻ

Դժվարանում եմ ասել, ինչ բան այս նոր նկարի մեջ ինքնուրույն և ինչ բան ուրիշներից արդեն փորձված և առաջարկված։ Գուցե ճշմարտության ավելի մոտ լինեմ՝ յեթե ասեմ, թե վոչ մի նոր բան չկա այս նկարի տառերի մեջ. ամեն մի նորություն, վոր նրանց մեջ կա՝ գուցե պատահում և մեր տպագրական տառերի բազմաթիվ տեսակներից մեկի կամ մյուսի մեջ։ Ինձ պատկանում է ուրիշի յեղած փորձերից այս կամ այն հատկությունների ընտրությունն և այս կերպի նրանց զուգադրությունը, կոմբինացիան։ Նոր նկարի տառերն ամենից ավելի նման են Ճանիկ Արամյանի տառերին, բայց և այնպես բավական պահպանվում են նրանցից թե սխեմի և թե առանձին գրերի գծագրության մեջ։ Ամենից ինքնուրույնը նոր նկարի տառերի մեջ նրանց տնտեսականությունն է և տառերի ցցվածության մեղմացումը։ Բայց սա էական հարց չէ. էականն այն է, վոր

մենք ունենանք ամեն տեսակետից հարմար տպագրական տառեր, վորոնք մշակված են դարերի հավաքական աշխատանքով։

Հարկ եմ համարում բացատրել, թե ինչումն է դանազանությունը այս նոր նկարի և սովորական տպագիր տառերի մեջ, ուրիշ խոսքով՝ ինչ առավելություն ունին նոր նկարի տառերը սովորական տպագրի համեմատությամբ։

1. Մեր տպագրի տառերը շեղ դիրք ունին, վոր թե դժվարացնում է ընթերցումը, թե մանը է ցույց տալիս տառերը և թե շատ տեղ է գրավում։ (Տես այս մասին հոդվածս, «Մարտակոչ» № 242)։ Մյուս ազգերի տառերը, ինչպես և մեր բնիկ հայկական յերկաթագիրը, ուղիղ դիրք ունին. մեր այժմյան սովորական տպագրի տառերը միակ բացառությունն են կազմում այս կողմից, իրենց բացասական հատկանիշներով։—Նոր նկարի տառերն ուղիղ դիրք ունին, վորով վերացվում են հիշված յերեք պակասությունները։

2. Մեր տպագրական տառերի իրանը (միջին մասը) համեմատարար ավելի կարճ է, քան ծայրերը*)։ Վորքան էլ կարողացա չափել՝ հարաբերությունը իրանի և ծայրերի միջև արտահայտվում է ինչպես 3:4, (ուրեմն յերկայնաձիգ տառերի մեջ իրանը կազմում է 3 միավոր, իսկ յերկու ծայրերը 8 միավոր), այսինքն տառի հիմնական մասը, իրանը, տառի բարձրության $^3/_{11}$ մասն է գրավում, այն ինչ ծայրերը, յերկրորդական մասերը՝ $^8/_{11}$ մասը։ Դեռ կան շրիֆտներ, վորոնց մեջ իրանի և ծայրերի միջև հարաբերությունը հասնում է 3:2-ի։ Սրա հետևանքը այն է լինում, վոր մի կողմից տառերի իրանները շատ փոքր են յերևում, ուրեմն և դժվար ընթերցանելի յեն, և մյուս կողմից՝ ծայրերը շատ են ցցվում, վոր, մանավանդ նկատի ունենալով մեր ծայրավոր տառերի անշեղ շատությունը՝ աչք է ծակում, կարծես ցցերի ու սվիններն ծայրեր լինեն, անընդհատաբար իրար հաջորդող։ Նոր նկարի մեջ իրաններն յերկարացրած են ի հաշիվ ծայրերի, պահպանելով հարաբերությունն 3—4—3, այսինքն 10 միավորից 4-ը հատկացնելով իրանին և միայն 6-ը յերկու ծայրին։ Սրանով տառերի չափազանց ցցվածությունը մասամբ մեղմանում է և, վոր գլխավորն է, տառերը ավելի խոշոր են յերևում, այնպես վոր նոր նկարի կորպուսը մեծությամբ նմանում է տպագրի ցիցերոյին, պետիտը կորպուսին, նոնպարեյլը պետիտին։ Այս հանգամանքը, հեշտացնելով ընթերցումը՝ առաջին նշանակություն ունի խնայողության տեսակետից, ինչպես հետո կտեսնենք։

3. Մեր տպագրական տառերը շատ են սև. տառերի խազերը (վերից վար իջնող) ավելի հաստ են, քան խազերի միջի բացատները և տառերի

*) Մեր տպագրական տառերը լինում են 1) **կարճ**, բաղկացած միայն իրանից. (սրանք են ա, ո, ռ, ս, տ, ւ, օ). 2) **վերճանիգ**, վորոնք ունին իրանից վեր բարձրացող ծայր. (ե, է, ժ, ծ, հ, ձ, ճ, մ, ն). 3) **ներճանիգ**, վորոնք ունին իրանից ներքև իջնող ծայր (բ, գ, դ, զ, ը, լ, պ, յ, ղ, չ, պ, ր, ց, ք) 4) **յերկայնանիգ**, վորոնք ունին իրանից վեր ու վար ձգվող դիծ (թ, ի, խ, կ, ջ, վ, փ, ֆ). 5) **պոչավոր**, վորոնք ներքևի ծայրի տակ ունին հորիզոնական մազավոր դիծ դեպի աջ ձգված (գ, ը, լ, պ, ղ, չ, ջ, վ). 6) **կտուցավոր**, վորոնք վերի կամ վարի ծայրի վերջին ունին կեռիկ, վոր իրենց բազայից դուրս է գալիս (մ, ն, յ, մասամբ նաև ճ, հ). 7) **մի տեղանոց** (յ, լ). **յերկտեղանոց** (բ, գ, դ... ը, ց, ւ). 9) **յերեքտեղանոց** (ա, թ, խ, պ, ռ, տ, փ)։

միջև արանքները. (մոտավորապես՝ սև խազերը 3 միավոր, իսկ բացատները 2 միավոր)։ Յեվրոպական և ռուսական շրիֆտների մեջ հարաբերությունը սև խազերի և սպիտակ բացատների ու արանքների մեջ՝ բոլորովին տարբեր է. միշտ սև խազերը (զանազան հատիճատություններով) բարակ են քան սպիտակ բացատներն ու արանքները։ Տառերի այս սևությունը, չխոսելով ավելորդ վատնվող մրի մասին, առաջ է բերում գծագրության մթություն, անորոշություն, պահանջում է տեսողության լարուն, ուրեմն և ընթերցման դժվարություն։ Մանավանդ այն տառերի մեջ, վորոնք իրարից զանազանվում են միայն մազային՝ հազիվ նշմարելի գծերով (ինչպես աա, սո, զզ, ղզ) սև խազերի հաստության և բացատների փոքրության պատճառով՝ այդ մազային գծերը դժվար են նկատվում, ուստի և գրերի շփոթություն առաջ բերում։ Նոր նկարի մեջ այդ պակասությունը վերացված է նրանով, վոր սև խազերը բարակացրած են հոգուտ բացատների (տեղների մեջ) և արանքների (յերկու տառի միջև)։ Ընդունված է հարաբերություն 2—3, այսինքն տառի ուղղահայաց խազը յերկու միավոր, իսկ բացատը կամ արանքը՝ յերեք միավոր։ Սրանով տառերն ավելի վորոշ են յերևում, հատոր հատոր, ընթերցումն ավելի յև հեշտանում և տառերի տեսքն ավելի հաճելական է դառնում։ Սա միայն առաջին քայլն է. պետք է հետզհետե ավելի բարակացնել տառերի սև խազերն ու ավելի լայնացնել բացատներն ու արանքները, վորով ձեռք կբերվի ավելի մեծ պայծառություն և ընթերցման հեշտություն։

4. Պոչավոր տառերի պոչերը զանազան անհարմարություններ են առաջ բերում—1) դեմ առնում հաջորդ տառի վարի ծայրին, (որ. լի), մանավանդ յեթե կտուցավոր և այդ ծայրը (որ. լյ). (այս չարիքի դեմ հին ժամանակ գործ եյին ածում ծոցագրեր—այնպիսի ներքնաձիգ տառեր, վորոնց ծայրերը կարճ եյին և կարող եյին տեղավորվել նախընթաց պոչավոր տառի ծոցում, այսինքն պոչից վեր. բայց այս միջոցից վազուց են ձեռք վերցրել բազմաթիվ տեխնիկական դժվարությունների պատճառով). 2) բարակ և յերկար լինելով՝ հաճախ կոտրվում են. 3) թուղթը և մեքենայի գլանը ծակոտում են. 4) պոչի յերկարության պատճառով բազան լայնանում է, այնպես վոր հաջորդ տառը սովորականից ավելի հեռու յե ընկնում պոչավոր տառից։ Ներկայումս այդ պոչերն այնքան կարճացրած են (վոչ ամեն տառի համար և վոչ ամենուրեք), վոր պոչն այլևս չե ընդհարվում հաջորդ ներքնաձիգ տառի ծայրին, այլ քիվի կպչում է. բայց այս դեպքում էլ պոչը հազիվ և դառնում նկատելի, ուրեմն և տառի պատկերը լրիվ չե ստացվում։ Այս կարճացրած պոչերի հետ հաջորդ յ տառն այնուամենայնիվ ընդհարվում է։ Նոր նկարի մեջ այդ պոչերին այնպիսի ձև է տրված, վոր վոչ մի ընդհարում հաջորդ ներքնաձիգ տառի ծայրի հետ և վոչ իսկ յ-ի կտուցի հետ՝ չե կարող տեղի ունենալ, մազային բարակությունը վերացրած է և պոչերը նկատելի յեն։ (Զնկատած մեջ պոչերը մեծ մասամբ լավ չեն դուրս եկել, բոլորն էլ պետք է լինեյին մի պոչի նման, ինչպես ես իմ գծագրում)։

5. Կտուցավոր տառերն էլ (մ, ն, յ, մասամբ հ, ճ) մի ուրիշ չարիք են մեր տպագրական տառերի. նրանց կտուցները իրենց բազաներից դուրս են գալիս և նախընթաց կամ հաջորդ տառի սահմանը մտնում, և յեթե այս տառը ծայր ունի՝ ընդհարվում են ծայրին և հաճախ կոտրվում։ Խուսափելու համար մի ընդհարումից հաջորդ տառի ծայրին՝ կամ ձուլում եյին զուլպ

գրեր մե, մի, մխ, կամ ձուլում էլին կտուցավոր և անկատուց մ-եր։ Խուսափելու համար ճ-ի ընդհարվելուց նախընթաց վ-ի և մ-ի հետ՝ ձուլում են զույգ՝ իրար փաթաթված տառեր վն, մն։ Իսկ յ տառի ընդհարումը նախընթաց տառի պոչի հետ չե վերացրած, ուստի յ-ի կտուցը շատ հաճախ կորչում է, (մանավանդ այժմ, երբ իւ, եա գրություններըը փոխարինված են յու, յա գրություններով)։ Նոր նկարի մեջ բոլոր այս կտուցներն ամփոփված են յուրաքանչյուրն իր տառի բազայի մեջ, վոչ մեկը իր սահմանից դուրս չե գալիս; այնպես վոր վոչ մի ընդհարում տառերի մեջ չի կարող տեղի ունենալ։

6, Մեր տպագրական տառերում մի քանի զույգ տառեր, ինչպես վերը հիշվեց, զանազանվում են իրարից միայն մի կարճ մազային հորիզոնական գծերով (աա, ոս, զզ, ղղ)։ Այս մազային գծերը շատ մաշվում են և աննըշմարելի դառնում, կամ մի սև բիծ ընկնելով տառի նեղ բացատի մեջ՝ մազային գծի տպավորություն է թողնում, այնպես վոր շատ անգամ դժվար է լինում վորոշել այս տառերը մեկը մյուսից, վոր նաև պատճառ է լինում տպագրական վրիպակների։—Նոր նկարի մեջ՝ մազային գծերը վերածված են կիսահաստ գծերի (հիմնական խազերի կես հաստության), և միևնույն ժամանակ բացատները լայնացրած, այնպես վոր այս կիսահաստ գծերը շատ վորոշակի յերևում են նույնիսկ նոնպարելլի մեջ, ուստի և տառերի շփոթություն չե կարող տեղի ունենալ։ Նույն նպատակով դ և պ տառերի ձախակողմյան խազերը հատված են շեղակի, այն ինչ նրանց նմանող գ և գ տառերի համապատասխան խազերը բոլորակացրած են և այդպես միացրած յերկրորդ տեղին։

7. Մեր տպագրական տառերը սուր անկյուններ են կազմում՝ իրենց ալ կողմում ներքևը։ Այս սուր անկյունները հաճախ ծակում են թուղթը և մնքենալի գլանը, նմանապես աչք են ծակում։—Նոր նկարի մեջ բոլոր անկյունները թեթևակի կլորացրած են, վոր թե աչքի համար հաճելի յե և թե տեխնիկապես նպատակահարմար։

8. Մեր տպագրական տառերն ունեն 31 հատ ծայրավոր տառ (9 վերնաձիգ, 14 ներքնաձիգ և 8 յերկայնաձիգ, կամ 38 տառի մեջ 39 ծայր. (կարճ տառերի թիվը շատ աննշան է, ընդամենը ութ հատ)։ Այսպիսի քանակությամբ ծայրավոր տառեր չունին վոչ լատինական շրիֆտը և վոչ ռուսականը։ Լատինական շրիֆտի մեջ ծայրավոր տառերը 11 են, հանդես 14 անծայր կամ կարճ տառերի. իսկ ռուսական շրիֆտի մեջ, նույնիսկ Д, Ц, Щ գրերն էլ իբրև ծայրավոր հաշվելով՝ վերջիններս ընդամենը 7 են հանդես 23 կարճ տառերի։ Այս պատճառով յեվրոպական կամ ռուսական տպագրությունները դուրեկան տեսք ունեն, աչքը սահում է տառերի վրայով, այն ինչ մեր տպագրությունների մեջ, այն էլ յերկար պոչերով, տառերը կարծես խիտ առ խիտ ցցված ցախեր լինեին, վորոնց վրա աչքը շաղվում է։ Այս պակասությունը մասամբ փարատելու համար՝ 1) ծայրերը համեմատաբար կարճացրած են, 2) յերեք ներքնագիծ տառերի (ղ, չ, ը) պոչերն հապաված են, տալով բառերին գլխագրերի ձև, և 3) բոլոր յերկայնաձիգ տառերի վերևի ծայրերը հապավված են և տառերին տրված ներքնաձիգ տառերի ձև։ (Վերջին բարեփոխությունն անել ինձ խորհուրդ տվեց իմ բարեկամ Ներսես Տեր-Միքայելյանը, վոր և միանգամայն համապատասխան եր իմ դիտավորության)։ Այս միջոցներով ծայրերն ընդհանրապես կարճացան

և ծայրերից 11-ը, ընդհանուրի ավելի քան մի քառորդը, հապավվեցին, վորով տառերի արտաքին տեսքն ավելի սահուն ու մեղմ դարձավ։

9. Մեր տպագրական տառերից յոթը (ա, թ, խ, պ, ռ, տ, փ) յերեք-ստեղնանի յեն կամ յերեք ստեղնի տեղ են գրավում։ Ինչպես ցույց եյի տվել վերը հիշված հոդվածումս («Մարտակոչ» № 242), այս տառերը մյուս տառերի համեմատությամբ գրեթե 1-ին $1^1/_2$ տեղ են գրավում (33:47) և մեր այբուբենի մեջ 24 տողոս գործածություն ունենալով՝ 10 տողոս ավելորդ տեղ են բռնում, վոր շատ է թանգացնում տպագրությունը։ Նոր նկարում այս բոլոր տառերը դարձրած են յերկստեղնանի (ա, ռ, տ), կամ գրավում են յերկու ստեղնի տեղ (թ, խ, պ, փ), մասամբ՝ գլխագրերի ձև տալով տառերին (ա, թ, ռ, տ) և մասամբ՝ միջին ստեղները բարակացնելով կամ բացատները փոքրացնելով (խ, պ, փ)։ Սրանով մեր տառերն ազատվում են լայն՝ յերեքստեղնանի տառերից, և բոլոր տառերի միջին լայնությունը յերկու ստեղնից պակաս է լինում։ Ստացվում է 10 տողոս տեղի խնայողություն։

10. Նույն նպատակով՝ փակագիր և-ի նման մուծված են նոր նկարի մեջ յերեք նոր փակագիր՝ «ու», «իա», «իւ» հնչյունների համար, այս զույգ գրերի կցումից, այնպես վոր առաջին անգամ տեսնողն էլ կհասկանա, թե ինչ տառեր են դրանք։ Սրանց մասին ընդարձակ գրել եմ դեռ 1923 թվին («Մարտակոչ» № 252)։ Այս փակագրերների շնորհիվ մեր տպագրության մեջ խնայողություն կլինի դարձյալ 3 տողոսով, իսկ փակագիր «և»-ի հետ միասին՝ 4 և կես տողոսով։

Դառնանք նոր նկարի անտեսականության։ (Յես հաշվի չեմ առնում նորամուծ փակագրերները, վորոնք չեն կարող այբուբենի մեջ մտնել առանց հեղինակավոր մարմնի սանկցիայի)։

Ճիշտ չափումը ցույց է տալիս, վոր մեր այբուբենի 38 տառերը (առանց փակագիր և-ի), կողք-կողքի շարված գրությամբ, գրավում են տեղ միլիմետրներով—

	Տպագրում	նոր նկ.	կամ
Ցիցերոն—(№ 12)	85 մլ.	76 մ.	90 տող.
Կուպրուսը—(№ 10)	75 մլ.	64 մ.	$85^1/_2$ տ.
Պետիտը—(№ 8)	64 մլ.	53 մ.	84 տող.
Նոնպարելը—(№ 6) (չկան)	45 մ.	–	

Այս տողոնները գործնականի վերածելով՝ տեսնում ենք, վոր շարվածքի մեջ տպագիր ցիցերոյի 100 տառի գրաված տեղում նոր նկարի ցիցերոյով կմտնե ավելի քան 111 տառ տպագրի կորպուսի 100 տառի տեղում՝ նոր նկարի կորպուսով 117 տառ, իսկ տպագրի պետիտի 100 տառի տեղում՝ նոր նկարի պետիտով 119 տառ։ Ուրեմն, մի կողմ թողնելով քիչ գործածական ցիցերոն և անգործածական (ներկայումս) նոնպարելը՝ տեսնում ենք, վոր կորպուսով շարվածքի մեջ նոր նկարի տառերով 17 տողոս խնայողություն է ստացվում, իսկ պետիտի շարվածքով՝ 19 տողոս։ Յեթե սրա վրա ավելացնենք 3 տողոս խնայողությունը, վոր կստացվի դուրս ձգելով այժմյան ուղղագրության ավելորդ յ և վ գրերը, և 4 ու կես տողոս խնայողությունը, վոր կստացվի 4 փակագրի գործածությամբ՝ ապա ընդհանուր խնայողությունը կհասնի—կորպուսի համար 24 և կես տողոսի, իսկ պետիտի համար՝ 26 և կես տողոսի։ Սա նշանակում է, վոր մեր տպագրու-

թյունները թղթի, տպի և մրի արժողության կողմից ավելի քան 25 տոկոս կեժանանան, բացի այն, վոր տառերն ավելի յերկար կդիմանան և կարելի կլինի ավելի բարակ թղթի վրա տպել։

Բայց սա՝ խնայողության մի կողմն է միայն. կա և մի ուրիշ կողմ՝ վոչ նվազ կարևոր։ Մեր այժմյան տպագրությունների մեջ պետիտի գործածությունը, իբրև շատ մանր և տեսողության լարումն պահանջող շրիֆտի, խիստ սահմանափակ է—գրքերում՝ ծանոթությունների և լրագիրներում մանր լուրերի համար։ Գրքեր և հոդվածներ չեն տպվում պետիտով։ Նոր նկարի մեջ տառերի իրանները մեծ են, բացատներն ու արանքները լայն. սրանք նույնքան պայծառ են և հեշտ ընթերցանելի՝ վորքան տպագրի յերկու աստիճանով խոշոր տառերը, այսինքն նոր նկարի կորպուսով կարելի յե փոխարինել տպագրի ցիցերոն, նոր նկարի պետիտով տպագրի կորպուսը, նոր նկարի նոնպարելյով տպագրի պետիտը։ Սրանից բղխում է այս գործնական կարևոր հետևանքը, վոր նոր նկարի տառերով կարելի կլինի—և պետք էլ է—շարել ամբողջ գրքեր և լրագրական հոդվածներ։ «Զարյա Վաստոկա» լրագրի մեջ տիրապետող շրիֆտը պետիտն է. կորպուսը պահված է գրեթե միայն առաջնորդողների համար։ Յեթե «Մարտակոչ»-ի թեկուզ կեսն էլ նոր նկարի պետիտով շարվի փոխանակ այժմյան կորպուսի՝ սա կտա այդ կես թերթի համար ահագին խնայողություն, ավելի քան 41 տոկոս, վորի վրա ավելացնելով յ-ի և վ-ի դուրս ձգելուց և վակագրերի գործածությունից սպասվող խնայողությունները՝ կունենանք մինչև 50 տոկոս խնայողություն։

ազատ ասպվածն այն օրից,
երբ հսեեցավ շունչ փըչել,
իմ հողանութ շինվածքին
կենդանություն պարգևել

ողջ աշխարհում ժառանգեց
նա անունը մեծ անձի։

Առաջին հայացքից տարօրինակ է թվում, վոր նոր նկարի տառերն, ունենալով ավելի խոշոր իրաններ և ավելի լայն բացատներ ու արանքներ՝ միևնույն ժամանակ այսքան ավելի տարողություն ունին, տնտեսական են. ըստ յերևույթին՝ պետք է հակառակը լիներ։ Բայց այս առերևույթ

հանելուկը շատ հեշտ է բացատրվում։ Նոր նկարի տառերի իրանները մեծացրած են ի հաշիվ ծայրերի. վորոնք կարճացրած են, իսկ արանքներն ու բացատները լայնացրած են ի հաշիվ սև խտերի, վորոնք բարակացրած են։ Այնպես վոր այս յերկու հանգամանքը վոչ մի անմիջական ազդեցություն չունին տառերի տարողության վրա։ Խնայողությունը ձեռք է բերված—1) տառերին ուղղահայաց ղիրք տալով (3 տոկոս) յերեքսաեղնանի տառերը յերկսաեղնանի ձևի վերածելով (10 տոկոս), և 3) տառերի լայնքը, բարձրության համեմատությամբ, ավելի սեղմ բռնելով (յերկսաեղնանի տառն իր բացատով ու արանքով ընդունված է 1, իսկ բարձրությունը՝ 2)։ Այս համեմատությունն, ի հարկե, կարելի յե ըստ կամի զանազանակերպել և տառանալ ավելի լայն և ավելի սեղմ շրիֆտներ։

Վերջացնելով հոդվածս՝ պետք է նկատեմ, վոր գնկատիպ նժուշի մեջ մի քանի տառեր լավ չեն դուրս յեկել. որինակ գ ղ վ-ի պոչերը պարզ չեն յերևում. (պետք է լինեին է-ի պոչի նման, ինչպես են իմ գծագրուժը). կորպուսի գ-ը կկտրատ է դուրս յեկել, է-ի հորիզոնական գիծն աղոտ է դուրս յեկել (պետք է լիներ ե-ի գծի նման), և այլն։ Բացի սրանից՝ իմ գծագրի մեջ էլ, գնկատողով հանելուց հետո, նկատում եմ մի քանի պակասություններ. - որ. ռ-ի կտուցը պարզ չի յերևում, ուստի ռ-ն կարող է շփոթվել ո-ի հետ. փ-ի յերկու թևը լավ կլիներ կլորացնել, ինչպես ունի գըլխագիրը և ռուսաց փ-ը, վորոնք միևնույն ծագումն ունին—հունարենից։ Այս և նման այլ դիտողություններ, վոր կարող են լինել բանասերների կողմից՝ նկատի կառնվեն և կուղղվեն այս տառերի վերջնական գործադրության և փորագրության ժամանակ՝ յեթե նրանց վիճակվի կյանքի մեջ մտնել*)։

Նոր նկարի տառերն ազատ են տեխնիքական այն բոլոր պակասություններից, վոր ունին այժմյան սովորական տպագրի տառերը, ավելի պարզ, վորոշ են և հեշտ ընթերցանելի, ավելի մեղմ ու սահուն են և աչք չեն ծակում, և տնտեսապես՝ 25—40 տոկոս խնայողական են։ Այս յեզրակացությունները բղխում են ճիշտ չափերից ու թվերից—օբյեկտիվ ավյալներից։ Մնում է սուբյեկտիվ տպավորությունը—ճաշակի հարցը, վորի մասին, ինչպես առածն ասում է՝ չեն վիճում, բայց վոր ամենից շատ վեճ և յուրացնում։

---

*) Սա. Մալխասյանի այս զեկուցումը նախորոք, վորպես հոդված, տպագրվել է «Մարտակոչ» լրագրի 1927 թ. 20 և 21-րդ համարներում։ Տեղեկագրի մեջ տպագրված կլիշեները «Մարտակոչի» մեջ տպագրվածները չեն, այլ պատրաստված են հեղինակի կողմից Հանճնաժողովին ներկայացրած նոր նկարներից, վորոնց մեջ կատարված են արդեն վերևում իր ակնարկած փոփոխությունները։

Ծանոթ. խմբ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 17-ին 1927 թ. հայերեն տպագրական տառերի բարեփոխման առթիվ կազմված ակնաբուժների խորհրդակցության։

Խորհրդակցության ներկա եյին բժ. բժ. Հ. Կանայան, Ա. Նավասարդյան, Մ. Սարգսյան և Հ. Յոլյան։

Խորհրդակց. նախագահ՝ բժ. Կանայան

Քարտուղար՝ բժ. Նավասարդյան

Գիտ. յեվ Ուսվ. ինստիտուտի ուղղագր. յեվ տառերի ձեվի բարեփոխման Հանձնաժողովի կողմից դրված հարցերը	Խորհրդակցության յեզրակացությունը
1. Տեսողության և աչքերի առողջապահության տեսակետից լինչ տարբերություն ունին ուղղահայաց և շեղ գրություններն և տպագրությունները, և յեթե ունին տարբերություն՝ առավելությունը վո՞րի կողմն է։ Շեղագիրն ընդունելու դեպքում թեքությունը քանի՞ աստիճանի կարելի յե հասցնել։	1. Խորհրդակցությունը գտնում է, վոր առողջապահական տեսակետից գերադասելի յե տպագրատառերի ուղղահայաց լինելը։
2. Ինչ դյուրություն կամ դժվարություն ունի ընթերցման և աչքերի առողջապահության տեսակետներից տպագրական տառերի անկյունավոր կամ կոր լինելը։	2. Խորհրդակցության անդամներից բազմամյա փորձը ցույց և տալիս, վոր տեսողության համար առողջապահական տեսակետից ավելի գերադասելի յեն անկյունավոր տառերը։
3. Նույն այդ տեսակետներից կա՞ տարբերություն՝ յեթե տառերը ա) հաստ և մազային գծեր ունին, կամ բ) միատեսակ հաստ գծերից են կազմված։	3 Նույն տեսակետից խորհրդ. գըտնում է վոր (գրությունները) տառերը պետք է լինին առանց մազային գծերի, այսինքն միատեսակ հաստ գծերից կազմված. (առանձին կարծիքի յե բժ. Նավասարդյանը. նա գտնում է վոր մազային գծերը դյուրացնում են ընթերցումը, տալով տառերին վորոշություն (отчетливость)։

— 155 —

4. Տպագրական տառերի իրանը (կորպուսը), յեթե ավելի լայն է լինում (կամ բարձր) քան ներքև և վերև տարածվող պոչերը, ավելի հե՞շտ է ընթերցման տեսակետից, թե յերը կորպուսը ավելի փոքր և պոչերը ավելի յերկար են։ Ինչպիսի՞ հարաբերություն լավագույն կը համարվի տառերի 4 զուգահեռ գծերի տարածության համար։	4. Խորհրդակցությունը գտնում է, վոր տեսողության առողջապահության տեսակետից անկասկած պետք է հայերեն տառերի կորպուսը մեծացնել, և իբրև փորձ առաջարկում է յերկար տառը, որինակ (ի)՝ ընդունել իբրև միավոր և տառերի կորպուսը հավասարացնել նրա չորս տասներորդականին (0,4), իսկ պոչերը ամեն մեկը 3 տասներորդականին (0,3)։
5. Վերոհիշյալ տեսակետներով բըժըշկական խորհուրդն ի՞նչ կարծիք ունի հայերեն տպագրական շրիֆտի մասին համեմատաբար ռուս և յեվրոպական տառերի և ինչպիսի՞ փոփոխություններ է համարում ցանկալի։	5. Խորհրդակցությունը գտնում է, վոր յեթե վերոհիշյալ փոփոխությունները կատարվեն, առողջապահական տեսակետից հայկական տպագրատառերը, յեթե չը գերազանցեն, համեմատ դեպս ռուսական և լատինական շրիֆտներից հետ չեն մնա։

Խորհրդ. նախագահ՝ բժ. Հ. Կանայան

Քարտուղար՝ Ա. Նավասարդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1927 թ. մարտի 27 ին հայերեն ապագրական տառերի բարեփոխման առթիվ կազմված գրաշարների խորհրդակցության):*

Ներկա էին Ս. Փարսադանյան, Կ. Յեղիկյան, Լ. Ասլանյան (Պոլիգրաֆի տպարաններից), և Մ. Եփրիկ («Հերմես» տպարանից), Պետհրատի տպարաններից հրավիրված՝ները բացակայում էին:

Գիտ. յեվ Ուսվ. Ինստիտուտի ուղղագրակ. յեվ տառերի ձեվի բարեփոխման Հանձնաժողովի կողմից դրված հարցերը	Խորհրդակցության յեզրակացությունը
1. Շարելու ժամանակ, գործի արագության և շարվածքը սրբագրելու տեսակետից նշանակություն ունի՞ շրիֆտի ուղիղ կամ շեղ լինելը և յեթե ունի առավելությունը վրի կողմն ե:	Նշանակություն չունի:
2. Հայերենի և ռուսերենի մեջ միատեսակ վարժություն ունեցող գրաշարը վոր լեզվի տառերով ավելի արագ և շարում և ինչո՞ւ:	Հայերենը՝ յեթե ավելի դանդաղ և շարվում՝ պատճառը տառերը չեն, այլ ուղղագրության անկայունությունը. յուրաքանչյուր հեղինակ իր ուղղագրությունն ունի, ինչպես **բախs, կեճտոճ, գեղչ** և շատ ուրիշ բառերի մեջ, մանավանդ կետադրության և տողադարձի մեջ:
3. Տառերի պոչերը չե՞ն խանգարում շարվածքի ժամանակ, և յեթե անկյունները և պոչերը կլորացվեն՝ կարելի՞ յե ավելի արագ շարել:	Նշանակություն չունի:
4. Կողմնակի՞ց եք, վոր նորից միաձույլ յերկտառեր պատրաստվեն, ինչպես՝ ֆլ, ֆի և այլն:	Կողմնակից չեն:
5. Կողմնակի՞ց եք, վոր ու, իւ, եա յերկբարբառների համար միացած նոր տառեր հնարվեն, ինչպես՝ «և»-ը:	Յերեք ձայն կողմնակից ընդդեմ մեկի:
6. Վե՞ր տառերն են, կամ տառերի վե՞ր մասերն են, վոր շուտ են փչանում, կոտրվում. ի՞նչ միջոց կարող եք առաջարկել դրա դեմ:	Ամենից շատ կոտրվում են ու փչանում մ, յ, ճ և ռ տառերի ծայրերը, ինչպես և ը և բ տառերի մազագծերը. լինոտիպի մեջ այդ հանգամանքը վերացած է:
7. Ի՞նչ զանգատ ունեք հայերեն տառերից առհասարակ և ի՞նչ բարեփոխումներ համարում եք ցանկալի:	Առանձնապես զանգատ չունենք. միայն ցրելու ժամանակ շփոթություն է առաջ գալիս ա-տ, ա-ո, գ-զ, բ-ր-ը տառերի միջև, պետք է այդ մասին մտածել:
8. Շարվածքը սրբագրելիս ի՞նչ դժվարություններ եք հանդիպում, յերբ ստիպված եք լինում փոփոխելու այնպիսի տառեր, վոր տարբեր են իրենց հաստությամբ:	Մեր սովորական տեքստի տառերից միայն 3-ը ժ, ծ, ռ գրերը տպագրական պունկտերի հաշվով կոտորակային հաստություն ունեն ($5^1/_2$ պունկտ) և սրբագրության ժամանակ դժվարություն են առաջ բերում. ցանկալի չե նրանց վերածել 5 պունկտի:
9. Ցանկալի կը համարեի՞ք շարվածքի տեսակետից, վոր մեր բոլոր տառերը մի թանձրություն, մի հաստություն ունենային:	Այդպիսի բան չկա վոչ մի լեզվի տառերի մեջ. գրաշարներն ավելի հաճույքով են շարում տարբեր հաստություն ունեցող տառերը. մեր մատներն այնքան են վարժվել վոր առանց նայելու, տառի հաստությունից կարողանում ենք տարբերել տառերը միմյանցից:
10. Ճի՞շտ է վոր հայերեն տառերն ավելի սև լինելու պատճառով տպարանական ներկ (մուր) ավելի յեն սպառում քան ռուսերենը կամ յեվրոպական տառերը. կամ թե մեր տառերը իրենց պոչերով և անկյուններով փչացնում են թուղթն ու մեքենայի գլանները:	Այդպիսի բան նկատված չե. գուցե թե մի տպարան, վոր տարեկան 180 փութ ներկ է բանեցնում, հայերենի համար մի փութ ավելի բանեցնի: Ինչ վերաբերում է վերջին հարցին, այդ ճիշտ չե:

*) Առաջին նիստը չեր կայացել, վորովհետև հրավիրված 7 անդամից ներկա եյին յենթահանձնաժողովի նիստին միայն յերկուսը:

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ.

Ուղղագրության յեվ տառերի ձեվի բարեփոխության Հանձնաժողովը, վորի արձանագրություններից տպագրվում են համառոտ այս քաղվածքները. ընտրված ե Գիտության յեվ Արվեստի Ինստիտուտի պատմական-հասարակագիտական յեվ գեղարվեստական բաժինների 17 հոկտեմբերի 1926 թվի միացյալ ժողովում, վորը հրավիրված եր Լուսավորության ժողովրդական կոմիսարի կարգադրությամբ։ Հանձնաժողովի անդամներն եյին՝ Աբեղյան Մանուկ, Աճառյան Հրաչյա, Ավդալբեգյան Թադ., Բաբախանյան Առաքել (Լևո), Լեվոնյան Գարեգին, Մաչատուրյան Աատուր, Կանայան Ստեփան, Հակոբյան Սիմոն, Ղափանցյան Գրիգոր, Մանանդյան Հակոբ յեվ Շիրվանզադե։ Հանձնաժողովը իր աշխատանքները սկսելով 1926 թ. հոկտ. 21-ին վերջացրել ե 1927 թ. մայիսի 17-ին, ունենալով ընդամենը 35 նիստ։ Աշխատանքներն ընթացել են, նիստերի հաջորդական կարգով, այսպես.—

ՆԻՍՏ 1-ին .1927 թ. հոկտեմբերի 21-ին.

— Կարդացվում ե Մ. Աբեղյանի հրաժարականը (գրված ժողովի հրավիրաթերթի վրա)։ Ժողովը գտնելով, վոր Մ. Աբեղյանի հրաժարականը ընդունելու կամ չընդունելու հարցը պատկանում ե միացյալ ժողովի իրավասության, ինքը ցավ ե հայտնում, վոր իր աշխատանքները տանելու չե առանց նրա մասնակցության։

*— Հանձնաժողովի նախագահությունը. բաց քվեարկությամբ ընտրվում են ա. և բ. նախագահներ՝ Հ. Մանանդյան և Ս. Կանայան և ա. և բ. քարտուղարներ՝ Հ. Աճառյան և Գ. Լևոնյան *)։*

— Վորոշվում ե, կոոպտացիայի կարգով, Թիֆլիսից հրավիրել Ստ. Մալխասյանին վորպես հանձնաժողովի անդամ վճռական ձայնի իրավուրքով։

— Կազմվում ե առաջիկա գործունեության մոտավոր ծրագիրը և Հանձնաժողովի անդամներին հանձնարարվում ե քննելի խնդիրներին վերաբերմամբ պատրաստել զեկուցումներ։

**) Նիստերին նախագահել ե Մանանդյանը, բացի 22-րդ և վերջին 32—35-րդ նիստերից, վորոնք տեղի յեն ունեցել Ստ. Կանայանի նախագահությամբ։ Նիստերի արձանագրությունները կազմել և տեխնիքական բոլոր աշխատանքները տարել ե Լևոնյանը։*

ՆԻՍՏ 2-րդ. 1926 թ. հոկտ. 26-ին.

— Լուսժողկոմատի պահանջի համաձայն կազմվում և Հանձնաժողովի առաջիկա գործունեության տնտեսականի նախահաշիվը (6 ամսով)։

— Ժողովը ցանկալի համարելով լսել հասարակության լայն խավերի կարծիքները, վոր վերաբերում են Հանձնաժողովի քննելի առարկաներին, վորոշում և լրագրության մեջ տպագրել մի դիմում, վոր ամեն վոք կարող ե ուղարկել իր պատճառաբանված կարծիքները ուղղագրության և տառերի բարեփոխության մասին։

(Այդ դիմումը տպագրվել ե թե Յերևանի և թե այլ քաղաքների ու յերկրների հայերեն թերթերի մեջ)։

— Հանձնաժողովի անդամ Հ. Աճառյան կարդում ե իր զեկուցումը «Մեր նոր ուղղագրության մասին» (տես Տեղեկագիր, եջ 28,)։

ՆԻՍՏ 3-րդ. 1926 թ. հոկտ. 28-ին.

— Հանձնաժողովի անդամ Ս. Մաչատրյան կարդում ե իր զեկուցումը «Հայերենի ուղղագրության խնդիրները» (Տեղեկագիր, եջ 35)։

ՆԻՍՏ 4-րդ. 1916 թ. նոյեմբ. 2-ին.

— Ա. Մաչատրյան կարդում ե իր զեկուցման շարունակությունը։

— Նախագահը հայտնում ե, վոր դրսից ստացված են զեկուցումներ՝ Հակոբ Հարությունյանի (Յերևան) և Լևոն Բունիաթյանի (Լենինական)։

— Վորոշվում ե Թիֆլիզից հրավիրել Ստ. Մալխասյանին Հանձնաժողովի նիստերին մասնակցելու և կարդալու իր զեկուցումը։

ՆԻՍՏ 5-րդ. 1926 թ. նոյեմբերի 9-ին.

— Հանձնաժողովի անդամ Գր. Ղափանցյան կարդում ե իր զեկուցումը. «Արդի հայերենի ուղղագրության խնդիրը». (Տեղեկագիր, եջ 56)։

ՆԻՍՏ 6-րդ. 1926 թ. նոյեմբ. 16-ին.

— Հանձնաժողովի անդամ Ստ. Մալխասյան կարդում ե իր զեկուցումը «Հայերենի ուղղագրության մասին» (Տեղեկագիր, եջ 80)։

ՆԻՍՏ 7-րդ. 1926 թ. նոյեմբ. 17-ին.

— Հանձնաժողովը կազմում ե իր չորս լեզվաբան անդամների Աճառյանի, Մաչատրյանի, Ղափանցյանի և Մալխասյանի զեկուցումների թեզիսներից մի համառոտ աղյուսակ (Տեղեկագիր, եջ 94)։

— Ուղղագրական խնդիրները գործոցական-մանկավարժական տեսակետից քննության յենթարկելու համար վորոշվում ե Յերևանում ապրող մանկավարժներից կազմել մի յենթահանձնաժողով։ Այդ յենթահանձնաժողովի անդամներ ընտրվում են. — Եղիազյան Գ., Թոթովենց Վ., Թորոսյան Ս., Լիսիցյան Ս., Խնկոյան Ա., Խոստիկյան Մ., Կանայան Խ., Հարությունյան Հ., Մանուկյան Ս., Մելիք-Ստեփանյան Տ., Մեհրաբյան Ա., Շավարշյան Ա., Ռաշմաճյան Տ., Տեր-Մարտիրոսյան Մ. ընդամենը 14 հոգի։

Վորոշվում ե այդ յենթահանձնաժողովը լիազորել, վոր իր կազմը լրացնե, հրավիրելով ա. աստիճանի դպրոցներում հայերեն ավանդող շարքային ուսուցիչներին։

Մանկավարժական յենթահանձնաժողովին առաջարկվում ե, վոր ուղղագրական խնդիրները քննելիս՝ ի նկատի ունենան թե տարրական գրա-

գիտութեան և թե լեզուի ուսուցման տեսակետները, նաև հետևյալ հարցերը.—

ա. Ի՞նչ դյուրութիւններ և դժվարութիւններ ունի նոր ուղղագրութիւնը հին համեմատութեամբ.

բ. Իրենք ի՞նչ փոփոխութիւններ են առաջարկում և ի՞նչ պատճառաբանութիւններով.

գ. Նոր ուղղագրութեամբ գրագիտութիւն սովորած աշակերտները ի՞նչ դժվարութիւնների են հանդիպում հին ուղղագրութեամբ տպագրված գրքեր կարդալիս։

ՆԻՍՏ 8-րդ, 1926 թ. նոյեմբ. 20-ին.

— Հանձնաժողովը՝ մաքերի փոխանակութիւն ունենալով համագումարը հրավիրելու խնդրի մասին, ընդունում և հետևյալ քանաձևը։ «Գիտութեան և Արվեստի Ինստիտուտի ուղղագրական հանձնաժողովը կարևոր և համարում համագումար հրավիրել ուղղագրութեան և տառերի ձևի բարեփոխութեան մասին վերջնական վորոշում տալու համար, և քանի վոր համագումարի հրավիրումը կարող և չերկար ժամանակի, վորոշում և խնդրել Լուսժողկոմատին, վոր կառավարութիւնը այժմյանից հոգ տանի այդ մասին, նշանակելով համագումարի օրը»։

— Հանձնաժողովի, անդամներ Սա. Մալխասյան և Գ. Լևոնյան կարդում են իրենց զեկուցումները նոր և հին ուղղագրութիւններով շարվածքի ծավալի մասին տեսակետից։ (Տեղեկագիր, եջ 97 և եջ 146).

ՆԻՍՏ 9-րդ, 1926 թ. նոյեմբ. 28-ին.

— Նախագահը հայտնում և, վոր Լուսժողկոմատի կողմից Հանձնաժողովի նախահաշիվը հաստատված և. վորոշվում և տպագրութեան հանձնել Տեղեկագիրը, վորի ծավալը ըստ նախահաշվի պետք և լինի 10 տպագրական մամուլի սահմաններում։

— Հանձնաժողովի անդամ Լևոն կարդում և իր զեկուցումը «Պատմական տեսութիւն հայերեն ուղղագրութեան դրութիւնների», (Տեղեկագիր եջ 1).

ՆԻՍՏ 10-րդ, 1926 թ. նոյեմբ. 30-ին. ՆԻՍՏ 11-րդ, դեկտ. 17-ին.

— Նախագահը զեկուցում և, վոր՝ ա) մանկավարժների և շարքային ուսուցիչների կազմը լրացվել և*), բ) մանկ. յենթահանձ. իր աշխատանքները վերջացնելու և, ունենալով 5 նիստ, և իր յեզրակացութիւնը գրավոր կերպով ներկայացնելու և Հանձնաժողովին դեկտ. վերջին։

— Հանձնաժողովի անդամ Լևոն բանավոր լրացուցիչ զեկուցում և անում իբր շարունակութիւն նախանցյալ նիստում իր կարդացած զեկուցման։

— Հանձնաժողովի անդամ Ս. Հակոբյան զեկուցում և դրսից ստացված ուսուցիչներ Մ. Տեր-Մարտիրոսյանի, Ա. Արտաշեսյանու, Հ. Հա-

* 6-րդ նիստում ընտրված 14 հոգուն ավելացել են 14 նոր հրավիրվածներ՝ Աբրահամյան Ռ., Ալլահվերդյան Ն., Անտոնյան Անտ., Այվազյան Մկրտ., Բոշնագյան Մաքր., Թադեոսյան Վերգ., Կարոյան Սմբ., Մանուկյան Թամ., Մարգարյան Տիգր., Ներսեսյան Գր., Ոհանջանյան Սարգ., Պալասանյան Գ., Պետրոսյան Հ., Քուշմանյան Պ.։

բութիւնյանի, Լ. Բունիաթյանի (Լենինականից), Մ. Տեր-Սարգսյանի (Բագվից) դրութիւնների և առաջարկների մասին։

ՆԻՍՏ 12-րդ, 1926 թ. դեկտ. 14-ին.

— Հանձն. անդամ Լևոն կարդում և զեկուցում հայերեն տպարանական տառերի բարեփոխութեան մասին. (Տեղեկագիր, եջ 113)։

ՆԻՍՏ 13-րդ, 1926 թ դեկտ. 21 ին.

Հանձնաժողովի անդամ Գ. Լևոնյան կարդում և իր զեկուցումը «Հայերեն տառերի բարեփոխութեան խնդիրը». (տես Տեղեկագիր, եջ 127)։

ՆԻՍՏ 14-րդ, 1926 թ. դեկտ. 28-ին։

— Հանձնաժողովի անդամ Ս. Կանայան կարդում և իր զեկուցումը «Հայերեն գրչագիրների և վիմական արձանագրութիւնների մասին». Զեկուցողը իր ներածութեան մեջ հայտնում և. վոր իր նպատակն և յեղել նյութեր հայթայթել հին դարերի ուղղագրութեան մասին, տալով այնպիսի նմուշներ, վոր ցույց տրին հին ուղղագրութիւնների տարբերութիւնը մեր մինչև-ռեֆորմյան ուղղագրութեան հետ։

ՆԻՍՏ 15-րդ, 1927 թ. հունվարի 4-ին.

— Ս. Կանայան շարունակում և իր նախորդ նիստում կարդացած զեկուցումը.

— Հանձն. անդամ Հ. Աճառյան կարդում և իր զեկուցումը «Տպագրական տառերի ձևի բարեփոխութեան մասին». (տես. Տեղեկագիր, եջ 138).

ՆԻՍՏ 16-րդ, 1927 թ. հունվարի 11-ին.

— Մանկավարժական յենթահանձնաժողովի նախագահութիւնը կարդում և իր զեկուցումները. (Տեղեկագիր, եջ 102)։

ՆԻՍՏ 17-րդ, 1927 թ. հունվ. 18-ին.

— Քննվում և վորոշվում են մի շարք մանր խնդիրներ՝ Տեղեկագրի տպագրութեան, նյութերի ծավալի, խմբագրութեան վերաբերյալ և այլն։

Վորոշվում և ուղղագրութեան համար կազմված համագրական աղյուսակի ձևով մի աղյուսակ էլ կազմել տառերի բարեփոխութեան մասին յեղած առաջարկներից։ Այդ աշխատանքը հանձնարարվում և Լևոնին, Լևոնյանին և Աճառյանին։

ՆԻՍՏ 18-րդ, 1927 թ. հունվ. 25-ին. և 19-րդ փետր. 1-ին.

— Հանձնաժողովի անդամ Ս. Հակոբյան զեկուցում և ուղղագրութեան մասին նոր ստացված առաջարկների մասին, տալով նրանց ամփոփումը. առաջարկներ Լ. Մելիք-Ադամյանի (Լենինականից), Ս. Զիթճյանի (Ամերիկայից), Ս. Դավթյանի (Թեհրանից), Հ. Դադրաշյանի (տպագր. փիլականութիւն, Փիլիպե), Ն. Բարսաշյանի (տպ. բրոշյուր Բելգրադից), իսկ Ա. Ղազարյանը (տպ. բրոշյուր Թեհրանից)։

— Ուղղագրութեան վերաբերյալ համագրական աղյուսակը Հայաստանից դուրս գտնվող հայագետներին ուղարկելու հարցը վորոշված եր նախորդ նիստերում. այս նիստում վերջնական խմբագրութեան և յենթարկվում և կազմվում հետևյալ ցանկը – Ադոնց Ն., Դավիթ-բեկ Ս., Գուշակյան Թորգոմ յեպ., Դուրյան Յեղ. յեպ., Կարաս, Մաս Նիկ., Մեյյե, Մարքվարդ, Մակկեր, Մսերյան Լ., Զոպանյան Ս., Վենետիկի Մխիթարյաններ, Վիեննայի Մխիթարյաններ, Որբելի, Տոմսոն, Բոսթ։

ՆԻՍՏ 20 րդ, 1927 թ. փետր. 17-ին.

Այս նիստում իր զեկուցումը կարդում է Հանձնաժողովի կողմից Թիֆլիսից հրավիրված վրաց նոր տառերի նախագիծը կազմող նկարիչ Դ. Շևարդնաձեն։

«Մեր առաջ դրված էր մի խնդիր—ասում է Նա—վրաց տառերի մեջ ռեֆորմ մտցնել, ժամանակակից տպարանական տեխնիկայի պահանջների համեմատ, բայց այնպես վոր այդ չնշանակեր ոտար, որինակ՝ լատինական տառեր մտցնել, կամ գոյություն ունեցող տառերի մեջ մտցնել այնպիսի փոփոխություններ, վոր նոր տառերը դառնային առանձին ուսանելու առարկա։ Լատիներեն կամ ուրիշ նոր տառեր ընդունելը վոչ մի բանով չեինք կարող արդարացնել. վրաց ժողովրդի թիկունքում կանգնած և բազմադարյան և հարուստ կուլտուրա։ Վրաստանն ունի հարուստ և շատ բաներում նշանավոր գրականություն, այնպես վոր մեր, ներկայումս ունեցած տառերի սովորելը ամեն մի կրթված վրացու համար պիտի լիներ անհրաժեշտ։ Բացի այդ վրաց այբուբենը լիովին համապատասխանում է վրաց լեզվի առանձնահատկություններին, վոր ամեն մի հնչյունի համար ունի առանձին տառ։ Չենք կարող ասել, վոր լատինական կամ ուրիշ նոր տառերի ընդունումը ավելի լավ կը լիներ վրաց լեզվի համար քան մեր ունեցած տառերը։ Լատինական տառեր մտցնելը կարելի չէ նպատակահարմար համարել միայն այն ազգերի համար, վորոնք մինչև այժմ չեն ունեցել սեփական այբուբեն, վորոնք այժմ են միայն սկսում իրենց կուլտուրական կյանքը. կամ այն ազգերի համար, վորոնց տառերը չափազանց բարդ լինելով, պահանջում են սովորելու շատ մեծ ջանք և ժամանակ, ինչպես, որինակ, չինական, ճապոնական, արաբականը։ Հետևապես վրացական շրիֆտը պետք է մնա իրապես անփոփոխ և, պահելով իր ընդհանուր կերպարանքը, տեսքի այնպիսի փոփոխություններ պիտի ընդունե, վոր ստանա այն առավելությունները, ինչ վոր ունի լատինական շրիֆտը»։

Ցեվ վրաց նոր այբուբենի հեղինակը իրեն սկզբունք ընդունելով, վոր տառերի գլխավոր հատկությունները պիտի լինին պարզությունը, պեղեցկությունը և խնայողությունը, իր փոփոխությունները կատարել և այսպես—ա) տառերի վերև և ներքև ձգվող մասերը կարճացրել և և դրանց հաշվին մեծացրել նրանց բուն մարմինը, իրանը, հարաբերությունը ընդունելով 1—2—1.

բ) տառերի թանձրությունը (հաստություն, լայնություն), վոր վրացերենում չեղել է 18 տեսակի, վերածել է 2 տեսակի.

գ) տառերի հիմնական և յերկրորդական-մազային գծերի հաստության հարաբերությունը փոփոխել է, մազայինը հիմնականի $^1/_3$-ը ընդունելով։

Վրացական նոր տառերի նախագիծը, Ա. Շևարդնաձեի ասելով, հնի հանդեպ ունի հետևյալ առավելությունները.—

1. Բավարար չափով պարզ են տառերը և հարմար տպարանական սրբագրության համար.

2. 15% խնայողություն է տացվում տպագրության մեջ, և

3. 20% խնայողություն՝ մետաղի քաշի մեջ։

Նկարիչ Շևարդնաձեի տված տեղեկությունների համաձայն Վրաստանի պետքերի համար հարկավոր է 50.000 փութ նոր տառ, և այդ տառերի կազմարների համար նախատեսվում է ծախս՝ 372.000 ռուբլի։

ՆԻՍՏ 21-րդ, 1927 թ. փետր. 22-ին.

— Տառերի ձևի բարեփոխության հարցը բազմակողմանի կերպով ուսումնասիրելու համար Հանձնաժողովը վորոշում է խորհրդակցական ժողովներ կազմել Յերևանում գտնվող ակնարույժներից և տպարանական-պրաշարական հնուտ վարպետներից։ Հանձնարարվում է քարտուղարության հարցացուցակներ պատրաստել այդ խորհրդակցությունների համար։

ՆԻՍՏ 22-րդ, 1927 թ. մարտի 8-ին.

— Հանձնաժողովի անդամ Ստ. Մալխասյան կարդում է իր զեկուցումը «Տպարանական տառերի ռեֆորմի շուրջը» և ներկայացնում է իր կազմած նոր տառերի նմուշները. (տես Տեղեկագիր, էջ 146).

ՆԻՍՏ 23-րդ, 1927 թ. մարտի 11-ին.

— Հանձնաժողովը ուղղագրական խնդիրների վերաբերյալ իր աշխատանքներն համարելով վերջացած, վորոշում է քվեարկության յենթարկել բոլոր հարցերը իր չորս լեզվաբան անդամների կազմած ազյուսակի կարգով։ Վորոշվում է կատարել յերկրորդ քվեարկություն ևս, յերբ կատացվեն հայագետների պատասխանները։

Քվեարկության են դրվում ազյուսակի այն կետերը, վորոնց վերաբերմամբ համամիտ են չորս լեզվաբանները։

ՆԻՍՏ 24, 25, 26 և 27-րդ, 1917 թ. մարտի 14-ին, 15-ին, 17-ին և 22-ին։

— Շարունակվում է ուղղագրության թեզիսների քննությունն ու առաջին քվեարկությունը։ (Տես Տեղեկագիր, էջ 167)։

ՆԻՍՏ 28-րդ, 1927 թ. մարտի 29-ին.

— Բժշկական յենթահանձնաժողովի կողմից նախագահ բժ. Հ. Կատնայան զեկուցում է իրենց աշխատանքների մասին. կարդացվում է այդ յենթահանձնաժողովի արձանագրությունը (տես Տեղեկագիր, էջ 154)։

— Կարդացվում է Ս. Լիսիցյանի Հանձնաժողովին ուղարկած մի գրությունը՝ «Հայկական տպագիր տառերի բարեփոխության հիմնական սկզբունքները»։

ՆԻՍՏ 29-րդ, 1927 թ. ապրելի 5-ին.

Կարդացվում է տպարանական աշխատավորների խորհրդակցության արձանագրությունը. (տես Տեղեկագիր, էջ 156)։

— Նախագահը կարդում է Պարիզից պրոֆ. Մեյեի մարտի 19-ին գրած պատասխանը։

Il y a une question de principe à trancher: écrive-t-on l'arménien comme s'il n'avait jamais été écrit, ou tiendra-t-on compte de la tradition, tout en s'adaptant aux besoins actuels? Je crois qu'il faut tenir compte de la tradition; voici plus de *1500* ans que l'arménien s'écrit, et les vieux textes, et ceux de XIX siècle, sont des réalités avec lesquelles la nation a à compter. Il faut que le lecteur ne soit pas trop dépaysé quand il voudra lire les auteurs d'avant la réforme.

Ceci dit, j'arrive au détail en suivant les numéros.

1. է. Sur ce point pas de doute.

2. է. » » »

3. է. Puisque l'on a է, pourquoi rompre inutilement avec la tradition?

4. ե. D'accord.

5. ե. Pour rester fidèle au principe posé sous 4. Il faut des règles bien générales.

6. ե. La tradition donne quelque chase de clair. Tout le monde comprendra.

7. օ. Pas de doute.

8. ո. Pour rester fidèle à la règle générale.

9. ո. Pas de doute.

10. ո. » »

11. օվ. La logique l'exige.

12 ո à l'intérieur; օ à l'initiale, suivant le principe général.

13. ո. Suivant la tradition. Tout le monde comprendra.

14. վ. Pas de doute. La distinction de վ et ւ n'a plus de sens. J'écrirais *տերեվ*, etc.

15. ույ est possible. Mais je crois que *ույ* serait assez clair. Sur ce point, je serais tenté d'être conservateur: *ույ* devant consonne n'est pas ambigu.

16. ՟. Pas de doute. Garder յ serait très mauvais.

17. J'écrirais *նա*, etc.

18, *վկա* etc.

19. Ceci entraîne la graphie *վկաի*, logiquement, si l'on prononce vkaï; mais *վկայի*, si l'on prononce vkayi.

20. *իւ, իւ.*

21. *նա.*

22. *նո.* Le principe l'exige.

23. Des caractères nouveaux sont bien unutiles: *ու, իւ, նա* son claris, et l'on ne gagnera rien à changer.

24. Il faut rester conforme à la prononciation arménienne, et mettre des consonnes simples là où l'arménien prononce simple.

En somme, le principe que je suivrais serait de noter phonétiquement, mais en n'abandonnant la tradition que là où c'est nécessaire, et en posant des règles générales faciles à suivre.

A. Meillet

19 mai

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Կայ սկզբունքային մի հարց, որ պետք է վճռել.—արդեօք հայերենը գրում են այնպես՝ ինչպես որ խոսում են, թէ՞ հաշվի պետք է առնել ավանդութիւնը՝ հարմարվելով հանդերձ արդիական պահանջներին։ Կարծում եմ թէ պետք է հաշվի առնել ավանդութիւնը։ Ահա 1500 տարուց ավելի է ինչ հայերենը գրվում է, և հին բնագիրները և ԺԹ դարու բնագիրները իրականութիւններ են, որոնց ազգը հաշվի պիտի առնէ։ Պետք է որ ընթերցողը շատ անվարժ չզգայ իրեն, երբ ուզենա կարդալ բարեփոխութիւններից առաջ յեղած հեղինակները։

Այս ասելուց յետո, անցնում եմ մանրամասնութեանց, հետեվելով համարներին.

1. է. Այս կետի վրա տարակուսս չկա.

2. է. » » » »

3. է. Բանի վոր է կա, ինչու՞ ի դուր ջնջել ավանդութիւնը։

4. ե. Համաձայն եմ.

5. ե. Հավատարիմ մնալու համար № 4 սկզբունքին. պետք է ուշադիր ընդհանուր կանոններ.

6. ե. Ավանդութիւնը շատ պարզ է. ամեն մարդ պիտի հասկանա.

7. օ. Կասկած չկա.

8. ո. Հավատարիմ մնալու համար ընդհանուր կանոնին.

9. ո. Կասկած չկա.

10. ո. » »

11. օվ Տրամաբանութիւնն է պահանջում.

12. ո բառասկզբում, օ բառասկզբում, համաձայն ընդհանուր սկզբունքին։

13. ո. Համաձայն ավանդութեան. ամեն մարդ կհասկանա։

14. վ. Կասկած չկա. վ և ւ տառերի տարբերութիւնը այլ ևս իմաստ չունի։ Ինչ կգրենի տերեվ և այլն։

15. ույ հնարավոր է. բայց կարծում եմ ույ պարզ է. այս կետում, պիտի ուզեի պահպանողական լինել. բազաձայնից առաջ ույ չերկիմաստ չէ։

16. ՟. Կասկած չկա. յ պահել շատ վատ կլինեը.

17. Ինչ կգրենի նա և այլն.

18. Վկա և այլն.

19. Սա առաջ է բերում վկաի գրութիւնը, տրամաբանորեն, եթե հնչում են vkaï, բայց վկայի, եթե հնչում են vkayi.

20. իւ, իւ.

21. նա.

22. նո. Սկզբունքն է պահանջում.

23. Նոր տառեր բոլորովին ավելորդ են. ու, իւ, նա պարզ են, փոխելով ոչինչ չի շահվիլ։

24. Պետք է հետևել հայկական արտասանութեան և ուր վոր հնչվում է պարզ, պետք է դնել պարզ բազաձայն։

Մի խոսքով, ես հետևում եմ հնչական սկզբունքին, հեռանալով ավանդութիւնից միայն այն դեպքում՝ երբ անհրաժեշտ է, և դնելով ընդհանուր կանոններ, վորոնց հետևութեամբ կարելի չի հետևել։

Ա. Մեյյե

19 Մայիս

— Կարդացվում է նաև Ատրպատականի թեմական պատգամավորական ժողովից ստացված մի գրութիւնը, վորով ցանկութիւն են հայտնում, վոր ուղղագրութեան բարեփոխութիւնը կատարվի այնպես, վոր չքնաին հայ ժողովրդի հետագծների կուլտուրական միութեան և չկարի կապը անցյալի գրականութեան հետ։

Վորոշվում է ուղարկած հարցացուցակի պատասխաններին սպասել մինչև մայիսի 10-ը, այնուհետև ուղղագրութեան բոլոր հարցերը յինթարկել քննարկութեան, ավարտել Տեղեկագրի տպագրութիւնը և Հանձնաժողովի աշխատանքների արդյունքը ներկայացնել

Գիտ. և Արվեստի Ինստիտուտի բ. և գ. բաժինների խառը ժողովին մայիսի 29-ին։

ՆԻՍ 30-րդ և 31-րդ, 1927 թ. ապրելի 12-ին և 21-ին։

— Հանձնաժողովն այս նիստերում զբաղվում է տպարանական տառերի բարեփոխության խնդրի մասին յեղած առաջարկների քննութեամբ. առաջարկները քվեարկվում են ըստ նախորոք կազմած հարցացուցակի։ (տես Տեղեկագիր, եջ 172)։

— Հանձնաժողովի նախագահը կարդում և ակադեմիկոս Ն. Մառի ապրիլ 11-ին գրած հայերեն նամակը.

Մեծարգո քաղաքացի . . .

«Թեյեվ հայերենի ուղղագրության վերաքննության և տառերի ձևի բարեփոխության Հանձնաժողովի ուղղագրական առաջարկների համագրական ապյուսակը վաղուց եյի ստացել և այժմ պատասխանելը պետք և բոլորովին ուշացած և ավելորդ համարվի, բայց յերևում և, վոր իմ կարծիքը սակավ հետաքրքրություն ունի Հանձնաժողովիդ համար և նամակիս ուշանալը գործի ընթացքի վրա դժվար թե ազդեցություն ունեցած լինի։ Ինչ վերաբերում և այդ կարծիքին, գա վաղուց հայտնի յե. բայց վորովհետև հայացքներս ու դրություններս չեն ընդունված, ինչպես յերևում և ապյուսակից, այլ Հանձնաժողովն ուզում և բավականանալ մասնավոր, աննշան բարեփոխություններով, առաջարկներս անում եմ այն շրջանակներում, վորը գծել և բարեփոխման Հանձնաժողովը, վորը և կցում եմ նամակիս*)»։

Միշտ հարգանքով Ն. ՄԱՌ.

I. Յեվրոպական e հնչյունը—	կամ պահել մերժված պատմական ուղղագրությունը կամ գրել միշտ և ամենուրեք ե.
II. Յեվրոպական ye հնչյունը—	Հետևապես յեվրոպակ. ye հնչյունը գրել միշտ և ամենուրեք յե
III. Յեվրոպական o հնչյունը—	Յեվրոպ. o հնչյունը գրել միշտ մեկ ու մեկ տառով կամ o կամ ո.
IY. Յեվրոպական ov հնչյունը—	Հետևապես յեվրոպ. ov հնչյունը գրել միշտ և ամենուրեք կամ միայն օվ կամ միայն ով.
V. Յեվրոպական vo հնչյունը—	Յեվրոպ. vo գրել կամ միայն վո կամ միայն վո.
VI. Յեվրոպական v հնչյունը—	Յեվրոպ. v հնչյունը գրել միշտ և ամենուրեք վ, բնավ չը պահելով փակագիր և.
VII. Յեվրոպական uy հնչյունը—	Յեվրոպ. uy (ույ) հնչյունը գրել vյ. վորովհետև անհնթեթ մի բան և հին ուղղագրությունից յեվրոպակ. լատ. u=գաղղ. ou հնչյունի համար պահել ու, անհրաժեշտ և v

*) Այս առթիվ Հանձնաժողովը պարտք և համարում հայտնել թե հարգելի ակադեմիկոս Մառի հետ ուրիշ գրագրություն չի ունեցել ուղղագրության մասին. բացի այդ Հանձնաժողովը կոչված և յեղել քննելու միմիայն հայկական ուղղագրության և տառերի բարեձևության խնդիրը և այլ իրավասություն չի ունեցել։

VIII. Վրայ ֊ հնչումը—	Վրայ ֊ հնչումը գրել միշտ և ամենուրեք h. ուրիշ յ բառասկըզբում ձայնավորներից առաջ վերածել հ.
IX. իւ	յv
X. եա	յա
XI. եօ	յօ կամ յո
XII. Միատառ գրություններ	Միատառ v (=ու).

ՆԻՍ 33-րդ, 1927 թ. մայիսի 10-ին.

— Կարդացվում են նոր ստացված գրություններ՝

ա. Վ ե ն ե տ ի կ Ի մ ի թ ա բ յ ա ն մ ի ա բ ա ն ո ւ թ յ ա ն.—Հայտնում են վոր Հանձնաժողովից կողմից ուղարկված «Ուղղագրական առաջարկների համագրական ապյուսակը» քննելու և իրենց պատասխանը տալու համար նշանակել են «Տատուկ Հանձնաժողովի՝ յերեք հոգուց և հայկական ուսմանց մասնագետ միաբանակցիներ», վորոնց դիտողությունները, միաբանության հավանության արժանացած, կուղարկվին մեզ տպագրության։

բ. Պ ա բ ի պ ի ց, պ ր ո ֆ. Ն ի կ. Ա դ ո ն ց ի ց.—Նամակի հետ մի ընդարձակ ուսումնասիրություն (33 եջ) դիտական հիմնավորումներով։

Ժողովը ցանկալի յե համարում տպագրված տեսնել թե պրոֆ. Ադոնցի դրությունը և թե հետագայում այլ հայագետներից տպասվող նյութերը, բայց քանի վոր Տեղեկագրի տպագրությունը գրեթե վերջացել և նախահաշվով սահմանված իր ծավալի մեջ, վորոշում և այդ նյութերի տպագրության խնդիրը դնել մոտիկ օրերում կայանալիք Ինստիտուտի միացյալ ժողովում. նմանապես և Հանձնաժողովի անդամ Ստ. Կանայանի զեկուցման հարցը՝ վոր դարձյալ տեղ չը լինելու պատճառով հնարավորություն չեղավ տպագրել։

ՆԻՍ 34-րդ, 1927 թ. մայիսի 12-ին, և 35-րդ մայիսի 17-ին։

Յ ե ր կ ր ո ր դ քվեարկության են յենթարկվում ուղղագրության բոլոր առաջարկներն ու թեզիսները Ստ. Մալխասյանի և Գ. Լևոնյանի կազմած ապյուսակների կարգով (տես Տեղեկագիր եջ 168)։

ՆԻՍ 36-րդ (լրացուցիչ, վերջին) 1927 թ. մայիսի 19-ին.

Յ ե ր կ ր ո ր դ քվեարկության են յենթարկվում տառերի ձևի բարեփոխության մասին յեղած բոլոր առաջարկները (Տեղեկագիր եջ 172)։

Կազմում և մայիսի 29-ին կայանալիք միացյալ ժողովի որակարգը։

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՓՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ԾԱՆՈԹ. Հանձնաժողովի լիիվ կազմը 11 հոգի. Աճառյան Հ., Ամպարեզյան Թ., Բարխուդարյան Ա. (Լիս), Լեմոնյան Գ., Մաչատուրյան Ա., Կանայան Ս., Հակոբյան Ս., Ղափանցյան Գ., Մարխասյան Ս., Մանանդյան Հ., Շերմազդոն.

Առաջին բվեարկությունը կատարվել և մարտին. յերկրորդը մայիսին.

Բազարից բացակա լինելու պատճառով ա. բվեարկությանը չի մասնակցել Շիրվանզադեն, բ-ին Ծ. Պալխատյանը. բվեարկողների թիվը յերկու դեպքում էլ յեղել է 10։

Համար	Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ն Ե Ր	Առաջին բվեարկություն		Յերկրորդ բվեարկություն	
		ԿՈՂՄՆԱԿԻՑ	ՀԱԿԱՌԱԿ	ԿՈՂՄՆԱԿԻՑ	ՀԱԿԱՌԱԿ
	I. Ցեվրոպական e հնչյունը				
1	*Բառասկզբին գրել է և վոչ թե ե, ինչպես՝ էջ, էութիւն, էկիան . . .*	միաձայն	—	միաձայն	—
2	*Բառի մէջ, ձայնավորից առաջ գրել է և վոչ եյ ինչպես՝ բոպէական, մարգարէութիւն, ոէալական . . .*	ութ ձայն	Աճառ. Հակոբյան	ութ ձայն	Աճառ., Հակոբյան վերջինս միայն ա ից առաջ է ընդունում
3	*Բառավերջում գրել է, ինչպես՝ մարգարէ, պիտէ, պիտէ . . . .*	ութ ձայն	Աճառ. Հակոբյան	ութ ձայն	Աճառ. Հակոբյան
4	*Բայական թեքման ժամանակ հին է-ը պահել. ինչպես՝ պիտէք, պիտէր, պիտացէք*	վեց ձայն	Աճառ. Աճ. Հակոբ., Ավգալ. միայն ընդունում է պիտէր. մյուս կետերում ձեռնպահ.	վեց ձայն	Աճառ. Աճ. Հակոբ., Ավգալ. միայն ընդունում է պիտէր. մյուս կետերում ձեռնպահ
5	*Բարդութեանց և ածանցմանց մէջ պահելով առուգրաբ. ճշտութիւնը՝ գրել է կամ ե. ինչպես՝ վայրէջք, վերելք .*	յոթ ձայն	Աճառ. Աճ. Հակոբ.	յոթ ձայն	Աճառ. Աճ. Հակոբ.
6	*Այլ դիպքերում բառի մէջ գրել ե ինչպես՝ հանդես, հրավեր, կեա, պռեմա . Ծանոթ. է-ով գրութիւնը պահել հոմանձայն բառերը զանազանելու համար, սէր — սեր, մէզ — մեզ և այլն . . .*	յոթ ձայն վեց ձայն	Լիս, Լեոնյան, Կանայան Աճառ. Աճ. Հակոբ. Ղափանցյան	վեց ձայն վեց ձայն	Լիս, Լեոն., Կանայան Շերվանզադե Աճառ. Աճ. Հակոբ. Ղափանցյան

Համար	Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ն Ե Ր	Առաջին բվեարկություն		Յերկրորդ բվեարկություն	
		ԿՈՂՄՆԱԿԻՑ	ՀԱԿԱՌԱԿ	ԿՈՂՄՆԱԿԻՑ	ՀԱԿԱՌԱԿ
	II. Ցեվրոպական ye հնչյունը				
7	*Բառասկզբում գրել ե և վոչ թե յե, ինչպես՝ ես, երկու, եղբայր . . .*	միաձայն	—	միաձայն	—
	III. Ցեվրոպական o հնչյունը				
8	*Բառասկզբում գրել օ և վոչ թե ո, ինչպես՝ օդ, օգուտ, օր . . . .*	միաձայն		միաձայն	—
9	*Բարդութեանց և ածանցմանց մէջ պահելով առուգրաբանակ. ճշտութիւնը գրել օ կամ ո. ինչպես՝ անօգուտ, անօրինել, անողոք, անողորմ, հոգեօրեվ, Տուտեօրեվ*	յոթը ձայն	Աճառ. Աճ. Հակոբ.	վեց ձայն	Աճառ. Աճ. Հակոբ. և Շերվանզադե
10	*Բառամիջում այլ դիպքերում գրել ո. ինչպես՝ կոշիկ, Պողոս, կոոպերացիա, կոալիցիա . . . . . Ծանոթ. բառամիջում հոմանձայն բառերը տարբերելուէ համար օ գրութիւնը պահել՝ հօր — հոր, ազօտ — ազոտ և նման բառերի մէջ . . . . .*	միաձայն վեց ձայն	— Աճառ. Աճ. Դափ. Հակոբյան	միաձայն վեց ձայն	— Աճառ. Աճ Դափ. Հակոբյան
11	*Բառավերջում գրել ո, ինչպես՝ քո, այս, Մկո, Սաքո, Կարո . . . .*	ութ ձայն	Լիս և Լեոնյան կողմնակից են հին ուղղ.	յոթ ձայն	Լիս, Լեոն. Շերվան.
	IV Ցեվրոպական ov հնչյունը				
12	*Բառասկզբում գրել օվ և վոչ թե ով, ինչպես՝ օվկիանոս, օվազիս . . . Ծանոթութ. հայերեն ով բառը գրել ո-ով*	միաձայն յոթը ձայն	— Աճառ. Ավգալ. Հակոբ. դեմ են բացառության	ութ ձայն յոթ ձայն	Շերվանզ. Լեոնյան հին ուղղագր. կողմն. Աճառ. Աճ. Հակոբ. դեմ են բացառության

Համար	Ա Ռ Ա Ջ Ա Բ Կ Ն Ե Ր	Առաջին բաբառություն		Ջերմուղի բաբառություն	
		ԿՈՂՄՆԱԿԻՑ	ՀԱԿԱՌԱԿ	ԿՈՂՄՆԱԿԻՑ	ՀԱԿԱՌԱԿ
13	Հունական օմիգա տառը արտահայտել բառակզբում օ-ով, իսկ վ տառը գրել կամ չը գրել ըստ արտասանության, ինչպես Յովսեփ, Թոմաս, Հռոմ . .	ուխ ձայն	Լևո, Դափանցյան	ուխ ձայն	Լևո, Դափանցյան
	V. Ջեվռոպական vo հնչյունը				
14	Բառակզբում գրել ո և վոչ թե վո ինչպես՝ որսորդ, որպի, ոսկի . .	իննը ձայն	Խաչատրյան	իննը ձայն	Խաչատրյան
	VI. Ջեվռոպական v հնչյունը				
15	Ամեն դեպքում գրել վ և վոչ թե մերթ վ, մերթ ւ, մերթ ու. ինչպես՝ վանկ, վշտաս, ավազ, աղնիվ, նվաստ . .	յոթը ձայն	Լևո, Կանայան, Մանանդյան Ձեռնպահ	վեց ձայն	Լևո, Կանայան Լևոն., Մանանդյան Ձեռնպ.
	«և» փակագրի գործածությունն ընդունել՝ արևելք, տերև . . .	իննը ձայն	Դափանցյան և-ը ընդունում և միայն իբրև շաղկապ	ուխ ձայն	Դափ. ընդ. և-ը շաղկպ. Լևոն առհասարակ փակագիծը չի ընդունում
	VII. Ջեվռոպական uy (ույ) հնչյունը				
16	Ամեն դեպքում գրել ույ, ինչպես՝ բույս, լույս, կույս, կույր. և վոչ թե բոյս, լոյս, կոյր	միաձայն	—	միաձայն	—
	Ծանոթ. oy գրությունը կարդալ միշտ oy (ой), ինչպես՝ կոյուղի, գոյական, նոյ, խոյ				
	VIII. Ց գրի մասին				
17	Յ գիրը բառակզբում վերածել հ-ի, ինչպես՝ հարմար, հղի, հուլիս . .	Ամառ. Խաչատր. Ամպալ. Հակոբ.	վեց ձայն	Ամառ. Խաչատր Ամպալ. Հակոբ.	վեց ձայն

Համար	Ա Ռ Ա Ջ Ա Բ Կ Ն Ե Ր	Առաջին բաբառություն		Ջերմուղի բաբառություն	
		ԿՈՂՄՆԱԿԻՑ	ՀԱԿԱՌԱԿ	ԿՈՂՄՆԱԿԻՑ	ՀԱԿԱՌԱԿ
18	Բառակզբում յ դեն գցել վորտեղ կարելի չէ, ինչպես՝ հա, առաջ, հասն (թեև համաբվում և լեզվական խնդիր) . .	իննը ձայն	Ավդալբեկյան	իննը ձայն	Ավդալբեկյան
19	Բառավերջում անձայն յ չգրել, ինչպես՝ վկա, պաշտոնյա, խոստոնա, նեկրա, ապագա	իննը ձայն	կանայան յ ընդունում և միայն բառերի մեջ (բացի հրամայականից), թող մնայ, խոստացայ և այլն	իննը ձայն	կանայանը նույն կարծիքին և
20	Չգրել յ ա և ի ձայնավորների միջև, ինչպես՝ վկաի, ազգաին . . .	Խաչ. Հակոբյան Մալխասյան	յոթ ձայն	Խաչ. Հակոբ.	ուխ ձայն
	IX. Իւ գրությունը				
21	Իւ գրությունը պահել անփոփոխ, ինչպես՝ միութիւն, գիւղ, թիւրք, և վոչ թե միություն, գյուղ, թյուրք . . .	միաձայն	—	միաձայն	—
	X. Եա գրությունը				
22	Եա գրությունը պահել անփոփոխ, ինչպես՝ կեանք, մեծութեան, գործունեա, Մամիկոնեան և վոչ թե կյանք և այլն .	միաձայն	—	միաձայն	—
	XI. Եօ գրությունը				
23	Եօ գրությունը վերածել եո-ի՝ հոթը, արշեոք, վոչ թե հօթը, արշիօք . .	իննը ձայն	կանայան «հօ»	իննը ձայն	կանայան «հօ»

ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԵՐԻ ՁԵՎԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՅԵՂԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՅԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔԸ.

Նիստ 30-րդ. Ներկա եյին Աճառյան, Բաթմանյան, Լիվոնյան, Խաչատրյան, Կանայան, Ղափանցյան, Մանանդյան։ Բացակա՝ Ալիքալենցյան, Մալխասյան, Շիրվանզադե։

1. Հորինել նորաձև այբուբեն, տառերի կամքը միայն պահելով, ձևերին տալ ամբողջովին նոր կերպարանք՝ լատինականի ձևով. Առաջարկությունը դրսից. **Մերժվում է միաձայն։**

2. Հորինել նոր տեսակի այբուբեն, պահելով տառերի բնորոշ կերպարանքը, բայց ազատ փոփոխություններ չնմարկել նրանց կեցվածքը, ծավալը, անկյունները և պոչերը. Առաջարկ. Նախկ. հանձնաժողովի և մեր հանձնաժ. անդամ Ս. Մալխասյանի. **Մերժվում է միաձայն։**

3. Պահել ընդհանրապես հայկական տառերի բնույթը և բազմազանությունը, մացնելով փոփոխություններ գեղարվեստական տիպերից։ Առաջարկ Լևո-ի, Լևոնյանի, Աճառյանի. **Ընդունվում է մեծամասնությամբ։**

4. Տառերի շեղ գիրքը վերածել ուղղահայացի. Առաջարկ. Ս. Մալխասյանի, Նախկ. հանձնաժողովի և դրսից. **Ընդունվում է քառասնից։**

*Տառերի ուղիղ կամ շեղ գիրքը կապ չունի տառերի ձևի հետ. ինչպես մինչև այժմ, իրրև տեսակ ունենալ թե շեղ և թե ուղղահայաց գիրքի տառեր, պայմանով, որ շեղությունը 80°-ից չանցնի. խնդրել բժիշկների խորհրդակցության շարունակել իր աշխատանքը, այս ուղղությամբ քննություններ կատարելով. **Ընդունվում է միաձայն։***

5. Տեսակետ տեսակներից 3 տեսակի տառերը սեղմել վերածել 2 տեսակ չափի Առաջարկություն Ս. Մալխասյանի, Նախկ. հանձնաժողովի և դրսից. **Ընդունվում է քառասնից։**

*Իրրև ընդհանուր սկզբունք մերժել. առանձին տառերը քննության չենթարկելիս նկատի ունենալ այս հանգամանքը. **Ընդունվում է միաձայն։***

6. Բոլոր տառերը գրել 2 տող միջև, ինչպես պլխատառերն են. Առաջարկություն դրսից. **Մերժվում է միաձայն։**

7 Տառերի մազային գծերը վերացնել և ընդունել միայն մի հաստություն ունեցող տառեր. Առաջարկ Ս. Մալխասյանի և դրսից. **Ճառնաձև։**

Մշտական գործածության համար տառեր ունենալ մազային գծերով, ինչպես վոր ընդունված է բոլոր տպկրի մեջ. իսկ միատեսակ հաստություն ունեցող տառեր (жирн. шрифт) ունենալ մասնակի գործածության համար։ Յեվ քանի վոր բժշկական խորհրդակցության մեջ այս հարցի մասին ձայները բաժանվել են, խնդրել վոր այդ խորհրդակցությունը շարունակի իր աշխատանքը, տեսողության փորձեր անելով այդ ուղղությամբ. **Ընդունվում է միաձայն։**

8. Փոփոխության չենթարկել մի քանի տառերի այն գծիկները, վորոնք տպարանա-տեխնիկական պատճառներով պիտք ունեին այդպիսի բարեփոխության. որինակ մ, յ և ճ տառերի ձայրերը և ը-ի, բ-ի բարակ գծերը, վորոնք կոտրվելու վտանգ ունեին։ Առաջարկ պ աշխարհների խորհրդակցության. **Ճառնաձև։**

Տառերի մեջ մասնակի փոփոխություններ կատարելիս աչքի առաջ ունենալ այդ հանգամանքը։ **Ընդունվում է միաձայն։**

9. Նմանություն ունեցող տառերի մեջ այնպիսի փոփոխություն մըտցնել, վոր վիրանա միմյանց հետ ունեցած շփոթությունը. ինչպես՝ ա-ա, պ-պ, ե-ե, ս-ո. Առաջարկ դրաշարների խորհրդակցության. Սույն պահանջը կատարել են իրենց առաջարկած այբուբենի մեջ նախկին հանձնաժողովը և Ս. Մալխասյան։ **Ընդունվում է միաձայն։**

10. Տառերի իրանը (կորպուսը) բարձրացնել ի հաշիվ վերև և ներքև ձգվող պոչերի. վորպես սկզբունք այս առաջարկն ունեին նախկին հանձնաժողովը, Լևոնյան, Մալխասյան, Աճառյան, բժշկ. խորհրդակցությունը. միայն տողերի հեռավորության հարաբերության մեջ այդ առաջարկները տարբեր են. 3—3—3, 3—4—3, 2—4—2 և այլն.

Այս հարցը սկզբունքով ընդունվում է միաձայն. տողերի հարաբերության խնդրի լուծումը թողնվում է հետագային, իրրև կը նեղ կայացվեն առաջարկվելիք տառերի նմուշները՝ գծագրված տարբեր հարաբերություններով։

11. Զորս տողի մեջ դրվող տառերը (կ, թ. ի, խ, կ, ջ, վ, փ, ֆ) վերածել յերեք տողի, միջին յերկտողից կամ բարձր կամ ցածր. Առաջարկ Ս. Մալխասյանի. իրրև ընդհանուր սկզբունք **մերժվում է միաձայն։**

12 Տառերի անկյունավոր մասերը կորացնել. Առաջարկ նախկ. հանձնաժողովի և Ս. Մալխասյանի. **մերժվում է մեծամասնությամբ։**

13. Հաստատակ գրի ժ, ծ, ռ տառերը, վորոնք տպարանական պունկտերի հաշվով կատորակային հաստություն ունեին ($5^1/_2$ պունկտ) և սրբագրության ժամանակ դժվարություն են առաջ բերում, $^1/_2$ պունկտանոց շափց չը լինելու

պատճառով, վերածել ամբողջ թվի՝ 5 պունկտի. Առաջարկ գրաշարների խորհրդի. **Ընդունվում է միաձայն:**

14. Գեղարվեստական տպագրությունների համար մի նոր տեսակի վոճավոր տառեր հորինելու համար նշանակել մրցանակ. առաջարկ. Լ. Լևոնյանի, **ընդունվում է ձայների մեծամասնությամբ:**

15. Յերկբարբառներ ու-ի, իւ-ի և եա-ի համար միացած ու վիճակվող տառեր կազմել. առաջարկ. Ս. Մալխասյանի և նախկ. հանձնաժողովի և գրաշարներից մի մասի. **մերժվում է ձայների մեծամասնությամբ:**

Յերկրորդ քվեարկությամբ (36-րդ նիստ) բոլոր առաջարկներն անցնում են նույնությամբ:

Այդ նիստին ներկա էին՝ Ավդալբեգյան, Բարախանյան, Լևոնյան, Կանայան, Հակոբյան, Մանանդյան, Շիրվանզադե:

Ավդալբեգյանը քվեարկության ժամանակ չեռւմ է ձեռնպահ:

Հ.Ս.Խ.Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A. Центральная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳՄԱՐԿՄԱՆ ԴԻՄԱԲԱՆ ՀՀ
ML02410I8